

Հ. ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

ՍՈՎԵՏԱՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՅՐԲԵՋԱՆՈՒՄ



ԲԱՔՈՒՆ . ԱԶԵՐՆԵՐ . 1949



19 NOV 2011

Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՊԻԲԵՋԱՆՈՒՄ

ԱԶԵՐՆԵՇՐ

ԲԱՔՈՒ — 1949

1897

THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
NEW YORK

1897

1897

Ն Ե Ր Ա Ֆ Ա Ռ Ի Թ Յ Ո Ւ Ն

Հայ և ադրբեջանական ժողովուրդները դարերով ապրելով հարևանությամբ, միևնույն պատմական բախտն են ունեցել: Թեպետև այդ եղբայրական ժողովուրդների զարգացումը տեղի է ունեցել էթնիկական տարբեր հոսանքներով, նրանց կարելի է համեմատել հորդահոս գետի վտակների հետ, որոնք սկիզբ առնելով միևնույն աղբյուրից, ճյուղավորվում են, որ, ի վերջո, նորից միավորվեն մի հունով:

Հայերն ու ադրբեջանցիները ապրելով ու աշխատելով նույն պայմաններում, միացյալ ջանքերով պաշտպանել են իրենց հողն ու ֆիզիկական գոյությունը, պայքարելով օտարերկրյա բազմաթիվ զավթիչների դեմ: Անդրկովկասը հին ժամանակներից ի վեր եղել է բազմաթիվ արյունահեղ պատերազմների ասպարեզ: Անդրկովկասի ժողովուրդները ենթարկվել են հոտմեացիների, բյուզանդացիների, արաբների, սելջուկների, իրանական ու թյուրքական զավթիչների արշավանքներին:

Այս ահեղ փորձությունների ժամանակ միշտ էլ հայերն ու ադրբեջանցիները թե ու թիկունք են եղել իրար: Նրանց եղբայրությունն ու բարեկամությունը թրծվել է օտար բռնակալների դեմ մղած համատեղ պայքարի բովում:

Կարելի է բազմաթիվ փայլուն օրինակներ բերել այդ սիրտ բարեկամությունից: Հանրահայտ են հայերի ու ադրբեջանցիների հերոսական մարտերը Իրանի շահ Աղամամեղ Կաջարի հրոսակախմբերի դեմ: Հայ և ադրբեջանցի աշխատավոր մարդկանց ջանքերով Ղարաբաղի տնրիտորիայում փշրվել է այդ դազանաբարո ու ամբարտաժան բռնակալի ողնաշարը: Սերունդները երբեք չեն մոռանա հայ և ադրբեջանական ժողովուրդների կողմից օսմանաթյուրքական զավթիչների դեմ մղած մարտերի ցայտուն դրվագները:

Երկու եղբայրական ժողովուրդների միջև չկային անջրպետներ և ոչինչ չէր կարող զստել ու անջատել նաև նրանց նշույթական

և հոգևոր կուլտուրան: Նրանք իրենց կուլտուրական արժեքները նույնպես ստեղծել են սերտ կապի, համագործակցության ու փոխազդեցության միջոցով: Այդ իսկ պատճառով նրանց կուլտուրաների ազգային տարբեր ձևերի մեջ դժվար չէ նկատել բովանդակության հարազատությունը:

Անցյալ դարի վերջերից Ռուսաստանի ժողովուրդների ազատագրական պայքարը սկսում է լայն չափեր ընդունել, բանվոր դասակարգի ռեոլուցիոն գաղափարները սկսում են թափանցել մասսաների մեջ, ավելի ակներևաբար են երևան գալիս ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը՝ կյանքի բոլոր ասպարեզներում:

Քսաներորդ դարի սկզբներից Ռուսաստանի, դրա հետ նաև Անդրկովկասի, ժողովուրդների ազատագրական պայքարի գլուխն է անցնում բոլշևիկների պարտիան: Աշխատավորներին համախմբելով մարքսիզմ - լենինիզմի դրոշի տակ, բոլշևիկների պարտիան բոլոր ազգությունների աշխատավորների ռեոլուցիոն ջանքերը միավորում էր մի ընդհանուր հզոր հոսանքի մեջ՝ դրանում տեսնելով շահագործական կարգերի տապալման համար մղվող պայքարի հաջողության երաշխիքներից մեկը:

Լենինի-Ստալինի պարտիան ամբողջ ուժով և անողոքությամբ մահու կռիվ հայտարարեց ամեն գույնի նացիոնալիստներին, ազգային երկպառակություն և թշնամանք սերմանողներին, բոլոր նրանց, ովքեր փորձում էին աշխատավորների ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից: Պրոլետարական խնտերնացիոնալիզմի, դասակարգային համերաշխության ու համագործակցության վեհ գաղափարը, սոցիալիստական ռեոլուցիայի հաղթանակի համար բոլոր ազգությունների աշխատավորների ուժերի համախմբման գաղափարը գիտակցություն էր դառնում մեր մեծագործ պարտիայի ջանքերով: Եվ եթե դարեր շարունակ ժողովուրդների բարեկամությունը ըստինքյան չուրահատուկ լինելով աշխատավոր մարդու բնությանը, զարգանում էր տարերային ընթացքով, ապա այժմ ամենառեոլուցիոն պարտիայի ղեկավարությամբ, իմաստավորվում էր, արմատավորվում մարդկանց գիտակցության մեջ:

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, որոնց կոնց ու կոփեց ազգային հարցի հանձարեղ գիտակ, մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը, վիթխարի աշխատանք կատարեցին հայերի,

ադրբեջանցիների, վրացիների դարավոր բարեկամությունն ամրապնդելու և նրանց ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ:

Յարական գաղութարարները, իրենց տիրապետությունը Անդրկովկասում հաստատ պահելու համար ազգությունների միջև թշնամանք էին հրահրում, լիովին օգտաթործելով տեղական բուրժուական-նացիոնալիստական պարտիաների հիմնականությունը: Նրանք փորձում էին մի կողմից իրարից անջատել Անդրկովկասի ժողովուրդներին, մյուս կողմից նրանց կտրել ռուս ժողովուրդից: Բայց Անդրկովկասի ժողովուրդների առաջավոր մտածողները գաղութային դոկտրինայի դեմ ծանր ու խավար օրերին պարզ ու հստակ տարբերում էին ռուս ժողովուրդին մի բուռն կապիտալիստներից, կալվածատերերից ու գաղութարար աստիճանավորներից: Նրանք գիտեին, որ կա առաջավոր 'Ռուսաստան' ժողովուրդական մասսաների պայքարի փայլուն տրագիցիաներով, իր մեծ ու բազմաբովանդակ կուլտուրայով, իր դեմոկրատական և հումանիստական տրագիցիաներով:

Բանվոր դասակարգի ռևոլուցիոն գաղափարների սերմերը ռուս մեծ ժողովուրդը սերմանեց մեր հողում: Մեծ Լենինի ռևոլուցիոն կուռ ուսմունքի հիման վրա, Անդրկովկասի ժողովուրդները, հանձարեղ Ստալինի ղեկավարությամբ, զինվեցին ու պայքարի ելան: Ռուսական գիտության, գրականության, արվեստի առաջադիմական ակունքներից սնունդ առան ու հզորացան նրանք և դիմեցին դեպի իրենց հետագա ազգային մերածնունդը: Անդրկովկասի ժողովուրդների անցյալ դարի գրականությանն էլ ընթացավ ռուս դեմոկրատական գրականության ուղիներով:

Քսաներորդ դարի սկզբներից աշխատավորների ռևոլուցիոն ինքնագիտակցության և ազգային ինքնաճանաչողության զարգացմանը զուգընթաց էլ ավելի էր սրվում պայքարը դեմոկրատական, պրոգրեսիվ գաղափարների կրողների և ռեակցիոներների միջև նաև կուլտուրայի ու գրականության ճակատում:

1905 թվի ռևոլուցիոն բեկման կետ հանդիսացավ Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական կյանքում: Որքան ավելի ամրապնդվում էին նրանց կապերը, որքան ինտերնացիոնալիզմի գաղափարները տիրապետում էին մասսաներին, այնքան ավելի լայնանում էին հայ, ադրբեջանական և վրաց ժողովուրդների կուլ-

տոտրական ու գրական համագործակցութիւնն ու փոխներգործութիւնը:

Յարական գաղութարարներէ, նրանց արգահատելի գործակիցներէ՝ դաշնականների, մենշէլիկների, մուսավաթականների և ամեն գույնի նացիոնալիստների բազմաթիւ դավադրութիւնները ինչպէս չկարողացան կոտրել ժողովրդի օրավուր զարգացող և հզորացող ազատագրական կամքը, այնպէս էլ չկարողացան խափանել նրանց կոլտոտրական մերձեցումը:



Տասնիններորդ դարի վերջերին Բաքուն Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկն էր: Վ. Ի. Լենինը մատնանշել է, որ նավթարդյունաբերութեան զարգացման բուն թափի շնորհիւ Բաքուն երկու-երեք տասնամյակի ընթացքում «աննշան քաղաքից դարձավ Ռուսաստանում առաջնակարգ արդյունաբերական կենտրոն՝ 112 հազար բնակիչներով»¹:

Նավթաշխարհը դեպի իրեն էր քաշում շահելու և հեշտ վաստակի սիրահարներին. հարստանալու ծարավի սեփականատերերը ռուսական կայսրութեան տարբեր մասերից և օտար երկրներից Բաքու էին գալիս սև ոսկի գութնելու: Բաքուն աստիճանաբար դառնում էր եվրոպական իմպերիալիզմի ախորժակը գրգռող համեղ պատառներից մեկը:

Բազմազգ Ռուսաստանի, մանավանդ Կովկասի, բոլոր ծայրերից Բաքու էին գալիս նաև աշխատանքի մարդիկ, ապրուստի միջոցներից զուրկ բանվորներ և ընչազուրկ գյուղացիներ՝ օրվա հացը նավթահանքերում հայթայթելու համար: Քսաներկու տարվա ընթացքում 1879 թ. մինչև 1901 թ. նավթարդյունաբերութեան մեջ բանվորների թիվը 1800 մարդուց ավելանում, հասնում է 27000-ի:

«Բաքվի պրոլետարների բազմահազար մասսան ծայր աստիճան բազմաբղետ էր իր ազգային կազմով: Նավթահանքերում կարելի էր հանդիպել Ռուսաստանի բոլոր ազգութիւնների բանվորների: Այստեղ կային ադրբեջանցիներ, ռուսներ, վրացիներ, հայեր, լեզգիներ, մերձվոլգյան թաթարներ և ուրիշներ: Նրանք բոլորն էլ հա-

¹ Վ. Ի. Լենին. «Ներկե», հատ. III, էջ 382:

վասարապէս սաստիկ շահագործվում էին նաւթարդյունաբերական բուրժուազիայի կողմից»¹:

Նաւթարդյունաբերութեան զարգացման հետ մեկտեղ, բուռն լրահով աճում էին նաեւ արդյունաբերութեան մյուս ճյուղերը, արհեստները, քաղաքային տնտեսութիւնը, առևտուրը:

Բաքվի վերելքի այդ տարիներին Ռուսաստանի հայաշատ կենտրոններից մեծ քանակութեամբ հայ աշխատավորներ տեղափոխվում էին Բաքու:

Տեղի ունեւորող տարբեր ազգութիւնների կուլտուրական ուժերի խմբավորման և զարգացման պրոցեսը նաւթաշխարհի միջավայրում:

Հենց այս շրջանում էլ, ի թիւս մյուս ժողովուրդների հասարակական մտքի, Բաքվում զարգանալ է սկսում նաեւ հայ հասարակական միտքը: Առաջ են գալիս և աճում մտավորականութեան նոր կադրեր, որոնք իրենց կոփւածքն ստանում են այս առաջնակարգ արդյունաբերական կենտրոնում, ուր ցայտուն կերպով դրսևորվում էին կապիտալիզմի հակասութիւնները, հասունանում էին հասարակական այն նոր ուժերը, որոնք պետք է խորտակեին տիրող կարգերը:

Անցյալ դարի այդ նշանավոր շրջանում էր, որ Բաքվում հրապարակ իջաւ մեր ռեալիստական վիպասանութեան ու դրամատուրգիայի ռահիբներէից մեկը՝ Ալեքսանդր Շիրվանզադեն: Մեծ գրողը Բաքվում անցաւ կյանքի ճանաչողութեան դպրոցը՝ այդ քաղաքն էր, որ հարուստ նշույթ տվեց նրա ստեղծագործութիւնների համար, ուր այնքան վարպետութեամբ վերարտադրված է կապիտալիստական քաղաքի տարբեր խավերի կյանքը: Շիրվանզադեն առաջինը եղաւ, որ գեղարվեստական գրականութեան մէջ ցույց տվեց զարգացող արդյունաբերական բուրժուազիայի հասարակական բարքերի և կապիտալիստների անձնական վարքի ամբողջ ապականութիւնը:

Այնուհետեւ նաւթաշխարհում իր կոփւածքն ստացաւ նաեւ Հակոբ Հակոբյանը, որը երդեց շահագործական կարգերի դեմ բանվոր դասակարգի հերոսամարտերը:

¹ Մ. Զ. Բաղիրով. «Բաքվի և Ադրբեյջանի բոլշևիկյան կազմակերպութեան պատմութիւն», Ռուս. հրատ., էջ 88:

Եթե՛ս Կրանցից առաջինը զարգացրեց հայ գրականութեան մեջ
ռեալիստական ուղղութիւնը, ապա երկրորդը հայ պրոլետարական
պոեզիայի հիմքը դրեց:

Բաքուն աշնուհետեւ դարձաւ Ռուսաստանի և Անդրկովկասի
բանվորական շարժման կենտրոններից մեկը, բոլշևիկյան անառիկ
միջնաբերդերից մեկը: Մեծուսցիոն մարտերի նախապատրաստման
բախտորոշ օրերին Ե...Բաքվի հերոսական պրոլետարիատը, բոլ-
շևիկների պարտիայի ղեկավարութեամբ, մեծ Ստալինի գլխավո-
րութեամբ, հանդես եկաւ ամբողջ Անդրկովկասի բանվորա-գյու-
ղացիական մասսաների ռեուլուցիոն պայքարի արմատարդում, իր
ոգեկորութեամբ վարակելով ամբողջ Կովկասը¹:

Բաքվի և Անդրկովկասի բոլշևիկներն ընկեր Ստալինի գլխավո-
րութեամբ հսկայական աշխատանք կատարեցին Մարքսի-էնգելսի-
կենինի գաղափարներով մասսաներին դաստիարակելու ուղղու-
թեամբ: Նրանց ջանքերի շնորհիւ էր, որ սոցիալիզմը միաձուլեց
բանվորական շարժման հետ և լուսավորեց այդ շարժման դար-
գացման ուղիները:

Վիթխարի ռեուլուցիոն տեղաշարժեր կատարվեցին հասա-
րակական կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև
գրականութեան ասպարեզում: Անդրկովկասում և մանավանդ
Բաքվում ու Թբիլիսիում արագ թափով զարգանալ սկսե-
ցին մարքսիստական հրապարակախոսութիւնը, դեմոկրատական
գրականութիւնը:

Բաքվի բովով անցան նաև հայ ժողովրդի ծոցից դուրս եկած
շատ ռեուլուցիոններն: Այստեղ իր գործունեութիւնը ծավալեց
մեծ Ստալինի աշակերտ՝ Ստեփան Շահումյանը, որը անգնահա-
տելի դեր խաղաց ոչ միայն բանվորներին և գյուղացիներին սոցի-
ալիզմի դրոշի տակ համախմբելու գործում, այլև խորը հետք
թողեց մեր կուլտուրայի ու գրականութեան զարգացման մեջ: Շա-
հումյանն էր, որ հայ իրականութեան մեջ հիմք դրեց մարքսիստա-
կան գրականագիտութեանը:

Ռեակցիայի մոռալ օրերին, երբ ինտելիգենցիայի, այդ թվում
գրողների մի մասը ժողովրդի ծանր կացութիւնից ելք որոնելիս,

1 Մ. Զ. Բազիլով. «Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպութեան
պատմութիւնից», Ռուս հրատ., էջ 88:

խոտորում էին ճմարիտ ուղուց, երբեմն խուճապահար հեռանում իրականությունից, ոմանք խրվում էին հոռետեսության ճահիճը, թաքտում բուրժուական ֆորմալիզմի ճիրաններում, բարձր հնչեց Հակոբ Հակոբյանի ռեուլուցիոն պոեզիան, որը իմաստավորված էր Բաքվի պրոլետարիատի պայքարի փորձով, որը կոչ էր անում պրոհի ելնել բուրժուական - կալվածատիրական կարգերի դեմ: Նա պոլերպում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմը, խաբաղանում, անարգանքի սյունին դամում բուրժուական նացիոնալիզմը. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պոետը կոչ էր անում ղենքը շուռ տալ կապիտալիստների ու նրանց հլու կամակատարների դեմ:

Ստեփան Շահումյանն ու նրա բնկերները Բաքվի և Թբիլիսիի ռեուլուցիոն պարբերական մամուլի էջերում լենինիզմի լուսի տակ պարզաբանում էին ռուս ժողովրդի կուլտուրական ու գրական ժառանգությունը, կոչ էին անում պնալ նրանց տրադիցիաներով:

Մաքսիմ Գորկու մասին Շահումյանի փալլուն հոդվածները ոչ միայն հսկայական նշանակություն ունեցան Գորկու երկերը մասնայականացնելու տեսակետից, այլև լավագույն օրինակներ են հանդիսանում, թե ինչպես էր մարքսիստական դրականադիտությունը մարտնչում ռեուլուցիոն դրականության հաղթանակի համար:

Այս ամենից բացի, մենք Շահումյանին ենք պարտական հարական ժառանգությունը առաջին անգամ մարքսիստորեն վերադնահատելու և նրանում դեմոկրատական տարրերը բնարելու և մատնանշելու համար: Այդ նա էր, որ մեր դրական ժառանգության մեջ տեսավ և տարբերեց երկու հակամարտ բանակներ՝ դասակարգային պայքարի արտացոլումը դրականության մեջ:

Դասակարգային ծանր մարտերում բուլշիկիների պարտիան ի մի ձուլեց տարբեր ազգությունների պատկանող միլիոնավոր աշխատավորների կամքը, նրանց բոլոր կարողությունները, քաղաքական ու կուլտուրական ջանքերը:

Այդ պատմական գործը իր լավագույն արգասիքները ափեց բազմազգ Անդրկովկասում, ուր տարբեր ազգությունների պրոլետարների դասակարգային համերաշխության փալլուն օրինակն էր հանդիսանում Բաքվի պրոլետարիատը: Մեր պարտիան

իր ռևոլուցիոն ամբողջ գործունեության ընթացքում մասսաների
գիտակցությանը հասցրեց այն ճշմարտությունը, թե հայերի, ադրբեյ-
ջանցիների, վրացիների և մեք երկրի մյուս ժողովուրդների միջև
անջրպետներ չկան, չեն եղել և չեն էլ կարող լինել: Հետևապես
և նրանց հոգևոր ու նյութական կուլտուրաների մեջ խտրություն և
օտարություն չկա:

Մեր պարտիան իր գոյության առաջին իսկ օրերից աշխատա-
վորության գիտակցության մեջ պատմաստել սկսեց այն ճշմար-
տությունը, որ Անդրկովկասի ժողովուրդների շահերը միևնույնը լի-
նելով, սերտորեն և անքակտելի կերպով շաղկապվում են ուսում
մեծ ժողովրդի շահերի հետ կյանքի բոլոր բնագավառներում՝ և՛
անտեսապես, և՛ քաղաքականապես, և՛ կուլտուրապես: Պարտիան
հարատև դաստիարակչական աշխատանքի միջոցով մասսաներին
ցույց տվեց, որ միջավայրի, պատմական վիճակի, շահերի նույ-
նությունը ստեղծել է նաև եղբայրական ժողովուրդների նյութա-
կան և հոգևոր վաստակների սերտ կապը:

Անդրկովկասի ժողովուրդների համար Բաքուն հանդիսացավ
ժողովուրդների ինտերնացիոնալ համերաշխության և համագոր-
ծակցության ցայտուն օրինակը: Նա մեծ դեր խաղաց հայ ժողո-
վրդի ազատագրության պատմության մեջ, ինչպես նաև նպաստեց
նրա կուլտուրայի և գրականության զարգացմանը՝ ռևոլուցիոն ճա-
նապարհով:



Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումից հե-
տո նոր թափով զարգացան այս տրագիցիաները: Սովետական իշ-
խանության առաջին իսկ ձեռնարկումների մեջ իր փայլուն արտա-
հայտությունը գտավ Լենինի-Ստալինի պարտիայի ազգային իմաս-
տուն քաղաքականությունը: Սկսվեց կուլտուրական իսկական վե-
րածննդի մի փայլուն շրջան՝ Ադրբեջանում բնակվող բոլոր ժողո-
վուրդների, այդ թվում և հայերի համար:

Զարգանալ սկսեց ձեռով ազգային, բովանդակությամբ՝ սոցիա-
լիստական կուլտուրան: Ադրբեջանական գրականության հետ մեկ-
տեղ բարգավաճեց նաև Ադրբեջանի սովետահայ գրականությունը:

Այս աշխատության մեջ մենք նպատակ ունենք հետադուրել
մեր բազմաբովանդակ ու հարուստ կուլտուրայի մի բնագավառ:

միայն: Բայց դրանում էլ իր բոլոր երանգներով բեկվում է մեր պարտկալի ազգային քաղաքականությունը, իր ամբողջ պերճութամբ դրսևորվում է ադրբեջանական և հայ ժողովուրդների մեծ բարեկամությունը:

Մենք կփորձենք հանրագումարի բերել Ադրբեջանում սովետական իշխանության գոյության մոտ երեք տասնամյակի ընթացքում սովետահայ գրականության զարգացման փաստերը, դրանք դիտելով մեր մեծ Սովետական Հայրենիքում, Ադրբեջանում և Հայաստանում սովետական գրականության զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ:

Շատ բան է կատարված այդ տարիների ընթացքում: Ադրբեջանում աճել և աճում են տասնյակ սովետահայ գրողներ, որոնց մի պատկառելի մասն արդեն գրական բավական փորձ ունի, որոնցից մի քանիսը հաստատորեն իրենց տեղն են գրավել սովետահայ գրականության մեջ, իսկ մյուսները տքնաջան աշխատանքով ձգտում են ստեղծագործական կատարելագործման:

Այս մեծ աշխատանքը հայտարարի բերելու փորձեր առաջժն չեն արված և Ադրբեջանում զարգացող սովետահայ գրականության համայնապարփակ արժեքավորումը հրապարակում չկա դեռ, եթե նկատի չունենանք «Կոմունիստ» օրաթերթում, «Խորհրդային գրող» հանդեսում և Երևանի պարբերականներում հրապարակված հոդվածները, որոնք վերլուծում և արժեքավորում են Ադրբեջանի սովետահայ այս կամ այն գրողի որևէ երկը, կամ որևէ գիրքը:

Մենք փորձում ենք տվյալ աշխատության մեջ հետամուտ լինել գրական կազմակերպությունների զարգացմանը, սուսնձին հեղինակների աճը դիտել դրա հետ առնչված և միևնույն ժամանակ մեր ուժերի չափ վերլուծել, արժեքավորել նրանց ստեղծագործությունները և շոշափել առաջիկա զարգացման հեռանկարները:

Մ Կ Զ Բ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

1920 թվի ապրիլին, Ադրբեջանի բանվորների և գյուղացիների երկարամյա պայքարը շահագործող կարգերի դեմ, ուսս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, պսակվեց վերջնական հաղթանակով: Անդրկովկասում առաջինը Ադրբեջանի աշխատավորներին հաջողվեց թոթափել դարավոր ստրկության լուծը և հաստատել սովետական իշխանություն:

Բոլշևիկների պարտիան և սովետական իշխանությունը Ադրբեջանում ստեղծեցին բոլոր ազգերի աշխատավորների փոխադարձ վստահության, սիրո, իմաստավորված համագործակցության մթնոլորտ: Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը սովետական իշխանության պայմաններում էլ ավելի ամրապնդվեց ու զարգացավ:

Ադրբեջանի աշխատավորները ռևոլուցիայի հաղթանակից անմիջապես հետո, միահամուռ ուժերով ձեռնարկեցին ռեսպուբլիկայի քայքայված ժողովրդական տնտեսության, մանավանդ ծայրաստիճան հետ մնացած ու ավերված նավթային արդյունաբերության վերականգնմանը: Դրա հետ մեկտեղ, ամբողջ թափով ծավալվեց նոր կյանքի կառուցումը բոլոր բնագավառներում:

Բաքվի պրոլետարիատը և Ադրբեջանի աշխատավորները միաժամանակ ամեն կերպ օգնում էին դեռևս դաշնակիների ու մենշևիկների անարգ լծի տակ հեծծող Հայաստանի ու Վրաստանի աշխատավորներին: Բաքվի պարտիական կազմակերպությունը Հայաստան ու Վրաստան էր ուղարկում ռևոլուցիոն պայքարի դպրոցն անցած բոլշևիկյան կադրեր: Բաքուն այդ օրերին այն մերձավոր փարոսն էր, որտեղից սոցիալիստական ռևոլուցիայի լույսը Թափանցում էր Հայաստան, Վրաստան, ճնշված, հարստահարված Մերձավոր Արևելքի երկրները:

Այնուհետև, երբ Հայաստանում և Վրաստանում հաստատվեց սովետական իշխանությունը, հայ, ադրբեջանական և վրաց ժողովուրդների տնտեսական, քաղաքական և

կուլտուրական միասնությունը դարձավ կոմունիզմի ուղիներով նրանց անշեղ առաջխաղացման օրենքը:

Սովետական իշխանության գոյության առաջին իսկ տարիներին կուլտուրական շինարարությունը Ադրբեջանում չայն ծափալընդունեց: Սովետական պետությունը պատմության մեջ առաջին անգամ իր հովանավորության տակ առավ ժողովրդական բուսավորության, կուլտուրայի, արվեստի զարգացումը:

Երկրի ժողովրդական տնտեսությունը վերականգնելու, այն սոցիալիստական ունեւերի վրա փոխադրելու տիտանական աշխատանքի հօտ մեկտեղ, բոլշևիկների պարտիան և սովետական իշխանությունը հետևողականորեն պայմաններ էին ստեղծում կուլտուրական ուսուցիչայի համար:

Դեռ ուսուցիչայից շատ առաջ սկսված գաղափարական սահմանազատումը Ադրբեջանի գրականության մեջ ավելի կոնկրետ ու շեշտված կերպարանք է ստանում սովետական իշխանության հաստատումից հետո: Նախառևուցիկոն գրողներից, ադրբեջանական ժողովրդի ազատագրության ու լավագույն ապագայի համար մշված պայքարին զինվորագրված վարպետները՝ Զալիլ Մամեդ Կուլիզադեն, Ա. Հախվերդիևը, Սուլեյման Սանին, Ուզեիր Հաջիբեկովը, Աբդուլա Շաիևը և ուրիշները հաստատապես կանգնում են սովետական դիրքերի վրա և ձգտում հասկանալ ու գեղարվեստորեն վերարտադրել նորը, զրչով նպաստել ժողովրդին՝ նոր կարգերի ու նոր կյանքի կառուցման գործում:

Սովետական իշխանությունը ստեղծում է բոլոր նպաստավոր պայմանները գրողների բեղմնավոր աշխատանքի համար: Եղած օրաթերթերից բացի, սկսում են լույս տեսնել հանդեսներ, հրատարակվում են կլասիկ գրականության լավագույն նմուշները և գրողների նոր երկերը: Այս շրջանումն է, որ սկսում են լույս տեսնել «Маариф və mədəniyyət» («Գիտություն և կուլտուրա»), «Гызыл гələм» («Կարմիր գրիչ»), «Шəрг гадыны» («Արևելքի կինը») հանդեսները, որոնք զգալի դեր խաղացին ադրբեջանական գրականության զարգացման մեջ՝ գրական նոր կադրեր առաջ քաշելու և դաստիարակելու տեսակետից:

Սովետական իշխանության առաջին իսկ տարիներից սկսած հայկական դպրոցները և հայերեն լեզվով տարվող կուլտուրական հիմնարկներն ու բոլոր՝ ձեռնարկումները շարունակ գտնվում են Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության և կառավարու-

թյան անդուլ ուշադրութեան կենտրոնում: Այդ ուշադրութեան ու հրգատարութեան պայմաններում էլ զարգանալ սկսեց սովետահայ գրականութիւնն Ադրբեջանում:

1920 թվի մայիսի 18-ից սկսած Բաքվում լույս է տեսնում «Կոմունիստ» օրաթերթը: Հենց նրա շուրջն էլ համախմբվեցին Բաքվի հայ գրասերները:

Իր գոյութեան առաջին երկու տարիներին «Կոմունիստ»-ը սխտեմատիկաբար տպագրում է նրանց գրական փորձերը, որոնք անժխտելի դեր խաղացին գրականութեան միջոցով լենինիզմի գաղափարները մասսաների մեջ տարածելու, գրականութեան նոր կադրեր պատրաստելու գործում:

Այդ շրջանում «Կոմունիստ»-ի էջերում հրապարակված են համարյա բացառապես բանաստեղծութիւններ, որոնք գտնվեցում են ուսուցիչայի հաղթանակը, նոր կյանքի այգաբացը, արձանագրում պրոլետարիատի հաղթանակի առաջին արգասիքները և կոչ անում ամրապնդել ուսուցիչայի նվաճումները:

1920 թվին «Կոմունիստ»-ի № 30-ում տպագրված Ալեհերի «Վեր կաց» բանաստեղծութիւնը տիպական է այդ տեսակետից: Հեղինակը, դիմելով «տանջված ու քաղցած բանվոր ընկերոջը», ազդարարում է, թե հասել է «փրկութեան ժամը»:

Տես, խորտակված է կուռքը բռնութեան,

Ծագեց նոր արև աշխարհի վրա.

Աշխարհը մերն է, ողջ կյանքը մերն է.

Հասել է վերջը կեղեքիչների,

Մենք պահանջում ենք կյանք ու աշխատանք.

Դե, վեր կաց ընկեր, բոլորս միասին

Կռենք ու կոփենք շենքն աղատութեան:

Ռեուլուցիոն ավյունով լի այս տողերը գրված են անվարժ գրչով, բայց բավական ցայտուն կերպով արտահայտում են ժամանակի ոգին և մասսաների տրամադրութիւնը:

Մի այլ բանաստեղծութեան մեջ արդեն թեմատիկական որոշ կոնկրետութիւն, սյուժետային գիծ կա: Նկարագրելով ուսուցիչայից առաջ բանվորների ծանր կացութիւնը, հեղինակն անպաճույճ լեզվով պատմում է, թե ինչպես մի օր կարմիր զինվորը բանվորին ասաց, որ ինքը եկել է նրա տանջանքին վերջ տալու և թե ինչպես նրանք «Միատեղ, միահամուռ զարկեցին և նոր կյանքի ալ դռները բացվեցին»:

Ռեւոլուցիայի հաղթանակի, բանվորների համերաշխության, ազգերի եղբայրության մոտիվներ են պարունակում հիշյալ շրջանում «Կոմունիստ»-ի էջերում հանդես եկած համարյա բոլոր հեղինակների դործերը:

Բեկման շրջանն սկսում է 1924-1925 թ. թ. մանավանդ գրականության հարցերի մասին պարտիայի Կենտկոմի 1925 թ. պատմական բանաձևից հետո: Ինչպես հայտնի է, այդ բանաձևը մեծ և բախտորոշ դեր խաղաց սովետական գրականության զարգացման բնագավառում: Բոլշևիկների պարտիան այդ բանաձևով մերկացրեց թշնամական տարրերի դարանակալ փորձերը՝ սովետական գրականությունը զաղափարազրկելու և զարգացման սոցիալիստական ղեկերից շեղելու ուղղությամբ:

Բուրժուական և մանր բուրժուական գրչակները մանր խմբակցությունները ձգտում էին գրականությունն անջատել բանվոր դասակարգի ընդհանուր գործից, այն դուրս բերել մեր պարտիայի և սովետական իշխանության ազդեցության շրջանակներից, «գրականության և արվեստի անկախության» դիմակի տակ զաղափարական կոպի հատուկ այդ ղեկքը ուղղել երիտասարդ սովետական իշխանության դեմ:

Մեր պարտիան մինչև վերջը մերկացրեց այդ փորձերը և հողմացրիվ արավ ամեն տեսակի գրական մաքսառնեղենների:

Այդ որոշումը լայն ճանապարհ բացեց գրական երիտասարդության բուռն զարգացման համար, իսկ փորձ և վաստակներ ունեցող գրողներին զինեց զաղափարապես և դիրքորոշեց:

Մինչ այդ Սովետական Ադրբեջանում հնից եկող վարպետների կողքին արդեն բավական աճել էին նոր գրողները: «ՔƏНҢ ГЫЗЫЛ ГƏЛƏМЛƏР» («Երիտասարդ կարմիր գրիչներ») ժողովածուի մեջ լուրջ ստեղծագործություններով հանդես են գալիս պոետներ Սուլեյման Ռուստամը, Մամեդ Ռահիմը, Ալի Վելիևը և ուրիշները:

1925 թ. Բաքվում լույս են տեսնում «Հայարսուն» և «Վիշկա» հայերեն հանդեսները, իսկ 1927 թվին՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլուցիայի 10-րդ տարեդարձին նվիրված «Վիշկա»-ի երկրորդ պրակը: Այս ժողովածուներում արդեն երևան է գալիս սովետահայ սկսնակ գրողների մի սովոր խումբ: Չնայած նրանց ստեղծագործություններն իրենց գեղարվեստական արժանիքներով, կառուցվածքի, լեզվական կուլտուրայի տեսակետից դեռ պրիմիտիվ էին, այնուամենայնիվ խիստ դրական դեր խաղա-

ցին Ադրբեջանում սովետահայ գրականության զարգացման մըթ-նոլորտ և պարարտ հող ստեղծելու համար:

Այնուհետև 1930 և 1931 թվերին հրատարակվում են «Շա-տրրվան» և «Կառուցման ճամբին» գրական ժողովածուները: «Շատրվան» ժողովածուի մեջ զետեղված են 18 երիտասարդ գրող-ների գործեր:

Սկանակ գրողների այս նոր կադրերը գալիս էին Բաքվի բան-վորական ակումբներին, գրադարաններին կից գործող գրական խմբակներից, առաջ էին քաշվում «Կոմունիստ» օրաթերթի շուրջը համախմբված բանվոր և գյուղացի թղթակիցների շարքերից: Դրանցից ոմանք անմիջապես աշխատում էին Բաքվի նավթահան-քերում և արդյունաբերական ձեռնարկություններում:

1924 թվից սկսած Ադրբեջանի գրական կազմակերպություն-ները աշխույժ աշխատանք ծավալեցին գեղարվեստական դրակա-նությունը լայն մասսաների մեջ տարածելու համար:

Գրական խմբակների ընդարձակ ցանցից բացի, պարբերա-բար կազմակերպվում էին գրական-գեղարվեստական երեկույթ-ներ, գրական դիսպուտներ: Բաքվի օրաթերթերը ավելի ու ավելի հաճախակի էին անդրադառնում գրականության խնդիրներին, տպագրելով տեսական, քննադատական հոդվածներ, ավելի լայն տեղ էին տալիս գրողների ստեղծագործություններին:

Պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական սեկ-ցիան այդպիսի մասսայական երեկույթներ ու դիսպուտներ էր կազմակերպում հայաշատ նավթահանքերում, խոշոր գործարան-ներում, Բալախանիի, Սև քաղաքի, Բիբի-Հեյբաթի, Արմենիքենդի շրջաններում:

Քանի գնում, ամրանում էր կապը Հայաստանի երիտասարդ սովետական գրականության հետ: Հաճախակի էին դառնում Հա-յաստանի գրողների այցելությունները Բաքու: Այդ օրերին էր, որ մեր բանաստեղծներն ու գրողները սրտառուչ և հուզիչ երգեր են ձոնում Բաքվին ու Ադրբեջանին: 1924 թվի մարտի 2-ին Բաքվի մամուլում երևան է գալիս, օրինակ, Վշտունու «Ադրբեջան» հան-րահայտ բանաստեղծությունը, որը և թարգմանվում է ադրբեջա-ներեն: Բաքվի մամուլը սիստեմատիկորեն տեղ է տալիս Հայաս-տանի գրողների ստեղծագործություններին:

Կատարվող մասսայական աշխատանքի թափը ցույց տալու համար բավական է ասել, որ 1925 թվի ընթացքում նավթաշխարհի

Համարյա բոլոր խոշոր շրջաններում, գրադարաններում անգի են ունենում Արագլի, Հակոբ Հակոբյանի, Վշտունու և ուրիշների ըստեղծագործություններին նվիրված երեկոյթներ, դիսպուտներ: Այդ տարվա մայիսի 18-ի համարում «Կոմունիստը»-ը ամփոփում է մեր պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանի կյանքի և ստեղծագործության, ուսումնասիրության համար ծավալված մասսայական աշխատանքի արդյունքները: Թերթը նշում է բանվոր ընթերցողների կողմից Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունների բացառիկ խաչգավառ ընդունելությունը:

Այս ամենից բացի, Բաքվի պարբերական մամուլում և առանձին իրատարակություններով լույս են ընծայվում ռուսական ռեդուցիոն գրողների ստեղծագործությունները: Թարգմանվում և հրապարակվում են Ալեքսանդր Բլոկի «Տասներկուսը» պոեմը, Մայակովսկու երկերից առանձին խաղաղությունը: Հոգվածներ են տպագրվում նվիրված ռուս ռեդուցիոն գրականության զարգացմանը: Հայ ընթերցողները թարգմանությունների շնորհիվ, գրական երեկոյթների միջոցով ծանոթանում են Ադրբեջանի կլասիկ գրականության նմուշներին: Լույս են տեսնում Ալեքսեյ Սաբիրի «Հոպ-հոպնամե», Մերդ Ագիմ Շիրվանու բանաստեղծությունների ժողովածուները, թարգմանվում են Միրզա Ֆաթալի Ախունդովի, և Հոսիվերգիևի առանձին ստեղծագործությունները:

Ահա այս աշխույժ միջավայրում էլ գրական դպրոց են աճելու Ադրբեջանի հայ երիտասարդ գրողները: Դա ուսման ու որոնումների շրջան էր նրանց համար:

Բաքվում ապրող և ստեղծագործող գրական երիտասարդությունը սոցիալիստական ռեդուցիայից հետո իր շրջապատում ամենուրեք տեսնում էր ազատագրված աշխատավոր մարդու քաղաքական ակտիվությունն ու ստեղծագործական խանդավառությունը, նորի կոխիվ հնի դեմ՝ կյանքի բոլոր ասպարեզներում, բանվորների և գյուղացիների միահամուռ գրոհը իշխանությունը կորցրած, բայց դեռ չախջախված դասակարգային թշնամիների դեմ, լուսավորության հաղթանակը խավարամոլության, սնոտիապաշտության և հետամնացության դեմ:

Պաշտարի և աշխատանքի մեջ, հնի փլատակների վրա վեր էր բարձրանում նոր կենցաղը, ծնվում էր նոր էպոխայի բազմապիսին:

Առօրեա կյանքում տեսնելով այս երեւոյթները, մեր երիտա-
սարդ գրողները փորձում էին իրենց երկերում արտացոլել այդ
ամենը, բայց գեղարվեստական ընդհանրացումներ կատարելու և
եռնույթները վերլուծելու հմուտությունն էր առաջժմ պակասում նը-
րանց:

Ահա թե ինչու այդ օրերին ստեղծված գրական նրկերի թեմա-
տիկան շատ նեղ է, երեւոյթները նկարագրվում են մակերեսօրեն,
չկա դրանց խոր ճանաչողությունը: Այդ գործերը մեծ մասամբ ար-
ձանագրում են երեւոյթները, կրելով դեկլարատիվ, կոչական
բնույթ:

Այս առումով բնորոշ հնչիւնակ է բանաստեղծ Լանտեն: Նրա
ստեղծագործությունների ճնշող մեծամասնության թեման առնված
է ֆեոդալական Արեւելքի ժողովուրդների կյանքից: Հնչիւնակը նշում
է նրանց ճորտական վիճակը, հղիացած տերերի դազանու-
թյունները և այդ պայմաններում աշխատավոր մարդու դասակար-
գային զարթոնքը: Պոետի երկերի մեծ մասը սյուժետային կանգա-
յունեն, ձգձգված են, ձևի տեսակետից անկատար, լեզվական
կուլտուրան անմշակ է: Լանտեն գրել է նաև բաղմամբով բանաս-
տեղծություններ, որոնց մեջ նկարագրված է կյանքը Բաքվում,
այնպես, ինչպես տեսել է իր՝ պոետի աչքը, ինչպես զգացել ու
ընկալել է ինքը: Լանտեն երեւոյթները դիտում է մակերեսից, նա
տեսնում է շարժումը միայն արտաքուստ:

1925 թ. լույս տեսավ «Բռնույցք» գրքույկը: Իր այդ դործը հե-
ղինակը վերնադրել է «Կենցաղագոյն, կամ կինոժապավեն —
էսքիզեն», — ինչ կուզես, համարիւր ընթերցող: Ինչի մասին ասե-
լի խոսում այստեղ հնչիւնակը՝ մեղիդ, մոլլաների ազանի, եկեղե-
ցու, քահանաների մասին: Նկարագրվում են Կարմիր Բանակի եր-
թը փողոցով, էյեկտրաքարշ, սպորտի քարավան, շայխանա, բան-
ֆակ: Մի անօրինակ խառնիճադանչ գրություն՝ ամեն տեղ շար-
ժում, վազք, եռ ու ղեռ:

Ամեն ինչ մակերեսից է առնված, չկա երեւոյթների վերլուծու-
թյունը. չի մեկնվում հնի և նորի պայքարը, չի բացատրվում նոր
կենցաղի առավելութունը հնի նկատմամբ: Նրթ է, շարժում, գրոհ:
Տեղի են տալիս բուրժուաները, նեպմանները, տեղի են տալիս հին
սովորություններն ու բարքերը: Բայց թե ինչու և ինչպե՞ս, հեղի-
նակն այդ հարցերին չի պատասխանում, Մեր իրականութան մեջ

տեղի ունեցող սոցիալական վիթխարի բախումների՝ դասակարգային պայքարի տրամաբանությունը հեղինակը չի ընկալում, այդ պատճառով էլ նա մնում է որպես լոկ դիտողի, արձանագրողի դերում, իսկ երբեմն էլ երեույթները նրա ստեղծագործության ծուռ հայելու մեջ աղավաղվում են:

Այն, ինչ ասացինք Հանուհի ստեղծագործության մասին, ավելի կամ պակաս չափով վերաբերում է նաև մինչև 1927 թիվը Բաքվում պարբերաբար տպագրվող բանաստեղծներին՝ Տարտալշիկ Արտաշին, Կարմենին, Զուլամյանին և մյուսներին: Գուցե և հենց դա եղավ պատճառը, որ այս հեղինակները չհաստատվեցին մեր գրականության մեջ:

Հիշյալ տարիներին Բաքվի սկսնակ հայ դրուները ապահովված չէին մարքս-լենինյան գրականագիտության սկզբունքներին տիրապետող քննադատների հսկողությամբ և օժանդակությամբ: Դրականագիտության և քննադատության բնագավառը հալերեն հրատարակություններում թափուր էր: Աստղաբեզը պատկանում էր մի քանի թերուս, իրենց հայացքներով անկայուն անձնավանդությունների, որոնց «գրականագիտական» մարգարեները ապագիրքորոշում էին գրական երիտասարդությանը: Նման «գրական դործիչներից» էր, օրինակ, Սերո Մանուցյանը, որը կանխած էր հակալենինյան դիրքերի վրա, առիթ բաց չէր թողնում մեր մամուլը խցկելու իր հնամաշ հնչակյան հակառուսոցիւմ հայացքները: Մանուցյանը տարբեր հանգեքով կրկնում էր տրոցկիստական լոռոնսկիական նենգամտությունները սովետական գրականության վերաբերյալ, վատաբանում էր ուսու ուսուցիչին գրականությունը, սովետական գրականության նախահայր Մաքսիմ Գորկուն հայտարարելով մանր-բուրժուական գրույ: Դրա հետ միասին սկսնակ և երիտասարդ դորդների գործերը քննարկելիս, իր գոհհիկ ու արտառոց հետևություններով շեղում էր նրանց ճշմարիտ ճանապարհից:

Մանուցյանի և նրա նմանների այս փորձերը ջախջախիչ հարված ստացան Ադրբեջանի բուլշևիկների կենտրոնական Կոմիտեի կողմից: Եվ վերջ ի վերջո նա մերկացվեց ու հեռացվեց գրական երիտասարդության ղեկավարման բնագավառից:

Ինչպես Ադրբեջանի սովետական գրականությունն ամբողջովին ուռած, նույնպես և սովետահայ գրականությունը և նրա կադրերը շարունակ լինելով ռեսպուբլիկայի պարտիական կազմակեր-

պությունների ուշադրության կենտրոնում, համախմբեցին իրենց ուժերը գրականության մեջ խցկվել փորձող հակալենինյան ամեն տեսակի տարրերի դեմ մղված պայքարում, փշրեցին նրանց դիմադրությունը և հարթեցին զարգացման և արագ առաջխա-
շացման ուղին:

Այդ պայքարը նախ և առաջ մղվում էր մեր գրականության զաղափարայնության և պարտիականության համար, նրա որակի բարձրացման ու արվեստի կատարելագործման համար:

Մեր պարտիայի 1925 թվի հունիսի 18-ի պատմական բանա-
ձևի անշեղ կենսագործումն պահանջում էր, որ սովետական զար-
գացող գրականությունը լինի պարտիական, որ նա լինի սոցիալիս-
տական հասարակություն կառուցող մարդկանց դաստիարակու-
թյան հզոր զենքը:

Բոլշևիկների պարտիան իր գոյության ամբողջ ընթացքում
կանգնած լինելով գրականության պարտիականության դիրքերի
վրա, շարունակ ընդգծել է գաղափարական պայքարի այդ դորեդ
միջոցը բանվոր դասակարգի և աշխատավորության շահերին ծա-
ռալեցնելու անհրաժեշտությունը:

Վլադիմիր Իլիչ Լենինը դեռ 1905 թվին «Պարտիական կազմա-
կերպություն և պարտիական գրականություն» հոդվածում մատնա-
նշել է, թե «Գրականությունը պետք է դառնա պարտիական: Բուր-
ժուական սովորույթներին հակակշիռ, բուրժուական գործադրա-
կան, չարչիական մամուլին հակակշիռ, բուրժուական գրական
կարերիզմին և ինդիվիդուալիզմին, «ազապական անարխիզմին» և
շահի հետևից վազելուն հակակշիռ,— սոցիալիստական պրոլե-
տարիատը պետք է առաջ քաշի պարտիական գրականության
սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և հնարավորին չափ լիա-
կատար ու ամբողջական ձևով այն կիրառի կյանքում»:

«Իսկ, ո՞րն է պարտիական գրականության այդ սկզբունքը,—
շարունակում է Վ. Ի. Լենինը,— ոչ միայն այն, որ սոցիալիստա-
կան պրոլետարիատի համար գրական գործը չի կարող անձնավո-
րությունների կամ խմբերի շահադիտական զենքը լինել. նա ընդ-
հանրապես չի կարող պրոլետարական ընդհանուր գործից անկախ
անհատական գործ լինել: Կորչեն ոչ պարտիական գրողները,

կորչեն Վերմարդ-գրողները: Իրական դործը պետք է դառնա պրո-
լետարական ընդհանուր գործի մի մասը¹:

Լենինյան այս սկզբունքի՝ «հնարավորին չափ ու ամբողջա-
կան» կիրառման նպատակն էր հետապնդում գրականության պար-
տիական ղեկավարության վերաբերյալ պարտիայի Կենտկոմի
վերոհիշյալ որոշումը:

Ինչպես արդեն ասել ենք, Ադրբեջանի գրողները խանդավա-
ռությամբ ընդունեցին այդ որոշումը և հետևողական աշխատանք
ծավալեցին նրա կենսագործման համար:

Դրանից մոտ երեք տարի անց, 1928 թվի հունվարի 13-ին, տե-
ղի ունեցավ Ադրբեջանի պրոլետարական գրողների առաջին համա-
գումարը: Քննության առնվեցին գրականության գաղափարայնու-
թյան համար մոլորդ պայքարի հարցերը: Ամբողջ սրությամբ դիմեց
սոցիալիստական շինարարության հերոսիկան ղեղարվեստական
երկերում վերարտադրելու խնդիրը: Մեր ժամանակի հերոսի, նոր
կազմավորվող ու ձևավորվող մարդու գրական կերպարի հարցը
գրողների առջև ծառացել էր իր ամբողջ սրությամբ:

Այդ շրջանում բոլշևիկների պարտիայի և սովետական իշխա-
նության վերցրած դիժը երկրի ինդուստրացման բնագավառում
արդեն արմատական փոփոխություններ էր մտցնում էկոնոմիկայի
մեջ: Սովետական երկիրը վաղուց բուժել էր առաջին իմպերիալիս-
տական պատերազմի հասցրած վերքերը. քաղաքացիական կռիվ-
ների ժամանակ կատարված ավերածությունների հետևանքները
վերացված էին. արդեն ստեղծվել էր սոցիալիզմի կառուցման հաս-
տատուն ֆունդամենտը: Մեր Հայրենիքի ամբողջ ժողովրդական
տնտեսության մեջ տեղի ունեցող վերակառուցման մի բուն պրոցես:

Բոլշևիկների պարտիայի լենինյան-ստալինյան քաղաքակա-
նության շնորհիվ առանձնապես բուռն թափով զարգացավ Սովե-
տական Միության ազգային ռեսպուբլիկաների, այդ թվում և
Ադրբեջանի ժողովրդական տնտեսությունը:

Աղատագրված աշխատավոր մասսաների ստեղծագործական
նախաձեռնությունը հորդում էր հուժկու հոսանքով:

Ադրբեջանի զարգացող նավթարդյունաբերության մեջ, նոր
ծնվող արդյունաբերական ձևանարկություններում, սովետական

¹ Լենին «Ճեղքեր», հատ. VIII, ուս. հրատ, էջ 387:

գլուղում պայքարի ու աշխատանքի պրոցեսում ներքնապես կերպարանափոխվում էին մարդիկ։

Աշխատանքը, որ ռեվոլյուցիայից առաջ անտանելի բեռ էր դառնում էր պատվի, փառքի ու հերոսության գործ։ Կյանք էին մտնում սովետական ուսումնական հաստատություններ ավարտած, կոմունիստական աշխարհայացքի տեր նոր կադրեր, որոնք արդեն երեւթները դիտում էին մարքս-լենինյան ուսմունքի տեսանկյունով։ Խառնում էին սովետական ինտելիգենցիայի շարքերը։

Տնտեսական և կուլտուրական կյանքի բնագավառում կատարված այս փոփոխությունները տեղաշարժել էին խորտակում էր հին հասկացողությունները, հասարակական համակեցության հին նորմաները։ Նոր կենցաղը մարմնավորվում էր, ամեն մի քաջամիտ խում նկատելի ու շոշափելի իրականություն դառնում։

Հսկայական սրտական փոփոխություններ էին կատարվում նաև Ադրբեջանի գյուղում։ Տնտեսական և կուլտուրական վերելքի շնորհիվ այստեղ հարթվում էր կոլխոզային տնտեսածնի հաղթանակի ուղին։

Այսպիսի պատմական պայմաններում է, որ Ադրբեջանի գրողներն անցկացրին իրենց առաջին համագումարը։ Բնական է, որ այնտեղ է ամբողջ սրովյամբ դրվել այս խոշոր պատմական իրադարձությունների գեղարվեստական ընդհանրացման հարցը։ Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ էր, որ մեր գրողները ավելի խոր թափանցեին կյանքի «գաղտնարանները», ավելի լավ հասնեին սովետական մարդկանց ու նրանց գործերը, կատարելագործեին իրենց գրական վարպետությունը։

Այս համագումարից կարճ ժամանակ անց, ադրբեջանական սովետական գրականությունը հրապարակ է հանում մի ամբողջ շարք արժեքավոր երկեր, որոնց հեղինակների մեծ մասը սովետական իշխանության օրոք գրական ասպարեզ իջած և տնած երիտասարդ գրողներ էին։ Պոետ Սուլեյման Մուստամբ հրատարակեց քաղաքացիական պատերազմի հերոսական իրադարձությունները վերարտադրող «Կոնատ հերոսը», «Պարտիզան Ալի», «Ձուլ» (1928-1932 թ. թ.), Սամեդ Վուրդունը՝ «Կոմերիտական պոեման»՝ «Ժամանակ» պոեման, Մահմեդ Հյուսեյնը՝ «Վարարումը», Սուլեյման Ռահիմովը՝ «Շամո» վեպը և ուրիշները։ Այս երկերում Ադրբեջանի

գրողները վերաբառադրում են սովետական մարզկանչ, հերոսական գործերը, նրանց անձնվիրությունը թշնամու դեմ մղվող դաժան պայքարում, նրանց սերը դեպի Հայրենիքը. բոլշևիկների պարտիան և սովետական իշխանությունը:

1930 թվին Բաքվում հրապարակվեցին հայերեն երկու գրական ամսանախ՝ «Շատրվան» և Ադրբեջանում սովետական իշխանության հաստատման տառնամյակին նվիրված «Ապրիլյան շեփորը»: Ժողովածուներում արդեն մենք հանդիպում ենք նոր անունների, Ադրբեջանի սովետահայ գրականության նոր համալրմանը:

Ակսիկ էր գրական մի նոր, ավելի խրազեղ, ավելի շրջահայաց ու շնորհալի ջոկատի զարգացումը: Մենք հանդիպում ենք բանաստեղծներ Թաթուլ Հուրյանի, Աշոտ Գրաշու, Սամվել Գրիգորյանի, արձակագիրներ Գարեգին Սևունցի, Մարգար Դավթյանի. Արշավիր Դարբնու առաջին լուրջ ստեղծագործություններին:

Նշանակալիկն այն է, որ պոեզիայի հետ միասին, այժմ արդեն երևան են գալիս արձակ գործեր՝ նովելներ, օրերկներ. պատմվածքներ:

Ադրբեջանի պարտիական կազմակերպությունը միջոցներ է ձեռք առնում երիտասարդ գրողների հետ աշխատանքը ուժեղացնելու, նրանց աճմանն ըստամենայնի նպաստելու համար:

Դեռ 1928 թվի ապրիլի 31-ին կազմակերպվում է սովետահայ երիտասարդ գրողների իմբակ, որի բյուրոյի կազմում ընտրվում են Աշոտ Գրաշին, Մ. Դավթյանը, Գարեգին Բեսը և ուրիշները: «Կոմունիստ» օրաթերթին ուժեղացնում է իր ուղեգրությունը դեպի գրականությունը: Ակսիկ հաճախ են հրապարակվում երիտասարդ գրողների գործերը, բայց և ավելի խիստ պահանջներ են ներկայացվում նրանց՝ երկի որակի և գեղարվեստական արժեքի նկատմամբ:

Պայքար է սկսվում բովանդակարից, բազաքականապես աղետույ ու նպատակասլաց, գեղարվեստորեն բարձրորակ գրական գործերի համար:

Բաքվի հայերեն մամուլում լայնորեն մասսայականացվում են սովետական կլասիկների և սովետական գրողների գործերը: «Կոմունիստ»-ը հետևողականորեն պրոպագանդա է անում սոցիալիստական գրականության մեծագույն վարպետ Ալեքսեյ Մաքսիմովի. Գուրկու մտքերը և ասույթները գրականության վերաբերյալ: Բաքվի

երիտասարդ գրողների գործերը քննադատական վերլուծության են ենթարկվում մեր պարտիայի ցուցումների լույսի տակ: Ադրբեջանական կյանքի և ժամանակակից դրականության լավագույն նմուշները թարգմանվում են հայերեն և հրապարակվում:

Այս ամենն ավելի ու ավելի նպաստավոր միջոցներ են ըստեղծում սովետահայ գրականության զարգացման համար:

Ուրեմն, եթե մինչև 1928-32 թվերը գրայի գործ էր կատարվում սովետահայ պոեզիայի զարգացման ուղղությամբ, ապա վերջին երկու-երեք տարում հրապարակ են իջնում երիտասարդ գրողներ, որոնք զարգացնում են մյուս ժանրերը՝ արձակագրությունը, դրամատուրգիան:

1930 թվին, Բաքվի Հայպետթատրոնը բեմադրում է Արշավ Դարբենու առաջին պիեսը՝ «Հողը ծիծաղում է», որի թեման առնված է սովետական գյուղի կյանքից, ուր վերաբառադրված են նախկին սեփականատիրական փոշիացած ու սակավահող տնտեսություններում սովետական իշխանության օրոք կատարված փոփոխությունները, աշխատավոր գյուղացիության բեկումը դեպի կոլեկտիվները՝ գյուղում տեղի ունեցող դասակարգային սուր պալքարի ֆոնի վրա:

Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումից անցել էր մի տասնամյակ և այդ կարճ ժամանակվա ընթացքում ադրբեջանական գրական կադրերի հետ մեկտեղ, աճում ու հասակ էին առնում սովետահայ գրողները: Հաղթահարելով դժվարությունները, նրանք հետևողականորեն ձգտում էին կատարելագործման, աշխատում էին արժանի լինել սովետական գրողի բարձր կոչմանը, արդարացնել մեր պարտիայի և ժողովրդի հույսերը և վստահությունը, դեպարվաստական գրականության հասուղենքով մասնակցել սոցիալիստական հասարակության կառուցման վեհ գործին:

Նրանց հաջող և արագ վերելքի համար կային բոլոր պայմանները: Նրանք ապրում և ստեղծագործում էին սովետական մի ուսուցիչական, ուր միշտ անմար են ժողովուրդների ստալինյան բարեկամության տրամադրականները, որտեղ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը կիրառվում է անսպառ կերպով և տալիս իր հրաշալի արդյունքները:

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1932 թվի ապրիլի 23-ին ՀամԿ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեն պատմական որոշում ընդունեց Սովետական Միության գրական կազմակերպությունները վերակառուցելու և սովետական գրական-նություն հետագա զարգացման ուղիների մասին:

Այս որոշումը նոր շրջադարձ ստեղծեց գրականության ճա-կատում:

Ելնելով դասակարգերի և նրանց իդեոլոգիաների բազմամյա պայքարի փորձից, մեր պարտիայի Ստալինյան Կենտրոնական Կո-միտեն կրկին անդրադարձավ գրականության պարտիականության սկզբունքին, հետևելով անմահ Լենինի ցուցումներին, նշեց նոր պայմաններում դրա «հնարավորին չափ լիակատար ու ամբողջա-կան կիրառման» ուղիները: Կենտրոնական Կոմիտեն մատնանշեց սովետական գրականության հսկայական դերը սոցիալիստական հասարակարգ կառուցելու և նոր կյանք ստեղծող մարդկանց աշ-խարհայացքն ու բնավորությունը ձևավորելու գործում:

Սովետական գրականության առաջ պատմական խնդիր էր դրված՝ արտացոլելով մեր իրականության տիպական երևույթնե-րը, կերտելով մեր ժամանակի տիպական խարակտերները, ազդե-ցության բոլոր միջոցներով ներդրածել սոցիալիստական շինաբա-րության ընթացքի վրա:

Կենտրոնական Կոմիտեի այդ որոշումը, այսպիսով, խնդիր էր դնում գրողների առաջ լինել սոցիալիզմի ակտիվ զինվորներ: Սովետական գրողը ժողովրդից ու նրա պայքարից կտրված ինքըն-ամիտի «արվեստի» քուրմ չէ, որը ինչ որ բարձրությունից դի-տում է իրադարձություններն ու մարդկանց և իր խորհրդածու-թյունների ու եզրակացությունների համար նյութ քաղում: Ոչ: Սո-վետական գրականությունը կառուցված լինելով պարտիական սկզբունքի վրա, գաղափարապես նպատակասլաց է, մարտնչող, մա-հացող բուրժուական կարգերի ու նրանց մնացորդների անողոք մերկացնողը, միաժամանակ նոր, սոցիալիստական կարգերի ակ-տիվ ջատագովը, որը տեսնում է ժողովրդի այսօրը և այսօրվա մեջ շոշափում է կոմունիստական լուսավոր ապագայի ուրվագծերը, և ոչ միայն տեսնում է, այլև գեղարվեստական խոսքի միջոցով տես-նել և զգալ է սալիս միլիոնավոր մարդկանց:

Մեր պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1932 թվի ապրիլյան որոշումը ուղենիշ հանդիսացավ սովետական գրականության հետագա զարգացման համար, մեր գրական կադրերին ղինելով իրենց վեհ պարտականությունների գիտակցությանը:

Այս պատմական որոշումից կարճ ժամանակ անց, 1934 թ. օգոստոսին տեղի ունեցավ ՍՍՌՄ գրողների առաջին համագումարը, ուր ճառով հանդես գալով, ընկ. Ժդանովը ամփոփեց սովետական գրականության հաջողությունները, մատնանշեց այն ավելի մարտունակ դարձնելու, նրա որակը բարձրացնելու միջոցները:

«Սոցիալիստական գրականության հաջողությունները,— առել է ընկեր Ժդանովը,— պայմանավորված են սոցիալիստական շինարարության հաջողություններով: Նրա աճը մեր սոցիալիստական կարգերի հաջողությունների և նվաճումների արտահայտությունն է: Մեր գրականությունը ամենաերիտասարդ գրականությունն է բոլոր ժողովուրդների և երկրների գրականությունների համեմատությամբ: Դրա հետ մեկտեղ, նա հանդիսանում է ամենագուղափարական, ամենաառաջավոր և ամենառևոլուցիոն գրականությունը: Չկա և չի եղել մի գրականություն, բացի սովետական գրականությունից, որ կազմակերպեր աշխատավորներին և հարստահարվողներին բոլոր և ամեն տեսակի շահագործման և վարժուճորտության լծի վերջնական ոչնչացման համար մղվող պայքարում:

Չկա և երբեք չի եղել այնպիսի մի գրականություն, որն իր երկերի թեմատիկայի հիմքում դներ բանվոր դասակարգի և գյուղացիության կյանքն ու նրանց պայքարը սոցիալիզմի համար: Աշխարհի ոչ մի երկրում ու ոչ մի տեղ չկա այնպիսի գրականություն, որ պաշտպաներ ու պնդեր բոլոր ազգերի աշխատավորների իրավահավասարությունը, պաշտպաներ կանանց իրավահավասարությունը: Բուրժուական երկրներում չկա և չի կարող լինել գրականություն, որը հետևողականորեն ջախջախեր ամեն տեսակի խավարամոլություն, ամեն տեսակի միստիկա, ամեն տեսակի տերտերականություն և սատանայություն, ինչպես ջախջախում է մեր գրականությունը:

Այդպիսի առաջավոր, գաղափարական և ռևոլուցիոն գրականություն կարող էր դառնալ և իրոք դարձավ միայն սովետական

գրականութիւնը — մեր սոցիալիստական շինարարութեան հարա-
զատ արտացոլումը:

Նլնելով Համկ(բ)Պ Կենտկոմի ապրիլյան որոշման ոգուց, հա-
մագումարն ընդգծեց, որ դրողը կարող է հաջողութեամբ լուծել իր
առջև կանգնած խնդիրները, լինելով մեր ժամանակաշրջանի ամե-
նաառաջագեմ գաղափարների՝ կոմունիզմի գաղափարների կրողը
ու պրոպագանդիստը: Սովետական մարդկանց հոգեկան շենքի կա-
ռուցման համար նա պետք է ընտրի համապատասխան նյութեր.
մեր բազմաբովանդակ ու հարուստ իրականութեան մեջ տեսնի և
դեղարվեստորեն վերաբնութագրի այն ամենը, ինչ կարող է հաստա-
տել ու զարգացնել նորը, կոփել ու դաստիարակել նոր մարդուն.
այն ամենը, ինչ պատկանում է լուսավոր ապագային:

Շոշափելով սովետական գրողի պարտականութիւններին հար-
ցը, ընկեր ժդանովը այդ նույն ճառում ասել է.

«Ընկեր Ստալինը մեր գրողներին անվանել է մարդկային հո-
գու ճարտարապետներ: Ի՞նչ է նշանակում այդ: Ի՞նչ պարտաւե-
նութիւններ է դնում մեզ վրա այդ կոչումը:

Այդ նշանակում է առաջին հերթին ճանաչել կյանքը՝ այն գե-
ղարվեստական ստեղծագործութիւնների մեջ ճշտորեն պատկերել
կարողանալու համար, պատկերել այն ոչ սխուլաստիկ ձևով, ոչ
մեռած, ոչ որպէս «օբեկտիվ» իրականութիւն, այլ պատկերել ի-
րականութիւնը նրա ռեալութիւնը զարգացման մեջ: Դրա հետ մեկ-
տեղ գեղարվեստական պատկերման ճշտութիւնն ու պատմական
կոնկրետութիւնը պիտի զուգորդվեն աշխատավոր մարդկանց գա-
ղափարական վերակերտման և սոցիալիզմի ոգով դաստիարակե-
լու խնդրի հետ»:

Այսպիսով պարտիան առաջ քաշեց և մատնանշեց այն ճշ-
մարտութիւնը, որ սովետական գրականութիւնը ամբողջ կրթով
պետք է քննադատի, մերկացնի հին շահագործման իրականութիւ-
նը, կապիտալիստական կարգերի գայլային օրենքները, բա-
ցահայտի բուրժուական գաղափարախոսութեան և մորայի ամբողջ

1 Ժդանով. Սովետական գրականութիւնը ամենագաղափարական, ամե-
նաառաջավոր գրականութիւնն է աշխարհում — ուսու. հրատ., էջ 8:

ապականութիւնը, ապացուցի այդ ամենի կործանման տնխուստ-
փելիութիւնը:

Գրականութիւնը պետք է լիարյուն և ճշմարիտ երանգներով
վերարտադրի ՍՍՏՄ աշխատավորների իրենց ազատագրութեան
համար մղած ռեւոլուցիոն մարտերի, մեր պարտիայի ռեւոլուցիոն
գործունեւութեան, սոցիալիստական ռեւոլուցիայի նախապատրաստ-
ման և սովետական իշխանութեան համար զինված ահեղ կռիւների
հերոսական: Սովետական գրականութեան առջև ամբողջ հասակով
ծառանում է սոցիալիզմի ֆլագմանի թեմատիկայի հարցը:

Մաքսիմ Գորկին, խոսելով, սովետական գրականութեան առջև
ժառանգած կարևոր ու բարդ խնդիրների մասին, ասում է. «Մեր
գրողների գործը դժվար է ու բարդ: Նա չի հանգում միայն հին ի-
րականութիւնը քննադատելուն և նրա արատների վարակիչ հատ-
կութիւնները մերկացնելուն: Նրանց խնդիրն է ուսումնասիրել,
ձեռնորոշել, վերարտադրել և դրանով իսկ հաստատել նոր իրակա-
նութիւնը: Հարկավոր է սովորել տեսնել, թե ինչպես հին նեխված-
քի ճիւղի մեջ բռնկվում են ու բոցավառվում ապագայի կրակները»:

Գրողների առաջ խնդիր էր զրվում, ուրեմն ղեղարվեւտական
խոսքի միջոցով մասսաների գիտակցութեանը հասցնել սոցիալիս-
տական հասարակակարգի և նոր մարդու զարգացման հեռանկար-
ները, տրվագծել մեր ապագան:

Կենտրոնական Կոմիտեի որոշումը անգնահատելի դեր խա-
ղալ ղեղարվեւտական գրականութեան և գրականագիտու-
թեան սկզբունքների, մեթոդոլոգիայի դիրքերը ճշտելու համար:

Սովետական գրողների առաջին համագումարը միահամուռ
բնգունեց, որ մեր գրականութեան մեթոդը հանդիսանում է սոցի-
ալիստական ռեալիզմը, միաժամանակ մատնանշելով, որ ռեւոլու-
ցիոն ռոմանտիզմը այդ մեթոդի բաղկացուցիչ մասն է:

Ընկեր Ժդանովը անդրադառնալով այս հարցին, ասում է.

«Մենք ասում ենք, թե սոցիալիստական ռեալիզմը սովետա-
կան ղեղարվեւտական գրականութեան և գրական քննադատու-
թեան հիմնական մեթոդն է, իսկ դա ենթադրում է, որ ռեւոլուցիոն
ռոմանտիզմը պետք է մտնի գրական ստեղծագործութեան մեջ որ-
տես բաղկացուցիչ մաս, որովհետև մեր պարտիայի ամբողջ կյան-
քը և բանվոր դասակարգի ամբողջ կյանքն ու նրա պայքարը կա-
յանում է ամենափոխու և ամենազգաստ պրակտիկ աշխատանքը»

մեծագույն դուրացանքներգության և վիթխարի հեռանկարների հետ
գուրգորդելու մեջ:

Մեր սլարտիան միշտ ուժեղ է նրանով, որ միացրել ու
միացնում է խորը գործիմացությունը և գործնականությունը լայն
հեռանկարների հետ, մշտապես առաջ սլանալու և կոմունիստա-
կան հասարակությունը կառուցելու համար մղվող պայքարի հետ:
Սովետական գրականությունը պետք է կարողանա ցույց տալ մեր
հերոսներին, պետք է կարողանա ցույց տալ մեր գալիք վաղը: Դու
ուսուպիա չի լինի, որովհետև մեր վաղը պատրաստվում է պլանա-
չափ և գիտակցական աշխատանքով արդեն այսօր»:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1932 թվի ապրիլյան ու-
րուշումից հետո բազմազդ սովետական ժողովուրդների գրական
վասկները տարիներ շարունակ նախապատրաստված ու ցեմեն-
տավորված հոներով հոսեցին ավելի հուժկու թափով՝ մի հոսանքի
մեջ խառնվելու համար:

Աննախընթաց նպաստավոր պայմաններ ստեղծվեցին սովե-
տական ժողովուրդների գրական վաստակներին փոխադարձաբար
ծանոթանալու և նրանց փոխադարձ ներդրածության համար: Ազ-
գային ռեսպուբլիկաների գրական կադրերն սկսեցին ավելի հա-
մապարտիվ ձևով ներառնել ռուս մեծ ժողովրդի գրականության
առաջադիմական տրագիցիաները: Նրանք Մաքսիմ Գորկոց սովո-
րում էին ճանաչել կյանքը, շոշափել հեռանկարները, սովորում էին
Գորկու պես վեր հանել աշխատավոր մարդու բոլոր առաքինություն-
ները և նրա կրքոտությամբ մերկացնել բուրժուազիայի հոգեկան
անանկությունն ու դատապարտվածությունը: Նրանք սովորում
էին քաղաքացիական կռիվների հերոսիկան այնքան տաղանդավոր
կերպով վերարտադրող Սերաֆիմովիչի և Դմիտրի Ֆուրմանովի
կուտակած փորձով: Նրանց օրինակ էր ծառայում սովետական է-
սեփայլի ամենատաղանդավոր պոետ, ռեուլուցիայի բոցաշունչ եր-
գիչ Վլադիմիր Մայակովսկու փոթորկահույզ պոեզիան:

Ռուս մեծ ժողովրդի մասսայական հերոսությունը խտանում
էր սովետական գեղարվեստական գրականության մեջ: Մեր գրա-
կան կադրերն ուսումնասիրելով ռուսական ժամանակակից գրա-
կանությունը, սովորել ու սովորում են կյանքի երեուլթների ռեուլու-
ցիոն ընդհանրաթումները կատարելու արվեստը:

Ազգային ուսարուբիկաների գրական կազմակերպությունները մի ընդհանուր միություն մեջ համախմբելու մասին պարտիայի տրոշումը միենույն ժամանակ պայմաններ ստեղծեց, որ սովետական ժողովուրդների գրական գանձերը դուրս գան ազգային նեղ շրջանակներից և դառնան սովետական ողջ ժողովրդի սեփականությունը:

Ինչպես հայտնի է, այս շրջանում արմատականորեն վճռվեցին նաև գրական ձևերին, ժանրերին, լեզվին վերաբերող մի շարք ոկզբունքային հարցեր. պարզորոշվեց նաև վերաբերմունքը դեպի ժողովրդական բանավոր ստեղծագործությունները, որոնք հանձնարարվեցին որպես սովետական գրականությունը հարստացնող անսպառ աղբյուր:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՄԱՐՏԱՅԻ

ՍՐՏԱՑՈՂՄԱՆ ՀԱՄԱՐ

Ի՞նչ էր կատարվում այս շրջանում մեր մեծ Հայրենիքի տընտեսության, կուլտուրայի բնագավառներում:

Ավարտվել էր ժողովրդական տնտեսության վերակառուցումը: Ողջ երկիրը ապրում էր ստալինյան հնգամյակների նորաստեղծ շինարարության պահուսր:

Աղբյուրների նավթարդյունաբերությունը սովետական իշխանության տարիներին կերպարանափոխվեց էր: Մեր պարտիայի և ժողովրդի ջանքերով նավթահանքերն ու ձեռնարկությունները ղինվել և ղինվում էին նորագույն տեխնիկայով: Ռեսպուբլիկայում բուռն թափով զարգանում էին մետաղագործությունը, տեքստիլ և տեղական արդյունաբերությունը: Արդյունաբերական օջախներ էին ստեղծվում նաև Բաքվից դուրս: Բուռն թափով զարգանում էին ուսարուբիկայի քաղաքները՝ Կիրովաբադը, Նուխին, Ստեփանակերտը, Նախիջևանը: Ամենուրեք շինարարական եռ ու գեռ էր: Բարեշինվում էին ու նոր տեսք ստանում քաղաքները, բառացիորեն դատարկ տարածությունների վրա բարձրանում էին բանվորական ավանները՝ իրենց հոյակերպ ու հարմարություններով հաբուստ շենքերով:

Աղբյուրների դուրսում ամրապնդվում էին կոլտոզները, ավելի քսուն թափով շարունակվում էր գյուղատնտեսական աշխատանքի մեխանիզացիան: Սոցիալիստական քաղաքի ու կոլխոզային գյուղի

Տնխողելի շաղկապն ամբողջում էր՝ օրավուր աշխատանքի ու պայ-
քարի մեջ:

Աղբբեջանը Սովետական Միության նավթադյունաբերական
հիմնական բազան լինելով, դառնում էր նաև բամբակագործու-
թյան և տեխնիկական կուլտուրաների ռեսպուբլիկա:

Այդ օրերին Բաքվի հերոսական նավթագործները, բայելով
ՎՍՄՄ բանվոր դասակարգի առաջավոր շարքերում, սոցիալիստա-
կան նախաձեռնության բազմաթիվ գեղեցիկ օրինակներ տվին:
Աշխատանքի մեջ հերոսացան բազմաթիվ առաջավորներ՝ աշխա-
տանքի մեջ ծնվեց ու զարգացավ նավթագործների կոլեկտիվ հերո-
սությունը:

Այս ամբողջ ստեղծագործ աշխատանքը ղեկավարում էր Ա-
ղբբեջանի բոլշևիկյան կազմակերպությունը, որի մեջ միշտ վառ
են ու բորբոքուն ստալինյան տրադիցիաները: Նա իր շարքերից և
ժողովրդից առաջ քաշեց ու դաստիարակեց սոցիալիստա-
կան արդյունաբերության հրամանատարների կազմեր՝ սկսած
ինժեներներից մինչև ցեխային վարպետներ, բրիգադավարներ,
գլուղում կոլեկտիվ անտեսությունը վարելու հմտություն պատ-
վաստեց մեր մարդկանց, կազմակերպեց և ընթացք տվեց նոր սե-
րունդի ուսմանն ու զարգացմանը:

Դա տեղի էր ունենում դասակարգային թշնամիների դեմ կա-
ռոսդի սլաքարի պայծառներում:

Աղբբեջանի գրողները պետք է իրենց ստեղծագործություննե-
րի մեջ արտացոլեին այս իրադարձությունները, վերլուծեին և
ճշմարտացի պատմեին, թե ինչպես բոլշևիկների պարտիայի ղե-
կավարությամբ, ցարական կայսրության երբեմնի հետամնաց
ծայրամասը՝ նահապետական Աղբբեջանը սովետական իշխանու-
թյան գոյության մի տասնամյակի ընթացքում արդեն դառնում
էր ինդուստրիալ-ագրարային ռեսպուբլիկա: Մեր հաջողություն-
ների ֆոնի վրա պետք է ավելի լրիվ, ավելի արտահայտիչ, ճշ-
մարտացի ու համոզիչ գծագրվեր նոր մարդու կերպարը, որը այդ
հաջողություններն ապահովող շարժիչ ուժն էր:

1930-1940 թ. թ. Աղբբեջանի սովետական գրականության վե-
րելքի տարիներն էին բոլոր ժանրերի գծով: Ավագ սերնդի ներկա-
յացուցիչները՝ արձակագիրներ Մամեդ Սալի Թրդուբադին, Ար-
դուլա Շաիրը այդ տարիներին հրատարակեցին մի շարք ծավա-
լուն և բարձրորակ երկեր: Լույս տեսան Թրդուբադու «Մշտնապստ

Բազմաթիվ», «Ընդհատակյա Բաքու», «Մարտնչող քաղաք» և մի շարք այլ պատմական վեպեր, Ա. Շախիյի «Արագ» վեպը, մի շարք մանկական պիեսները («Նսապա», «Աթան»): Աբուհասանը, Միրջալալը, Մեհթի Հյուսեյնը, Սուլեյման Ռահիմովը ստեղծեցին նոր պորթեր, որոնց թեման արդեն առնված է մեր օրերից: Այս առումով Ադրբեջանի սովետական վրացագրության մեջ իրենց ուրույն տեղը գրավեցին Ս. Ռահիմովի, «Սաչլի» և Մ. Հյուսեյնի «Բառախ» վեպերը: Այս և մյուս բազմաթիվ արձակ ստեղծագործությունների սոցիալիստական ուսուցիչների հաղթանակն էին ադրբեջանական դրականության մեջ:

Դրամատուրգիայի ընդարձակումը Ադրբեջանի պոետները զարգացրին Ջաֆար Ջաբարլու լավագույն տրագիկաները: Ադրբեջանի դրամատիկական թատրոնի ղեկավարուհի Ջաբարաջալը նոր բարձրորակ պիեսներով: Միրզա Իբրահիմովի «Հեյաթ», Սամեդ Վուրդունի «Լազիֆ» և «Նսալար» պիեսները, որոնց համար հեղինակն ստացավ Սաալինյան մրցանակի լավագույն կոչում, նույն հեղինակի «Ֆարհադ և Շիրին», Սուլեյման Ռուստամի «Ղաշալ Նարին», Մեհթի Հյուսեյնի «Նիզամի» պիեսները նոր բարձրության հասցրին ադրբեջանական դրամատուրգիան:

Իր բազմաթիվ նուրբ երանգներով ծաղկեց Սամեդ Վուրդունի լիրիկան: Ժողովրդական իմաստուն աֆորիզմներով լի են. պատկերավոր և հուզիչ բանաստեղծի երկերը: Լեզվի և ոճի ճոխության ու գունագեղության տեսակետից Վուրդունը լավագույն նմուշներ տվեց:

Սուլեյման Ռուստամի ունեցելու մարտաշունչ պոեզիան դարձավ ավելի պարզորոշ, սուր, ռիթմի տեսակետից նովատորական, հագեցած՝ դադափարական բովանդակությամբ և մամուռնակի թարմ ու ջերմ շնչով:

Ջարգացման ու կատարելագործման նոր փուլ մտավ ադրբեջանական լիրիկայի աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Մամեդ Ռահիմը, որի դործերում բանաստեղծության համեստ ու չափավոր տոնը զուգակցվում է մեր օրերի մարդու հասուն մտքերի, պարզ ոգու և անկեղծության հետ: Աճեցին պոետներ Ռադուկ Ռզան, Օսման Սարիվելլին, համեմատաբար երիտասարդ պոետներ Աճեդ Ջամալը, Ջեյնալ Խալիլը, Միրվարիդ Դիլբազին, Նիզյար Ռաֆիբեյլին և ուրիշները: Երիտասարդության մի նոր, սովոր չուկատ մտավ ադրբեջանական դրականության մեջ:

Մեր գրողներն սկսեցին ավելի լիարյուն կերպով վերարտադրել սոցիալիստական շինարարության թափը: Դեպի կյանքն ու աշխատանքը նոր վերաբերմունքի, դեպի սոցիալիստական Հայրենիքը տաժաժ անսահման սիրո, կոմունիզմի կառուցման համար անձնվիրաբար մարտնչելու վճռականության, այդ նպատակին հասնելու համար բոլոր և ամեն տեսակի դժվարությունները հաղթահարելու պատրաստակամության մոտիվները մեր գրականության մեջ մտան, մարմնավորվեցին ու կաղապարվեցին ավելի բարձր ձևերի մեջ:

Այս ժամանակաշրջանն Ադրբեջանում սովետահայ գրականության վերելքի փուլը եղավ:

Համկ(բ)Պ Կենտկոմի 1932 թվի ապրիլյան որոշումից հետո Բաքվում սկսեցին լույս տեսնել Ադրբեջանի Գրողների միության երեք հանդեսներ— «Խնգլաբ վա մաղանխար» («Ռեուլուցիա և կուլտուրա»), «Լիտերատուրնի Ազերբայջան» և «Խոհրդդային գրող»:

«Խոհրդդային գրող» ամսագրի շուրջը համախմբվեցին Բաքվի և Ադրբեջանի հայ գրողներ՝ Վարսենիկ Աղաջանը, Արշավիր Դարբենին, Թաթուլ Հուրյանը, Սամվել Գրիգորյանը, Աշոտ Գրաշին, Գաբեգին Սևոնցը, Մառգար Դավթյանը, Աթանես Սենալը և ուրիշները: Կանաչեցին գրական նոր ուստեր: Հրապարակ իջան Արտաշես Բուրենցը, Նիրեմ Լուենցը, Արտու Հովենցը, Համո Սահյանը, Ոստիկ Կարակոզյանը, Դանիել Գևորգյանը, Գևորգ Պետրոսյանը, Սուրեն Այվազյանը և ուրիշները:

Գեղարվեստական գրականության թափն ու մակարդակը ամեն մի ժողովրդի կուլտուրական վերելքի չափանիշներից մեկն է և դրա կոնկրետ արտահայտությունը: Ուստի, Ադրբեջանում սովետահայ գրականության հաջողությունների մեջ մենք նախ և առաջ տեսնում ենք ռեսպուբլիկայում ապրող հայ աշխատավորների կուլտուրական զարգացման ցայտուն պատկերը, որը մեր պարտիայի Վենինյան - ստալինյան ազգային քաղաքականության արդյունքն է: Այդ հաջողությունների մեջ մենք տեսնում ենք նույնպես հայ և ադրբեջանական ժողովուրդների ստալինյան բարեկամության փայլուն հաղթանակը:

Ադրբեջանի պարտիական կազմակերպությունը և նրա մարտական ղեկավար ընկեր Մ. Զ. Բագիրովը, Ադրբեջանի կառավարությունն առանձին ջերմությամբ հոգալով հայ աշխատավորների կուլտուրական աճման մասին, հատուկ խնամքի տակ առան հայ

գրողներին: Նրանց բեղմնավոր աշխատանքի համար պայմանները տարեց-տարի ավելի նպաստավոր դարձան: «Խորհրդային գրող» հանդեսից բացի, որ կանոնավոր լույս էր տեսնում մինչև Հայրենական պատերազմի օրերը, Ադրբեջանի Պետական հրատարակությունը լայնորեն հրատարակում էր հայ գրողների գործերը:

1933-1936 թ. թ. լույս տեսան Վ. Աղասյանի «Օրերի երգը» ժողովածուն, Թ. Հուրյանի «Դնեպրը» պոեմը, «Հասակ» բանաստեղծությունների գրքույկը, Ս. Գրիգորյանի «Լիրիքական հույզեր»: Աշոտ Գրաշու «Մուտք», Դանիել Գևորգյանի «Սրտի բերքը» բանաստեղծությունների ժողովածուները, Գ. Բլանցի պատմվածքների գրքույկը, Մ. Դավթյանի «Վերջին ճիշը», Գ. Սևունցի «Դեպի երկիր» պատմվածքների ժողովածուները:

Ադրբեջանի սովետահայ պոեզիայի մեջ այս շրջանում երկու հատկանշական գիծ ենք նկատում: Ստեղծագործությունների թեմաները անհամեմատ ավելի այժմեական են, գաղափարապես ավելի պարզորոշ. մյուս կողմից դեռ չեն հաղթահարված աճման դժվարությունները, շարունակվում են որոնումները և՛ թեմայի և՛ ձևի բնագավառում:

Վարսենիկ Աղասյանը իր գրական գործունեությունը սկսել է նախառևույցիոն շրջանում. շատ պարբերականներում և առանձին գրքույկներով լույս էին տեսել նրա գործերը: Այնուհետև սովետական իշխանության տարիներին Բաքվի պարբերական մամուլում և ժողովածուներում նա հրատարակել է իր հետհոկտեմբերյան ստեղծագործությունները: Բայց պատկառելի գրական փորձ ունեցող բանաստեղծուհին դեռ ինքն իրեն չէր գտել, որովհետև նոր երևույթների, նոր դեպքերի ու դեմքերի ներքին էությունը լիովին դեռ չէր մեկնել իր համար:

«Օրերի երգը» ժողովածուի (1933 թ.) «Աշխատանքային» թափում տպագրված «Հորդիր նավթ», «Վիշկաններին» բանաստեղծությունները բնորոշ են այդ տեսակետից: Նոր թեմային բանաստեղծուհին մոտենում է հին պրիմիտիվ, նա տեսնում է նավթն ընդհանրապես, վիշկաները, բայց չի նայում բուրգերի ներսը, ցուլց չի տալիս այնտեղ կատարված փոփոխությունները, չի տեսնում մարդկանց, որոնց կամքով և հավաքական ուժով կերպարանափոխվում է նավթաշխարհը: Այս սխեմատիզմին գերի մնալով,

բանաստեղծուհին միայն ձոներգում է նավթը, այնպես, ինչպես բնության որևէ երևույթ, ասենք լեռներից եկող ջրի հոսանքը, ոո հենդանություն է բերում պապակ դաշտերին:

Հորդիր դու նավթ լափով մի նոր
Ու ֆանտաններ խփիր հազար,
Թող որ խնդա Բաքուն— բանվոր
Հաղթանակով քո արևմուտ:

Աղասյանը, չխորանալով նոր երևույթների պատճառականության մեջ, շորոնելով այսօրվա գործերի մեջ վաղվա հատիկները, մակերեսն է տեսնում միայն և գոհունակության խոսք ասում: Այս պլանով են գրված նաև «Բանվորին», «Դազդյահի աղջիկը», «Երկաթե հրդր» բանաստեղծությունները: Սրանց մեջ ուսուցանող և կազմակերպող հասարակական երևույթների մեկնաբանություն չկա: Բանաստեղծուհին զմայլված, գովք է անում «Դազդյահի աղջկան», բայց նրա բարոյական ո՞ր հատկանիշների, ո՞ր առաքինությունների համար, նրա ո՞ր գործերի համար, չի ասվում:

Այդ բաժնում զետեղված է «Բաքու» բանաստեղծությունը: Բանաստեղծուհին տեսնում է հին կասպիականը, որը փրփրադեզ ալիքներով Արևելքի վիշտն է բերում և «փոռում» մեր նորոգ կյանքի տփերին, բայց ո՛չ այդ վշտի, ո՛չ էլ նորոգ կյանքի էությունն է պարզում:

Բաքու,
Քո էդ ծփացող
Ու անծայրածիր
Ծովափին եմ ես,
Որն իր փրփրադեզ
Ալիքներն ունի
Եվ որոնց բարձած
Վիշտն արևելքի,—
Բերում է, բերում,
Փռում ափերին
Մեր նորոգ կյանքի,
Որին մենք արդեն
Հանել ենք տանջող
Դարերի մութից,
Արցունքի ծոցից...

Նորոգ կյանքի մշուշապատ, անորոշ ըմբռնումը չէր կարող հնի հետ նրա բախման ռեալ մտապատկեր ստեղծել բանաստեղծուհու մոտ և նա գնում է տրոբված ճանապարհով, կրկնում է այն, ինչ վաղուց ասված է և նույնիսկ սխալ հետևությունների հանգում:

Համարյա նույնպես է ընկալում Աղասյանը գլուղում կատարվող տեղաշարժերը: Ահա մի կտոր «Արտերը» բանաստեղծությունից.

Մի նոր թափ կա հանդերում,
Պուրակներում էն հեռու,
Մի նոր թափ կա հանդերում
Ու հորդացող շաա առու.
Արևի շողքն է կաթել
Տբակտորի ուսերին,
Արևի շողքն է կաթել
Թալ ու կանաչ լանջերին:

Հեռու հանդերում, պուրակներում ինչ որ նոր թափ կա, բայց թե դա ինչ սֆինքս է, հայտնի չէ: Հանդերում հորդացող առու, տրակտոր, որի «ուսերին» արևի շողքն է կաթել: Ի՞նչ կարող է հասկանալ ընթերցողը այդ տողերից և ի՞նչ լիցք կարող է ստանալ դրանք կարդալուց հետո:

Համարյա նույն ձևով են գրված «Գեղջկուհու երգը», «Կուխտգուհու երգը» բանաստեղծությունները: Այս ստեղծագործությունների մեջ չկա ժամանակի՝ շունչը, չի երևում մեր օրերի մարդը, մտքերը մշուշապատ են, պատկերները երբեմն բռնագրոսիկ: Զևի և լեզվի տեսակետից Աղասյանը ոչ մի բան չի ավելացնում իր նախորդ ստեղծագործություններին:

Այս առիթը հետևանք էր մի բանի՝ բանաստեղծուհին տալիս էին չճանաչելով նոր մարդկանց, չէր կարող թափանցել նրանց հուզաշխարհը:

Այս ժողովածուի մեջ գետեղված է նաև «Արևելյան» շարքը, որի մեջ ցայտուն կերպով երևան է գալիս Աղասի Վշտունու այդ թեմայով գրած պոեմների և բանաստեղծությունների խոր ազդեցությունը և երբեմն դրանց անհաջող կրկնությունը:

Նույն թվին հրատարակվեց մեր երիտասարդ, տաղանդավոր քնարերգու Թաթուլ Հուրյանի «Դնեպր» պոեմը:

Նկատենք, որ այս պոեմը գրված է այն օրերին, երբ Բաքվի նավթագործները ստալինյան հնգամյակը երեք տարում կատարելու լուզունգի տակ, սոցիալիստական մրցության էին մտել Դոնբասի ածխահատների հետ: Այդ մրցության մեջ էլ ամենացալտուն կերպով անդրադառնում էին սովետական մարդկանց նոր հատկությունները:

Պոետը եղավ Դոնբասի ածխահանքերում, տեսավ ածխահատների, մետաղագործների աշխատանքը, շրջահայաց կերպով հետամուտ եղավ իրադարձություններին, ուսումնասիրեց մարդկանց: Եվ այս պոեմը այդ ամենի զեղարկեստական վերարտադրման մի փորձ էր:

Ահա թե ինչ է ասում ինքը պոետը.

Դու շրջեցիր Դոնբասում և շատերին տեսար
Եվ դոմնաներ տեսար
Եվ մարտենի երախը
Եվ երկաթե հազար հարցակառններ տեսար,
Որոնք տոններով մետաղ էին ճանկերից կախել:
Չբռտարին տեսար դու—
Գիսախոփվ ու երիտասարդ
Եվ Բելանին— հայհոյող ու գործունյա...
Հնկեր Չուբային
Մազերը արդեն ձյունած
Եվ էնտուզիազմով լարված
Այնքան հասակ...

Բանվորների այս ներկայացուցիչներին բանաստեղծը դիտում է աշխատանքի մեջ: Նրանք «երկաթե հարցակառնների ու քրտինքի միջից խփում են միշտ 200 տոկոս», նրանց «հայացքը ամուր է թուշից, գործը վարում են ամբողջ հոգով»: Խորհրդածելով աշխատանքի մարդկանց գործերի մասին, բանաստեղծը իր առանձին հերոսների մեջ տեսնում է Սովետական Միության բանվոր դասակարգին, որի եռանդով և հավաքական ուժով գցվեց Թուրք-սիր երկաթուղին, կառուցվեցին Դնեպրոստրոյը, Ջուգրեսը, ոռի քրտինքով ստեղծագործվեց Մազնիտոստրոյը:

Հուրյանը խանդավառ տողեր է նվիրում նրանց, որոնք «կանգնեցրին աշխատանքային սխրանքի վեհ հիշատակարան, փառքի ու հերոսության արձան»:

Բանաստեղծը ածխահատների առօրյայից առանձին է պիզոդներին լուսանկարը չի տալիս, նա այդ էպիզոդների ներքին էությունն ու կապն է որոնում, առանձին մարդկանց գործողությունների մեջ աշխատում է գտնել և ցույց տալ բնորոշը և բացատրում է նրա ծագման պատճառները:

Մի խումբ կոլտնտեսականներ երկաթուղով գնում են Դոնբաս՝ հանքերում աշխատելու.

Նրանք դաշտերի լայնությունն ու արևը թողել,
Գնում են երկաթի հետ ճակատելու...

Եվ ահա վազոնում Դոնբասի բանվորը, որ նրանց առաջնորդում է դեպի արտադրությունը, վերհիշում է քաղաքացիական պատերազմի հերոսամարտերը: Պատմում է ռեուլուցիայի օրերին բանվորների և գյուղացիների հերոսական մարտերի մասին, պատմում է, թե ինչպիսի ավյունով ու նվիրվածությամբ էին նրանք կռվում իրենց իշխանությունը հաստատելու համար... Գործարանից, հանքից, հողից կտրված, զենքը վեր առած մարդիկ հաճախ մերկ ու բոկոտն, սովալուկ, կռվում են թվով և սպառազինությամբ գերազանցող թշնամու դեմ և անհավասար դաժան կռվում հաղթում. մահն էլ է տեղի տալիս այդ մարդկանց անկոտրում կամքի հանդեպ: Դոնբասի բանվորը ռեուլուցիոն այդ հերոսկայի մասնակիցն է, կենդանի վկան:

Եվ որքան այդպիսի բանվորներ խաղաղ շինարարության տարիներին զենքը փոխեցին ածխահատի մուրճով ու լապտերով, կանգնեցին գործարանների դազգյահների մոտ, ամենուրեք աշխատելով այնպիսի եռանդով ու վճռականությամբ, ինչպես պատերազմի կրակի մեջ մարտնչում էին թշնամու դեմ:

Այնուհետև պոեմում նկարագրվում է կադրային բանվորներին և նոր համալրման միահամուռ գրոհը բնության դեմ, հանուն մարդկային երջանկության:

Ոչ մի վտանգի տե արհամիրքի առաջ կանգ չէին առնում հանքահատները: Սոսկալի աղետ է պատահում: Փուլ է դալիս հյուսիսային շախտը և հանքահորում փակում մի խումբ բանվորներին: Բայց այդ պայմաններումն էլ նրանք հավատում են կոլեկտիվի ուժին: Եւ համոզված են, որ դրսում եղած ընկերները կվերացնեն ավարիան, կրկին կշողա ու կժպտա նրանց գլխին հայրենի երկրի արևը: Թուլամորթներն ու նվաքողները նույնիսկ սոսկալի խա-

վարի մեջ, երբ շնչահեղձ էին լինում աղետյալները, արժանանում են կոլեկտիվի արգահատանքին ու նշավակությանը:

Այս աղետի ծամանակ ավելի պրկվում է հանքահատների կամքը, դժվարությունները չեն ընկճում նրանց, այլ բորբոքում են սլաքարելու և հաղթահարելու կրակը:

Բանաստեղծի հայեցակետից չեն վրիպում բանվորական մասսաների, հերոսությունը կազմակերպող ուժերը՝ պարտիական կազմակերպությունը, կոմերիտմիությունը: Պարտիականներն ու կոմերիտականներն ընթանում են գրոհի առաջին շարքերում: Պարտիական կազմակերպությունն է ոգևորում բոլորին և աղետի հետևանքները վերացնելու, աղետյալ հանքահատներին փրկելու գործը կազմակերպում: Եվ նրանք փրկվում են:

Բավական ուժեղ ֆրամենտներով պոեմում դրսևորվում է նաև մարդկանց անձնականը: Բոնդարչուկի և Սիմայի սերը այդ չսպառված ու չավարտված մանրամասներից մեկն է:

Գաղափարական այս առավելություններն ունենալով, «Դնեպրը» արժեմը ունի նաև բավական խոշոր թերություններ: Նա չունի կուռ կառուցվածք, բաղկացած է երբեմն թերատ հատվածներից: Հեղինակը տուրք տալով ֆորմալիզմին, այդ կտորների մեջ կապն աշխատել է ստեղծել նաև արձակ կոմենտարիաներով: Ի դեպ նկատենք, որ այս գործը հեղինակն այդպես էլ վերնագրում է «Պոեմ-կոմենտարիաներով»: Այս հանգամանքը զգալի չափով իջեցնում է գործի դեղարվեստական արժեքը:

«Դնեպր»-ը գրված է արձակ բանաստեղծությամբ, տողամիջյան թույլ հանգերով (սպիտակ բանաստեղծություն):

Երկում շատ կան գեղեցիկ, հուղիշ պատկերներ, դիպուկ համեմատություններ, բայց և քիչ չեն նաև անճաշակ, կամայական ոճեր, դարձվածքներ: Դա երբեք բանաստեղծի անբարեխղճության հետևանքը չէ: Հուրյանը համառորեն որոնող և անզուսպ կերպով ինքնատիպության ձգտող պոետ էր: Եվ այդ թերությունները մենք համարում ենք խոտորումներ՝ ողորմանքի ճանապարհին:

Այսպիսով, եթե մեր փորձված բանաստեղծուհի Վաքսենիկ Աղասյանը վերակառուցման ճամբին զգալի ձգնաժամ էր ապրում կոնկրետ, քաղաքականապես հագեցված, գաղափարային թեմայի ընտրության ասպարեզում, ապա նրա երկտասարդ գրչակիցները

հաղթահարում էին այդ դժվարությունները և համարձակւորեն հար-
թում վերելքի ուղին: Հուրյանը այդ նորերից մեկն էր:

Հուրյանի «Հասակ» ժողովածուն (1934 թ.) արվեստի տեսա-
կետից մի քայլ էր դեպի առաջ: Բանաստեղծը աշխատում է կյան-
քի պրոբլեմները շոշափելիս հետեւություններ անել, իր ստեղծա-
գործությունների մեջ բեկել սովետական մարդկանց հույզերը,
նրանց խորհրդածությունների մեջ դնել սոցիալիստական մտածե-
լակերպի հատիկները, որ ծիլ տան ու կանաչեն:

Սիմեն դեպքում չէ; որ պոետը հարցերը ճիշտ է մեկնում և ճիշտ
հետեւություններ անում: Երբեմն նա կուրկտիվի հետ է, այնքան
մոտ, որ զգում է նրա հուժկու սրտի զարկերակը, երբեմն էլ հեռա-
նում է նրանից և ամփոփւում իր անձնական նեղ ներաշխարհում:

Այդ է պատճառը, որ երբեմն անձնականը կտրվում է հասա-
րակականից, հակադրվում նրան: Մենք գիտենք, որ սովետական
հայրենասիրությունը ոչ միայն չի բացասում սերը դեպի մերձավո-
րը, սերը դեպի կինը, այլ ընդհակառակը, մարդկային այդ նվիրակու-
նի զգացումները, միաձուլելով դեպի հայրենի հողը, ջուրը, սովետա-
կան ժողովուրդը տածած սիրո հետ, դառնում են մարդուն հեղո-
սություն մղող գիտակցություն: Հայրենիքի քաղաքացի հասկացո-
ղության մեջ մենք տեսնում ենք կենդանի մարդուն, որը ունի իր
անհատական աշխարհը, բայց և անխնայ կապերով կապված է
հասարակության հետ: Քաղաքացիական պարտքի կատարումը ան-
պայման ներդաշնակվում է անձնավորության կատարյալ ազա-
տության հետ, որը հնարավոր է միայն սովետական կարգերի
պայմաններում:

Հուրյանը «Օրակարգից դուրս» բանաստեղծության մեջ քըն-
նում է այս հարցը և սխալ հետեւության հանգում.

Դու գինվոր ես և վերջ: Կապված երկրիդ զարկին,

Շնչափողը նրա երակը դարձրած.

Ոչ մի նորա արդեն քո երգերի վրա

Իր ձեռքը չի կարող սիրով զարկի:

Սրկրի, հասարակության շահերը բարձր դասելը նախ և առաջ
պայմանավորված է մարդու ազատությամբ: Զինվոր լինելով հան-
դերձ, կապված լինելով իր մեծ Հայրենիքի սրտի հուժկու զար-
կերի հետ, սովետական քաղաքացին անկաշկանդ է որպես անձ-
նավորություն և տշ միայն նրա երգերի վրա ինչ որ նորա կարող

է «իր ձեռքը սիրով զարկել», այլև այդ սերը, երբ նա ներդաշնակ-
վում է քաղաքացիական պարտքի գիտակցութեան հետ, դառնում
է ոգևորութեան և անձնագոհութեան աղբյուր՝ հանուն ընդհանուրի
շահերի:

Հուրյանը ձգտում է ճիշտ հասկանալ մեր իրականութեան մեջ
կնոջ և տղամարդու հարաբերութիւնները, տեսնում է կնոջ ազա-
տագրութեան փաստը: «Եվ» ու «Ելենա» բանաստեղծութիւնների
մեջ հեղինակը մատնանշում է, որ մեզ մոտ չքանում են հին ուն-
ակցիոն հասկացողութիւնները կնոջ վերաբերյալ, անհետացել է
նաև նրա պաշտամունքի կուլտը, որ կինը չի դիտվում այլևս որպէս
սեփականութիւն և նրան չեն նայում ինչպէս զգացմունք բորբո-
քող և աչք շոյող իրի վրա. կինը մեզ մոտ խարդավանքի խորհր-
դանշան չէ, հակամարտութիւնների և բախումների պատճառ չի-
նել չի կարող: Կնոջ և տղամարդու իրավահավասարութիւնը կեն-
սագործվել է, կինը հասարակութեան իրավագոր անդամն է:

Այս գաղափարը Հուրյանն ավելի լրիւ ու ոգեշունչ կերպով
արտահայտում է «Ռայիսա Ռիժիկ» գողտրիկ պոեմի մեջ: Սա մի
հուզական պատմութիւն է հասարակ կնոջ պատմական բախտի
վերաբերյալ՝ դասակարգային գոռ կոիվների փոթորիկների մեջ:

Նրա համար ոչ մի Տրոյա չայրեցին,

Նա իր կյանքում չեղաւ թշվառութեան պատճառ,—

Նա զավագ էր գնում առափտը վեցին,

Աշխատում մինչ գիշեր ու հոգնում էր անչափ:

Այսպես է նկարագրում Հուրյանն իր հերոսուհուն: Այնուհետև
նրա երիտասարդութեան վառվռուն տարիներին սկսվում է քաղա-
քացիական պատերազմը:

Ռայիսան

«Մի տղայի սիրեց իր հույզերում թագուն,—

Նրան զինվոր տարան ու նա կռիւի չեղաւ

Մայրն էր ծանր վշտից հեծում, աղաղակում,

Գլուխը կարիքի հողմերի դեմ թեքած:

Ռեուլուցիայի պտուտահողմի մեջ է ընկնում նաև այս հասա-
րակ կինը՝ Ռայիսան, որ հազարավոր իր նմանների խտացրած կեր-
պարն է: Նա պարտիզանական ջոկատ է վարում, անձնվիրութեան և
հերոսութեան օրինակներ է ցույց տալիս: Զոհատն անահ կռվում

է խարդախ ու նենգ, ուժով գերազանցող թշնամու դեմ պարզ գիտակցելով իր զոհողությունների նպատակը՝ «որ տղային նորից կովի դաշտ շտանեն, որ շմեռնի մայրը սուր կարիքին Գերի, որ շմեռ կյանքը մահու ձեռքին անել և արյուն չհոսի երկրի լայն թեքերից»:

Հերոսուհին ընկնում է այդ կովում, բայց նրա մահը ինքն անմահությունն է:

Մի շարք բանաստեղծությունների մեջ պոետը արծարծում է անձնավիրության և կոմունիստական հասարակության համար խիզախելու մեր մարդկանց պատրաստակամության հարցը: Մեր գործի արդարացիության և վերջնական հաղթանակի խորը հավատով ևն համակված այդ գործերը:

Հիմա կապված մեր հողին ու ղավոդին ու շախտին,
Մեր ուժերն ենք կուտակում վերջնական մարտի համար,
Մենք գիտենք— մեր բանակը այս կովումն էլ կհաղթի
եվ արևը կփայլի կամարներից հաղթական:

Այս տողերը գրված են 1933 թվին, այն օրերին, հրե մեր երկիրը խաղաղ ստեղծագործական աշխատանքով էր զբաղված: Բայց մեր Հայրենիքը կապիտալիստական շրջապատման մեջ էր դրսևում և հազարավոր դավեր էին նյութվում սոցիալիզմի երկրի դեմ:

Այդ ժամանակներին էր, որ Գերմանիայում իշխանության գլուխն անցավ ֆաշիզմը և ամբողջ կապիտալիստական աշխարհը բռնված էր սպառազինման ու պատերազմի պատրաստվելու տենդով: Հուլյանի ստեղծագործությունների մեջ ղգացվում է մեր ժողովրդին համակած ազնիվ տազնապը՝ պատերազմական մրրիկների կուտակման այդ օրերին:

Մեր Հայրենիքը ղգաստ հետևում էր իրադարձությունների ղարգացմանը և պատրաստվում վերահաս վտանգը դիմավորելու:

«Աղղարար» բանաստեղծության մեջ հենց այս հույզերն են շունչ ու լեզու առել:

Նեոներից ցած է ընկնում թևատարած մի արծիվ,
եվ արյունը մնում է գորշ քարերի շերտերում,—
Երբ թշնամին նոր մահ ու կռիվ արծարծի,
Մենք կգանք նրա դեմ համառ կովով աններում:

Կյանքի ու երջանկության մոտիվների հետ միասին, բանաստեղծը նոր լույսի տակ քննում է գիտակցված մահու խնդիրը։ Նա բերում է աշխարհի ու բնության ճանաչողության համար պայքարող, այդ դժվարին ճանապարհի վրա բնկած մարդկանց օրինակը։ Խոսում է Ամունդսենի և Լեինսոնի անլուր կորստի մասին և կոչ է անում մարտիրոսանալ 26 կոմիսարների պես և սովետական սահմանապահ Նետտեի պես, որ իր պոստում ընկավ։

Ես գիտեմ և ասում եմ իմ ճանապարհին—
Ջինսվերի պես մեռիր, Նետտեի պես պոստում,
Թող երկրիդ աճումը շուրջդ պարի,
Որպես չեղած երգի հրաշագործ խոստում։

«Հասակ» ժողովածուում հրապարակված որոշ գործեր խախտում են գրքի գաղափարական ներդաշնակությունը։ Մանավանդ, այսպես կոչված խոհական բանաստեղծությունների մեջ Հուրյանը տուրք է տալիս ֆորմալիզմին։ Այս գործերի մեծ մասը դադափա-րազուրկ են։ Ունայնամիտ ֆորմալիստական մի ֆոկլոր է, օրինակ, հետևյալ կտորը.

Հիմա գիշեր է և էտաժերկան
Արդեն ննջում է գրքերի բեռից.
Այդպես մի գիշեր մորուքով քեռին
Ճերմակ մազերը սև գույնով ներկած
Ջրույց ունեցավ ինձ հետ դեմ ու դեմ,
Իսկ թե ինչ ասաց... Ես այդ չգիտեմ։

Ինչ որ մշուշապատ, գուտ անհատական ապրումների վերադադրություն է սա, որը ո՛չ իմաստ ունի, ո՛չ հույզ կա մեջը։ Այս և նման կտորները, իհարկե, բնորոշ չեն Հուրյանի համար, բայց նրանք լուրջ ազդանշան էին բանաստեղծի վտանգավոր խոտորումների վերաբերյալ։

Մամուլն ուշադրություն դարձրեց այդ երևույթին։ Հուրյանի այդ սխալները քննադատվեցին։ Դա շահեկան նշանակություն ունեցավ ոչ միայն Հուրյանի, այլև մյուս երիտասարդ բանաստեղծների համար, որոնք պոետական ճշմարտությունը որոնելիս, երբեմն վրիպում էին։

Բանաստեղծության տեխնիկայի, պատկերավորության և արտահայտչական միջոցների տեսակետից Հուրյանի պոեզիան աճում էր արագությամբ: Ինքնատիպության սաղմերը ծիլ էին արձակում:

«Լիրիքական հույզերը» բանաստեղծ Սամվել Գրիգորյանի ըստեղծագործությունների առաջին ժողովածուն էր, որը լույս տեսավ 1934 թ.: Այս գրքում տեղ գտած գործերի մի մասը նույնպես կրում են սխեմատիզմի կնիքը: Բայց և կան այնպիսիները, որոնցում հեղինակն աշխատում է վերլուծել երևույթները, նրանց մեջ ըզզացվում է ոեալ կյանքի զարկերակը:

«Լոկ-Բատան» վոքբրիկ պոեմը անկասկած հաջողված գործ է: Պոետը ոգեշունչ պատմում է, թե ինչպես բոլշևիկները կենդանություն են տալիս անապատին, հաղթահարելով բնության խռտաբերքը, զարգացնում նավթարդյունաբերությունը: Դաժան է Ապշերոնյան թերակղզու բնությունը: Ահա քաղաքից հեռու, քիչ հետազոտված Լոկ-Բատանում մարդիկ մարտնչում են նավթի համար: Հյուսիսային ահավոր քամին բուրգեր է շուռ տալիս: Դժվար է դիմադրել և այդ պայմաններում շարունակել հորափորումը, բայց նավթագործներ Ալին ու Կարոն անընկճելի շարունակում են գործը: Մաքառման այդ ժամին նրանց մղում է ուռուցիոն ավյունը, որ ծնվել էր քաղաքացիական կռիվների բովում:

Ամենադժվար պահին նրանք վերհիշում են հերոսական անցյալը, երբ զենքը ձեռքին հազարավորների հետ մարտնչում էին թշնամու դեմ: Խրամատների մեջ նրանց անծանոթ էին խոնջությունն ու ահը: Հիշում են, թե ինչպես

...լցրել էր բուքը խրամատները ձյունով
Եվ զինվորները անթիվ սառել էին ցրտից,
Կարմրել էր ձյունը ընկածների արնով,
Բայց աննահանջ իրենք կռվում էին նորից:
Ու թվում է նրանց նույն կռիվն է ահա...

Անցյալի և ներկայի մեջ այս հաստատ կամրջի վրաջով շարժվում են մեր մարդիկ, շարժվում են աննահանջ դեպի հաղթանակը, այս անգամ արդեն աշխատանքի ճակատում:

Լիովին ընդունելով հարցի նման մեկնաբանության ճշտությունը, մենք այնուհանդերձ, չենք կարող չնշել, որ ինչպես Հուրյանը «Ինեպր» պոեմում, նույնպես և Գրիգորյանը «Լոկ-Բատանում» սո-

մետական մարդկանց աշխատանքային խիզախությունը բացատրում են ռեոլուցիոն անցյալի տրադիցիաներով միայն: Մինչդեռ այդ հերոսության հիմքում այդ տրադիցիաների հետ միասին, ընկած են ռեոլուցիայից հետո ստեղծված նոր հասարակական կարգերը, ուր իշխանությունը պատկանում է աշխատավորներին, ուր նրանք իրենց վիճակի ու բախտի իսկական տնօրենն են, իրենց վաստակի տերը, երբ նրանց առաջ բացվել են լուսավոր կյանքի բոլոր հեռանկարները: Բնական է, որ բանվորների աշխատանքային հերոսությունը կապել միայն տրադիցիաների հետ, կնշանակի թալ հարցի թերատ մեկնաբանությունը:

Սխեմատիկ մոտեցման շնորհիվ, որ բանաստեղծն ապավինում է ռիտորիկային, ֆետիշացնում է առարկաները, փոխանակ վերլուծելու կենդանի մարդկանց ու նրանց գործերի էությունը: Իսկ պեղարվեստական համեմատություններն էլ այս պատճառով երբեմն բռնազբոսիկ են լինում: Ահա մի կտոր նավթի մասին.

Հեյ, նավթ, մեր սրտի զարուհն ես դու նավթ,

Մեր նոր աշխարհի արյունն ես դու նավթ,

Այն ո՞վ է փորձում հորձանքդ սանձել,

Կամ պարզել քո դեմ արյունոտ մի թաթ:

(«Երգ նավթի մասին»).

«Դարձ» բանաստեղծության թեման առնված է կոլխոզային կյանքից: Մենք տեսնում ենք երկու սերնդի հայացքների ու տրամադրությունների բախումը: Երիտասարդ ուղին կոլխոզ է մտել, իր լախտը կապել է կոլեկտիվի հետ. հայրը համառում է հին դիրքերի վրա:

—Ապրել եմ, որդիս, կարիքի մեջ ես,

Ձեռք բերել մի կերպ մինուճար մի եզ,

Որ հիմա դառնամ ուրիշին ընկեր,

Ուրիշը դառնա այսօր մալիս տե՛ր:

Պատկերն իրական է և ճշտությամբ վերարտադրում է մանր սեփականատիրոջ հոգեբանությունը, որը ամբողջ կյանքում իր սակավազոր ուժերով մենակ ճակատել է կյանքի դժվարությունների դեմ, տապալկվել միայն իր սեփական յուղի մեջ և այժմ չի կարողանում հասկանալ նորը, հազարավոր կասկածներ են փոթորկում միտքը և անցյալի անապահով ու ծանր գոյության տագնապն է նրան համակում:

Երիտասարդ որդին այլ հայացքով է նայում կյանքին, անցյալի ու ներկայի համեմատության վրա է կառուցում նա իր եզրակացությունները:

Հորը նա պատասխանում է.

— Բայց միշտ էլ մեր տան այցելուն սովն էր
Ու քամին խելառ մեր հյուրն անբաժան.
Լուսնից ենք հաճախ մենք հաց ալերսել,
Աստղերին պատմել մեր կյանքը դաժան:

Եվ նա խորին հուզմունքով ասում է հորը՝

Եվ կգաս, գիտեմ, դիմումը ձեռիդ,
Կուխողի դուռը կծեծես վստահ
Ու կասես ահա գալիս եմ ձեզ հետ,
Ձեզ հետ ապրելու վերելքն այս հսկա:

Գրիգորյանի վերլուծական կարողությունները դեռ սահմանափակ են, քիչ նոր բան կա նաև նրա գրելու եղանակի, բանաստեղծության ձևի մեջ: Բանաստեղծն ընթանում է հարթված ճանապարհով և «Լիրիքական հույզեր» ժողովածուի մեջ մենք ինքնատիպության քիչ թե շատ աչքի ընկնող նշաններ չենք տեսնում:

Մեր մյուս շնորհալի ու խոստումնալից պոետի՝ Աշոտ Գրաշու «Մուտք» բանաստեղծությունների ժողովածուն և՛ թեմաների, և՛ ըզրացմունքների անմիջականությամբ ու շեշտակիությամբ թարմության բերեց:

Երկրի բնության, քաղաքի ու գյուղի նկարագրությանը նույնիսկ բանաստեղծը ժամանակի շունչն է տալիս: Եթե նա խոսում է սովետական քաղաքի մասին, ապա ընթերցողը հեղինակի հետ վերապրում է շինարարության թափը, լսում է ինդուստրիայի, քաղաքային աշխույժ կյանքի սիմֆոնիան: Ահա «Վիշկանների քաղաքում» բանաստեղծությանից մի կտոր:

Խնդություն իմ նորօրյա — վիշկանների քաղաքում,
Սուլիչների սիմֆոնիա — վիշկանների քաղաքում:
Բարձրանում են շենքերը երկաթեղեն ոտքերով:
Բյուր կառուցող ձեռքերը վիշկանների քաղաքում:

Տրամվայներ ու օթոն, ժապավեններ մայթերի,
էլեկտրավառ լույսի տոն — վիշկաների քաղաքում:

Եվ որպես երգ մի մարդ օրերի լեմն այս հուժկու —
Մինարեթներ խաբխլած, — վիշկաների քաղաքում:

Սա արդեն նախառեղուցիոն Բաքուն չէ իր խաբխլած տներով.
ցածլիկ ու մրտտված բանվորական հյուղերով, ուղտերի քարա-
վանով, ձիաքարշով և շայխանաներով: Գրաշին երգում է նոր Բա-
քուն, որ ամեն ինչով տարբերվում է հնից և այս նկարագրության
մեջ զգացվում են նրա զարգացման դինամիկան ու հեռանկարները:

«Երևանի դարուն» բանաստեղծության մեջ Գրաշին քաղաքի
բնության գովքն անելով, իր զգացմունքները զեղելով, սեր է բոր-
բոքում քեպի մեր սոցիալիստական իրականությունը: Նրա հու-
լապարար սուղերի մեջ սովետական մարդու երջանկությունն ու լա-
վատեսությունն են լեզու առնում:

Երևանի մասին այսպես է երգում բանաստեղծը:

Օդը լուրթ է, կապույտ ինչպես կապույտ խաղող,

Հովը շոյող, որպես ծովը ամառային —

Նս սիրեցի, ախ, քնքշությունդ խաղաղ

Երևանի դարուն, իմ ծաղկավոր մայիս...

.

Բայց ձեր սիրուց ավելի Երևանի մայիս,

Երևանի բարդիներ, արև Երևանի,

Սիրում եմ տուֆաշեն հարկերն այս հմայիչ,

Փողոցները այս նոր, լայն ու լայնանիստ:

Անցյալի պոետներն էլ են երգել Երևանի՝ «Նաիրյան երկրի»
այդ մի ժամանակ հետամնաց ու մոռացված անկյունը, որը գեղեցիկ
բնությունից, քաղցր ջրից զատ, ոչինչ չի ունեցել բանաստեղծին
հուզելու համար:

Սովետական կարգերի պայմաններում առանձին շուայլու-
թյամբ է բացվում Երևանի դարունը, որը իր «խաղաղ քնքշու-
թյունն» ունի, ուր հին, ծուռ ու մուռ փողոցների տեղ, ձգվում են
նոր ու լայնանիստ պողոտաներ՝ «տուֆաշեն հմայիչ հարկերով»:

Ազատագրված կնոջ և սիրո հարցը, ինչպես Թաթուլ Հուրյանի,
նույնպես և Սշոտ Գրաշու բանաստեղծությունների մեջ արծարծ-

վում են հաճախ: «Աղջիկներ» բանաստեղծության մեջ Գրաշին, օրինակ, պատկերում է սովետական հասարակ աղջկան՝ Լուսիկին, որը «հրաշք աղջիկ» չէ, ոչ էլ «անմեղ հրեշտակ», «աստղ գեղեցկուհու ամպային շղարը», նա ո՛չ Բիաթրիչե է, ո՛չ էլ Շարլոտա:

Լուսիկը սովորական գրաշար է: Սիրո զգացմունքը նրա մեջ զարթնում է, ձևավորվում, քնքշանում ու բյուրեղանում աշխատանքում, գործի ընթացքում: Նա սիրում է, բայց նույնիսկ անպատասխան սերն ու սիրած տղայի հետ բաժանումը այդ աղջկա սրբատում քաղցր հուշ են թողնում միայն: Ազատ ու անկաշկանդ կացությունը ողբերգական վիճակ չի ծնում և նույնիսկ անպատասխան սերն ու բաժանումը չեն խախտում մեր մարդկանց լավատեսությունը, ապրելու, ստեղծագործելու մղումը: Այս մտքերն են տրտահայտվում նաև «Նամակ», «Ախ, ես քեզ եմ դեռ հիշում», «Վարդոտ» բանաստեղծություններում՝ սյուժետային տարբեր պլաններով:

«Մուսք» ժողովածուի մեջ տեղ գտած գործերի մոտիվները բազմազան են: Գրաշին բավական թվով երգեր է նվիրում կոլխուզային գյուղին: Դրանց մեջ սակայն մեծ մասամբ բնության երեւելությունների մասին է խոսք լինում, ավելի քիչ մարդկանց և նրանց գործերի մասին:

Ինչպես մեր թված նախորդ հեղինակները, նույնպես և Գրաշին այս շրջանում դեռ չէր հաղթահարել կոնկրետ պոեզիային հասնելու հետ կապված դժվարությունները: Նրանք դեռևս չէին սովորել սովետական մարդու աշխարհայացքն ու հույզերը բեկված տեսնել առանձին կոնկրետ հարաբերությունների մեջ, այդ հարաբերությունները մեկնաբանելով, հետևություններ անել: Դրանով էլ պետք է բացատրել Հուրյանի, Գրիգորյանի, Գրաշու ստեղծագործությունների մեջ պրիմիտիվիզմի և սխեմատիզմի արտահայտությունները:

«Երգ գարնան մասին գրված ձմեռը» բանաստեղծությամբ, օրինակ, Գրաշին երևի ցանկացել է մեր գյուղի աշխատանքային մի պրոցեսը նկարագրել և ցույց տալ չդա արգասիքները: Բայց փաստորեն ստացվում է գաղափարազուրկ, ժամանակից դուրս մի նկարագրություն, որը կարող էր նույն ձևով գրվել նաև ռևոլուցիայից շատ առաջ և քիչ էլ չեն այս ձևով գրված ստեղծագործությունները մեր նախառևույցիոն գրականության մեջ:

Հողը հերկեցինք ժամանակից շուտ
մե աստղերի պես մաքուր, շողշողուն
Մեր զտած սերմը քաղցր մի հուշով
Թաղեցինք բերրի մեր սեահողում:

Բանաստեղծը փորձում է մեր ժամանակի գծերը նշել, բայց դրանք շատ ու շատ դժգույն են և աննշմարելի: «Հողը հերկեցինք ժամանակից շուտ» արտահայտությունը հեղինակը կարծում է, թե արդեն տվեց աշխատանքի նկատմամբ մեր գյուղի մարդկանց սոցիալիստական վերաբերմունքը, «ու աստղերի պես մաքուր, շողշողուն զտած սերմը քաղցր մի հուշով բերրի մեր սեահողում» ասելով, նա ենթադրում է, որ պատկերավոր խոսեց գիտական հիմունքներով առաջ տարվող գյուղատնտեսական, աշխատանքի մասին:

Այս և նման բանաստեղծությունների մեջ չեն բնորոշվում, չեն ընդգծվում կոլիտոզային դարնան էական առանձնահատկությունները: Պոետը խոսքը գեղեցիկ է ասում, ասած լինելու և ոչ թե ընթերցողին կազմակերպելու համար:

1935 թվի ապրիլին Ադրբեջանի Սովետական գրողների միության օրգան «Խորհրդային գրող» հանդեսի 3-րդ համարում Թ. Հուրյանի, Ս. Գրիգորյանի և Ա. Գրաշու ստեղծագործությունները քննելու և արժեքավորելու առաջին լուրջ փորձն է կատարվում: Ընկ. ընկ. Հ. Մամիկոնյանը և Ս. Սողոմոնյանը «Բաքվի հայերիտագրողները» հոդվածում բավական հանգամանորեն վերլուծելով վերոհիշյալ հեղինակների հրապարակի վրա եղած գործերը, մատնանշեցին նրանց հաջողությունները և լուրջ վրիպումները:

Հոդվածի հեղինակները, խոսելով Ադրբեջանում սովետահայ գրականության զարգացման մասին, արդարացիորեն ընդգծում են, թե «Ներիտասարդ գրողների հիշած պլեադան աչքի է ընկնում հուսատու կենտոնակության մեջ, համառ, տեական աշխատանքով: Նրանցից մի քանիսն արդեն ոտք են դնում ամելի հասունացած, ձևավորված գրողի ճանապարհին»:

Մամիկոնյանը և Սողոմոնյանը Բաքվի գրական երիտասարդության ուշադրությունը հրավիրեցին մի կարևոր հանգամանքի վրա: Մեր գրողները Ներգում են գործարանը, կոլտնտեսությունը, սոցիալիստական նոր քաղաքը, նավթը և այլն, բայց այդ բոլորները, տեղային նշանակություն ունենալու աստիճանից չի բարձրանում և հասնում խոշոր ընդհանրացումների աստիճանին: Մեր հե-

րոտական պայքարի առաջընթացը բոլոր բնագավառներում նւ-
րանց ստեղծագործութիւնների մեջ չի դրսևորվում իր պատմա-
կան ~ համաշխարհային նշանակութիւնը, այլ մնում է նեղ, տե-
ւային սահմաններում»: («Խորհրդային գրող» 1935 թ., № 3, էջ
29):

Լրացնելով այս միտքը, պետք է ասենք, որ այս շրջանում
Բաքվի հայ գրողների համարյա բացարձակ մեծամասնութիւնը,
ասլելելով ձեւալորման պրոցես, ստեղծագործելիս դեռ չէր կարողա-
նում նույն հաջողութիւնը ելնելով մասնավորից, հասնել
մեծ ընդհանրացումների, և ընդհակառակը՝ ընդհանուրի մեջ տես-
նել մասերն ու մանրամասերը: Հմտութիւն էր հարկավոր, որպես-
զի նրանք առանձին ծառերի ետեւում անտառը տեսնելին և անտա-
ռին նայելով, նկատելին առանձին ծառերի տարբերիչ գծերը:

Վերոհիշյալ հոգիածի հեղինակներն արդարացիորեն կշտամ-
բեցին մեր երեք շնորհալի բանաստեղծներին՝ Կերեմն նույն-
իսկ հասարակ իմացող հարցերում սխալ եզրակացութիւն հանգելու
համար: Նրանք նկատել էին, որ Հուրյանի, Գրիգորյանի, Գրաշու
երկրորդ գլխավոր թերութիւնն այն է, որ նրանք կենցաղի սիրտ,
տղամարդու և կնոջ հարաբերութիւնների հարցը երբեմն դիտում են
ծուռ հայելու մեջ, ինչպես մենք արդեն նկատել ենք: Հուրյանը ու-
րոշ ստեղծագործութիւնների մեջ նույնիսկ ջնջում է սեր հասկա-
ցողութիւնը, հասարակականին դերակշռութիւն տալու միտումն
առաջ քաշելով և հանձնարարելով, միաժամանակ ժաւտական, յե-
րաբերմունք ունի անհատականի նկատմամբ: Նույն սխալը կշկնել
են Գրիգորյանն ու Գրաշին:

Մեր պարտիայի ղեկավարութիւնը սովետական քաղաքացիներ-
ին պատվաստւում է Հայրենիքի առաջ, հառարակութիւն նկատ-
մամբ իր պարտքի պիտակցութիւնը զգացումը: Կյանքի բոլոր բնագա-
վառներում այս արմատական հարցի լուծումը պարտիան դիտել
ու դիտում է հասարակականի և անհատականի օրինաչափ ներ-
դաշնակութիւն մեջ: Հասարակութիւն և անձնավորութիւն շահերի
մեջ սոցիալիստական կարգերի պայմաններում չբաժնում է հակա-
մարտութիւնը: Հասարակութիւն կատարյալ ազատութիւնը պայ-
մանավորում է անձի ազատութիւնը՝ բոլոր սփերաներում: Այս
պայմաններում նոր իմաստ են ստանում ընտանիք, սեր, ընկերու-
թիւն հասկացողութիւնները:

Կապիտալիստական կարգերին հակակշիռ, սովետական կարգերում ընտանիքը կառուցվում է տղամարդու և կնոջ անկաշկանդ փոխադարձ սիրո վրա: Մասնավոր սեփականությունից բխող կնոջ իրավագրվածությունը պատմության գիրկն է անցնում: Այս ազատ ընտանիքում տղամարդու և կնոջ պարտականությունները նույնպես փոխվում են:

Կյանքի և կենցաղի մեջ տեղի ունեցած այս արմատական փոփոխությունները չմբռնելու հետևանք էր մեր բանաստեղծների վերոհիշյալ սխալները:

Վերջապես երրորդ թերությունն այն էր, որ երիտասարդ բանաստեղծները, հայտաբերելով իրենց ձիրքն ու շնորհքն ընդհանրապես, դեռևս նոր խոսք չէին ասում ձևի ու լեզվական կուլտուրայի աեսակետից:

1932-1936 թ. թ. Բաքվում լույս տեսան Դանիել Գևորգյանի «Սրտի բերքը», Գուրգեն Շահյանի «Կասպիական առափնի» բանաստեղծությունների ժողովածուները: «Խորհրդային գրող» հանդեսի և «Կոմունիստ»-ի էջերում պարբերաբար լույս էին տեսնում Համո Սահյանի, Աթանես Սենալի, Արտաշես Բոթենցի, Եվրեմ Լոռենցի, Շողիկ Սաֆյանի, Իւրայել Պետրոսյանի (Իսպետ), Վազգեն Դարբնու, Ոսկան Հովենու (Կարագոզյանի) և ուրիշների բանաստեղծությունները:

Մեր երիտասարդ գրողների թարգմանությամբ տպագրվում են ադրբեջանական կլասիկ և ժամանակակից պոեզիայի լավագույն նմուշները: Նրանք ձեռնարկում են նաև ռուս, վրաց, ուկրաինական և սովետական մյուս ժողովուրդների գրականությունից թարգմանելու և մասսայականացնելու գործը: Թաթուլ Հուրյանը թարգմտում է Ռուսթավելու «Վազրենավոր»-ից առանձին կտորներ: Գրաշին և Ս. Գրիգորյանը հրապարակում են Սուլեյման Ռուստամի, Սամեդ Վուրղունի լավագույն բանաստեղծությունների թարգմանությունները և այլն:

Այսպիսով Ադրբեջանի սովետահայ պոեզիան ապրում էր զարգացման, զտման ու բյուրեղացման շրջան, ներառելով սովետական ժողովուրդների անցյալի ու ներկա գրականության փորձերը:

Մաքսիմ Գորկին երիտասարդ գրողներին խորհուրդ էր տալիս սկսել փոքր ձևերից՝ պատմվածքներից ու ակնարկներից, որովհետև ոչ մի նկարիչ մեծ կտավի անցնել չի կարող, առանց փորձելու փոքր կտավների վրա, մեծ թեմայի անցնել չի կարող, առանց նախօրոք դժելու նրա ֆրագմենտները, Գորկու այդ տեսակետը հենվում էր համաշխարհային գրականության փորձի վրա, ուստի սակայն հարուստ ու բազմաբովանդակ գրականության փորձի վրա:

Ինչինսկին, խոսելով փոքր ձևի գեղարվեստական գործերի մասին, հետևյալն է ասում.

«Մեր ժամանակակից կյանքը չափազանց բազմազան է, ցայտփայլող, կոտորակված: Մենք ցանկանում ենք, որ նա արտացոլվի պոեզիայում, ինչպես հղիված, անկյունավոր ճենապակու մեջ՝ միլիոնավոր անգամ կրկնված լինելով բոլոր հնարավոր պատկերների մեջ, և պահանջում ենք պատմվածք: Կան իրադարձություններ, կան դեպքեր, որոնք, այսպես ասած, չէին բավականանա դրամայի համար, վեպ չէին դառնա, բայց որոնք խորն են, որոնք մի ակնթարթում համակենտրոնացնում են այնքան կյանք, ինչքան Ֆարի-րով չես ապրի,— պատմվածքը որսում է դրանց և մտցնում իր նեղ շրջանակների մեջ»:

Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու պատմվածքները, նովելները, ինչպես գիտենք, աչքի են ընկնում նոր թեմայով: Նրանց մեծ մասի մեջ անդրադառնում է պայքարը կապիտալիզմի դեմ, սասնավոր սեփականատիրական «խոզություն» դեմ: Գորկու փոքրածավալ երկերի մեջ ցայտուն կերպով դրսևորվում է նորի զգացումը, իրականության հակասությունների խորը և լայն ընկալումը: Այս հակասությունների նկարագրությունը շեշտված սոցիալական բնույթ ունի, պատմականորեն օբեկտիվ է և խորապես զաղափարական: Այս հանգամանքը երկը դարձնում է զաղափարապես նրա պատկասլաց, հերոսականություն ու փայլ է տալիս գրական թեմաներին և գրական հերոսներին: Հեղինակը իր էրուզիցիայի ամբողջ ուժով մերկացնում է կապիտալիստական կարգերի արատները, մատնացույց անում այդ կարգերի նեխումը և դրանց հակադրում աշխատավոր մարդու բարոյական վեհ հատկությունները, նրա լավագույն ակնկալությունները, որոնք պետք է իրագործվեն պատմության տրամաբանությամբ:

Հայ նախառեկուցիոն և հետհոկտեմբերյան գրականությունը նույնպէս փոքր գրական ձևերի լավագույն նմուշներ են տվել: Մեր գյուղագիրներին՝ Հ. Թումանյանի, Վր. Փափագյանի, գրականության արեւմտահայ հատվածում՝ Երուխանի, Գ. Զոհրապի և. վերջապէս, Դ. Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի բազմաթիվ երկերը այդ բնագավառում լավագույն տրադիցիաներ են ստեղծել հայ գրականության մեջ:

Իհարկե, գրական փոքր ձևերը, երբ խոսքը վերաբերում է կատարյալ անթերի գործերին, նույնպէս ունեն իրենց զգալարութիւնները: Բեկինսկու արտահայտությամբ նրանք վերարտադրում են իրադարձութիւններ ու դեպքեր կյանքից և որսալով դրանք, մըտցնում են իրենց նեղ շրջանակների մեջ:

Մոցի լիստական կարգերի պայմաններում որքա՞ն շատ են, բազմաբովանդակ այդ իրադարձութիւններն ու դեպքերը, որոնք մի «ակնթարթում համակենտրոնացնում են այնքան կյանք, ինչքան չէս ապրի դաբերով»:

Այդբեջանի հայ սովետական արձակագիրները համարյա բոլորն էլ իրենց գրական դործունեութիւնն սկսեցին փոքրածավալ գործերից:

1933-34 թ. թ. հրատարակվում են Արշավ Դարբնու մի շարք նովելներ ու պատմվածքներ: Դարբնին գրում է գերազանցապէս գյուղի կյանքից:

Հեղինակի առաջին գործերի միջ պատկերվում է, թե ինչպէս հին գյուղը տեղի է տալիս նորի հանդեպ: Փոխվում է տնտեսութիւնը վարելու ձևը, երբեմնի կոտորակված դաշտերի վրա աստիճանաբար անհետանում են սահմանագծերը, պապենական շուքին ու սորորին փոխարինելու է դալիս տրակտորը, գյուղատնտեսական աշխատանքը մեքենայացվում է: Անհատական սակավազոր տընտեսութիւններում դեգերող մարդիկ միավորվում են կոլխոզների մեջ: Բազմապատկվում է աշխատանքի ստեղծագործ ուժը: Բազմապատկվում են նրա տված բարիքները, որոնց տերը աշխատանքի մարդն է: Այս հաստատուն բազայի վրա էլ աճում է գյուղացիության բարեկեցութիւնը: Ունեոր կյանքն է իր թէերը տարածում Բաղդում: Նախկին գետնափոր տների ու հյուղերի տեղ բարձրանում են նոր շէնքեր, նորը մտնում է կենցաղի մեջ: Անգրագիտութիւնը՝ դարավոր այդ չարիքը, հաղթահարվում է: Եվ այս ամենը փոխում են գյուղացու ըմբռնումներն ու հասկացողութիւնները:

Արշավ 'Իարբնին, օժտված լինելով երեւոյթների մեջ բնորոշը տեսնելու ընդունակութեամբ, բավական լավ ճանաչելով հին գյուղը, իր փոքրիկ նովեւների ու պատմութեան մեջ վերարտադրում է այդ փոփոխութեանները: Գրողը երբեմն բավարարվում է շաբիխներով, բայց դրանք արտահայտիչ են: Ահա «Կոմունիստ» օրաթերթի 1933 թ. հունիսի 21-ի համարում տպագրված «Կոտրված սալորենին» պատմվածքը: Այստեղ տրված է երկու կոլխոզնիկների կյանքից մի փոքրիկ էպիզոդ. գիշերային մի հանդիպում միայն:

Գիշեր է: Կոլխոզնիկ Բագրատը ջրում է արտերը: Փոխանակ աշալուրջ հսկելու և սակալ ջուրը լիովին օգտագործելու, Բագրատը քնում է: Ջուրը հեղեղում է արտը, ապա և անօգուտ հոսում անմշակ տարածութեանները: Բայց այդ պահին քուն չի գալիս մյուս կոլխոզնիկի՝ Սարգսի աչքերին: Մոտ անցյալում կրած տառապանքները նրա աչքերի առջև են: Սովետական իշխանութեան օրոք է սկսել նա ազատ շունչ քաշել: Եվ ահա գիշերվա այս պահին նա շրջում է արտերն ու տեսնում քնած Բագրատին: Եվ երբ այդ վարմունքի համար Սարգիսը նախատում է իր պարտքը չկատարող ընկերոջը, Բագրատի շրթերով առաջինին պատասխանում է նոր կյանքի էությունն ու իմաստը դեռ հասկացած գյուղացին:

— Հաստ աւ բարակ մի դին ա, մայ բարակ մանողին, — պատասխանում է Բագրատը:

Այլ կերպ է հասկանում իր վիճակն ու իր անելիքները Սարգիսը:

— Էս բոլորն ո՞ւմն ա, — ցույց տալով կոլխոզի դաշտերը, հարցնում է նա և պատասխանում, — կոլխոզինը... Կոլխոզը ո՞ւմ ա, մենք ենք, ինձ նման չքավորն ա... ուրեմն էս արտերը մերն են, իմն են...

Սարգիսը փոխում է ջրի ընթացքը դեպի ծարավի արտերը: Եվ մի տեղ տոքը դեմ է առնում ինչ որ արգելքի, նա վալի է ընկնում: Ինչ որ ծառի բուն է դա: «Սարգիսը ձեռքով շոշափում է կտրելված սալորենու բունը և բխի տակ ժպտում: Երկու տարեառաջ էր... Սալորենին, որ Սարգսի տափը բաժանում էր Քոլանց Աբրահամի տափից, տրակտորը կոտրեց...»:

Հեղինակը, ինչպես տեսնում ենք, մարդկանց հայացքներն ու հասկացողութեանները ցույց է տալիս արտահայտչական պրիոմներով, տվյալ հոգեվիճակը բացատրելու համար ստեղծելով հա-

մտզիչ դրություն: Սարգիսը փոխում է ջրի ընթացքը, նպատակահարմար ուղղություն տալիս նրան, այն ժամանակ, երբ Բագրատի անողության պատճառով դա շեղվել էր: Սարգիսը հիշում է այն ժամանակ, երբ սալորենին սահման էր դնում իր և ուրիշի տղապտորների միջև: Բնորոշ է նաև, որ այդ ծառը կոտրեց տրակսորը, որ գյուղ էր եկել Սովետների օրոք:

Պատմվածքի հերոսն ինքն իր հետ խորհրդածելով, եզրափակում է.

— Կամ կլինի, որ էս սալունին բոլորովին հանեմ... Թող ոչ մի բան չմնա տափերի սահմանները հիշեցնող:

Նույն հեղինակի «Պղնձի կուժ» պատմվածքը («Կոմունիստ» 1935 թ. ապրիլի 23) արծարծում է կենցաղի հարցեր:

Կոխտզնիկ Մեծ ապերը զաշտից տուն դառնալիս, ճանապարհին պատահում է իր հարսին, որը քաղաքից է վերադառնում: Սալը բարձած է աթոռներով, սեղանով, մահճակալով, տնային այլ կահույքներով: Մեծ ապերը զարմացած նայում է այս ամենին և զլուխը շարժելով, շարունակում է ճանապարհը:

Նրբ փոխվում է տան կահավորութունը, Մեծ ապերը հարսին է դիմում հետևյալ խոսքերով.

— Սա ի՞նչ ա, որ ցորեն ես տվել, փող... դու չամ կերակուր սսիր, փալանի վրա նստած էլ կուտեմ:

— Ապեր, մաքրության, շնորհի, լուսավորության համար ա,— սպիտակ սփռոցը հարդարելով, բացատրում է հարսը:

— Կուսավորություն... Պահ, պահ, լուսավոր հարս, ծլեպ Մուրադի աղջիկ, լուսավոր Հերիք,— հեգնանքով խայթում է ծերունին: Սյա արտահայտիչ խոսքերի մեջ մեկնվում են մի շարք կարևոր հարցեր: Հանդես է գալիս հին գյուղացու կոնսերվատիզմը կենցաղի մեջ: Ծերունին տհաճութամբ է նայում իր նախկին կյանքի հետ առնչություն չունեցող առարկաներին: Բայց երիտասարդ կոխտզնիկուհին հասկանում է դրանց անհրաժեշտությունը, հասկանում է, որովհետև ծլեպ Մուրադի աղջիկ Հերիքն այժմ լուսավոր է:

Արշավ Դարբնին մի շարք հետաքրքիր դրություններ է ստեղծում, ցույց տալով, թե ծերունին ինչպես աստիճանաբար ընտելանում է այդ ամենին, չնայած, որ հին սովորության համաձայն փորձում է աթոռի վրա ծալապատիկ նստել: Նույն միտքն է արծարծվում նաև պղնձի կփի մասին պատմելիս: Մեծ ապերը դույ-

ինչ վերցրած ջուրը չի ուղղում խմել, նա սովոր է պուզլումի ջրին: Բայց պղնձե կուծն ալլես չկա...

Դարբնու պատմվածքների մեջ նուրբ հումոր կա: Ժողովրդական անպաճույճ խմաստախոսություններով լի են նրանք: Պատկերները աչքի են դարձում ինքնուրույն երանդներով:

«Հյուսեինի տունը մաշված փափախի պես նստել է բլրի գլխին և կարծես նայում է հեռուն՝ գերեզմանաքարերի նման ջցված ու մռայլ վիշկաներին»: Այսպես է սկսվում «Երկու ճանապարհ պալի վիշկաները» ակնարկը («Կոմունիստ» 1933 թ. հունիսի 28): Եւ ռեդուցիայից առաջ նավթահանքերի և դրանց ֆոնի դրա բանվոր Հյուսեինի տան նկարագիրն է:

Իսկ ինքը Հյուսեինը, որը իր մաքուր կյանքն անց է կացրել ալդ. «գերեզմանաքարերի» արանքում, «Տնից դուրս դալիս... կոճղի նման չորացած, կուչ եկած, հենվում է ձեռնափայտին, սարսափելով նայում է վիշկաներին և դանդաղ օրորում գլուխը»: Այժմ խարխուլ ալդ խրճիթից նավթահանքը տանող քարքարոտ ճանապարհը սկսեք է բռնի նրա պատանի որդին՝ Մամեղը:

Ահա Մամեղը դնում է հանքը, դնում է ապադայի մասին պատանեկան խոհերով համակված, երազկոտ... Քայլում է Մամեղը և նրա բոբիկ ոտներն արյունոտվում են դեռ ճանապարհին: «...ինչքան շատ են կածանի քարերը...» մտածում է նա:

Նույն չարքաշ, հյուլթաքամ աշխատանքի բովով է անցնում և որդին: «Նա ատել է վիշկայի գորշ ծանրութունը, ատել է նավթը: Նավթը՝ հազարավոր բթամատերից հոսած արյուն, որ ծծել է հողը, խառնել իր դորշությանն ու դուրս նետել»:

Ծանր ու տառապալից աշխատանքի մեջ զարթնում է դիտակցովությունը. «Մամեղը փորել է, փորել... Հողի յուրաքանչյուր շերտը նրա համար մի նոր միտք է բերել և նա զգացել է իր աճը: Երբ շատացել են նրա մտքերի հարուստ շերտերը, — նա վերցրել է հրադանը...» մասնակցել քաղաքացիական կռիվներին:

Երկրորդ ճանապարհը դեպի նավթահանքը բացվում է ռեդուցիայից հետո, երբ նույն Մամեղի համար աշխատանքը դառնում է փառքի, պատվի ու արիության գործ:

Նավթագործ բանվորների երկու սերնդի կյանքի ու պայքարի մասին մի թուույիկ տկնարկ է այս երկը, որ հեղինակը գրել է ջերմ շնչով:

Քաղաքի և գյուղի աշխատավորության կյանքը նկարագրող արձակ ստեղծագործություններ տվեցին նաև Գարեգին Սևունցը, Մարգար Դավթյանը, Գևորգ Բլանցը և ուրիշները:

Մարգար Դավթյանի «Առաջին կինը» և «Լեռքին ձիւր» ժողովածուներում զետեղված են հեղինակի առաջին շրջանի գործերը: Սրանց մեջ արժարժվում են աշխատանքի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի, կնոջ և տղամարդու հարաբերության, ընտանիքի ու տիրո, հին և նոր կենցաղի միջև տեղի ունեցող պայքարի մոտիվները, քննվում են սոցիալիստական կարգերում հաքարակա-կան համակեցության հարցերը: Բայց միշտ չէ, որ այդ մոտիվները հնչում են մեր օրերի կյանքի հետ ներդաշնակ, բոլոր հարցերը չէ, որ ճշմարիտ մեկնադրանքում են այս ժողովածուներում զետեղված պատմվածքների մեջ:

«Առաջին կինը» պատմվածքի հիմնական իդեան որոնելիս չեք գտնի աշն, քանի որ ինքը հեղինակն էլ չի պատկերացնում, թե որն է այն առանցքը, որի շուրջը պիտի սլտան իրադարձությունները: Հրապուրվելով բազմաթիվ դեպքերի մանրամասնությունների նկարագրությամբ, Դավթյանն ընթերցողի ուշադրությունը շեղում է հիմնականից:

Այս պատմվածքում, ըստ հեղինակի միտումի, պետք է նկարագրվեր աշխատավոր կնոջ՝ Տոսյայի իսկական ազատագրու- լիսունը:

Մեր սերունդը ծանոթ է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոուցիայից հետո մեր երկրում կնոջ վիճակի մեջ կատարված արժատական հեղաշրջմանը: Մենք դիտենք, թե ինչպիսի աստի-ճաններով բարձրանալով, սովետական կինը հասավ ներկայիս բարձրությանը: Գիտենք, որ նրա ազատագրությունն իրագործվեց սուր պայքարի մեջ, որ դրա համար մարտնչեցին մեր հասարա-կության բոլոր պրոպրետիվ ուժերը, առաջին հերթին բանվոր դա-սակարգը՝ բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ: Հազարա-վոր սովետական կանաչ անցան մեր տնտեսության և կուլտուրայի տարբեր բնագավառներում ստեղծագործական աշխատանքի բովով և էերպարանափոխվեցին:

Ուրեմն այս մեծ երևույթի հատկանշական դժերը որոնք են: Առաջինը՝ կնոջ ազատագրության հիմքի հարցն էր, որ լուծեց Սո-ցիալիստական Ռեոուցիան, երկրորդը՝ կնոջ և տղամարդու իրա-վահավասարության դեկլարացիան և կազմակերպված պայքարը

դրա իրագործման համար և վերջապես երրորդ՝ այդ պայքարի ձեերն ու արդյունքները:

Այս պատմական երևույթը տեղի է ունեցել մեր աչքի առջև և դժվար էր այդ երևույթի օրինաչափ զարգացման մանրամասնությունները տեսնել: Դավթյանը «Առաջին կինը» պատմվածքի մեջ չի գնում երևույթները խորությամբ հասկանալու ճանապարհով և սայթաքում է:

Տոսյան՝ առաջներում մի հետամոնաց կին, ձգտում է աշխատանքի այնպիսի բնագավառ, ուր «տղամարդու և կնոջ աշխատանքը չինական պարիսպներով» իրարից անջատված չեն: Եվ ահա փոխանակ մեծ դործարանի բանվորական կոլեկտիվի ուղորդը ընկնելու, Տոսյան, չգիտես ինչու, ընկնում է մի բուռն բախտախնդիր, իրենց հայացքներով ու գործունեությամբ հակասովետական մարդկանց շրջանը:

Ստեղծելով այս կեղծ, մեր իրականության հետ շունչփող դրույթունը, հեղինակը դժվարանում է նաև հարցի ճիշտ լուծումը տալ: Երբ Տոսյան հայտնվում է բանվորների միջավայրում, որը նկարագրվում է որպես ինչ որ հեղհեղուկ, անկերպարանք զանգված, նրան համարյա բոլորն էլ նայում են սոսկ որպես կին և ուրիշ ոչինչ: Առաջին կնոջ երևան դալը ձուլման ցեխում դիտվում է ոչ թե որպես օրինաչափ մի երևույթ, այլ տարօրինակ բացառություն, որի շուրջը խոսում են ու պատմում դործարանի բոլոր խաչուղիների վրա և անկյուններում: Տոսյայի հոգեկան ծանր ապրումների ժամանակ ոչ ոք նրան նեցուկ չի լինում, նա չի դառնում իր հարազատ, ընկերական միջավայրը: Պարզ է, որ հեղինակը չի հասկացել, որ հենց կոլեկտիվի մեջ են բարձրանում և իրենց արժանապատվությունը գիտակցում կանայք՝ մեր հասարակության իրավահավասար անդամները: Այդ պատճառով էլ նա ճիշտ չի ըստել պատմվածքի կենտրոնական հանգույցը:

Պատմվածքը ձգձգված է, բազմաթիվ մանրամասնությունների վերաբերյալ հեղինակի երկարաբանությունների մեջ կորչում է հիմնական գաղափարը, դժգունանում են հերոսները:

Պատմվածքի և նովելի շրջանակները նեղ են և հեղինակը հնարավորություն չունի փոքրածավալ դործի մեջ իր հերոսի կերպարը կերտելիս, նրան դիտել կյանքի բազմաթիվ ու բազմազան ուղորտների մեջ, հետամուտ չինել նրա զարգացմանը, մանրանկար-

չի բծախնդրությամբ քայլ առ քայլ մատնանշել նրա համար բնորոշ բալորը դժևորը:

Ուրեմն փոքր ձևի երկերի հեղինակը նախ և առաջ պարտավոր է պարզապես որոշել իր գործող անձանց ով լինելը, ընտրել նրանց բնութագրման համար բացառապես արտահայտիչ երանգներ:

Հիշենք, օրինակ, Գորկու Մակար Չուգրային: Իր հերոսի կերպարը կերտելու համար Գորկին էքսկուրսիաներ չի կատարում, նրա բնավորության գծերի և հոգեկան ներաշխարհի մանրամասն հետազոտություններ չի կատարում: Դայց և այնպես դա պայծառ կերպար է, որը խտացնում է իր մեջ ուսման ժողովրդի համար քնորոշ գծերը: Ինչու: Որովհետև հեղինակն ընտրել է նրան բնութագրվող բացառապես խտացրած և ցայտուն երանգներ:

Մեր արձակագիրներն փոքրածավալ գործերի շուրջ թերություններից մեկը եղել է և մնում է կերպարների անկատարությունը: Այս առումով զգալի թերություններ ունի Դավթյանի «Սեյալ» պատմվածքը, ուր նկարագրվում է դասակարգային սուր պայքարը կոլխոզային դուղում:

Կուլակ Սեթյի գնդակից ընկնում է գյուղատվետի նախագահ Սիմոնը: Իդուր ընթերցողը սպանության տակ ինչ որ դասակարգային մոտիվներ կորոնի: Այդ սպանությունը չի առնչվում կուլակության դեմ մղվող քաղաքական ու տնտեսական պայքարի հետ: Կուլակի և գյուղատվետի նախագահի հակամարտության պատճառը ըստ հեղինակի, սերն է, պատվի խնդիրը:

Եթե երկի կոնֆլիկտը հիմնվում է սիրո և պատվի խնդրի վրա, ապա ինչու աչդ կոնֆլիկտը ծագում է անպայման երկու տարբեր քաղաքական լագերների պատկանող մարդկանց միջև: Եվ վերջապես եթե կյանքում աշխարհի դեպք պատահել է, ապա մի՞թե դա որևէ չափով տիպական է մեր օրերի համար: Այս սկզբունքային հարցերը չեն հուզել հեղինակին և նա չի գտել իր հերոսների տիպականացնելու համոզիչ գույներ:

Սիմոնը միայն պաշտոնով է գյուղատվետի նախագահ, բայց ոչ իր բարոյական առաքինություններով, նրան հեղինակի դեկլարատիվ արտահայտություններն են հանձնարարում որպես գյուղի առաջավոր մարդ և ոչ թե նրա փաստացիությունը, վարքն ու գործերը:

«Էկերջին ճիշը» պատմվածքի թեման առնված է նախառեկու-
ցիոն Ադրբեջանի գյուղի կյանքից: Կուլակ Հաջի Աբբասը շատ
առնասուններ ունի, մի քանի կին և բառրակներ է պահում: Հեղի-
նակը պատմում է բառրակների շարքաշ կյանքի, Հաջու կանանց
ստրկական վիճակի մասին: Հաջին ամեն ինչին նայում է սեփակա-
նատերի աչքով: Նրա համար հոգատարություն ուրիշ առարկա
չկա, բացի իր ունեցվածքը, որի պահպանությունն այնքան աշա-
ւուրջ կերպով նա հետևում է: Բառրակներն ադրբեջանցիներ են,
մեկը պարսիկ և մյուսը հայ: Պարսիկը հասակն առած մարդ է,
նախապաշարմունքների դերի, ծաշր աստիճան հետամնայ մի անձ
նավորություն, որը միևնույն ամանից հայի հետ ուտել չի ցանկա-
նում: Բայց այլ աչքով են նայում իրար ադրբեջանցի և հայ բառ-
րակները, որոնք գիտակցում են իրենց գոյավիճակի և շահերի ընդ-
հանրությունը:

Դավթյանը դժբախտաբար միայն հարեանյիորեն է շոշափում
այս ամենը: Պատմվածքի մեջ սուր կոնֆլիկտներ չկան գործու-
ղությունները թույլ են զարգանում և երեք հիմնական սյուժետային
պծերը՝ Հաջու աղահույժությունը, բառրակների համերաշխությունը և
կանանց իրավադրկությունը չեն զարգանում անհրաժեշտ թափով:

«Արևը» պատմվածքը ունենալով բավական պարզորոշ իդեա,
առասպում է նույն թերություններով, ինչ որ նախորդը:

...Ֆենյան աշխատում է գործարանում: Նրանով հրապուրվում
է գրասենյակային աշխատող Սաշան, որին հեղինակը դուրս է բե-
րում մի պարտաբույծ երիտասարդ: Նրան աշխատանքի մեջ չի
տեսնում ընթերցողը, նրա հայացքների ու հասարակական վարքի
հետ հեղինակը չի ծանոթացնում: Սաշան միայն ղուգվել գիտի և
դործարանում թրև գալ՝ Ֆենիայի ուշադրությունը շարժելու հա-
մար:

Հեղինակն իր հերոսին ներկայացնում է որպես ոտորաքար
մի անձնավորություն, որը բոլորի առջև սողալու միջոցով ձգտում
է առաջ քաշվել: Սաշան բոլորի, չգիտես ինչու, առանձնապես,
բանվորների հետ հանդիպելիս ժպտում է, սալոնային տիկնոջ
նման ռեբանսներ է սնում նրանց առջև:

Հենց պատմվածքի սկզբից հեղինակն արդեն մատնում է իր
նպատակը. պարզ է այդպիսի մեկին Ֆենյան չպետք է սիրեր:

Համարյա թե չի իմացվում ով է Ֆենյան, ինչ խառնվածքի, ինչ բնավորության, ինչ հայացքների տեր է: Հայտնի չէ նաև նրա գերն ու կշիռը կուեկտիվում:

Ֆենյան սիրում է հարվածային բանվոր Նրոշկույին: Այս ամենի մասին Դավթյանը միայն պատմում է:

Չկան աշխույժ գործողություններ: Չի մեկնաբանվում, թե ինչու Ֆենյան մերժում է մեկին և ձգտում դեպի մյուսը: Հեղինակն իր հերոսներին դիտում է արտաքինապես, չի խորանում նրանց ներքին աշխարհը, չի թափանցում նրանց զգացմունքների և ասկումների բնագավառը: Նրանք ստացվում են մի տեսակ անշունչ մանեկիկներ, որոնք շարժվում են հեղինակի հրամանով, խոսում են նրա թելադրությամբ:

Այս երկու պատմվածքներից իր արժանիքներով խստորեն տարբերվում է երրորդը՝ «Մի փունջ ծաղիկ»-ը:

Բազրատը պատանեկության օրերին հեռանում է հայրենի գյուղից: Քաղաքում ուսանելով, նա ոտք է դնում գրական ասպարեզ: Եվ ահա գրողի անուն վաստակած, նա գալիս է հայրենի գյուղը: Նրա համար հարազատ են ու հասկանալի կոլխոզի գործերը, աշխատում է իր ուժերի չափ օգնել համագյուղացիներին՝ կուլտուրայի բնագավառում: Լինում է կոլխոզի վարչության ժողովներում, նույնիսկ փորձում է մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին:

Բազրատը իր տրամադրություններով, հոգսերով, ձգտումներով սերտորեն կապված է այս միջավայրի հետ, շնայած նրան, որ ինքը մտավոր բնագավառի գործիչ է:

Մեր իրականության մեջ անջրպետները ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միջև փլուզվում են, աստիճանաբար անհետանում: Կոլխոզիկները հասկանում են Բազրատին և երիտասարդ գրողը գտնվում է իր հարազատ միջավայրում:

Բազրատը պատահում է իր պատանեկության շրջանի ընկերուհուն՝ Աստղիկին, որն այժմ կոլխոզի բրիգադիր է և ամուսնացած կոլխոզի նախագահ Սահակի հետ: Բազրատն անցյալում անտարբեր չի եղել դեպի Աստղիկը: Նրկուսի սրտերումն էլ երբեմն միացել է փոխադարձ համակրանքի կրակը, որ կարող էր բորբոքվել: Բայց հանդամանքները նրանց անջատել են իրարից: Եվ ահա կրկին հանդիպում են: Անցյալի կրակը չի հանգել, միայն անթեղված է: Բազրատին ինչ որ զգացմունք, երբեմն ջերմ, անզուսպ

մղում է Աստղիկի հեաքերով: Նա հանդիպումների առիթ է որոնում: Նրանք ազատ հանդիպում են, զրուցում:

Շրջապատն արատավոր ոչինչ չի տեսնում այդ հանդիպումներին մեջ: Կուլտուրապես աճած և զարգացած գյուղացիությունը կոլխոզի նախագահի կնոջ և գրողի այս հարաբերություններին նայում է պարզ աչքերով: Եվ առանց գրողի ասելու էլ ընթերցողը ընկալում է այն ճշմարտությունը, որ կոլխոզային գյուղում կինն ազատ է և իրավազոր: Նրա հասարակական կեցության մեջ շատ բան է փոխվել, չքացել են առաջվա հասկացողությունները, կենցաղային հին սովորությունները:

Աստղիկի ամուսնու՝ Սահակի սրտում իր կնոջ հաճախակի հանդիպումները կասկած են հարուցում և զլուխ է բարձրացնում խանդը: Բայց նա համոզվում է իր այդ ներքին ձայնի կեղծության մեջ, համոզվում է, որովհետև Բագրատի և Աստղիկի հարաբերությունները ազնիվ են, ընկերական, մաքուր, ինչպես պատանեկական տարիներին: Ավելին, նրանց այդ զգացմունքներն ավելի բուրեղացած են, որովհետև սովետական մարդկանց զգացմունքների վրա իշխում է գիտակցությունը:

Սահակի կասկածներն ու խանդը այս երեք երիտասարդների միջև բարդություններ չեն առաջացնում, տրագիկայի պատճառ չեն դառնում, որովհետև իրադարձությունները դիտվում է կուլտուրական ու գիտակից մարդու պարզ աչքերով: Անառնակա՛ն կիրքը, ճորագործության մղող խանդը, կասկածը դեպի մերձավորն ու շնորհերը մեր մարդկանց համար բնորոշ չեն: Հնի այդ մնացորդները հաղթահարվում են և դուրս մղվում մեր մարդկանց ներաշխարհից:

Պատմվածքը գեղեցիկ ֆինալ ունի: Բագրատն իր ստեղծագործությունների գիրքն է թողնում նվեր «մանկության ընկերոջը», իսկ Աստղիկը հրաժեշտի պահին՝ մի փունջ անթառամ ծաղիկ, որը մաքուր և անշեշ սիրո խորհրդանշան է:

Այսպիսով, եթե Դավթյանի պատմվածքների առաջին ժողովածուն հայտաբերեց նրա գրական շնորհքը, ապա երկրորդ դրքույլի մեջ արդեն երևան եկան բովանդակության ու արվեստի տեսափետրից ավելի արժեքավոր գործեր, որոնք գրողի աճումն էին ցույց տալիս և առաջխաղացումը՝ կատարելագործման ճանապարհին:

Մեր արձակագիրներին հուզող հարցերից մեկն էլ կոլխոզային գյուղում տեղի ունեցող դասակարգային ուժեղ պայքարի գեղար-

վիստական արտացոլման հարցն էր: Այս թեմայով, ի թիվս մյուս պրոդների, բավական թիվով պատմվածքներ է գրել Գևորգ Բլան-յը: 1934 թ. լույս տեսավ նրա պատմվածքների ժողովածուն:

Այս ժողովածուում գետնելված «Պայքար» պատմվածքի մեջ անդրադարձել են կոլխոզային շարժման առաջին էտապի իրողու-թյունները:

Կոլխոզում համախմբված աշխատավոր մարդիկ իրենց քաղաքացիական կյանքում են կառուցում: Գործի գլուխը կանգնած են գյուղի ուռաջավոր մարդիկ՝ պարտիականները, կոմերիտականները: Նրանց հեցուկ են հանդիսանում բոլոր ազնիվ գյուղացիները: Կուլակու-թյունն ամեն կերպ աշխատում է վիժեցնել կոլխոզը: Նա դեռ չի կորցրել բոլոր հենակետերը գյուղում: Կուլակները հենվում են ան-պատակից, անկայուն տարրերի վրա:

Գյուղի նախկին տղուկները զրկված են իշխանութունից, կորցնում են ոտքի տակի հողը, բայց մահամերձի վերջին ճիգն են թափում իրենց գոյությունը երկարաձգելու: Լավ իմանալով, որ կոլ-խոզային տնտեսության ամեն մի հաջողութունը մոտեցնում է նրանց վախճանը, կուլակ իշխանբեկյանները դիմում են ամեն տե-սակի մեքենայությունների՝ ընդհուպ մինչև հրդեհումներ ու տեռոր գյուղի ակտիվիստների դեմ:

Կոլխոզում ներքին սուր պայքար է տեղի ունենում հասարա-կական բարիքի բաշխման ճիշտ սկզբունքների համար: Աշխատա-վոր գյուղացին իր իսկ էությունը ըմբռնում է «ով աշխատի նա կուտի» սկզբունքի արդարացիութունը: Բայց թշնամական տա-րերն էլ լավ են հասկանում, որ այդ սկզբունքի անշեղ կիրառումն է հենց իրենց կորստի պատճառը և ահա կուլակությունն իր ագեն-տուրան մոբիլիզացնում է՝ դեմագոգիայի, խաբեության միջոցով կոլխոզի մարդկանց ուղիղ ճանապարհից շեղելու համար:

Իշխանբեկյանների թեկադրանքով ենթակուլակներն ու լողերը կոլխոզի ժողովում պաշտպանում են բերքն ըստ շնչի բաժանելու առաջարկութունը, հույս ունենալով, որ ընտանիքով ծանրաբեռն-ված գյուղացիները կպաշտպանեն իրենց:

Ժողովում հանդես է գալիս Մյուրոնց Թյունին՝ իշխանբեկյան-ների դործակալներից մեկը, հետևյալ խոսքերով:

«Ախր մեր կոլխոզը սոցիալիզմի համար է պայքարում, չէ, նախապես ջան: Բա որ էդպես է, կարելի է մի կոլխոզնիկին եր-կու հարյուր փութ ցորեն տալ, իսկ մյուսին տասը փութ, որ մեկը

բոլ-բոլ ուտի, մյուսը քաղցած զկուտա ու նրա սփռոցի փշրանք-ները հավաքի»:

Ենթակուլակներ Դանելն ու Պողոսը դատում են այսպես. «Լավ, էլ ինչու ենք կոլխոզ եկել, որ առաջվա նման համ հարուստ, համ քյասիք է լինելու, էդ հո հավասարության չդառալ»:

Այս պրովոկացիային հակադրվում է աշխատանքի մարդու առողջ դատողությունն՝ իր համոզիչ տրամաբանությունով: Կոլխոզ-նիկ Ոսկանը պատասխանում է: Նրա խոսքերի մեջ ռեալ ճշմարտությունն է, որ մերկացնում է թշնամուն, ոչնչացնում նրա կեղծ փաստարկումները:

«Թյունի,— ասում է Ոսկանը,— ուզում ես, որ ես աշխատեմ, դու ուտե՞ս. հիշում ես, որ հնձի ժամանակ շատ կերած արջի նման կանաչներում պառկում, քնում էիր: Քրտինք չես թափել, չես ստանում էլի, ումնի՞ց ես նեղանում»:

Բերքն ըստ շնչի բաժանելու առաջարկը արձագանք չի գտնում կոլխոզնիկների շարքերում:

Գեորգ Բլանցը կոլխոզային գյուղը նկարագրում է հարազատ գույներով: Կոլխոզի զարգացման հետ մեկտեղ, լուսավորվում է քյուզը: Դպրոց, ակումբ, կինո կա այնտեղ: Նոր կենցաղը մտնում է կոլխոզնիկների տները: Նրանք հաստատորեն բռնել են ունեոր ու կուլտուրական կյանքի ճանապարհը:

Թշնամիները հրդեհում են կոլխոզի պահեստը, սպանությունների են դիմում: Բայց ամենուրեք հանդիպում են հերոսական դիմադրության:

Մի արմատական թերություն կա այս պատմվածքում: Հեղինակը ներքեմն գերազնահատում է թշնամու ուժերը, կոլեկտիվին վերապահելով պաշտպանողական դիրքը: Մինչդեռ մենք գիտենք, որ կոլխոզային շարժման առաջին իսկ էտապից հարձակողական նախաձեռնությունը միշտ էլ պրոգրեսիվ ուժերի ձեռքին է եղել, որոնց ղեկավարում և ընթացք է տալիս մեր հերոսական պարտիան:

Բլանց Գեորգը իր գործերում հաջող և լարված դրություններ է ստեղծում, բայց միշտ չէ, որ նրան հաջողվում է այդ դրությունների մեջ տեսնել կենդանի մարդուն: Իր հերոսների բնութագրությունը համարյա թե չի զբաղեցնում հեղինակին: Հերոսին մեծ մասամբ դիտում է հասարակական գործերի հորձանքի մեջ.

նրա տխրականացման համար նպաստավոր հանգամանքը՝ անձնական կյանքը, ընտանիքը աչքաթուղ անելով:

1933 թվից սկսած պաշտպանական թեմաներով ավելի շատ և ավելի ծավալուն գործեր են ստեղծվում մեր գրականության մեջ:

Սովետական Հայրենիքի բոլոր ժողովուրդները խաղաղ ստեղծագործական աշխատանքում կոեղով իրենց երջանկությունը, պատրաստվում էին հարկ եղած դեպքում կրծքով պաշտպանել Հայրենիքը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեյոլուցիայի նվաճումները, այն ամենը, ինչ նրանք ստեղծել էին լարված աշխատանքի և պայքարի պրոցեսում, սովետական իշխանության տարիներին, այն ամենը, ինչ օրինականացված էր ՍՍՌՄ Ստալինյան Կոնստիտուցիայով:

Ժողովուրդը պատրաստվում էր կապիտալիստական աշխարհի անակնկալ ռանձգություններին պատասխանել բազմապատիկ ուժեղ հարվածներով:

Այս համաժողովրդական նախապատրաստությունը սպագայի ահեղ փոթորիկների մեջ մեր Հայրենիքի անկախությունն ու պատիվը կրծքով պաշտպանելու համար իր լայն արտացոլումը գտավ գեղարվեստական գրականության մեջ:

Բաքվի 'երիտասարդ հայ գրողներից Գարեգին Սևունցը՝ քաղաքի և գյուղի կյանքից մի շարք պատմվածքների ու նովելների հեղինակը 1934 թվին հրատարակեց «Դեպի երկիր» ժողովածուն, որի մեջ զետեղված գործերի մեծ մասը պատմում են սովետական օգաշունների կյանքի և ուսման մասին, նկարագրում են, թե ինչպես սովետական երիտասարդությունը տիրապետում է օդազնացության վարպետությանը և պատրաստվում է օդային սահմանների վրա վերահաս մարտերի:

Պատմվածքների ու նովելների այս շարքը նախապատրաստական կուրսի նշանակություն ունեցավ հեղինակի համար, հետագայում ավելի ծավալուն կտավի անցնելու: Եվ ահա մի երկու տարի հետո Ադրբեջանի հայ արձակագիրներից առաջինը Գարեգին Սևունցը հանդես եկավ բավական ընդարձակ, գեղարվեստական արժանիքներով հարուստ «Ծովախորշում» վեպով:

Մենք թույլ ենք տալիս որոշ զուգահեռ անցկացնել հայ վիպապատկերի խոշորագույն ներկայացուցիչ Շիրվանզադեի «Քառաս»-ի և մեր երիտասարդ հեղինակի «Ծովախորշում» վեպի միջև ոչ թե նրանց գեղարվեստական ու որակական արժանիքները համեմատ-

տելու համար, այլ հարկ ենք համարում նշել միայն, որ Բաքվի նավթաշխարհի մարդկանց կյանքից խոսող այդ երկու գործերից առաջինը, ինչպես հայտնի է, նկարագրում է կապիտալիստական Բաքուն, երկրորդը խոսում է նոր Բաքվի մասին, փորձում է վեր հանել հասարակական այն նոր ուժերը, որոնք հիմնահատակ խորտակեցին հին հարաբերությունները, արձակեցին աշխատավորական մասսաների կարողությունները, հնի փլատակների վրա ստեղծեցին նորը:

Վեպլի համար հիմք են եղել ոեալ իրադարձություններ: Դեռ ուկուլցիայից առաջ Բաքվի նավթահանքերում աշխատում էր ինժեներ Պատոցկին (վեպում Զատոնսկի): Հետազոտող միտքը, երկարամյա երկրաբանական փորձը նրան բերում են այն եզրակացություն, որ Կասպից ծովի հատակում նավթային շերտեր կան: Պատոցկին առաջարկում է իր բնույթով չափազանց համարձակ մի ժրագիր՝ ցամաքեցնել ծովախորշը և սկսել նրա շահագործումը: Բայց ցարական կարգերում երկրաբանի այդ խիզախ ծրագիրն անիրագործելի մնաց: Կապիտալիստական նավթային ընկերությունները, օտարերկրյա կոնցեսիոն կոմպանիաները շահի մոլուցքով բռնված, ձեռնարկում են այդ գործը, սակայն հաջողություն չեն տեսնում:

Ծովախորշի ցամաքեցումն իրագործվում է միայն սովետական իշխանության օրերին, բուլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, Բաքվի բանվորների ջանքերով: Այս գործի դուլսն է կանգնում այն ժամանակ Ադրբեջանի պարտիական կազմակերպության մարտական ղեկավար Ս. Մ. Կիրովը: Այս է պատմական իրողությունը:

Գարեգին Սևունցը այս փաստական նյութի վրա էլ կառուցել է իր վեպը:

...Ռեուլցիայից առաջ նավթարդյունաբերողների «Սորմովո» ընկերությունը ձեռնարկում է երկրաբան Զատոնսկու ծրագրի իրագործմանը: Սանձարձակ կերպով շահագործվում են բանվորները: Աննկարագրելի զոհողությունների գնով նրանք վերշուկ առ վերշուկ նվաճում են նավթառատ ծովախորշը: Տեխնիկական հետամնաց է: Աշխատանքի պայմաններն անտանելի: Գործադուլ են անում բանվորները: Նավթարդյունաբերողները պատասխանում են անտեսական ուսուցանանքով, ամիսներով չեն վճարում աշխատավարձը, ծայր է առնում ուստիականական սանձարձակ տեղորդ:

Զատոնսկին այս պայքարում բանվորների հետ է, ակտիվորեն մասնակցում է «Սոցմոլո» ընկերությանը բանվորների տնտեսական պահանջները ներկայացնելուն:

Քայց և երկրաբանի դեմ էլ լարվում են որոգայթներ: Ինժեներ Սարգսյանը համոզում է մի խումբ անգիտակից բանվորների հրդեհել ընկերության նավերը, որոնք հավաքագրվում են ցարական իշխանությունների կողմից «ռազմական նպատակների» համար: Պրովոկացիան պատրաստ է: Դրանում մեղադրում են գործադուլավորներին և այդ թվում նաև Զատոնսկուն, ձերբակալելով նաև նրան:

Քաբվի նավթագործների պայքարի այս էպիզոդը պատմելով, հեղինակը դժբախտաբար անհրաժեշտ բարեխղճությամբ հաշվի չի առնում պրոլետարիատի ռեպուցիտն կովի հարուստ փորձը Բաքվում:

Այս դեպքերը տեղի են ունենում իմպերիալիստական առաջին պատերազմի օրերին: Մենք պատմությունից գիտենք՝ մինչ այդ ռեպուցիտն ինչպիսի հարուստ փորձ էր կուտակել Բաքվի բանվորությունը:

Ինչպես հայտնի է, նա անցել էր 1905-1907 թվերի դրպրոցը, ընկեր Ստալինի գլխավորած Բաքվի պարտիական կադմակերպության ղեկավարությամբ համախմբել էր իր ուժերը: Հիշյալ տարիներին Բաքվի պրոլետարիատի անցկացրած քաղաքական գործադուլները ցնցել էին ամբողջ Ռուսաստանը:

Գարեգին Սևունցը հաշվի չի առել այս ամենը: Մովսիսորչում աշխատող բանվորները պայքարի են ելնում կարծես տարերնայնորեն. դա անկազմակերպ մի զանգվածի պայքար է, որի մեջ կարծես վճռական դերը թողնվում է համարձակ մարդկանց: Չի երևում ընդհատակյա աշխատանքում կոփված պարտիական կադմակերպությունը, որը ղեկավարեր և ընթացք տար այդ կարևոր տեղամասում աշխատող բանվորների արդարացի կովին նավթարդունաբերողների դեմ: Այս իսկ պատճառով էլ Սարգսյանին հեշտությամբ հաջողվում է նամերը հրդեհելու պրովոկացիան սարքել, իսկ «Սոցմոլո» ընկերության վարչությունը՝ պարզապես մեբժել բանվորների պահանջը:

Մովսիսորչի չորացման ձախորդության պատճառները շատ ավելի համոզիչ կլինեին, եթե Սևունցը ուշի-ուշով ուսումնասիրելով բանվորական շարժման պատմությունը, փաստերի ընդհանրա-

ցումներ կատարեր: Հեղինակը այդ շանելով, բավարարմե: է դըժ-
գույն, մասնակի դեպքեր պատմելով, և իհարկե չի հասել իր նը-
պատակին:

Չնայած այս լուրջ թերությանը, «Մովսիսորշում» վեպի սկզբի
գլուխներում բավական հարազատություն մեկտեղված է նախա-
ռեություն Ռաքվի միջավայրը՝ իր առանձին բնորոշ մանրամաս-
նություններով:

«Աշխարհում բազմաթիվ քաղաքներ, գյուղեր օգտվում են այս
քաղաքի տված բարիքով,— ասում է հեղինակը—: Նա մի սիրտ է,
որից սկիզբ է առնում ու ճյուղավորվում երակների մի ամբողջ
սիստեմ: Գործարանների խիտ ցանցից ելնելով, երկաթագիծն ա-
ռաջին իսկ կայարանում երկու ճյուղի է բաժանվում, իսկ հետո
հատվում է հեռու ծովերի, օվկիանոսի ավերին»:

Եիշտ բնորոշելով Ռաքվի համաշխարհային նշանակությունը,
հեղինակը չի կարողացել վերարտադրել այս քաղաքի հուշակը ամ-
բողջ աշխարհով մեկ սիրող հասարակական ուժերի դերը: Նա
հարևանցիորեն, թեթևակի անցնում է այս կարևոր մոմենտի վրա-
յով: Մինչդեռ Ռաքվին հուշակ է բերել ոչ թե սոսի նավթը, Բաքուն
նաև եղել է ռևոլուցիոն շարժումների միջնաբերդերից մեկը:

Այստեղից էլ բխում է վեպի բովանդակության մի երկրորդ
թերությունը: Ընթերցողը դժվարությամբ է դիրքորոշվում ինչպես
և երբ փոխվեց դրությունը, ինչպես ստացվեց, որ սովետական կար-
գերի պայմաններումն էլ ծովախորշի ցամաքեցման աշխատանքի
վեկավարությունը դեռ որոշ ժամանակ մնում է «Սորմովույի»
մարդկանց՝ վոլկովների ու սարդարյանների ձեռքում: Այս ամենի
պարզ ու մեկեն բացատրությունը չկա վեպում: Հեղինակը խճողել
է, իրար խառնել անցյալն ու ներկան: Այս հանգամանքը զգալի
չափով վնասել է նաև վեպի կառուցվածքին, թուլացրել է դրու-
թյունների լարվածությունը, որը և անպայման անդրադառնում է
նկարագրվող դեպքերի զարգացման վրա:

Գեղարվեստական երկի հաջողությունը որոշում են սլոժեստա-
յին պարզորոշ պլանը, ելակետի հստակությունը և այն ասպեկտը,
որով հեղինակը մոտենում է մարդկանց ու նրանց գործողությու-
ններին և վերլուծում դրանք:

Գարեգին Սևունցը իր առաջին վեպը գրելիս, ինքն իր համար
լրիվ չի պարզել այս նախադրյալները: Դրա պատճառը մենք մի-
այն ու միայն տեսնում ենք հեղինակի անփորձության մեջ: Շատ

ապելի դեղարվեստական արժեք կունենար վեպը, եթե հեղինակը կանխապես հուտակորեն ուրվագծեր երկի կանվան, այդ դեպքում հեշտ կլինեն նրա առանձին մասերը սերտորեն շաղկապել և ապահովել նրանց տրամաբանական զարգացումը:

«Ծովախորշում» վեպը օժտված է նաև առավելություններով, կարդացվում է հետաքրքրությամբ, որովհետև հեղինակին հաջողվել է ստեղծել հետաքրքիր դրություններ, կենդանի հերոսներ, որոնք տիպական են նալթաշխարհի համար:

...Խոժեներ Զատոնսկին տեսնում է, որ ցարական կառավարությունը, կապիտալիստական ընկերությունները անընդունակ են իրագործել իր խիզախ, նովատորական ծրագիրը: Նրա պրպտող միտքը կարծես բնագդաբար շոշափում է այն ճշմարտությունը, որ հասարակության այդ ուսուցիչի ուժերը չեն կարող բնության դժմոշվող պայքարում գնալ նովատորության ճանապարհով: Ներքին մղումով նա ուսուցիչին ուժերի հետ է:

Սի ահա, ուսուցիչից հետո, հանձին սովետական իշխանության, երկրարանը տեսնում է այն ուժը, որը կարող է և պետք է իրագործի Ծովախորշի ցամաքեցումը: Դրա համար կան բոլոր նախադրյալները՝ պետության անսահմանափակ հովանավորությունն ու օժանդակությունը, բանվորների անձնվեր աշխատանքը, նրանց ազատագրված ստեղծագործական նախաձեռնությունը:

Այդ պայմաններում արագորեն իրականացվում են երկրաբանի մտահղացումները: Նա ամբողջովին, առանց մնացորդի նվիրվում է այդ գործին: Ոչինչ չի կարող կոտրել նրա կամքը, ընկճել, գինաթափել:

Զատոնսկին կորցնում է տեսողությունը: Բայց ողջ են մտքի աչքերը և անկանդ գործում է նրա ֆենոմենալ հիշողությունը: Կույր երկրաբանը կանգնում է իր բնույթով ու ծավալով շտեմանված այդ աշխատանքի տեխնիկական ղեկավարության գլուխը: Նրան նեցուկ են հանդիսանում բանվորների խանդավառ կոլեկտիվը, մի խումբ երիտասարդ մասնագետներ:

Երիտասարդ ինժեներ Արզումանյանը, արդյունաբերության էնտուզիաստներ Մարտիրոսը, Աբդուլը, Խրամյը, Ալիևը, Ռահմատուլինը նալթագործների նոր կադրերի ներկայացուցիչներ են, որոնց համար բնորոշ են նպատակի պարզությունը, դժվարությունները հաղթահարելու վճռականությունը: Նրանք համառ պայքարով նվաճում են բոլշևիկյան գործիմացության բարձունքները:

Ինժեներ Արդումանյանի մեջ խտացվել են սովետական իշխանությանը նվիրված նոր մասնագետի հատկությունները: Նա հետազոտական ~ արտադրական աշխատանքի մեծ փորձ չունի և օժտված է երկրաբանական բարդ ու դժվարին խնդիրները մեկնելու կարողությամբ: Նա նովատորության ջերմ ջատագով է և ամբողջ հռանդով պայքարում է Զատոնսկու ծրագիրն իրագործելու համար:

Կուլիևի կերպարի մեջ մենք տեսնում ենք բոլշևիկ տնտեսավարի ձևավորումը, թե ինչպես աշխատանքի մեջ կոխվում է արդյունաբերության նոր հրամանատարը, ինչպես գործարարությունն ու գործիմացությունը դառնում են մեր մարդկանց հաջողությունների հիմքը:

Երկրաբան Սարգարյանը վեպի բացասական կերպարներից ամենից ավելի մշակվածն է: Սարգարյանն իր ամբողջ էությամբ, համոզմունքներով, բարոյականությամբ պատկանում է անցյալին: Նա սովետական կարգերի, ազատագրված աշխատավոր մարդու ու խերիմ և խորամանկ թշնամին է: Սարգարյանը վնասում է, ուրիշներին մղում դեպի կոնտրոկոլուցիոն աշխատանք, օգտագործելով պայքարի բոլոր հնարավոր միջոցները՝ բանասարկություն, լավագույն մարդկանց վարկաբեկելը, հրդեհումը և այլն: Իր կնոջ Ռաիսայի հետ ունեցած մի խոսակցությունը բաց է անում այս նոդկալի մարդու ներաշխարհը:

Ահա, թե ինչ է ասում նա.

«—Տես, մեր կյանքն էլ այսպես, այս ջրերի պես խաղաղ պետք է լիներ: Բայց թույլ տուր ես էլի բնությունից խսեմ,— բնության մեջ ոչինչ խաղաղ չկա: Մենք այժմ ջրի հեղությունից զմայլված, նրա վրա ժամանակ ենք անցկացնում, հիանում նրա տեսքով: Եվ մենք խանգարում ենք նրա հանդիստը: Սակայն կարող է պատահել, որ մեր հանդգնության համար նա բարկանա... Այն ժամանակ կթարձարանան հսկա ալիքները, մեզ մահ կսպառնան... Այն պահին դու երեխի կբղավես, օգնություն կկանչես... Իսկ ես կթիավարեմ որքան ուժերս ներում են... մինչև իմ նավակը չրոլ կ'իցի, մինչև նա կսուզվի այս ջրերի անհունության մեջ... Խորտակվելուց հետո կլողամ մինչև վերջին ուժերս հատեն, մինչև շնչասպառ կլինեմ և գուցե ափ դուրս գամ...»:

Ռեկոլուցիոն փոթորիկներից հետո Սարգարյանն իրոք հեռացավ թիավարում է, կովում ահավոր հորձանքների դեմ, կատարություն

պիմադրում նսրին, փայփայելով կրկին ափ դուրս դալու հույսերը: Նա նախ փորձում է լիարկաբեկել ծովախորշի շորացման գաղափարը, նրա հեղինակներին: Փշրվում են նրա միտումները: Այս անգամ նա ընտրում է «չարիքի փոքրագույնը» — փորձում է փոխել ցամաքեցվող տեղամասի ուղղությունը՝ հավթառատ շերտերից հեռու:

Իր անցյալի և ներկայի մեջ Սարգարյանը փորձում է առերևույթ կամուրջ անցկացնել, ցույց տալ շրջապատին, որ ինքը անցում է կատարել, սակայն վեպի հերոսներից մեկը լավ է ասել. «Երկու ափերը միացնելու համար Սարգարյանը կամուրջ է կառուցում, մի կամուրջ, որի քարը՝ կեղծավորությունն է, ավազը՝ ստորությունը, տախտակը՝ քծնութիւնը»:

Սարգարյանը անձնական հարսբերությունների բնագավառում նույնպես մարդ-գաղան է: Նրա համար կնոջ սլատիվը, սերը գատարկ հասկացողություններ են: Անձնական շահն ու մարմնական հաճույքներն են ընկած նրա կենցաղավարության հիմքում: Իր գրասենյակում աշխատող Լիզային դժբախտացնելով, նա Մոսկվայում գործուղման ժամանակ ամուսնանում է մեկ ուրիշի հետ և առանց խղճի խալթ զգալու, թողնում հղիացած Լիզային ողբերգական վիճակում: Սարգարյանը դրա մեջ ապօրինի և բարոյականությունը հակառակ ոչինչ չի տեսնում:

Չենք կարող ասել, որ հեղինակը նույնպիսի հաշտություն մեծ է թշնամական բանակի մյուս կերպարները, ինչպես, օրինակ, Բեսպամյատնին, Վոլկովը և այլն: Այս կերպարները թերի են, անկատար:

Իրական հերոսներից համեմատաբար ամբողջական կերպարներ են Զատոնսկին, Արզումանյանը, Մարտիրոսը: Թեպետ ինժեներ Արզումանյանին մենք մեծ մասամբ տեսնում ենք գործի ընթացքում, պարզվում է նրա վարքը կոլեկտիվում, բայց անձնական կյանքի, «գաղտնարանները» հեղինակը չի թափանցում: Մինչդեռ սա անհրաժեշտ պայման է գեղարվեստական կերպարին կենդանություն տալու համար:

Վերևում մենք ցույց տվինք հեղինակի լուրջ վրիպումները հավթառործների ուղղուցիտն պայքարը նկարագրելիս: Սկսեցր սոցիալիստական ռեալիզմի սկզբունքի դեմ մեղանշում է նաև ծովախորշի շորացման գործում պարտիական կազմակերպության

երը մատնանշելիս, պարտիական աստիճանի ղեկավարների բնութագրությունը տալիս:

Բոլորովին անհամոզիչ է, իրականության հետ չի առնչվում այն, որ ծովախորշի պարտիական կաղամկերպությունը ղեկավարությունը վստահել են հետամնաց անսովորաշար Սարգսյանին: Ծովախորշի ցամաքեցման շուրջը ստեղծված բարդ իրադրության մեջ Սարգսյանը լողում է անդեկ ու անառադառա: Որտեղից փչում է քամին, ջրերն աչն կողմն էլ շարժում են նրան: Եթե հեղինակը ցանկացել է դրանով օպորտունիստի կերպարն ստեղծել, ապա Սարգսյանի բնավորության և ցործունեության մեջ օպորտունիզմի շնորհիվ դեռ անգամ չկան:

Օպորտունիզմը խորապես դիտակցված հոսանք է կյանքի ու բազաքականության մեջ: Օպորտունիզմը միշտ էլ կղել է ռեպուցիան շարժումները թուլացնելու, տապալելու փորձված ղեկավարից մեկը սեպիցիոն ուժերի ձևափոխ: Չդիտակցված, ինչ որ բնատու օպորտունիզմ չկա: Հետեապես և հետամնացությունը, կամային լիով հատկությունները, ինչ որ ներքին բացություն հանձնարարել բացառ օպորտունիզմի աղբյուր և տիպականացնել ղեկավարիստական դրականության մեջ, նշանակում է սխալ գործել:

Սարգսյանը չի դիքորոշվում, չի բմբնում իր շուրջը կատարվող իրադարձությունները: Գուցե և այս է պատճառը, որ նրա ղեկավարած պարտիական կաղամկերպությունը նույնպես միմյն մեքն էլ չի կարողանում, եթե տչ մերկացնել թշնամիների բոլոր մեքնաչությունները, ապա դոնե կռահել, ապա նշանել դրանց մասին:

Սարգսյանն ու Վոլկովը դալիս են Սարգսյանի սունը, բամբասում Արգումանյանին, խնդրում նրա դեմ միքոցներ ձեռք առնել: Արգումանյանին նրանք մեղադրում են վնասարարություն, պետական գումարները քամուն տալու մեջ:

Զատոնելուն նույն մեղադրանքով, այս անգամ արդեն սովետական իշխանության օրոք, բանտարկել տալուց հետո, Սարգսյանը փորձում է հաշվեհարդար կատարել կոմունիստ, երբտաւարդ կրկրբան Արգումանյանի հետ: Այդ նպատակն են հետապնդում Սարգսյանի հիշյալ գործակալները: Եվ ահա, թե ինչ է պատասխանում պարտիական բջջի քարուսպար Սարգսյանը Սարգսյանին ու Վոլկովին:

— «Էա, շատ դժվար է մարդկանց հասկանալը: Մարդու գլուխը պայթում է, հենց որ սկսում ես նման բաների մասին մտածել: Մենք կալում էինք բուրժուաների դեմ, մենք ուզում էինք ամեն ինչ մերը դարձնել... Հիմա էլ, երբ ամեն ինչ մերն է, էլի կարգին չեն աշխատում... Դրանք ինչ են ուզում աշխարհից, ես չեմ հասկանում: »

Այս անորոշ մտորումները շեն խանգարում են թարկվել թշնամիների պրոտկացիային՝ Արդումանյանի հարցը քննության դնել բջջի ժողովում: Եվ ահա թե ինչպես է նկարագրում հեղինակը այս ժողովի արդյունքը:

«Սակայն երկար, կրքոտ խոսակցությունից պարզ էր, որ Արդումանյանը պարտվել է: Նա զգում էր, որ իր փաստարկումները ոչ մեկին չեն համոզում: Այդ կրժում էր նրա ներսը, դիպչում նրա արժանապատիվությանը, որ ամենախանդավառն է մարդու համար: Նա մատներով դեպի հետ սանրած մազերն էր քրքրում... Նրա աչքի առաջ պատկերացավ Սարգսյանի հրճվող դեմքը, կծու, թունալոր ծիծաղը, և մի սարսուռ անցավ նրա մարմնով...»:

Մի վայրկյան ընդունենք, որ տվյալ կոնկրետ դեպքում կոմբջիքը՝ կոլեկտիվը սխալվեց: Չգտնվեց նույնիսկ մեկը, որ պաշտպաներ Արդումանյանին, որովհետեւ ցամաքեցված հողամասում փորված հորերը նավթ տալու փոխարեն, առայժմ ջուր էին տալիս և մոլորության մեջ դրոշմ մարդկանց:

Երկրորդ անգամ նույն հարցն է քննվում բջջի ժողովում: Արդումանյանը կուսակց է անհաջողության պատճառը: Նա մատնանշում է, որ ցամաքեցվել է ոչ այն ուղղությունը, որ Զատոնսկին է ցույց տվել և բավական է փոխել ուղղությունը, անպայման նավթ կստացվի: Ժողովը տեղի է ունենում նոր իրադրություններից հետո: Այնուամենայնիվ, մթնոլորտը մնում է անփոփոխ: Այս ժողովում Մարտիրոսը՝ դյուլից եկած, Բաքվի միջավայրում աճած երիտասարդ մի նավթագործ փորձում է ելույթ ունենալ: Բջջի քարտուղար Սարգսյանը դեմ է դրան և բավական է նրա ռեպլիկան, թե Մարտիրոսը դաշնակցական է, որովհետև է երիտասարդ կոմունիստի նկատմամբ մարդկանց դիրքը:

Ներկա դաշնակցներից և ոչ մեկի բերնից մի բառ անգամ դուրս չեկավ: Մարտիրոսը, որ մինչ այդ լավ ընկեր էր եղել, հանկարծ առաջը թշնամի մարդու նման կանգնած էր բոլորի առաջ: »

Սրանք մտապածին, մեր սլարտիական կազմակերպություններին և ներքին թործունեության հետ շատնչվող դրուվյուններ են, որ հեղինակն ստեղծել է: Այս հանդամանքը պետք է բացատրել նրանով, որ տվյալ դեպքում Սկոնցը ոչ թե ընդհանրացրել է մեր պարտիական կազմակերպության և պարտիականների համար բնորոշ ռեժիմը, այլ պարզապես հորինել է դրուվյունը, շեղվելով սոցիալիստական ռեալիզմի սկզբունքներից:

Վեպում մենք հանդիպում ենք նաև պարտիական ղեկավար Օգնյովին: Բոլոր վճռական մոմենտներում ղեկավար է այս ժողովրդական մարդու ներկայությունը, նրա օգնությունը բանվորներին: Նա հայտնվում է ամենուրեք, ոգևորում է, խանդավառում բանվորներին: Բայց վեպի առաջին մասում կերպուրը չի ծավալվում, չի կենդանանում:

Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին, անդրադառնալով սովետական դեպարտմենտի առաջ ծառայած խնդիրներին, մատնանշում է, որ նա պետք է ստեղծի գործեր, որոնց մեջ «խոսքի բոլոր հնարավոր ուժերով և լրիվությամբ արտացոլվելու բանվոր դասակարգի, նոր հասարակություն կառուցողի հերոսությունը, — երկրի ինդուստրիալ զինման և անցյալի բոլոր ու ամեն տեսակի մնացուկների դեմ ճշգրիտ պայքարի հերոսականությունը»: Ուստի և մեր գրողների խնդիրն է հնարավորին չափ լրիվ և հարազատ վերարտադրել նաև բանվոր դասակարգի առաջատար ջոկատներին՝ պարտիական կազմակերպությունների, բոլշևիկների հերոսությունը: Դրա համար անհրաժեշտ է ճանաչել կյանքը, սովորել տիպական երեվույթներն ընդհանրացնելու արվեստը և երբեք չգնալ կաբինետային դիտողությունների ճանապարհով: Այս առումով «Ծովախորշում» վեպը դժբախտաբար խոշոր թերություններ ունի:

«Ծովախորշում» վեպի հերոսահիններից համեմատաբար լրիվ մշակված են Լիզայի, ապա և Ռաիսայի կերպարները: Սրանցից առաջինը արհեստավորական ծագում ունենալով, նեղ մտահորիզոն ունի և սահմանափակ հնարավորություններ: Նոր կյանքը համարյա թե չի շոշափում նրան: Նա հրապուրվում է Սարգարյանով, որը և օգտվելով առիթից, ընդունում է այդ գոհողությունը, այնպես, ինչպես ահաբեկված հապաստակը ընկնում է գիշատիչ դադանի ճանկերը և վերջինս մեծ գոհունակությամբ ընդունում է կամավոր զոհը: Լիզան պասիվ է: Նրա մեջ բողոքի հույզ է ալեկոծվում, բայց նա իր մարդկային ու քաղաքացիական իրավունքները չի ճանաչում ու վրեժխնդրության հույսը չէ, որ բորբոքվում

է նրա սրտի տակ: Սարգարյանը խլում է նրանից երիտասարդությունը, զրկում երջանկությունից, սպանում նրա մորը, բայց այս ամենին Լիզան հակադրում է իր բողոքը միայն, նրա համար անհետանում են բոլոր հեռանկարները, բոլոր հույսերը ու լավագույն ակնկալությունները կործանվում են... Ինժեներ Սրգումանյանը, որ Լիզային ջերմորեն համակրում էր, այդ ողբերգական վիճակում բարոյապես նեցուկ լինելու համար ձեռք է մեկնում նրան, բայց հանդիպում կատարյալ անտարբերության:

Արգումանյանի հորդորանքներին, թե Լիզան նախ և առաջ իրեն պետք է խղճա, չկորցնի հավասարակշռությունը և այլն, նա պատասխանում է.

«Ինչի՞ եմ ես պետք: Ի՞նչ օգուտ եմ տվել և ի՞նչ օգուտ պետք է տամ մարդկանց: Ո՞վ սրանից հետո ինձ կարգին մատուցանեց թրվը կդասի, ինչպես երիտասարդ թռչունի, թեևրը կտրեն, ինձ հետ էլ այդպես վարվեցին. ես հիմա թևատ եմ»:

Հեղինակը իր հերոսուհու տրագեդիայի համար մոռաց գույներ է ընտրում, մոռանալով այն հոգատար ու սրտացավ միջավայրը, որում ապրում էր Լիզան: Լիզան իր գոյավիճակի մասին ասում է.

«Ես բուռի պես մտել եմ այս սենյակը, մի բարեկամ շունեմ, որ դուռս բանա, մի հարազատ շունեմ, որ սփռփանքի խոսք ասի: Կարծես բոլորն էլ գտնում են, որ այս աշխարհում ես ավելորդ մարդ եմ, որ միայն ապականում է իր շրջապատի օդը...»:

Սովետական իշխանության պայմաններում, հասարակության այդ ակտիվ ուժերի միջավայրում ապրող կինը այսպիսի վիճակի դատապարտված չի կարող լինել: Լիզան ոչ ոքից օգնություն չի ստանում նույնիսկ այն ժամանակ, երբ կուլեկտիվի առաջավոր ներկայացուցիչները՝ Արգումանյանը, Մարտիրոսը, Զատոնսկին, նրա դուստր Կատյան, որը նիզաչի մոտ ընկերուհին է, գտել էին Սարգարյանի ռճրագործության առանձին հետքերը և նրա մերկացումը ամենի առջև պիտի կատարվեր, և չի գտնվում մեկը, որ մոլորված ու ինքն իր պատշանում ամփոփված նիզաչին գոնե հազարդեր իր կասկածները, գոնե դիրքորոշեր նրան Սարգարյանի նըկատմամբ:

Պախսան նույնպես Սարգարյանի զոհերից մեկն է, բայց նա այլ հայացքով է դիտում կյանքը: Զիմանալով իր ամուսնու թշնամական գործունեությունը, կարճատև համատեղ կյանքը նրա առջև բաց է անում Սարգարյանի նողկալի բարոյական հատկությունները և Ռախսան խղում է նրա հետ, իր երջանկությունը որոնելով աշ-

խատանքի մեջ, ձուլվեալով կողեկտիւի առաջընթացին: Այս ճիշտ ճանապարհը նրան հուսալքությունից և հուսախաբությունից զերծ է պահում: Եթե նախորդ հերոսուհին ինքնագիտակցության չի եկել, ապա երկրորդն արդեն գիտակցում է իր տեղը հասարակության մեջ, հեշտութեամբ գտնում է այն, դրա համար բոլոր նըպաստավոր պայմաններն ունենալով:

Ամփոփենք. «Ծովախորշում» վեպը սովետահայ գրականութեան մեջ առաջինը լինելով, վերարտադրում է Բաքվի նավթագործների հերոսական, աշխատանքի դրվագներից մեկը՝ մեր երկրի խնդուստ-բացման բնագավառում: Այս առումով, նա անկասկած արժեքավոր է: Բայց վեպը, լինելով երիտասարդ հեղինակի սկզբնական շրջանի ստեղծագործությունը, ունի զգալի թերություններ:



Աղբրեջանի սովետահայ գրողներն իրենց ստեղծագործությունների մեջ արտացոլելով մեր իրականությունը, հետևողականորեն սովորում էին, հաղթահարում ֆորմալիզմի ու սխեմատիզմի տարրերը, աշխատում էին երևույթների ավելի լայն ընդհանրացումներ կատարել, պայքարում էին ինքնատիպության, արվեստի կատարելագործման համար:

1938 թվին լույս տեսավ բանաստեղծ Սամվել Գրիգորյանի նոր ժողովածուն՝ «Հայրենիքի համար»: Ամենաընդարձակ երկը այս գրքում «Հորձանքներում» պոեմն է, որի թեման նույնպես առնված է Բաքվի նավթագործների կյանքից: Շատ համանման դժեր կան «Ծովախորշում» վեպի և այս պոեմի մեջ: Համարյա նույն սյուժեն է, նույն ֆարսուկան:

Նախերգանքում պոետը լիրիկական շնչով խոսում է իր ներշնչանքի աղբյուրի մասին:

...Գիշեր է, հանգստի ու անդորրության ժամ: Բայց արթուն է ծովը, դիշերվա լուսթյունն անդամ շրջակայքում լի է կյանքով, բերկրանքով: Ազատագրված աշխատանքի ու երջանիկ կյանքի խինդով վառված, բանաստեղծը իր հերոսների հետ շրջում է նավթահանքերը:

Ու մենք միասին, նույն խոհերով լի

Մտնում ենք ծանոթ վիշկաններն էլի,

Աշխատում մինչ զույս ջերմ ու խնդալից:

Ու մեզ նոր ոգի, նոր շունչ է տալիս
 Այն միտքը պայծառ, որ այդ նույն ժամին,
 Երբ մութն է գրկել քաղաք ու հանդեր,
 Ահա այդ ժամին աշխատում է դեռ
 Մեր առաջնորդը մեծ ու խմաստուն
 Ու խորհում է նա, խորհում է արթուն,
 Որ ազատ ապրեն մարդիկ ավելի,
 Որ տեսնեն նրանք ավելի լավ օր,
 Լինեն ավելի տւրախ, բախտավոր,
 Որ բերքը ղինի էլ առատ ու լի,
 Ավելի փարթամ ծաղկեն ու ծլեն
 Մեր այգիները, մեր գյուղերը շեն,
 Որ ֆաշիստական ոչ մի ավադակ
 Չթունավորի մեր մանուկների,
 Մեր ժողովրդի ապրուստը ազատ,
 Խաղաղությունը նրանց սրտերի:

Իր հերոսների գիտակցությունը Գրիգորյանն այս տողերի մեջ
 արտացոլել է բավական ցայտուն կերպով: Նրանց նպատակը պարզ
 է. նրանք անձնավիրաբար աշխատում են մեր Հայրենիքի տւ ժողո-
 վրդի բարօրության համար՝ իրենց աչքի առաջ ունենալով մեծ
 առաջնորդի սքանչելի օրինակը, որը անխոնջ խորհում է և տքնա-
 ջան գործում նույն նպատակի համար:

Նավթագործների կողեկտիվը, համակված ռեոլուցիոն նպա-
 տակասլացությամբ, գիտակցելով իր պարտքը երկրի հանդեպ,
 հաղթահարում է համառող հողի բոլոր քմահաճույքները, ծովի դի-
 մադրությունը, որովհետև «նավթ է հարկավոր հիմա մեր երկրին,
 հրե կամք է պետք վերելքի համար»: Այս աշխատանքի դժվարու-
 թյունն ու թափը հաջող վերարտադրում է բանաստեղծը հետևյալ
 տողերի մեջ.

Ինչ վույթ, թե քունն է կախվում աչքերից,
 Ու համառում է հողը դեռ երկար,
 Նավթ է հարկավոր հիմա մեր երկրին,
 Հրե կամք է պետք վերելքի համար:
 Թող ոռնա բութը ջրերի վրա
 Ու թուլ լեռնանա ծովը թե առած,
 Վճիռ կա, սակայն, սրտերում նրանց—

Որ հորը հանձնեն ժամկետից առաջ:
Ու ժայռից իջնող ջրվեժի նման
Փոկերն են սահում թափով մի անտես,
Տնքում է հողը, դալարվում է նա,
Հանդում որպես ծովը փրփրադեղ:

Ահա այս եռանդուն ստեղծարար աշխատանքի դեմ է որ մի բուն թափթփուկներ՝ նախկին մարդիկ վնասարարություն են կազմակերպում, սարսափելով բանվոր դասակարգի համահավաք ուժից, նրանց աշխատանքային խանդավառության մեջ տեսնելով իրենց մահը: Վնասարար Բուրովի մտորումների մեջ էլ զգացվում է նորի հաղթական առաջընթացը և հնի անխուսափելի կործանումը, որը թեև հասկանում են վնասարարները, բայց և դիմադրում են ջրահեղձի վերջին ջղաձգումներով:

Բանվորական կոլեկտիվի հետ է Այդինը՝ սովետական իշխանության օրոք աճած, ուսումն առած երիտասարդ մասնագետների ներկայացուցիչը: Նա թեպետ նոր է ուսումն ավարտել, աշխատանքի փորձը քիչ է, բայց զգոն կերպով աշխատում է միտքը: Նվ նա համառ ու հետևողականորեն որոնում է հորափորման բնագավառում եղած ձախորդությունների պատճառները: Բուրգի հորտակման պատճառները քննելիս, նա կռահում է, որ դա թշնամու գործողությունների հետևանք է: Բազմաթիվ կոնկրետ հարցեր են հուշում նրան: Հետազոտող միտքը ձգտում է քանդել Բազմաթիվ հանգուցյներ: Նա համարձակորեն փշրում է կոնսերվատիվ, իրենց դարն ապրած հասկացողությունները: Այդինը մտքի աշքերով թափանցում է կապտաջինջ ծովի սիրտը, տեսնում է նրա հատակի անթիվ գանձերը:

Մա նոր մարդն է, որ խտանում է բնության դադտնիքների աշխարհը ոչ թե հարստանալու, իր անձնակազմ երջանկությունը կառուցելու մոլուցքով համակված, ինչպես այդ տեղի ունեւ շահագործական կարգերի պայմաններում: Այդինը ծովի հատակում սեռիկ և մարգարիտ է որոնում, որոնք հեքիաթ չեն «այլ բարիք ու փառք ժողովրդական», նա մտքով ծովի հատակն է խորանում, «ուր քանի-քանի աղբյուրներ կան դեռ, խնդության, լուստի ու երջանկության»:

Երիտասարդ մասնագետը օժտված է նպատակի պարզությամբ ու զրան հասնելու վճռականությամբ, ինչպես իրեն ծնած մայր-ժողովուրդը, և նա համոզված է, որ

Ծովը կդռլա մեր ուժից մի օր,
Կհառնեն այնտեղ բուրգեր անհամար,
Որոնք կվառեն լուսեր նորաճոր
Մեր ժողովրդի, մեր կյանքի համար:

Մտալինյան առաջին հնգամյակի շրջանում երիտասարդ ին-
ժեների այս ումանտիկան, որը կառուցված էր սոցիալիստական
արդյունաբերության զարգացման հեռանկարներով, այսօր արդեն
ռեալ իրականություն է:

Յուրաքանչյուր դիտողի աչքերի առջև է այժմ նվաճված
կասպիականը, որի ջրերի վրա վեր են խոյացել բուրգերի եր-
կաթեղեն կասկադները: Այժմ բաց ծովի վրա նույն հաջո-
ղությամբ նավթահորեր են փորվում, ինչպես և ամուր հո-
լային զանգվածների վրա: Հեշտությամբ չեն լուծել Բաքվի նավ-
թափործները այս խնդիրը: Այդ համարձակ նովատորությունը ծըն-
վել է տանջալի երկունքի ցավերով: Նեղել են հուսահատորեն, ջղա-
ձգորեն դիմադրող ուժեր, որոնք նովատորության դեմ խոյացել են
իրենց ամբողջ դաժանությամբ: Այդ դատամարտում հաղթել է նոր
մաքղը, այդինների պես հաղարավորների տքնության գնով:

Վնասարարները Բուրովի ղեկավարությամբ դիմում են բոլոր
միջոցների Այդինի համարձակ առաջարկությունը՝ բաց ծովում
նավթահորեր փորելու վերաբերյալ, տապալելու նպատակով: Նը-
րանք գործի են դնում բոլոր մեքենայությունները՝ դեմագոգիան,
պրոփոկացիան, օգտագործում են անկայուն տարրերի կասկածա-
մբտությունը:

Պարտիական կազմակերպությունը, բոլոր առաջավոր բանվոր-
ները, չնայած թշնամիների բանասարկություններին, ընդունում են
Այդինի առաջարկությունը և պատրաստակամություն հայտնում ի-
րադրածել այն:

Այս անգամ Բուրովն ու իր համախոհները փորձում են կ'ն-
շալի բնագտնաբերում իրենց թակարդի մեջն առնել Այդինին: Բու-
րովը հորդորում է իր աղջկան՝ Նատաշային գրավել Այդինի սիր-
տը, շեղել նրան ուղիղ ճանապարհից: Նատաշային հաջողվում է
հրապուրել Այդինին, թուլացնել նրա աշխատանքային եռանդը, որոշ
չափով բխացնել զգոնությունը, երբեմն փոխել նրա մտքերի ընթաց-
քը: Իսկ դա հմտորեն օգտագործում են Բուրովն ու իր գործակից-
ները: Նրանք տապալում են առաջին բուրգի կառուցումը բաց ծովի
վրա: Արևոտ հետևանքով ծովում խեղդվում են մի քանի բանվոր:

Այս մի կողմից: Այնուհետև Նատաշան մի հանդիպման ժամանակ Այդինի տանը, երբ երիտասարդ ինժեները փորձում է վերակառուցել համապարակշռությունը, կրկին նույն խանդով աշխատանքի անցնել, կեղծ ուշաթափվում է, իսկ երբ ներս են մտնում Ջարդիկ, ջսկոյվ կնոջ ճիշդ, նա հայտարարում է, որ Այդինը փորձել է բռնաբարել իրեն: Բշնամիներն օգտագործում են այս հանգամանքը ևս:

Այդինին վտարում են պարտիայի շարքերից: Նա կարճ ժամանակով կտրվում է իր միշավայրից, նույնիսկ մոտորում ինքնասպանության մասին: Բայց դա հատուկ չէ նոր մարդու խառնվածքին, գիտակցությունն ու կամքի ուժը հաղթում են հուսալքությանը, նրա մեջ բորբոքում պայքարի ու հաղթանակի հրդեհը: Այդինի տանջալի ապրումների հորձանքի մեջ էլ չի կորչում գիտակցության ռացիոնալ հատիկը:

Իզուր է, սակայն, Այդինը սուղվում
Գիրկը տխրության, իզուր է հուզվում,
Ոսկին, բարեկամ, և ոչ մի հանգով
Նրկաթ չի դառնա, թե պատեո ժանգով.
Հասարակ քարը ինչքան էլ ներկես
Նա չի շողշողա աղամանդի պես:
Կա ճշմարտություն, օ, մի սրբազան
Մեր տովետական երկնի տակ ազատ,
Անխափան է նա ոնց արևը վառ,
Ինչքան էլ պատեն գիշերներ խավար:

Այդ ճշմարտության աղբյուրը մեր պարտիայի իմաստությունն է, որ գիտե բարդ կծիկները քանդել, հայտաբերել իսկությունը, անողոքաբար կտրել ու դեն շարտել այն ամենը, ինչ ռեակցիոն է, թշնամական, ինչ սուտ է ու խարդախ, ինչ դեպի մռայլ անցյալն է քաշում, գիտե խրախուսել, առաջ քաշել ու բարձրացնել նորը, հայտաբերում ու վահանի վրա է հանում մարդկանց լավագույն հատկությունները, դրա հիման վրա կրթում միլիոններին: Այդ պայմաններում երբեք ոսկին երկաթ չի դառնա և հասարակ քարը աղամանդի տեղ չի ընդունվի:

Ու քանի կա, քանի ապրում է
Ճշմարտությունը մեր ստալինյան,
Գերի չեն լինի մարտիկները մեր
Ոչ խարդավանքի և ոչ բռնության:

Այսպէս է եղրափակում բանաստեղծը Այդինի ռեալիտացի-
ան: Երբ իրենց վերջին մի օրհասական ռճրագործութեան ժամանակ,
փորձում էին հրդեհել հանքը, վնասարարները մերկացվում են: Պո-
եմի վերջերսում բանաստեղծը այս հերթական հաղթանակի, դրա
հետ մեկտեղ մեր բոլոր հաղթանակների երաշխիքներն է մատնա-
նշում:

Անպարտ ես, երկիր, անպարտ ես հավետ
Բյուր զավակներով քո երջանկավետ.
Անպարտ ես դու քո քաջ հերոսներով,
Քո կուռ բանակով խիզախ, աններող,
Անհուն, անսահման քո հարստութեամբ
Նվ անպարտելի քո կուսակցութեամբ,
Որին կռել են, կոփել մարտերում
Լենին ու Ստալին դյուցազներն արի,
Առաջնորդները մեր շուտե դարի:

«Հորձանքներում» պոեմն այս առավելութիւնների հետ մեկտեղ,
ստատապում է բաւական լուրջ թերութիւններով:

Նախ մի կարեւոր, սկզբունքային խնդիր: Ծովի նավթառտ
շերտերի նվաճումը, ինչպէս տեսանք, տեղի է ունենում սուր պայ-
քարի մեջ: Նավթագործները հանդիպում են վնասարարների դի-
մադրութեան: Վնասարարութիւնը սոցիալիստական շինարարու-
թեան շրջանում դասակարգային թշնամու պայքարի մեթոդներից
մեկն է: Դասակարգային պայքարի նոր ձև լինելով, վնասարարու-
թիւնը իր մեջ էր առնում բոլոր ռեակցիոն ուժերին:

Սամվել Գրիգորյանը շափաղանց նեղացնում է բացասական
հերոսների խարակտերիստիկան, հայտարարելով, թե Բուրովը,
«սպա է եղել բանակում ցարի, կյանքը նվիրած երգի ու պարի»,
նրա գործակից Թադին նույնպէս «Թեհրանում հեռու, եղել է թա-
վադ, հայտնի է եղել որպէս մուսաւլաթ», իսկ Ալեքը ինչ որ քրեա-
կան տիպ է, նրա «նման քանիսները կան», որոնց Բուրովի աղջիկ
Նատան «թե ուզի կղարձնի գերի, կլիզեն փոշին իրա ոտքերի»:

Բացասական հերոսներին բնութագրելիս, բանաստեղծը ընտ-
րում է հեշտ և հասարակ միջոց — կամ ցույց է տալիս վաղուց
պոկոտոված սոլպայական ուսադիրները, կամ մատնանշում է նրանց
սոցիալական պատկանելիութիւնը: Մինչդեռ սոսկ այս պրիոմով
հասնել հերոսների տիպականացման անհնար է:

«Հորձանքներում» պոեմը կարգալուց հետո հերոսներին վերաբերող շատ լուրջ հարցեր մնում են անպատասխան: Ինչպիսի՞ խառնվածքի տեր մարդիկ են ասենք Բուրովն ու Թադին, որոնք են նրանց զուտ մարդկային հատկությունները, որոնց վրա են կառուցվում պայքարի նրանց պրիոմները, որոնք ընկած են նրանց հասարակական վաճառքի ու կենցաղի հիմքում:

Մենք ըստ արժանվույն պնդատում ենք Գարեգին Սևունցի և Սամվել Գրիգորյանի բաժական հաջող փորձերը նավթադյունաբերության երիտասարդ սովետական մասնագետի գեղաբանական տիպարն ստեղծելու ուղղությամբ: «Ծովախորշում» վեպի հերոս Արզումանյանը և «Հորձանքներում» պոեմի հերոս Այդինը հենց այդ դրական հերոսներն են: Մենք Արզումանյանի կերպարի թերությունները նշեցինք թուղցիկ կերպով: Այդինը նույնպես գերծ չի դրանից: Այդինի լավագույն գործերը հեղինակը ցույց է տալիս և դրանց մեջ ցույցնում են նոր մարդու հատկությունները: Բայց և այնպես Գրիգորյանը շատ է խոսում Այդինի շրթերով: Նրա հերոսը սիրում է վերամբարձ ճառեր և մի քիչ ինքնանյութի է: Մենք գիտենք, որ երիտասարդ սովետական մասնագետների հաղթանակի կարևոր երաշխիքը նրանց անխզելի կապն է մասսաների հետ, նրանց անկոտրում հավատը դեպի ժողովրդի ուժերը, որի վրա և նրանք հենվում են: Գիտենք, որ մեր մարդիկ հերոսանում են աշխատավորական մասսաների հետ սերտ կապի ու միասնության մեջ: Ծիշտ է, ըստ հեղինակի, Այդինին պաշտպանում է Դրոկետովը, բայց նրա գործակիցները պոեմում շատ անգույն են: Այդ պատճառով էլ երբեմն Այդինը մենակ է մնում՝ դուռ պալքարի հրապարակի վրա: Սա, իհարկե, համոզեցուցիչ չէ:

«Հորձանքներում» պոեմում կան գեղեցիկ նկարագրական նկարներ, որոնք լավ կոլորիտ են ստեղծում: Առանձնապես հաջող են սոցիալիստական Բաքվի՝ այդ վերաշինվող ու վերակառուցվող հսկայական բանվորական կենտրոնի նկարագրությունները: Այստեղ կան գեղեցիկ համեմատություններ.

Լուռ է այդ ժամին: Քնած է քամին,
Օ, ինչ չքնաղ է Բաքուն այդ ժամին:
Ասֆալտն է շողում հայելու նման,
Շուրջը պուրակներ, ուր ամեն դարնան
Ծաղկունքն է բացվում գույներով վառման
Եվ խոխոջում է առվակը հստակ

Ամեն անկյունում, ամեն թփի տակ:
Ու ծաղիկներից էն ցողաթաթախ
Հանճարեղ մի ձեռք գործում է խալի.
Ուր աճում է մեր սերունդը մատաղ
— Ինչ թովիչ ես կյանք, ինչ տրախալի:

Պոեմում լավ կտորների կողքին կան նաև բավական բռնա-
ղբոսիկ պատկերներ, անախրոնիկ համեմատություններ: Պոեմի մի
հատվածում նկարագրվում է փոթորիկը ծովի վրա: Այդ ահեղ ժա-
մին մի խումբ նավթագործներ հերոսաբար մարտնչում են բնու-
թյան տարերքի դեմ: Փոթորիկը խափանում է բուրգը: Ահա, թե
ինչպես է նկարագրված այդ.

Բուք է: Ծովը խենթ ավերն է ծեծում,
Լեռնանում է նա մոլեգին ճիչով,
Ջրերի վրա հողմն է հեծեծում,
Ծածկում ամեն ինչ բասով իր անգոր:
Նա քրքում է, հռնդում կրկին,
Մեկ զալարվում է ցասումով ահեղ,
Մեկ դռչի նման զարկվում է ուժգին:

Ինչ պատկերներ են, օրինակ, «Հողմի անզոր բասը», «Ղռի
նման հողմը», կամ ինչի՞ նման է, երբ ծովը բանվորներին թվում
է «Մի մթին անդունդ, լի տեսիլքներով՝ դավադիր ու շար, ուր շա-
րիքներն էին աղմկում անդուլ և թքում դեպի երկինքը խավար»:
Ի՞նչ թե մեր ժամանակի մարդու երևակայության մեջ, նույնիսկ
ահաբեկության ժամին, այսպես է պատկերանում փոթորիկը: Հով-
նանես Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմի հերոսի մտապատ-
կերներն են հիշեցնում դրանք: Եթե Լոռեցի Սաքոյի՝ սնոտիա-
յաշտ ու հոգեպես մոլորված այդ երիտասարդի երևակայության
մեջ դիշերային խավարը շարքեր է ծնում, դա տրամաբանական է
և պատճառաբանված: Իսկ մեր ժամանակի մարդու մտապատկեր-
ները հիմնովին տարբերվում են նահապետական անցյալի մարդու
պատկերացումներից:

Գրիգորյանը երևույթները նկարագրելիս և էպիտետներ գոր-
ծածելիս երբեմն խախտում է գեղարվեստական չափի շղապումը
և արտառոց պատկերներ ստեղծում: Նկարագրում է, օրի-
նակ, պարտիական կազմակերպության ժողովը, ուր մերկացնում
են վնասարարներին: Ելույթ է ունենում մեզ ծանոթ Բուրովը և Ժո-
ւլովի ցասումը ահա թե ինչպես է ներկայացնում բառաստեղծը.

էն խենթ սամուհմն էր, թե՛ ահեղ մի ծով,
Որ ելավ այնպես ծափ ու սուղոցով:
Բուրովը փորձեց ինչ որ բան ասել,
Բայց ո՞վ այդ ժամին նրան կլսեր.
Երկինքն էր հասնում աղմուկը ահեղ...

Սա գործարար, անձնվեր ու խոհեմ մարդկանց մի ժողով է, որը վճռում է իր և երկրի համար կարևոր մի խնդիր, թե՛ բաբելոնյան խառնակություն: Քիչ անց ժողովի «ոգևորությունը» այնպես է բարձրանում, որ «Ասես փուլ եկավ մի հսկա քարափ դահլիճում այդ մեծ ու լուսավարար»: Հեքիաթին, ֆանտաստիկ միֆոլոգիային հատուկ այս հիպերբոլաներն, իհարկե, ավելորդ են այստեղ: Գույներն այս անօրինակ խտացումը շլացնում է ու կորստի մատնում պատկերները:

Որտե՞ղից են դալիս Ս. Գրիգորյանի պոեմի գեղարվեստական արժանիքներն իշեցնող այս լուրջ վրիպումները: «Հայրենիքի համար» գրքի, ինչպես և Ս. Գրիգորյանի հետագա տարիների ստեղծագործությունների մեջ իրենց զգացնել են տալիս փոխառությունները: Բանաստեղծության ձևի մեջ Գրիգորյանը խիստ պահպանողական է: Երկի բովանդակության բնագավառում մենք չենք կարող ասել, որ հեղինակը չի զգում նորը, ընդհակառակը, նա անպայման զգալի նվաճումներ ունի, բայց ձևի բնագավառում նորի զգացումը թույլ է նրա մոտ: Նա գերադասում է ավելի շուտ գնալ արդեն հայտնի ճանապարհով և ոտները չարնառել նորը հարթելիս:

Բայց մի բան մենք պարտավոր ենք հիշեցնել Գրիգորյանին և ոչ միայն նրան,— սա մի արատ է, որ երբեմն զրկում է գրողին ինքնատիպությունից, եթե դա չի հալթհալթում:

Սովետական դրականությունը չի բացասում անցյալի ժառանգության քննադատական օգտագործումը, բայց և չի էլ հանձնարարում մնալ հին ձևի դիրքերի վրա: Դա նախ և առաջ հակառակ է զարգացման, առաջխաղացման բուն սկզբունքներին: Եվ եթե մի վայրկյան թույլ էլ տրվելու լինի, որքան տարօրինակ կլինի ասենք այսօրվա մարդու հույզերը երգել անցյալի պրիմներով, պատկերներով, ոճերով, դա մի տափօրինակ, անօրինաչափ բան կլիներ:

Ինչպիսի՞ կարկառուն նախորդներ է ունեցել, ասենք, Վլադիմիր Մալախովսկին: Նրա վրիթարի պոետական էրուդիցիայում ամփոփված է նաև իր նախորդների կուլտուրան: Բայց կարելի՞ է Մալա-

ճշմարտութեան համադրել այդ նախորդներից որևէ մեկի հետ: Ոչ: Մարտկոմի նախագահի վառվռուն երգիչն էր, իր էպոխայի ծնունդը և նա շղիաց կոխկրտված ուղիներով և՛ բովանդակության և՛ ձևի բնագավառում: Նորի զգացումը նրան առաջ մղեց մինչ այդ անհայտ ճանապարհով և նա հասավ պրոլետարական պոեզիայի բարձունքներին: Նրա ստեղծագործությունները մեր ժամանակին ևն պատկանում բոլոր մանրամասներով՝ թեմայով, կառուցվածքով, գրելաձևով, բանաստեղծական երաժշտականությամբ, լեզվով: Նրա դործերի մեջ հնչում է մեր ժամանակի սիմֆոնիան:

«Հայրենիքի համար» ժողովածուի մեջ կան մի քանի բանաստեղծություններ, որոնք հուզական են, լինելով գաղափարապես հաղեցված և նպատակառայ: Դրանց մեջ հեղինակին հաջողվել է հուզականը հմտորեն ներդաշնակել հրապարակախոսականի հետ: Եվ դրանք վարակիչ ու կազմակերպող են իրենց տրամադրությամբ: Սրտաբուխ, թեմայորոշ ներքին անկեղծությունը այդ բանաստեղծությունները օժտում են ներգործական ուժով: Դրանք այնքան հուզապարար են, որ այդ շարքից մի քանիսը երգ են դարձել և լայն տարածում գտել: Հաջողված գործ է «Երգ Հայրենիքի մասին»:

Նաղկիր ազատ իմ Հայրենիք,
Իմ խնդության սլաքառ արև,
Հպարտ ենք մենք ու երջանիկ
Գարնան շնչով քո բարեբեր:

Խանդավառ կերպով գոչում է պոետը, արտահայտելով ժողովրդի սերը դեպի մեր ազա: Հայրենիքը: Երգ է դարձել նաև «Շողա իմ սիրուն» բանաստեղծությունը:

Շողա Հայրենիք, շողա, իմ սիրուն,
Քո ամեն թուփն ու քարն ենք մենք սիրում.
Մեզ չի բաժանի ոչ ոք քո շողից
Ոչ ոքի չենք տա մի թիվ քո հողից:

Այս փոքրիկ շանաստեղծության մեջ հեղինակը արտահայտել է մեր անձայրածիր Հայրենիքի բոլոր ժողովուրդների միասնությունը, սովետական համայնաժառանգ Հայրենասիրության հուզը «Հեռու Սիբիրից մինչև Երևան, սիրուն Գյուլ-Գյուլից մինչև կապույտ Նեան, մինչև յուրտը մի՞թե աքին Ջամբուլի»:

«Պապանինականներին», «Բազենները մեր անվեհեր», «Երջանկության և խնդության տոներ» բանաստեղծությունների մեջ դրվա-
վում են փոփոխական մարդկանց նվիրվածությունը Հայրենիքին,
այն կրթով պաշտպանելու պատրաստամիտությունը, խիզախու-
թյունը: Այդ հատկությունները: հաջող ընդհանրացումներ կան,
մանավանդ, «Բազենները մեր անվեհեր» բանաստեղծության մեջ:

Շանթն է դեմից հուրհրատում,
Երկնի կուրծքն է նա թրատում,
Բայց դեռ խիզախ ճախրում են վեր
Բազենները մեր անվեհեր:
Եվ դողում են նրանց առաջ
Օվկիանները հողմաշառաչ,
Շուրջը մի գոռ տեղատարափ,
Որոտում են լեռ ու քարափ,
Բայց սուրում են նրանք առաջ,
Արծվային թևեր առած:

Սամվել Գրիգորյանը բավական հմտորեն օգտագործում է ֆու-
կլորի ձևերն ու պրիտմները: Այդ պլանով են գրված «Լենինյան
ճշմարտություն» և «Պարտված մահը» գործերը: Սրանք երկուսն էլ
կուռ սյուժե ունեն, պատկերները հարուստ են, երանգավոր, հա-
մեմատությունները դիպուկ, լեզուն մշակված:

Ժողովածուում գետեղված «Բիբի-Հեյբաթ», «Խարդավանքի և
սիրո ամրոցը» լեգենդաները, մի շարք բանաստեղծություններ ա-
ռանձին բան չեն ավելացնում այն արժեքների վրա, ինչ որ մենք
արդեն նշեցինք:



Զուգում էր, բյուրեղանում մեր լավագույն լիրիկներից մե-
կի՝ Թաթուլ Հուրյանի պոեզիան: Արվեստի բնագավառում պատա-
նեկությունից նա թևակոխում էր խանդավառ երիտասարդության
շրջանը:

Հայրենական պատերազմին նախորդող երկու - երեք տարի-
ների ընթացքում Հուրյանը հրապարակեց իր պոեմները՝ «Հողը»,
«Սոճիների պուրակում», «Մեքենավարը», «Երկրի ձայնը», «Սալաթ-
նովան»:

Թերեւս ոչ մեկը սովեւտահայ երիտասարդ պոետներից այնքան անմիջականորեն ու սրտաբոլւս չի երգել քաղաքացիական պատե-
րութի հերոսամարտերը, ինչպես Հոբյանը:

Ահա «Հողը» փոքրիկ պոեմը: Դրա առանցքը կազմում է տա-
րիներ շարունակ զենքը ձեռքին, պատերազմի վտանգներով լեցուն
համարներով քայլող հողի մարդու խորը կարոտը դեպի մայր հո-
ւը: Ընթերցողի առաջ կենդանություն են առնում բանվորա-գյու-
ղացիական բանակի հեծյալ զորագնդերի ծանր արշավները՝ կարճ
կանգառներով:

Հեծյալ ջոկատը պատերազմական բախումների մեջ հոգնած
առաջ է շարժվում «մի նոր նպատակի հաղթանակի համար...»: Երեք տարի է, որ մարդիկ ու ձիերը հանգիստ չեն առել, բայց հա-
մառու են կտրում են լեռներն ու խորունկ կիրճերը:

Գարուն է: Զգվում են խոպան ու ամշակ դաշտերը. ճանա-
պարհի եզրով: Սևահողի կրծքին ծիծաղում են նոր ելած ծիլերը:

Բնության այս պատկերի և մարդկանց հոգեմիճակի մեջ կապեր
է ձգում բանաստեղծը: Քամին ծիլերի ականջին փսփսում է.

Ո՛վ գիտե ինչ հեքիաթ, ի՞նչ աշխարհ է, ի՞նչ
ջեղած կյանքի մասին, որը, սակայն, արդեն
երկաթե քայլերով դոփում է լայնարձակ
Մեր դաշտերի վրա... որը արդեն մոտ է,
Եվ երկիրը, հողը նրան սպասում են,
Որպես մի թանկագին, մի ցանկալի հյուրի:

Այդ նոր կյանքի համար է հողը զոհում իր լավագույն զավակ-
ներին: Հստի հողը գուրգուրող ձեռքերի կարոտ է զգում:

Հողը շնչում է խոր, հողն իր գիրկն է բացել
Գարնան արևի դեմ և լուսառատ, և խեղճ
Փխրանում են արդեն հողի կոշտիկները
Ուղիղ արևի դեմ և ծծում են նրա
Ոսկեպուրպուր կաթը անհագ, ազահաբար:

Հոգնաբեկ դինվորը վերջին հաղթական մարտի է գնում: Հողի
կարոտն է փոթորկում նրա սիրտը: Իսկ հողը քանի-քանի տարի
առջուն է տեսել: Նրա կտրծքը թնդանոթի արկերն են վարել, նա
լացել է իր զավակների կարոտի համար, ոչ մի ձեռք սփռված
չի բերել նրան, մնացել է ամուլ, այժմ խաղաղ, իմաստալի եր-
կունք է տեսնում:

Ահա զինվորներից մեկը՝ հողի մշակը կարճ դադարի ժամանակ իջնում է ձիուց: Հողի բույրից արբած, նա հողն է համբուրում:

Նա քանդում է հողը, կոշտիկները փշրում
Բանում արեի տակ և նայում է երկար:

Նույնպես կոշտ ամերում, հողի կոշտիկները
Նա քանդում է հողը, կոշտիկները փշրում
Մանրացնում է, նայում, տատանվում է կարծես
Եվ քսում է դեմքին...

Աշխատանքի ծարավը, ապրելու և ստեղծագործելու անհագ ձգտումն են խոստում այս առղերի մեջ: Աշխատավոր մարդու դոյը չի ընդունում ավերածություն և մահ: Զինվորը միտալուտ հաղթանակի, լավ կյանքի ուսմանտիկան է ապրում:

Երբ երկիրք փրկենք
Արյունոտ ճանկերից, ևս ինձ կտամ հողին,
Հողը կմշակեմ, կփայփայեմ հողը
Լավ բերքերի համար, լավ սերունդի համար...

Այսպես է մտածում զինվորը: Դա զենք վեր առած միլիոնավոր զուղացիների նվիրական իղձն է եղել քաղաքացիական պատերազմի հրդեհների տև ավերածության մեջ:

«Հերոսության երգերից» երկրորդ ֆրագմենտը, կարծես նախորդի շարունակությունն է: Հուրյանն այստեղ խոստում է իրենց ազատագրության համար կուլի ելած բանվորների ու զուղացիների հերոսության մասին: Սովետական երկրի անծայրածիր հաթթությունների և անառիկ բարձունքների վրա հախտուն ուժով հորդել է այդ հերոսությունը: Շատերն են ընկել երեկ՝ այսօրվա կյանքը նվաճելու ճանապարհին: Ահեղ մարտերի մեջ նույնիսկ չվերջին մարդը՝ վերջին գնդակով իր չի նահանջել դիրքերից, արյուն է թափել, «իր գլուխն է դրել մահվան հողմերի տակ—վաղվա կյանքի համար»:

Բանաստեղծը խանդավառ, կաղմակերպող տողերով է ավարտում այս երկը.

Վերջացավ: Բայց դալիք ահեղ պայքարներում,
Գալիք հոխորտացող անթիվ մորիկներում,

Մենք ձեզ երգ կդարձնենք, դրոշներ կդարձնենք,
Կկուտակենք նորից կրկնակի, կրկնակի

Զեր սրբազան ու լեհ ոազմական ոգին...

Զերմ լիբիկական շունչ ունեն «Սոճիների պուրակում» և
«Մեքենավար» պոեմները: Կացությունը, կյանքի այս կամ այն
մանրամասը նկարագրելիս, Հուրյանը սքանչելի նրբազգացություն
է դրսևորում, ապրումները խոր են ու վարակիչ:

Պոետը նկարագրում է քաղաքացիական պատերազմի մի հե-
րոսի գնդակահարությունն անտառում: Պերճ բնությունը, որ հա-
վերժական կյանքի, անդադար ծաղկման Կու բարգավաճման խոր-
հրդանշան է, նյութվող ոճի լի կոնտրաստն է: Այն պահին, երբ
սարերի վրա արեգակն էր շողշողում, փայլում, գորգուրում կյան-
քը, սոճիների պուրակն են մոռնում երեք մարդ՝ «մեկի ձեռքերն են
կապած, երկուսի մոտ հրացան, երկուսի սիրտը կապար, մեկի սիր-
տը հրացալու»:

Փանի գնում է, հասունանում է ոճի լի: Կյանքի ու վերահաս
մահու հակամարտությունը բանաստեղծը տալիս է լիբիկական
ուժգին թափով:

Կանգ առան այդ պուրակում,
Առանց խոսքի, առանց ձայն...
Կռունկների երամով
Ճերմակ սմպերը անցան: Կ
Ամպերն անցան սահանքով
Եվ լուծվեցին լուռ, անձայն,
Մեկը կանգնեց սոճու քով,
Երկուսը՝ առաջ անցան...

Այս տողերը կարդալիս, ընթերցողի մեջ բնության պատկերը
բորբոքում է կյանքի գեղեցկության հույզը և զայրույթ՝ բռնի մա-
հու դեմ: Հեղինակը հեբոսների վիճակի և բնության սքանչելիքնե-
րի միջև այս կոնտրաստն ստեղծելով, իդեապես հագեցնում է եր-
կը: Եվ ահա՝ վճռական թուպին, երբ պետք է պայթեին հրացաննե-
րը՝ գերված պարտիզանին մահ բերելով, նա դառնում է Կերկու
զինվորներին, հետևյալ խոսքերով.

—Որ վերջինը լինեմ ես,—
Պետք է նրանց կրակել,
Որոնք զենք 'են տվել ձեզ
Եվ այս պուրակ ուղարկել:

Այս տողերին պոետը զուգակցում է իր մեկնաբանությունը.

Կարծես նրան համաձայն

Սոճիները սլաճիգ

Շարժում են նուրբ ու անձայն

Գլխիկները խելացի:

Զինվորները ազատ են արձակում պարտիզանին, բայց սոճիների արանքից երկու դավադիր գնդակ գետին են տապալում՝ նրանց և մի կյանքի փոխարեն, երկու կյանք խլում:

Սոճիներից երկնաբարձ

Օրորվելով ուս-ուսի,

Երկու տերև ընկան ցած,

Որպես պսակ երկուսի:

«Սեքենավար», պոետը պատմում է աշխատավոր մարդու նույն անձնագոհության մասին՝ իր նմանների փրկության ու երջանկության համար: Դաշնակցական սպաները շոգեմեքենայի հնոցում այրում են գերի առած պարտիզանական ջոկատի պետին: Այս անկուր ոճիրը կատարվում է նույնպես բնության ծուցում, ուր ամեն ինչ բողոքում է այդ դաշնակցության դեմ:

Մեքենավարը, վրեժխնդրությամբ համակված, գնացքը խորտակում է, թշնամիներին կորստի մատնելով: Նահատակվում է և ինքը մեքենավարը: Պոետը ավարտվում է լիրիկական շեղումով, ուր շեշտվում է այն ճշմարտությունը, որ սերունդները չեն մոռանա այդ մարդկանց աննման հերոսությունը: Այժմ, տարիներ են անցել այդ օրերից: Մեր երկրի գնացքներն ազատ սլանում են բաց ճամբքերով, անարգել առաջ են գնում նրանք հայրենի ձորերով: Իրը գնացքները հասնում են այդ հերոսության վայրը, երկու անգամ սուղում են՝ ի հուշ այն խիզախ ու անվարան պարտիզանի, որ այրվեց հնոցի կրակների մեջ և վրիժառու, անձնագոհ մեքենավարի, որը իր մահվան գնով կորստի մատնեց ժողովրդի թշնամիներին:

Մյուսպես է ավարտվում պոետը:

Այս շարքի հետ օրգանապես առնչվում են և կարծես նրանից բխում Հուրյանի համարյա թե բոլոր լիրիկական բանաստեղծությունները:

«Աստղ» բանաստեղծությունը պոետի շափածո հակիրճ կենսագրությունն է, որի մեջ, սակայն, ցոլանում է տասնյակ հազարավոր հայ աշխատավորների անցած ուղին նախառեղուցիոն անցյալում՝ արհավիրքներով ու տանջանքով լի, մեր օրերում՝ կենսահրեղ ու լուսավոր:

Դառն է եղել բանաստեղծի մանկությունը, որը ալիքես է նկարագրում ինքը.

Երբ ծնվեցի մեր գյուղում,
Մեր հին խրճիթում,
Տատս ալյուր էր մաղում
Ու մեզմ աղոթում:
Երբ ծնվեցի,— նա ասաց
Ձայնով դողդողուն...
Երկինքն ամպոտ էր ու թաց
Եվ շունն էր հաջում...
—Ոչ մի աստղ չի շողում
Երկինքը մութ է,
Աստղ չունես, ջան օղուլ,
Աստված անդուլ է...

Սովետական իշխանությունը փրկություն է բերում ժողովրդին: Անցնում են զրկանքներով, արհավիրքներով լի ժամանակները: Պոետը անհուն կարոտով հիշում է իր տատիկին, որը իր խավար մանկության վկան է եղել և բերկրանքով է հայտնում, որ անասող ծնված մանուկը այսօր աստղ ունի, «որը ամենից պայծառ է շողում, ուղ աշխարհն է իր անբիծ լույսով ողողում»:

Պոետը ազդարարում է.

Իմ աստղը Կրեմլի
Աստղն է անմար,
Որը շողում է, լույս տալիս
Ամռփիչ ու վառ:

Ապա և ի խորոց սրտի բացականչում.

—Միլիոնների աստղ դու,
Վառիր, հուրհրա,
Երջանկություն դու մարդու
Ռու ցնծության շահ:

Հուրյանը հաստատապես գնում էր սոցիալիստական կյանքի երևույթների գեղարվեստական համարձակ ընդհանրացումների ճանապարհով:

Նրիտասարդ բանաստեղծը, թեպետ չէր տեսել քաղաքացիական պատերազմները, բայց խորապես ապրելով այսօրվա կյանքը, ճիշտ հայացքով էր դիտում մերձավոր ափսոսանքները, հիշատակում մերձավոր ափսոսանքները, երբ միլիոնները կռվով նվաճեցին ազատ ապրելու և ստեղծագործելու իրավունքը: Ներկա իրադարձությունների մեջ պոետը կարեղանում էր տեսնել նաև զարգացման տենդենցը, կռահել լուսավոր ապագան և կենսահաստատ շաղկապներով միմյանց դիմադրել մեր նվաճումները, այլև մղել դեպի ապագան:

Ահա բանաստեղծի մի քանի խոհական, քառյակներ, որոնց մեջ քննվում է մարդու վիճակը՝ պատմության քառուղիների վրա:

Ոտնահարված է եղել Մարդը բոլոր դարերում,
Մարդու պատկերն են պղծել տիրակալներն անողոք,
Վաճառքի են դուրս բերել, Մարդուն դնել են փողով,
Ոտնահարված է եղել Մարդը բոլոր դարերում:
Արդ հպարտ է դողանջում Մարդու ձայնը մեր հողում,
Ազատական, երջանիկ, վեհագույնից վեհագույն
Եվ չենք թողնի, որ նրան նորից փակեն վանդակում,
Արդ հպարտ է դողանջում Մարդու ձայնը մեր հողում:

Սովետական ժողովուրդների ձեռք ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականության մեջ պակաս եսթետիկ չէ նաև կոլեկտիվ հարցը: Ազգային ձև ասելով, մենք հասկանում ենք ոչ միայն արտահայտչական միջոցները՝ երկի լեզուն, բանաստեղծության շարվածությունը, հանգավորման եղանակները, այլև ազգային կոլեկտիվը, որը խտացնում է սովյալ ժողովրդի միջավայրի, ապրելակերպի, զարգացման համար բնորոշ գծերը:

Սովետական ժողովուրդների գրականությանը, ինչպես սոցիալիստական բովանդակությամբ, այնպես էլ ազգային ձևով տարբեր է բուրժուական գեղարվեստական գրականությունից:

Մենք ապրում ենք ազատ ժողովուրդների բոլոր տնտեսական, քաղաքական և կուլտուրական ուժերի սոցիալիստական ներդաշնակության մեջ: Եվ երբեք ազգային ձև ասելով, մենք չենք հասկանում կաղապարում և ինքնամոտիվում ազգային նեղ շրջանակներում: Այսպես կոչված «ազգային հատկանիշների խտաց-

ման» նացիոնալիստական թեորիան մենք մերժում ենք ինչպես բովանդակության, նույնպես և ձևի բնագավառում:

Սովետահայ գրականությունը չի կառչում այսպես կոչված «գլուխ հայկական» ձևերին, որովհետև այդպիսի գտարյուն ձևեր, չեն եղել և առավել ևս չկան այժմ՝ ժողովուրդների սոցիալիստական համագործակցության երկրում, ուր փոխազդեցությունն ու փոխներգործությունը տեղի են ունենում կյանքի բոլոր բնագավառներում, բոլոր մանրամասների մեջ:

Մեր պոեզիան նույնպես ներառնում է սովետական ժողովուրդների բազմալեզու զրականության հարուստ ձևերը և մի միասնության մեջ անդադար կատարելագործվում:

Այս առումով բազմաթիվ ռացիոնալ տարրեր կան նաև Ֆղերբեջանի սովետահայ գրողների ստեղծագործությունների մեջ:

Թաթուլ Հուրյանի արվեստն այս տեսակետից բնորոշ օրինակներ է տալիս: Նրա երկերի ձևի մեջ, պրիոմների, պատկերների մեջ անդրադառնում են սովետական պոեզիայի նվաճումները և հայ պոեզիայի տրադիցիաները, սովետահայ պոեզիայի ձեռք բերած նորամուծությունները:

Իր համարձակ փորձերը Թ. Հուրյանը կատարելության չկարողացավ հասցնել: Անողորմ մահը զրկեց նրան այդ հնարավորությունից:

«Վերք Հայաստանի», «Մայր Արաքսի ափերով» «Քամիները», «Հրավեր» բանաստեղծությունները (տես «Ասող» ժողովածու, էջ 80-85, 87-90), որոնց մեջ պոետն իր սերն է զեղում դեպի Հայաստան, միևնույն ժամանակ հայրենասիրական գործեր են ընդհանրապես, քանի որ մայր երկրի փրկությունն ու երջանկությունը պոետը դիտում է սոցիալիստական մեծ Հայրենիքի — Սովետական Միության հետ Հայաստանի անխզելի կապի մեջ: Հուրյանի վերջ հիշված պոեմների ու բանաստեղծությունների մեջ, հայ ժողովուրդի հետ մեկտեղ, լիաթուք շնչում է սովետական ողջ ժողովուրդը:

«Նրկրիս արևն է շողում իմ մեջ» բանաստեղծությունը համապետրոնացնում է Հուրյանի պոեզիայի այդ հատկությունները:

Նեղում է շուրջս կյանքը, ամեն ինչ

Համայնակունք, համայնադուռ,

Նոր կյանքի համար առատ ու ջինջ

Դաշտավորներն են մեր աշխատում:

Հալալ վաստակի քրտինքն է սուրբ

Նրանց ճակատը ցողել, թրջել.

Ես նրանց ուրախ երդն եմ լսում

Նոր կյանքի մասին պայծառ ու ջիւռ:



«Մուտք» առաջին ժողովածուից հետո, որի մասին մենք արդեն խոսել ենք, լույս տեսան Աշոտ Գրաշու «Ժողովրդի հետ», «Քնարական» ժողովածուները, այնուհետև 1940 թ. նրա փոխադրությամբ «Ադրբեջանական բայաթիներ» գրքույկը:

«Քնարական»-ը արվեստի տեսակետից քիչ բան ավելացրեց Գրաշու նվաճումներին: Որոշ առումով, նույնիսկ դա մի տեսակ նահանջ էր բովանդակալից, մեծ ու ծանրակշիռ, ձևով կատարյալ պոեզիայի դիրքերից:

Զխոսելով գրքում տեղ գտած գործերի իդեական լարժանիքների մասին, որը ոչ 'ոք չի վիճարկում, խոսքը պիտի մասնավորեցնենք արվեստի վերաբերյալ: Կենդանի թեմայի որոնումների ժամանակ բանաստեղծը դիմեց շտապանցված կոտորակաչնության, երբեմն ամփոփվելով ալսպես կոչված «Մարդային լիրիկայի» շափից դուրս նեղ շրջանակներում: Սա մի ուրիշ ծայրահեղություն էր, Բաքվի պոետների որոշ սահմանափակվածության մյուս բևեռը:

Մինչև 1932-1935 թվերը Ադրբեջանի հայ երիտասարդ բանաստեղծները չէին լուծել կոնկրետ թեմայի հարցը, նրանց ստեղծագործությունները ճնշվում էին ընդհանուր գատողությունների ծանրության տակ: Նոր ուժերը բեկեցին այդ դրությունը, բայց և նրանցից ոմանք ընկան մի 'ուրիշ ծայրահեղության մեջ: Մասնավոր, նույնիսկ աննշան երևույթները փորձեցին բանաստեղծության ատաղձ շինել: Եվ, քանի որ պոեզիայի մեջ ներքին կրակն ու ձևի կատարելությունը սերտորեն կապված են բովանդակության հետ, իջան նաև բանաստեղծությունների հուղակայնությունն ու արվեստը: Մենք հավասարության նշան չենք կարող դնել «Մարդային լիրիկա» բաժնում զետեղված բոլոր գործերի միջև: Խոսքը վերաբերում է հատկապես «Զիուս հետ», «Մազերը», «Պապը» «Անձրևը» «Շիրմաքարը», «Անձրևից հետո», «Մարգում» և

մի քանի անվերնագիր բանաստեղծություններին, որոնք գաղափարագուրկ և անարվեստ գործեր են:

«Ժողովրդի հետ» և «Աղբբեջանական բայաթիներ» գրքույկներով Գրաշին ցույց տվեց ժողովրդական բանավոր ստեղծագործությունների ևղանակով ու հանգով դրելու լավագույն նմուշները: Նրա դարաբաղյան դաստանների մեջ իրենց բազմաթիվ գեղեցիկ երանգներով բեկվեցին Ղարաբաղի լեռնաշխարհի բնությունը, մեր կոլխոզային գյուղի առօրյան, կոլխոզնիկների ունևոր և կուտաւրական կյանքը: Սրանք պարզ և հեշտ ընկալելի ձևով, դիպուկ և գեղեցիկ համեմատություններով գեղում են մեր վերակերտվող գյուղացիության զգացմունքները: Այս շարքը, այդ իսկ պատճառով, մեծ ընդունելություն գտավ և առանձին կտորներ երգ դարձան, տարածվեցին Լեռնային Ղարաբաղի գյուղերում:

«Աղբբեջանական բայաթիներ» գրքույկը հրատարակելով, Աշոտ Գրաշին շարունակեց և զարգացրեց այն խիստ դրական գործը, որ Աղբբեջանի հայ գրողները կատարում էին աղբբեջանական ժողովրդի դրական գանձերը հայ աշխատավորներին մատուցելու ուղղությամբ: Բանաստեղծը լավ ծանոթ լինելով հայ և աղբբեջանական ֆոլկլորին, կարողացավ հաջողությամբ վերածնել հայերեն այդ բայաթիները, պահպանելով նրանց իմաստությունը. քաղցր երաժշտականությունը:

«Կոմունիստ» օրաթերթի 1940 թ. մայիսի 10-ի համարում հրապարակված «Աղբբեջանական բայաթիներ» հոդվածում (արտատպված «Գրական թերթից») հայ պոեզիայի մեծագույն վարպետ Ավետիք Իսահակյանն ըստ արժանվույն գնահատեց Գրաշու այդ լավ աշխատանքը, որ հայ և աղբբեջանական ժողովուրդների բարեկամության արտահայտություններից մեկն է: Ա. Իսահակյանը դրում է. «Սեր, կարոտ, վիշտ, իգիթություն, տառապանք, սուգ և լեռնային բնություն՝ իր գեղեցկություններով— ահա բայաթիների հոգին, աղբբեջանական ժողովրդի հոգին: Բայաթիների փոխադրությունը Ա. Գրաշին կատարել է միանգամայն հաջող: Զգացված, ապրած վերարտադրանքներ են դրանք, այնքան սահուն, կարկաշուն»:



Ինչպես նախորդ գլուխներում նշել ենք, բանաստեղծուհի Վարսենիկ Աղասյանը երկար ժամանակ ապրեց ստեղծագործական

դեգերումներ: Նրան կաշկանդում էին անցյալի տրագիկականները. նա դժվարութեամբ էր գտնում նոր խոսքեր ու նոր պատկերներ՝ նոր երևույթների գեղարվեստական վերարտադրման համար: Բայց համառ որոնումները որոշակի արդէունքներ չհասցրին:

«Մայրական հույզեր» շարքը ամբողջ շղթայով ձգձգվում է բանաստեղծուհու գրական գործունեության տարբեր շրջանների միջև: Բայց պատերազմի նախօրյակին լույս տեսած «Մայրական հույզեր» ժողովածուն արդեն տրակական նոր նվաճումներ բերեց:

Խոսելով մեր էպոխայի վերակերտող ուժի մասին, Ա. Մ. Գորկին ասում է. «Մենք ապրում ենք հին կենցաղը հիմնովին փշրելու դարաշրջանում, մի դարաշրջանում, երբ մարդու մեջ զարթնում է սեփական արժանապատվության զգացմունքը, մի դարաշրջանում, երբ մարդն ինքն իրեն գիտակցում է որպես տիրող, աշխարհը վերափոխող ուժ»: Սեփական արժանապատվության զարթոնքը և ինքնագիտակցության պատմական պրոցեսն ասլոնցին հակառակ էր կարծիք: Նվ դա բուռն, հախուռն հոսանքով, որի դեմ տապալկեցին և տապալվում են հին կենցաղի բոլոր նորմաները:

Մեր Հայրենիքում կինը իրավահավասար քաղաքացի լինելով, վայելում է ազատ, անկաշկանդ մայրության երշանկություն: Պատմության մեջ երբեք և ոչ մի տեղ, և՛ այժմ ոչ մի երկրում չի եղել և չկա ազատ մայրություն, ինչպես մեր երկրում:

Նախառևույցիոն խավար անցյալում մայր հասկացողությունը երբեք չէր կարելի անշուտեղ կրկնակի ու եռակի տառապանքից, բազում հուսալքություններից: Անցյալում մայրը կրում էր չարքաշ ու ծանր կյանքի իր բաժինը և դրա հետ մեկտեղ իր զավակների ու մերձավորների տառապանքները: Աշխատավոր կնոջ վրա բարդվում էին ընչաճշտորէ կենցաղավարության բոլոր հոգսերը, ավելի անտանելի դարձնում նրա իրավազուրկ կեցությունը: Մայրը, գուցե, ավելի ծանր և հոգեմաշ էր ապրում ամուսնու և զավակների զրկանքներն ու ուրբերգությունը: Ինչքան արտահայտիչ պատկերներ է թողել մեզ նախառևույցիոն գրականությունը մեր այս գոյավիճակի մասին:

Վարսենիկ Աղասյանի «Մայրական հույզեր» շարքը խտացրել է սովետական մայրերի՝ Սոցիալիստական Հայրենիքի քաջարի զավակներին ծնող, գուրգուրուկ, դաստիարակող մայրերի հույզերը: Ապահով կյանքը, լուսավորությունը, քաղաքացիական բոլոր ազատությունները սովետական կնոջ մեջ բուրեղացնում են մարդ-

կաջին բոլոր լավագույն հատկութիւնները: Մայրական սերը այլ երանգներ է ընդունում մեզ մոտ: Նա դառնում է սոցիալիստական քաջանիքը ցեմենտափորող ուժը: Մեր կանանց բոլոր արժանիքներով, մայրական կաթի հետ միասին սնվում են նորերը:

«Մայր» բանաստեղծութիւնի մեջ Աղասյանը հետևյալ կերպ է նկարագրում սովետական մորը.

Արինայի պես մայր չի սգաւոր,
Սիրտը վիրավոր հազար տեղերից,
Նրա պես նա չի կանչում մարտերից
Որդուն իր հիվանդ ու թոքախտաւոր:
Սպասում է նա իր դուստրական
Հաղթ ու թեւաւոր բազին հպարտ,
Իր զինվորական տրդուն դյուբական,—
Ծաղկաւոր հինգթեւա աստղը անպարտ:

Որդիական սերը հենվում է նաև ծնողական սիրո վրա: Իսկ դրանք իրենց հերթին զորավիգ են դառնում մեր մարդկանց՝ իրենց աշխատանքի, պայքարի մեջ: Մայրական սերը, որդոց ջերմ կարօտը դեպի ծնողները, նրանց կյանքի ու բարեկեցութեան համար մարտնչելու և հարկ եղած դեպքերում մեռնելու պատրաստակամութիւնը Հայրենական պատերազմի ահեղ մարտերի մեջ եղել են սովետական մարդկանց զոհներն առաջ մղող ուժերից: Մայրը մարմնացած որդու մեջ կռվել է թշնամու դեմ և որդու հետ մեկտեղ հաղթանակ նվաճել:

Սա մեծ, հույժ կարեւոր թեմա է սովետական գրականութեան մեջ: Այս թեմայի համեմատաբար լիարդուն մշակման պատիվը սովետահայ գրականութեան մեջ պատկանում է նաև Վարսենիկ Աղասյանին: Աղասյանի գործերի վերլուծութեանը մենք կանդամադառնանք առաջիկա գլուխներում, պահպանելով ժամանակագրական մոտեցում դեպի քննարկվող ստեղծագործութիւնները:

Հայրենական պատերազմին նախորդած տասնամյակում Այրերեջանի երիտասարդ պոետներ Արտաշես Բորենցը, Նիրեմ Լոտենցը և Աթանես Սենալը մեր պարբերական մամուլում հանդես եկան մի շարք բանաստեղծութիւններով, որոնք խորապէս լիբիկական լինելով, արտահայտում էին մեր գրական երիտասարդութեան նվիրական հույզերը:

Ահա թե ինչքան սրտաբուխ է երգում Արտաշես Բորենցը մեր
Հայրենիքի գարնան առավոտը.

Գծվում են ի դեմ թարմ, բուրումնավետ
Ծաղկունքով լցված դաշտեր ու արոտ,
Շողա, հուրհրա, իմ երանավետ
Հայրենի երկրի դարնան առավոտ,

Շողա, հուրհրա իմ խաղաղածուկ
Հայրենի երկրի գարնան առավոտ.
Դու վեհ զարթոնքի առաջին ցնցուղ,
Իմ ջահել հոգու ոսկեվառ կարոտ:

Պայթեց երկրորդ համաշխարհային պատերազմը: Մեր երկիրը
ավելի ու ավելի աշխուրջ հետևում էր իրադարձությունների զար-
դացմանը.

Բոլշևիկների պարտիան և սովետական իշխանությունը սովե-
տական մարդկանց մեջ դաստիարակեցին ստեղծագործելու, կա-
ռուցելու անմահ ունակություններ և դրա հետ մեկտեղ նվաճածը
պաշտպանելու հաստատակամություն ու պատրաստակամություն:
Վերահաս պատերազմի դեպքում մեր Հայրենիքի բախտի համար
տագնապը չէր կարող շանդրադառնալ գրականության մեջ: Ա-
ռանձնապես մեր երիտասարդ պոետների ստեղծագործությունների
մեջ զգացվում է այդ ազնիվ տագնապը, որ մշում է դեպի զդաս-
տություն, դեպի մարտական դիրքեր:

Խտանում են ամպերը պատերազմի ու մահի
նվ ուր որ է երկինքը շուտով անձրև կմաղի
նվ կլինի աշխարհում մի փոթորիկ կատաղի,
խտանում են ամպերը պատերազմի ու մահի:
Ուր էլ լինես, իմ ընկեր, դու վառողը, չոր պահի,
Աչքդ արթուն, սիրտդ բաց, խնդությունը անաղի.
Խտանում են ամպերը պատերազմի ու մահի
նվ ուր որ է երկինքը շուտով անձրև կմաղի:

Այսպես էր երգում Թաթուլ Հուրյանը այդ ազնիվ տագնապը և
վառողը չոր պահելու կոչ անում: Այս գիծը ցայտուն կերպով անց-
նում է մեր երիտասարդ բանաստեղծների ստեղծագործություննե-
րի մեջ: Նրանք պատրաստվում էին գոռ մարտերում Հայրենիքը
պաշտպանելու և՛ որպես պոետ, և՛ որպես մարտիկ:

ԴԻՍՄԱՏՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրամատուրգիան դժվար ժանր է: Քիչ դեպքեր կան դրակա-
նության մեջ, երբ գրողն իր գործունեությունն սկսում է դրամա-
տիկական երկերից: Այս է պատճառը, որ մինչև 1930-1932 թ. թ.
Ադրբեջանի սովետահայ գրողներից և ոչ մեկը իր ուժերը չփորձեց
այդ բնագավառում: Բայց ինչպես մենք տեսանք, հետագա տարի-
ները Ադրբեջանի սովետահայ գրողներին ընդհանրապես մեծ հա-
ջողություններ բերին, այդ իմում նաև մասնավորապես դրամա-
տուրգիայի ասպարեզում:

Առաջին լուրջ փորձ հանդիսացավ Արշավ Դարբենու «Հողը
ծիծաղում է» պիեսը, որի մասին մենք արդեն խոսել ենք: Այնու-
հետև Բաքվում բեմադրվեց նույն հեղինակի «Արծիվներ» պիեսը,
որի մեջ հեղինակը փորձեց վերարտադրել պայքարը վնասարար-
ների և շալիչնաժի դեմ: Պիեսը գեղարվեստական իր աժանիքնե-
րով առանձնապես աչքի չէր ընկնում և շատ կարճ ապրեց բեմի
վրա: Այնտեղ չկային մշակված կերպարներ, գործողությունները
թույլ էին, խուճի մեջ գերակշռում էր ռեսորիկան:

1939 թ. Արշավ Դարբենին հանդես եկավ նոր երկույ: Բեմա-
դրվեց նրա «Երբ բացվում է մանուշակը»: Մինչև այժմ էլ պիեսը
չի իջնում մեր թատրոնների բեմերից:

Պիեսի գործողությունները ծաղակվում են Ադրբեջանի գյու-
ղում՝ Սոցիալիստական ռևոլուցիայի նախօրյակին:

Հեղինակը իդեական երկու նպատակ է հետապնդում՝ ցույց
տալ, թե ինչպես նախառևոլուցիոն շրջանում բուլճեիկյան պար-
տիայի գաղափարները թափանցում են գյուղը և կազմակերպում
աշխատավոր գյուղացու ռևոլուցիոն գիտակցությունը, ապա թե
ինչպես հայ և ադրբեջանցի աշխատավորների միասնական ուժե-
րով, ուստի մեծ ժողովրդի օգնությամբ, փշրվում են դարավոր
ստրկության կապանքները, մեր մարդկանց համար նոր դարուն է
բացվում և նոր կյանքի մանուշակը:

Դարբենու նովելները վերլուծելիս, մենք ցույց տվինք, որ նա
լավ գիտե գյուղը: Հեղինակը շրջահայաց կերպով հետևել է իր
հերոսների կերպարների համար նյութ ծառայած հասարակական
խափերի նիստ ու կացին, ուսումնասիրել սովորությունները, դի-
տել նրանց հոգեկան աշխարհում և հայացքների մեջ տեղի ունե-

ցած պրոպրետը՝ սկսած ռևոլուցիայի ժամանակներից մինչև մերօրերը:

...Դաշնակների արյունոտըտ ու կործանարար քաղաքակա-նությունը տակն ու վրա է անում գյուղը: Դաշնակցական խմբա-պետները և գյուղի զորքաները կոխկրտում են աշխատանքի ու քրտինքի մարդկանց արժանապատվությունը: Սանձարձակ թալան ու կողոպուտ է ամենուր:

Կամայականությունների, տեռորի ու խավարի այդ թագա-վորությունից ազատվելու ելք են որոնում աշխատավոր մարդիկ: Այդ ելքը նրանց ցույց է տալիս բոլշևիկների պարտիան:

Ինքնակալության տապալման լուրը այս գյուղն է բերում՝ դեռ պատանեկության օրերին այդտեղից հեռացած, Պիտերի բան-վոր Արամը, որը և մասնակցել է ռեժիմի դեմ բանվորների մղած մեծ կռիվներին:

Արամի հետ գյուղն է մտնում և ճշմարտությունը: Համագյու-ղացիների հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ, երբ նրանք խոսում են իրենց ծանր կացության մասին, խավարի մեջ արևա-ծագ են երազում, Արամը նրանց ասում է.

— Մեր հույսն էլ, արևն էլ ռուսն է: Նա որ չլիներ, Սուլթան Համիդը և Վիլհելմը սաղ Կովկասը ոտի տակ կտային, ահեղ ու չահել արի կքաշեին, օրորոցի մանուկին յաթաղանով կմտրեին: Բաս: Ոնց որ արծիվը թևերի տակ պահում է իր ճուտերին, ռուսն էլ մեզ է պահում իր թևերի տակ:

Արամի այս խոսքերը ջերմ արձագանք են գտնում: Դա ար-տահայտված է գյուղացուն հատուկ հակիրճ և խորիմաստ խոս-քով: Բոլոր ներկա եղողների ղղացմունքն արտահայտելով, աշուղ Աթան ասում է. «Արդար խոսք է»:

Անդրկովկասի ժողովուրդների պատմության դասերն են լստացված ինչպես Արամի դատողությունների, այնպես և Աթանյի պատասխանի մեջ:

Մոտ անցյալի իրադարձությունները և արյունոտ առօրյան աշխատավոր գյուղացիությանը բերում են այն համոզմանը, որ իրենց փրկությունը կախված է հայ և ադրբեջանցի աշխատավոր-ների միասնությունից և համահավաք ուժից: Այդ բարեկամության մեջ են նրանք տեսնում հարստահարողների ու թալանիչների լուծք թո՛ղմափեղու ձիշտ ճանապարհը:

Այս բարեկամութիւնն են մարմնավորում պիեսի հերոսներ : շուր՝ Աթան և աշուղ Շիրինը, որոնք տարիներ շարունակ սըր-տուկից ու բախտակից ընկերներ են, որոնց ընտանիքներն իրար հետ բաժանել են կյանքի քաղցրութիւններն ու դառնութիւնները: Նրկուան էլ ժողովրդի ցավերի և հուզերի երգիչներ են, ծնված ժողովրդի ընդերքից: Նրանց արվեստն էլ է հարազատ: Նրկուաի երգերն Նլ հասկանալի են հայերի ու աղբբեջանցիների համար, փոխադարձաբար այնքան մոտ ու ըմբռնելի:

Արջալ Դարբնին հաջող, դինամիկ դրութիւններ է ստեղծում իրեան մեկնելու համար: Խոսելով հայ և աղբբեջանցի աշխատա-վորների շահերի ընդհանրութեան մասին, Աթան դիմում է Շիրինին.

«...Յս աշուղ, դու աշուղ, մեր սաղերը իրար նման են, մեր արտերը իրար նման: (Մնգացնում է մեկ իր, մեկ Շիրինի սաղը): Չայնքի մեջ տարբերութիւն կա»:

Նույնպիսի իմաստուն պատասխան է տալիս Շիրինը:

«—Դրուստա, դրուստա, ուստա, աղբբեջանցին ու հայը իրար հետ են աշխարհ եկել, մեկի ձեռքին աղ, մեկի ձեռքին հաց»:

Ժողովուրդների բարեկամութեան գաղափարի բազմաթիւ գեղեցիկ իլլուստրացիաներ կան պիեսում:

Քաղաքացիական կռիւների հողմն այդ լեռնային գյուղն է բե-րում ռուս կարմիր մարտիկներին, որոնց դաշնակների գերու-թիւնից փրկում են և թաքցնում հայ գյուղացիները: Աթայի տունը դառնում է նրանց ապահով պատսպարանը: Այս կենսական ճշ-մարտութիւնը Դարբնին վերարտադրում է սիրո և բարեկամութեան քերմացնող դրութիւններ ստեղծելով:

Հայ ընտանիքում ոչ ոք ռուսերէն չգիտի: Բայց բոլորն էլ գի-տեն ռուս ժողովրդին, լսել են, որ նա ռուսացիայի դրոշն է բարձ-րացրել և իր ազատարար ձեռքը մեկնել փոքր, ճնշված ժողովուրդ-ներին: Ռուս զինվորը ընդունվում է հարազատ որդու փոխարեն:

Աթայի կինը՝ Զառի նանը ռուս զինվորի հոգնատանջ ոտքերն է ուզում լվանալ և հիշում է իր Ալեքսան որդուն:

«—Իմ տղան՝ Ալեքսանը, քեզ նման սաղաթ էր: Նիկողայը տա-բալ կռիւ, գերմանու ֆրոնտումը սպանեց: Հետո էլ շորերը ուղար-կեցին, որ նրա մերը լաց լինի, չիգյարը դինջանա: Համա մոր ջիգյարի մերը չմեռնի, լուսը բացվելիս Ալեքսան եմ կանչում, մութն ընկնելիս Ալեքսան եմ կանչում: Ամեն գարունքի, որ ծիծեռ-

նակը գալիս է, Ալեքսանից եմ խաբար հարցնում: Աստի նստը Ալեքսանի շորերը տալիս է ռուս զինվոր Ալեքսեյին՝ ի նշան ծնողական անսահման սիրո, նրան ընդունելով իր որդու տեղը: Այս սրտառուչ տեսարանում ուժեղ, շեշտված լիրիզմով արտահայտված է մեր ժողովրդի սերը ղեպի ռուս մեծ ժողովուրդը:

Գյուղացիները ղենք են առնում, պալքարի ենում դաշնակներին դեմ: Նրանց կռիվը ղեկավարում են Արամը, ռուս-ճապոնական կռվի հաշմանդամ Ոսկանը, Ալեքսեյը: Ակտիվ մասնակցություն են ցույց տալիս Աթան, Շիրինը, բոլոր գյուղացիները:

Ճիշտ են դժված հասնել թշնամիների կերպարները: Խմբապետ Ղազարի և մանավանդ նրա համհարզ Վերդույի խառնվածքի մեջ հեղինակը խտացրել է դաշնակցականների հատուկ դժերը՝ ոճրածությունը, ավանտյուրիզմը, բարբարոսությունը:

Դաշնակցությունը հայ բուրժուազիայի և կուլակության վիժվածքն է, որ այնքան ավերածություն և արյունահեղություն բերեց մեր երկրին: Եվ դաշնակցության ոճրագործ քաղաքականությունը առկասկած կհասցնեք մեր ժողովրդի ֆիզիկական լիակատար բնաջնջմանը, եթե չլինեք սովետական իշխանություն դադարի արը, որը փրկեց հայ աշխատավորներին և վերածնության ուղիներ հարթեց ժողովրդի համար:

Անդրկովկասի հայ գյուղի աշխատավորները 1920 թվից առաջ շարունակ ենթարկվել են դաշնակցական նողկալի բանդիտների կամայականություններին: Հենվելով կուլակության վրա, դաշնակցականները մի կողմից թալանում էին աշխատավորի վերջին ունեցվածքը, մյուս կողմից ամեն ինչ անում շահագործողների իշխանությունը հաստատ պահելու համար: Անօրինակ տեղորը, բացառապես կողոպուտը, հայրենադավ, հայրենավաճառ քաղաքականությունը դաշնակցության բնորոշ հատկանիշներն են:

Արշավ Դարբինն ժողովրդի թշնամիների այս դժերը աշխատել է մարմնավորել իր բացասական հերոսների կերպարների մեջ: Այս տիպերի խառնվածքի մեջ սանձարձակ դադանության հետ մեկտեղ գրգռվում են և՛ վախկոտությունը, և՛ քուռ ստորաքարշությունը:

Այդ ամենի մարմնավորումն է խմբապետ Ղազարը: Տիպական է նաև դաշնակցական բանդայում գլխության քույր օրիորդ Դրախտիկը: Դաշնակցական ֆրազաբանությամբ տարված, ունայնամիտ քաղքենուհու տիպն է նա, որն իր ստամոքսի կարիքները հոգալու համար չի խորշում թալանից: Դեպի հայ զինվորը տածած սիրտ մա-

սին բարեգտեցում, օրիորդ Դրախտիկը, սակայն, իր կյանքը կապում է բախտախնդիր Վերդայի հետ, դրա մեջ զտնելով իր երջանկությունը:

Հեղինակն այս տիպերի հոգեկան սնանկությունը ցույց տալով, մատնանշում է նրանց դատապարտվածությունը: Սրանց դեմ է ուղղված գլուղացիության գայրույթը: Պիեսում հանդես են գալիս նաև դաշնակցականների այսպես կոչված ազգային բանակի զինվորներ: Զոռով մոբիլիզացված անգիտակից գյուղացիներ են դրանք, որոնք փորձով համոզվում են, որ հանձին ազգային բանակի ղեկավարների, գործ ունեն Կոնադործների հետ: Այդ ներքին դարձը չափավոր և համոզիչ գծերով արտահայտված է դաշնակցական «բանակի» զինվոր Արուսի կերպարում:

Արուսին պահակ են կարգել այն գոմի վրա, ուր բանտարկված են ռուս զինվորներն ու գյուղացիները: Ահա Արուսի մտորումները. (րեիրում ենք առանց ռեմարկների):

«— Զոռով թուր ու թվանք են սովել, թե զինվոր ես: Սոված-ծարավ, տուն ու տեղից դադարգյուն դառած: Ախր գործիս անոնք ինչ է: Ախպեր, ճառով, շարականով հայրենիք չես պահ: Գարուն է, աշխատանքի կրակ ժամանակը: Յարաք, տեսնես մեր տաշտու՝ մը հաց կա՞: Ախ, Շուշան, Շուշան, հրես պոստի վրա կանգնած, բռ մատին եմ մտածում: Նրանի թե շուտ անցնեին էս սև օրերը: Հարկավոր է աղաներին թուփուն տալ: Արամ... մի քանի ասմուշկա թուփուն ունեմ... սատանա՛ն ասում է դուռը փշրիր, դերիներին ադատութուն տուր»:

Արուսի նման փոքրաթիվ մոլորվածներն էլ միացան մայր ժողովրդին, զենքը շուտ սովին դաշնակիների դեմ: Եվ լեռների վրա ծածանվեց ազատության Կարմիր Դրոշմը:

Պիեսը ավարտվում է գեղեցիկ պատկերով, երբ պարտիզանները հազթանակով գլուղ են մտնում, գլուղի աղջիկները մի փունջ մանուշակ են մատուցում ռուս զինվոր Ալեքսեին:

Կարուն էր... Նոր կյանքի մանուշակն էր բացվել:

Արշավիր Դարբնու այդ պիեսն ունի նաև դրամատուրգիական աչքի ընկնող արժանիքներ: Հիմնական իդեան ընդգծվում է սկզբից մինչև վերջ և ընթերցողի առջև բացվում են աշխատավոր գյուղացու ներքնաշխարհի վարագույրները հասարակական կյանքի արմատական բեկման բարդ մոմենտին:

Մարդկանց գիտակցության մեջ ռեռլուցիոն բեկումը դրսևորել, նշանակում է համոզիչ կերպով պատմել նրանց կենսավիճակի մասին, ցույց տալ հասարակական ուժերի հարաբերությունը, ցույց տալ, թե ինչպիսի օրինաչափություններով են հասունանում իրարարածությունները: Դա նշանակում է նախ և առաջ որսալ և գեղարվեստորեն վերարտադրել այդ հասունացումն արագացնող հակասություններն ու հակամարտությունները:

«Նրբ բացվում է մանուշակը» պիեսում հեղինակին հաջողվել է այս ամենը ցույց տալ բավական ցայտուն: Գյուղացիությունը հալածական, ընչազուրկ վիճակումն է: Դաշնակիների տեսլիքը սրում է դրությունը: Աշխատավոր մարդը ներքնապես ձգտում է ազատության, ստեղծագործ աշխատանքի: Շահագործողների պորտաբեռնությունը հակադրվում են սեփական վաստակով ապրելու գյուղացու ազնիվ զգացմունքները: Իր այս գոյավիճակից գյուղացին խաղաղ ճանապարհով ելք չի գտնում: Նրան ճանապարհ է ցույց տալիս ռեռլուցիոն պայքարի փորձով զինված բանվոր դասակարգը՝ իր առաջավոր ջոկատ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ:

Դարբերին, ինչպես վերևում տեսանք, ռեռլուցիոն այս դարթոնքը վերարտադրում է համոզիչ կերպով: Մատնանշվում են նաև աշխատավորության հաղթանակի գլխավոր նախադրյալները՝ նրանց ուժերի համախմբումը, ինտերնացիոնալ համերաշխությունները:

Իր հերոսներին անձնավորելու համար հեղինակը գտել է արտահայտիչ միջոցներ: Աթան, Շիրինը, Արամը, Արուսթը--յենդանի մարդիկ են, բոլորն էլ յուրահատուկ խառնվածքով:

Աթան աշուղ է, բանաստեղծական ներքնաշխարհով: Նրա խոսքերի մեջ հորդում է ժողովրդի իմաստությունը, մտքերը պարզորոշ են ու պայծառ: Նա միաժամանակ տիպիկ գյուղացի է՝ իր բոլոր սովորություններով: Թշնամիների հանդեպ նա համարձակ է և նրա խոսքը՝ ուղղված թշնամուն, անողոր է: Ահա մի փոքրիկ շարիխ խմբապետ Ղազարը ճառ է ասում: Շողոքորթ խոսքերով աշխատում է գյուղացիությանը խաբել: «Չարն ու բարին» տարբերելու կոչ է անում նա: Այդ ժամանակ կանչում է աքաղաղը: Համհարդ Վերդոն սպանում է աքաղաղին, ասելով, թե «օրենք կա, տը առավուր ծողրուղու կանչի, ոչ թե իրիկունը»: Այս պատկերը հեղինակը կառուցել է սարկաստիկ պլանով, ցույց տալու համար դաշնակների վայրագությունը:

Մշուղ Աթան Վերգոյի այս խոսքերին պատասխանում է. «եսեղճ աքլորը կուշտ չի ուտում, սովից աչքերը փառակալել են, իրիկունը առաւմտից չի ջոկում: Դու խոսքդ ասիր, պարոն Ղազար»:

Ահա և մի պատկեր մյուս բեռնից: Զինւոր Ալեքսեյը մի թուղթ ցույց տալով, հաշմանդամ Ոսկանի միջոցով, մի կերպ հասկացնել է տալիս, թե դա ղեկրեւտ է հողը գյուղացիներին տալու մասին, թե այն գրել է լենինը: Աթան դա ընդունում է հետեւյալ խոսքերով. «Լուս դառնա դրա գրողի անցավորաց հոգին: Էդ հո ավետա-յանից էլ սուրբ գիր է: Էստեղ են ասել».

Ով որ վարի
Ցորեն, դարի,—
Հացը անուշ,
Գործը բարի»:

Կարված դործողություններ, հակիրճ, բայց արտահայտիչ դիւա-լոգներ,— ահա պիեսի դրամատիկական արժանիքները:

Հեղինակի լեզուն պարզ է, բայց ազատ չէ երբեմն անհանդուր-ժելի բարբառից և չպատճառաբանված փոխառություններից:

1938 թվին բեմադրվեց Արարատ Բարսեղյանի «Կամո» պիեսը: Սա Ադրբեջանի սովետահայ գրականության մեջ երկրորդ դրաման էր մեր ժողովրդի ունուցիոն անցյալից առնված թեմայով:

Դրամայում վերակենդանանում են Անդրկովկասի բուշակիյան կազմակերպությունների ընդհատակյա աշխատանքի մի քանի դրո-վագներ: Հեղինակը, հիմնականում նկարագրելով լեգենդար հուշակ ունեցող ունուցիոսներ Սիմոն Տեր-Պետրոսյանի (Կամո) գեղեցիկ կյանքի առանձին էպիզոդներ, դրանք ցույց է տալիս պարտիական կազմակերպությունների հերոսական աշխատանքի ընդհանուր ֆոնի վրա: Կամոն չի ներկայացվում որպես կոլեկտիվից կտրված հերոս. նրա հերոսութան աղբյուրը մեր անպարտելի պարտիան է, որը դաստիարակում է իր անդամներին, որպես ունուցիայի խի-զախ և ահեկուն մարտիկներ:

Կամոն՝ մեր պարտիայի ունուցիոն փորձով զինված, ան-սպառ ավյունով ալը ունուցիոսները հնարագետ է, սրամիտ, եր-բեմն անհավատալի թվացող գործողությունների մեջ: Այդ պող-պատածույլ անձնավորութան մեջ կենտրոնացել, խտացել են մեր պարտիայի ոգին ու անընկճելի կամքը:

Հարազատ մնալով պատմական փաստերին, հեղինակը վերաբերմամբ է Կամոյի և իր ընկերների ուղղություն գործերը:

Որքան խստաբարո է Կամոն իր ուղղություն տարերքում, այնքան մեղմ է, գթասիրտ, սիրող և անձնվեր ընկեր:

«Կամո»-ում կան բավական հաջողված ալլ կերպարներ: Բանվորներ Սանդրոն, Բայրամը, Նիկոլայը բոլշևիկյան կոմիտեի մարդիկ են, որոնք ունակցիայի, սանձարձակ տեղերի, մենշևիկների սլոխովակցիոն գործողությունների միջավայրում հերոսաբար կատարում են իրենց մեծ գործը՝ բանվորական մասսաներին բոլշևիկյան դրոշի շուրջ համախմբելու, բոլշևիկների պարտիայի շարքերը ամրապնդելու և առաջիկա մենակա մարտերին նախապատրաստելու ուղղությամբ:

Բարսեղյանին հաջողվեց լուծել մի կարևոր խնդիր, Պիեռում շատ զգուշն է տրված բոլշևիկների ընդհատակյա աշխատանքի ղեկավար կենտրոնի գործունեությունը: Հեղինակը չի կարողացել լենդրեովկասի կազմակերպության ուղղություն տրամադրվածները որոշելու գործում կենտրոնական դեր խաղացող այդ հարցի լուծումը գտնել:

Պիեռը, դրամատուրգիական տեսակետից ունենալով աստվելություններ, տառապում է զգալի թերություններով՝ տեքստի տեսակետից: Խոսքը աղքատ է, ընդհատակյա պայքարի խորը ընդհանրացումներ չեն կատարվում: Հեղինակը ցույց տալով այդ պայքարի էպիզոդները, չի վերլուծում նրանց էությունը: Այս է պատճառը, որ իր բնույթով խիստ բոմանտիկ թեման, զրկվում է հմայքից և իջեցնում պիեսի դեղարվեստական արժեքը:

Այնուամենայնիվ, Բաքվի սովետահայ դրականության մեջ «Կամո» պիեսը մնում է որպես քիչ թե շատ հաջողված փորձ ուղղություն անցյալի, բոլշևիկ հերոսի կերպարը կերտելու բնագավառում:

Պետո Թաթուլ Հուրյանը իր տաղանդավոր գրիչը փորձեց նաև դրամատուրգիայի ասպարեզում: 1940 թվին նա ավարտեց «Ֆրիկ» պատմական դրամատիկական պոեմը: Այս պործը իր ուրույն տեղն ունի մեր ամբողջ սովետահայ դրականության մեջ, քանի որ դա առաջիններից մեկն է, որ վերաբնակվում է մեր միջնադարյան դրականության երկու խոշորագույն դեմքերի՝ քնարերգուներ Ֆրիկի ու Կոստանդին Նրզնկացու կյանքի ու գործունեության անանձին դրվագներ:

Հուրյանի այս պիեսը նախ և առաջ մենք դիտում ենք գրպեսանցչալի մեր գրականության մշակների գեղեցիկ և ուսանելի կյանքը գեղարվեստորեն վերարտադրելու խիզախում: Դժբախտաբար հայ գրականության մեջ առայժմ քիչ են այդ տիպի ստեղծագործությունները: Եթե վերցնենք ռուսական գրականությունը, սույս հետհոկտեմբերյան շրջանում այս ուղղությամբ հսկայական դերժ է կատարված: Ռուս կլասիկ գրականության խոշորագույն ներկայացուցիչների կյանքը վերարտադրվածի մի ամբողջ շարք գեղարվեստական ծավալուն երկերի մեջ: Ինքն ըստ ինքյան հասկանալի է այդ երկերի դաստիարակչական հսկայական նշանակությունը: Ահա թե ինչու Հուրյանի դրամայի առաջին արժանիքը մենք համարում ենք այն, որ ընթերցողի առաջ վերակենդանանում է անմահ Ֆրիկը՝ իր մարդկային առաքինություններով, բանաստեղծի, ժողովրդի վշտով և ուրախությամբ ապրող մարդու հուզելություն ու նվիրական հույսերով:

Գործողությունները ծավալվում են միջնադարյան Հայաստանում, մոնղոլական արշավանքների ժամանակ:

Աղետալի իրադարձություններ է ապրում երկիրը: Մոնղոլները հրի ճաքակ են դարձնում շեն ավանները, սրի են քաջում մարդկանց՝ սուսնց հասակի և սևուի խտրության, ավարում են, անասնուի հարկեր դնում, գերավարում են քրտինքի մարդկանց, հարկի փութարեն տանում են կանանց և երեխաներին:

Համաճողովրդական այս աղետը յուրահատուկ կերպով բեկվում է սյրեսի երկու հերոսների՝ Ֆրիկի և Նրզնկացու անձնական տրագեդիայի մեջ: Այստեղ պետք է նկատենք, որ Հուրյանը, ճիշտ դիրքերից է մոտենում Ֆրիկի և Նրզնկացու թողած գրական ժառանգության մեկնաբանմանը:

Ֆրիկը, ինչպես հայտնի է, խավար միջնադարում տեսավ հասարակության մեջ եղած դասակարգային խոր շերտալուծումը և աշխատավոր մարդու ընչազուրկ վիճակի պատճառները սրտնեխա, ըմբոստացավ աստծու ու ֆալաքի դեմ: Սոցիալական անարդարության դեմ բողոքեցին Ֆրիկի հոգին և նրա բանաստեղծական պայծառ տաղանդը:

Նրզնկացին մեկն էր միջնադարյան այն քնարերգուներից, որոնք փշրեցին մեր գրականության մեջ միատիպիզմի շղթաները: Կոստանդինի հուզառատ և ազատաբաղձ խոսքը ճախրեց գեղեցիկ

Դնո՞ւնք ինչ մեք, ազատ սիրո, մարդկային նվիրական զգացմունքների աշխարհում:

Հուրյանի պիեսում Ֆրիկի և Երզնկացու անձնական տրագիկան ժողովրդի ողբերգական վիճակի արդյունքն է: Բանաստեղծների ողբերգությունը ժողովրդական մասսաների ապրած ողբերգությունն է, հետևապես նրանց ապրումներն ու հայացքներն էլ կառուցվում են նույն հիմքի վրա:

Երզնկացին աբեղա է: Բանաստեղծի հոգևորական լինելու պատմական փաստը Հուրյանը հմտորեն օգտագործել է նրա ըստեղծագործությունները մեկնելու համար: Վանքի ճնշող միջավայրը, հոգևորականների կաշկանդված կյանքը անտանելի է ազատության տենչող և կյանքի սիրահար Երզնկացու համար: Աշխարհիկ կյանքը հազարավոր աներևույթ թելերով դեպի իրեն է ձգում բանաստեղծին և վանդակում փակված նրա հոգին, թփրտալով, ելք է որոնում: Այս գոյավիճակի արդյունք են Երզնկացու սրտաբուխ երգերը բնության ու սիրո մասին:

Երկու բանաստեղծները, կապված լինելով ժողովրդի հետ, անձամբ ապրելով նրա տառապանքները՝ մի կողմից օտարների լծի տակ, մյուս կողմից՝ խավարի ու տգիտության ճնշող միջավայրում, դառնում են աշխատավորությանը ճշմարտության հաղորդող մունետիկներ, և նրանց իմաստուն ու սրտաբուխ երգը վրեժխնդրության ու պայքարի հուրն է բորբոքում մարդկանց սրտերում: Այս պատվանդանի վրա էլ բարձրանում է աղնիվ Ֆրիկի և նրբազգաց Երզնկացու հայրենասիրությունը: Այսպես է ներկայացնում իր հերոսներին Հուրյանը:

Մոնղոլները հարկի փոխարեն Ֆրիկի մինուճար զավակն են տանում: Բայց նա իր անձնական վշտի մեջ տեսնում է իր մայր ժողովրդի մեծ տառապանքը:

Խավար է պատել մեր ճամփին դժնի,
Մեր կյանքն է խավար գիշերի նման,
Հողիս անխնդում գերեզման կիջնի
Վշտի ծովի մեջ անհուն, անսահման...
Տարաք և վերջին պատառը հացի,
Մանկանն իմ ինչու, ինչու կիւլեր...

Այս վիճակը զարգանում է տրամաբանական հետևողականությամբ Ֆրիկի հետևյալ մենախոսության մեջ.

Բայց մենք մինչև երբ համբերենք, աստված.

Շնե տվել ես մեզ ճարտար լեզու,
Ինչո՞ւ ես փականք դնում մեր լեզվին,
Շնե տվել ես մեզ միտք ու հուզում,
Ինչո՞ւ ես թողնում մարդիկ արտասվեն,
Շնե տվել ես ծիծաղ աշխարհին,
Ինչո՞ւ ես լացը զորավոր արել,
Շնե դրախտ ես պարգևել կյանքին,
Ինչո՞ւ ես դաժան դժոխքը վառել.
Թե հիմք դրեցիր դու արդարության,
Անարդարն ինչո՞ւ դարձրիր իշխան,
Շնե վառեցիր արևն աշխարհում,
Էլ ինչո՞ւ խավար երկնեցի կյանքում,
Ինչո՞ւ երկնեցի, ինչո՞ւ երկնեցի...

Այս մենախոսությունը, հիմնված լինելով Ֆրիկի գրական ժա-
ռանգության բարեխիղճ ուսումնասիրության վրա, ոչ միայն ար-
տացողում է բանաստեղծի տրամադրությունները, այլև դրամատի-
կական երկի կերպարն է կերտում: Ֆրիկի միտքը վերոհիշյալ հա-
կամարտությունների պատճառաբանությունն է որոնում և ըմբոս-
տանում աստծու դեմ:

Բայց խոհական աշխարհից բացի, կա և իրական աշխարհը,
որտեղ թաքնված են այդ հակասությունների իսկական պատճառ-
ները: Ֆրիկը գիտե՝ իր երգերի տխրության պատճառն այն է, որ
հայրենի հողը հեծծում է օտար կրնկի տակ: Դրա համար էլ ջրի
օխժաղը լացի է փոխվել, երազանքները մնացել են թերի: Թեպետ
և թշնամու արյունոտ սուրն է կախվել ժողովրդի գլխին, Ֆրիկը
երբեք չի կորցնում հավատը: Այդ համոզմանն են բերում նրան
ծանր պայմաններում պայքարի համար իրենց ուժերը համա-
խմբող աշխատավոր մասսաները:

Մտածելով երկրի ծանր կացության մասին, Ֆրիկը հետևյալ
խոսքերով է դիմում իր և ջաղացպանի որդուն, Կոր իշխանի կեր-
պարանք առած, գլխավորում է ժողովրդի պայքարը.

Բայց ես հալածու չեմ կորցրել, իշխան,
Գիտեմ իմ երկրի որդին պայքարող,
Գիտեմ ես նրա բազուկն հաղթական,
Գիտեմ ես նրա հավատը կարող,—

նա ճանաչում եմ իմ ժողովրդին—

Ձի մնա երկար ստրուկ վիճակում.

Դու իշխան, նրա հարազատ որդին,

Թող քեզ վիճակվի փրկության մարտում

Հաղթության դափնին.

Մենք էլ ենք եկել քո դրոշի տակ,

Մենք հայոց երկրի վշտի երգիչներ:

Վիկ իշխանը հայ փառասեր ու դավաճան Ֆեոդալի տիպարն է, որ իր երջանկությունը կառուցում է ժողովրդի դժբախտության վրա: Յվիկի դրզմամբ են հարկահանները տանում Ֆրիկի որդուն հարկի դիմաց: Յվիկը թշնամի է այն մամենին, ինչ առաջացեմ է, ժողովրդական: Նա վաճառում է իր հայրենիքի պատիվը, նախաձեռնում է նրա առաջավոր մարդկանց հալածանքը:

Խեղագարվում է Ֆրիկի կինը՝ որդեկորույս Սովինարը: Ֆրիկի որդին, հանդամանքների բերումով, Յվիկից գնում է ջաղացպանի մաս, որտեղ և մեծանում, հասակ է առնում նա: Վճռական մոմենտին նա է կանգնում վրեժխնդիր ժողովրդի դուռը, թշնամու դեմ առաջնորդելով զորափնդերը: Նվ այն պահին, երբ արդեն հաղթության ուրախությունը պետք է սփռվեր ամենուրեք, եռւյն Յվիկի դաշտունը վերջ է դնում Ֆրիկի հերոսական որդու կյանքին: Որդու հոգեհարքի վերջին վայրկյաններին է հաշը իմանում, որ իր որդին ապրում է: Մոտակա հանդիպման հույսը սրտում, Ֆրիկը, սակայն, քիչ անց նրան զոհված է տեսնում, հեռոսի մահով ընկած պատերազմի դաշտում, իր տառապած ժողովրդի արդար կոխվը դեկավարելիս:

Այս գերմարդկային տառապանքների մեջ լավում են Ֆրիկի գանակոծիչ ու մերկացնող երգերը: Բանաստեղծը ահեղ գանգառի և ընդվզումի մարմնացում է:

Կոստանդին Երզնկացու կերպարը Թաթուլ Հուրյանը կերտել է նրբագույն լիրիզմով: Իրենք՝ կյանքի գեղեցկություններն ու ւթանչելիքներն են խոսում Կոստանդինի շրթերով: Վանքի գորշ մթնոլորտին Կոստանդինը հակադրում է ազատ բնության սրտատուլ գովքը: Դիմելով իր վանական ընկերներին, նա ասում է.

Ինձ հարազատ են դարուն, արև, կյանք,

նա նրանց էլ եմ հաճախ աղոթում,

Քերթության ձայնն է հնչում իմ սրտից

Նվ դուր, այստեղ ծնկաչոք ընկած

Աղոթք եք անում, աչքերով հանգած,
Արդյոք ձեր սիրտը չի՞ տենչում գարուն,
Զի՞ տենչում լավը, չի՞ տենչում բարուն:

Պարնան այդ տենչը Հուրյանն ամփոփել է ժողովրդական տո-
նախմբության պահին Երզնկացու մարտունեքի մեջ: Մքոշված սե-
վերի մեջ, նրա մարդկային սիրտը թռչում է դեպի կյանքն ու բնու-
թյունը: Մահը տարածվում է չորս բոլորը: Բայց ժողովուրդը տո-
նում է դարնան տոներ և նրա բանաստեղծը բնության զարթոնքն է
երգում: Քերթողի սիրտը գարնան պես թեթև է ճախրում, ըմպում
արդևս բացված ծաղկանց բույրը, այդ թևավոր խոյանքից չի ցան-
կանում այլևս ցած իջնել, սողալու համար: Սրտաբուխ է, հուզիչ,
հավերժ տպրելու և ստեղծագործելու տենչանքով լի Կոստանդինի
երգը:

Ձրերը ավեսափ կհուզվեն նորեն,
Զմռան կապանքը փրթած կաղմկեն,
Ղովերը կգան բարձրիկ լեռներեն
եվ կանաչներին համբույր կբերեն.
Ծառերն են զուգվել, պճնվել ուրախ,
Կանաչ շարքերով կնաղեն լռիկ,
Սոխակը վարդին կհույսե նոր տաղ,
Նոր բուն կհյուսե կաքավ ու լորին:

Քաթուղ Հուրյանն ընդգծել է Երզնկացու կենսավիճակի ու ձրգ-
տումների խիստ հակասականությունը, երևան հանել միջնադար-
յան ազատաբաղձ մտավորականության ռոմանտիկան: Սա բնու-
թյան և ուսուցիչ կյանքի կոհիլն էր միստիկայի դեմ, աշխարհիկ զգաց-
մունքների հաղթանակը կրոնական կաշկանդումների դեմ: Մյուս
կողմից այդ տողերը ազդարարում են կյանքի հավերժությունը,
կոչ են անում ազատ լինել բնության պես, գարնան պես միշտ վեր
խոյանալ, սողալու համար երբեք չիջնելով:

Նույնպիսի ջերմությամբ է տրված աբեղա Երզնկացու և ջա-
ղաղպանի աղջիկ Ասմարայի սիրո պատմությունը: Կոստանդինը
համարձակ ելնում է վանական նորմաների դեմ, սիրում է կյանքը
և կյանքից ավելի սիրուն Ասմարային:

Այս խոսքերով է Կոստանդինն իր սերը բացատրում Ասմարա-
յին:

Այս սև քողերի, սքեմի տակին,
Այս մութ հանդերձի խավարում անգամ
Մի սիրտ կա պահած քեզ համար, անգին,
Մի սիրտ, որ ջրի կարկաշը ունի,
Մի սիրտ, որ թռչնոց զիւ կանշը ունի,
Որ գարնան նման կլիթթի ուրախ,
Որ արծիւների թև կառնի անվախ...

Թ. Հուրյանը, ուշադիր վերլուծելով մեր միջնադարյան էթնո-
խառք քնարերգուների ժառանգությունը, նրանց կերպարները կեր-
տեյիս, հաջողությամբ ընդգծում է նրանց տարբերությունը:

Ֆրիկն ու Երզնկացին ճշմարտություն են որոնում և երկուսն
էլ հանգում են դրան տարբեր ճանապարհներով: Երկուսն էլ ազա-
տական կյանք են ձգտում, բայց նրանց մոտ այդ ձգտումը տար-
բեր երանգներ ունի: Ֆրիկը հասարակական կյանքն է աշխա-
տում վերլուծել, Երզնկացին երջանկությունը որոնում է բնութիւն
օրինաչափությունների մեջ, ձգտում է միայն անձնական ազատու-
թյան:

Յերեկն աղոթիր, գիշերն աղոթիր,
Ընկիր սալերին — կարոտ արեին,
Սեփական ձեռքով հույզերդ մորթիր,
Կալանք դիր հոգու թռչքին, թևին.
Գարունն է դրսում սավառնում, բուրում,
Իսկ ես մեռնում եմ այս խուլ խուցերում:

Այս հուսահատության ժամին Ֆրիկը Կոստանդինին հորդո-
րում է ամուր փահպանել հոգու կապերը, հիշեցնում է, որ հայրե-
նիքը բանտ է իրենց համար, ժողովրդի բազուկներին շղթա է
գարկված:

Կտրել եմ ոտքով աշխարհը հայոց,
Տարոնի դաշտով Սյունիքը հասել —
Ամենուր նույնն է՝ շղթաներ ու կոծ
Ամենուր ես նույն բողոքն եմ լսել...
Լսե, Կոստանդին, լսե, Կոստանդին,
Տնքում է ցավից երկիրը բոլոր —
Սուր է հարկավոր մեր ժողովրդին,
Խաչի փոխարեն սուր է հարկավոր:

Մրով մարտնշելու այս գիտակցությունն էլ խոհի ու գրչի մարդկանց բերում է զինված ժողովրդի բանակատեղին, ուր և նրանք անձամբ դեպի մարտ են ոգևորում ռազմիկներին՝ մեկը սր-ցիալախան շարիքը մատնանշելով, մեկն էլ ազատական կյանքի գովքն անելով։ Այս հանգամանքը փայլուն կերպով արտահայտված է իշխանի հետևյալ խոսքերում ուղղված ջաղացականին.

Հայր, ահա ես քեզ

Աջ թևն եմ հանձնում մեր զորագնդի,

Գտիր Ֆրիկին տւ Երզնկացուն,

Մեր երգն էլ մեզ հետ թող քայլի մարտի՝

Մեր սրտի նման վրեժով լեցուն։

Աշխատավոր ժողովրդի հայրենասիրությունը, ազատասիրությունը երևան են դալիս ջաղացականի և ծերունի Անակի գործողությունների մեջ։ Յվիկ իշխանին հակառակ, որ դավաճանութլան ճահիճն է խրվել և վաճառում է հայրենիքի պատիւն ու ժողովրդի շահերը, աշխատանքի մարդիկն են կազմակերպում, համախմբում ժողովրդի լքյալ ուժերը։

Եկեղեցին, որ այնքան ազդեցիկ ուժ էր միջնադարյան հայ իրականութլան մեջ, իրեն հեռու է պահում այդ կռիւից, վանականներն աղետի պահին փականք են զարկում վանքի դռներին։ Այս պայմաններում ժողովրդի հույսը միայն ժողովուրդն է։ Եվ նա իր միջից վեր է հանում ջաղացականների և անակների նման մարդկանց, որոնք կազմակերպութլան ու հաղթանակի ոգին են դառնում։

Ահա թե ինչ է ասում ջաղացականը.

Առաջնորդ եղիր մեզ, իշխան, նորից,

Բավ է ստրուկի վիճակում ապրենք,

Մենք մարդ ենք, իշխան, ծնվել ենք մորից,

Մեր նախնիների ժառանգորդն ենք մենք։

Թող նրանց ոգին մեր շուրթով խոսի,

Եվ թող զորավի լինի տերը մեզ

Մեզ ոգևորիչ խոսքեր քարոզի,

Իշխան, չենք ուզում էլ ապրել այսպես։

Հայ ժողովրդի նիստ ու կացի դեղեցիկ պատկերներ կան պիե-սոմ։ Հեղինակը ցույց է տալիս աշխատավոր մարդու ոչ միայն խիզախութլունը, անձնվիրութլունը, այլև լավատեսութլունը։ Ան-

պատմելի տառապանքների մեջ էլ ժողովուրդը չի կորցնում իրեն և միշտ գրկաբաց ողջունում է կյանքը:

Հուրյանին չվիճակվեց բեմի վրա տեսնել այս պիեսը, մշակել, հղկել, ավելի կատարելագործել: Գուցե այս է պատճառը, որ Ֆրիկի, Երզնկացու տեքստերում հաճախ կրկնությունների ենք հանդիպում: Երբեմն հասարակ ժողովրդի ներկայացուցիչներն այնպես են դատում, ինչպես Ֆրիկն ու Երզնկացին: Ծերունի Անակի խոսքն ուղղված իշխանին շատ ու շատ հիշեցնում է Ֆրիկի ոճը (էջ 55): Այնուհետև թույլ է պատճառաբանված Յվրկի դավաճանությունը: Կերպարն ինչպես հարկն է չի բացահայտվում, որովհետև շատ ժլատ են մանրամասնությունները:

Պիեսի լեզուն կիրթ է, պատկերավոր: Մանավանդ Ֆրիկի և Երզնկացու դիալոգներում Հուրյանին հաջողվել է ժամանակակից լեզվի միջոցներով պահպանել միջնադարյան քնարերգունեթի խոսքն ասելու ոճական առանձնահատկությունները: Դա մանավանդ հաջողվել է Երզնկացու ոճի լիրիզմը մատնանշելիս: Սա նույնպես մեծապես նպաստում է, որպեսզի կերպարները կենդանի և համոզիչ լինեն:

Արշավիր Դարբնու, Բարսեղյանի և Հուրյանի պիեսները հասնողիսացան Ադրբեջանի սովետահայ դրամատուրգիայի առաջին ըզգալի նվաճումները:

Սեր գրողները մեծ աշխատանք կատարեցին նաև ադրբեջանական դրամատուրգիայի յալագույն նմուշները հայերեն թարգմանելու ուղղությամբ: Բարգմանվեցին Զաֆար Զաբարլու «Անիլ», «1905 թվին», «Յաշար», «Այդին», «Հրո հարսը», Միրզա Ֆաթալի Ախունդովի «Հաջի Կարա», «Ավագակին հաղթող արջը», Միրզա Իբրահիմովի «Հայաթ», Սամեդ Վուրդունի «Վագիֆ» և այլ պիեսները:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԱԶՄԻ ԲՈՎՈՒՄ

Գերմանա- ֆաշիստական իմպերիալիզմի դեմ Սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմում փորձության ենթարկվեցին մեր բոլոր նյութական, ռազմական և հոգևոր կարողությունները:

Սոցիալիզմի երկիրն այդ ահավոր պատերազմից դուրս եկավ աշխարհահռչակ հաղթանակով՝ և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես, և՛ բարոյապես: Այս պատերազմում հաղթանակ տարան

անտեսութեան սոցիալիստական սիստեմը, սովետական հասարակական կարգերը, մեր երկրի հերոսական զինված ուժերը և Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի վեհ գաղափարները:

Այդ մեծ հաղթանակի մեջ ցոլանում են նաև սովետական գրականութեան նվաճումները, մի գրականութեան, որը համակրված լինելով կոմունիզմի բարձր գաղափարներով, իր բոլոր ազգային փոփոխութիւններով լծվեց մեր ժողովրդի ազատարար պայքարին: Պատերազմի փոթորիկների մեջ սովետական գրականութիւնը մեր մարդկանց հետ էր ամենուրեք՝ կրակի առաջին գծի վրա, անանցանելի անտառների և տափաստաններում՝ պարտիզանական ջոկատների հետ, հերոսական լենինգրադի, Ստալինգրադի, Սևաստոպոլի պաշտպանութեան դիրքերում:

Երբեք չեն մոռացվի Նիկոլայ Տիխոնովի երկերը, որոնք զբոված են արյունով, գերմանական հորդանքների կողմից պաշարված Լենինգրադում:

Այդ օրերին Վասիլի Գրոսսմանը Ստալինգրադի փլատակներում, թշնամու կրակի տակ, հյուսեց իր գործերը, Բորիս Գորբատովը, Կոնստանտին Սիմոնովը, Ալեքսեյ Սուրկովը և ուրիշ շատ-շատերը պատերազմի քառուղիներն վրա երգեցին սովետական մարդկանց շտեպնված հերոսութիւնը:

Ահեղ իրադարձութիւնների բովում ստեղծվեցին Ա. Ֆադեևի «Երիտասարդ գլխադրի», Մ. Շոլոխովի «Նրանք կռվում էին Հայրենիքի համար», Լ. Լեոնովի «Արշալանք», Գրոսսմանի «Ժողովուրդն անմահ է», Կատաևի «Գնդի որդին», Կավերինի «Երկու կապիտան», Ալիգերի «Ջոյա», Օսեչկինի «Ճակատային ողջույնով», Վասիլևսկայայի «Ծիածան» և ուրիշ շատ երկեր:

Սովետական բոլոր ժողովուրդները ձեռք-ձեռքի կռվում էին լինդհանուր թշնամու դեմ: Բոլոր ազգային ռեսպուբլիկաներից ժողովրդի լավագույն զավակները մարտնչում էին մեր մեծ Հայրենիքի անկախութիւնն ու պատիւը, ժողովրդի ազատութիւնը պաշտպանելու համար: Դիրքերի վրա էր ամբողջ բազմալեզու սովետական գրականութիւնը: Ազրբեջանցի, հայ, վրացի մարտիկների հետ ուղք- ուղքի կրակի միջով անցավ նաև մեր ժողովուրդների գրականութիւնը:

Սովետական գրողներից շատ շատերը զենք առան՝ ոչ միայն գրչով, այլև զենքի լեզվով թշնամու հետ խոսելու:

Յերբեջանի սովետահայ գրողներից պատերազմի աղետալոր-
ճամփաները բռնեցին Թաթուլ Հուրյանը, Արշավիր Դարբենին, Եփ-
րեմ Կոռեսցը, Աթանես Սենալը, Արտո Հովենցը, Արտաշես Բորեն-
ցը, Համո Սահյանը, Գևորգ Պետրոսյանը և ուրիշները:

Պատերազմն իր անջնջելի կնիքը դրեց մեր գրականության
վրա: Այլ կերպ էլ չէր կարող լինել: Ժողովրդի կյանքում այդ ցրն-
ցող իրադարձությունը դեռ երկար կվերարտագրվի մեր գրականու-
թյան մեջ: Այդ թեման դեռ պատում է ավելի կատարյալ, ավելի
լրիվ գեղարվեստական ընդհանրացումներ:

Հասունացած պոետ — քաղաքացի Թաթուլ Հուրյանը կառ հա-
մոզմունքներով առաջիններից մեկը գինվորի շինել հագավ: Նա
կովեց և՛ զենքով, և՛ իր տաղանդավոր գրչով: Հուրյանն իբ խանդա-
վառ պոետական ավյունը առանց մնացորդի նվիրաբերեց Հայրե-
նիքի պաշտպանության գործին և զոհվեց մարտական դիրքերում,
Սևաստոպոլի լեգենդար պաշտպանության օրերին: Նա քանա-
ստեղծ էր բառիս խորագույն իմաստով: Մարտերի մեջ էլ նա գրի-
չը վայր չդրեց: Իր հերոսական մահից մի քանի օր առաջ, մենք
նրանից ստացանք սևաստոպոլյան շարքի բանաստեղծությունները:

Այդ առթիվ մեզ ուղարկած նամակում Հուրյանը հետևյալն էր
գրում. «Ուղարկում եմ այս երկու բանաստեղծությունները (խոսքը
վերաբերում է «Վերադարձ» և «Մեկինգեյան լեռներ» բանաստեղ-
ծություններին. Հ. Ա.): Սևաստոպոլի համար մղվող մարտերի ա-
հեղ և յիառավոր օրերին են նվիրված այս բանաստեղծությունները:

...Մեզ մոտ, Սևաստոպոլի պարիսպների տակ դաժան մար-
տեր են գնում. ոչ գրել կարելի է, ոչ պատկերացնել. տեսնել է
պետք միայն և ապրել... Ֆաշիստական դիակների լեռներ են
գոչանում մեր դիրքերի առջև, բայց դիակները շենքելով, նորից են
գալիս Ֆաշիստները և հնձած ընկնում: Եթե տեսնես, թե ինչ հը-
րաշքներ են գործում մեր ծովայինները, մեր մարտիկները... Մա-
հըն ինքն է դողում նրանց առջև: Սևաստոպոլի ամեն մի թիղ հո-
ղը, ամեն մի քարը խոսում է արնոտ լեզվով և վրեժի, սրբազան
վրեժի է կոչում մեզ:

...Հիշիր, որ այս բանաստեղծությունները, ինչպես և մյուսները,
որ ուղարկել եմ և կուղարկեմ հետագայում, գրվում են մեծ ջան-
քով, մահվան թևերի տակ, ամենադաժան բախումներում...»:

Հայրենական պատերազմի ժամանակից Հուրյանը ժառան-
գություն թողեց սևաստոպոլյան շարքը, որը բաղկացած է հետևյալ

«յործերից՝ «Երկու մանուկ», «Վերադարձ», «Սևաստոպոլ», «Մեկեն-
զեւան լեռներ», «Ծխում են նորից»:

«Երկու մանուկ» բանաստեղծության մեջ հակադրված են եր-
կու սիստեմ, երկու աշխարհ, կյանքն ու մահը:

Մաճվան, մտանգով լի մարտերի պահին, գարնանային երկնքի
տակ երկու մանուկ խաղում են Պաղմի ծխով պարուրված ու պա-
շարված քաղաքի մի պուրակում: Նրանց զեղեցիկ աչքերի մեջ բա-
նաստեղծը ցուցած է տեսնում մեր հայրենի երկրի լագուրը, նը-
րանց արդար հրճվանքի մեջ՝ երջանիկ կյանքը: Ֆաշիստական
սավառնակի մահաբեր ուժերը վերջ են դնում այդ «արդար էակ-
ներին», որոնք այնքան սքանչելի ներդաշնակված գարնանային
քնության հետ, անհոգ խաղում էին: Այս ոճիւրը նկարագրելով,
բանաստեղծը վրեժխնդրության անզուսպ ցասումով բացականչում
է.

Ով դուք մայրեր սիրասուն, և դուք, հայրեր աշխարհի,
եկեք թաղման այս ծեսին, թող ձեր սիրտը բարբառի,
Դուք արցունքի փոխարեն վրեժի խոսք կարդացեք,
Այրող վրեժ ձեր սրտում, դեպի ճակատ խոյացեք,—
Հանուն մանկանց ձեր սիրուն, հանուն հացի ձեր արդար,
Եվ ուր հայրեր աշխարհի, բոլոր մայրեր վշտախառ:

Սև ծովի նավաստիների հպարտ և անընկճելի մայրաքաղա-
քին է նվիրված «Սևաստոպոլ» բանաստեղծությունը: Սևաստոպո-
լը պատմության ընթացքում շատ մարտեր է տեսել: Սա ռուսական
զենքի անպարտելիության ու փառքի քաղաքն է: Ահա նա՝ հեքիա-
թական հսկայի պես նորից հառնել է թշնամական հորդանների դեմ:
Թշնամիները գալիս են ու գալիս «վիրավոր հրեշի ցնորքով խելա-
գար»: Նրանք ուզում են այդ միշտ անառիկ ամրոցի պատվին հետ
խաղալ, ստրկացնել և տնել դետնահար: Սովետական մարտիկնե-
րի հետ թշնամու դեմ են ելնում նաև այս քաղաքի ռազմական
տրադիցիաները, ուր Նախիմովն է մի ժամանակ իր հերոսական
զոհերը գրոհի տարել և ալժմ էլ «ծովակալի աչքով հպարտ ու
հրավառ» նայում է հեռուների անառ ամրոցներին: Որոնք անընկը-
ճելի են եղել և անընկճելի կմնան: Նոր էպոսայի նոր մարդիկ
բազմապատկված խիզախությամբ և անձնվիրությամբ փայլուն
էջեր են գրում այս քաղաքի սխրանքավառ պատմության մեջ: Մեր
անպարտելիությունը և հեղինակի անխախտ հավատն է խոսում
բանաստեղծի շրթերով:

Սև ծովի եզերքին նազող գեղեցկուհի,
Սև ծովայինների մայրաքաղաք հպարտ,
Ռուսական զենքի բաստիոն անպարտ ու հին,—
Միշտ անպարտ ես եղել ու կմնաս անպարտ:

Սովետական հայրենասիրության աննման գովերգ է «Մեկենդեկյան լեռներ» բանաստեղծությունը: Եթե «Սևաստոպոլ»-ում պոետը խոսում է քաղաքի վեհ տրադիցիաների մասին, անցյալի փառքն է մատնանշում, ապա այս բանաստեղծության մեջ կենդանություն են առնում այն ուժերը, որոնք նոր փառքի մի նոր, ամենի փայլուն դուրս բացին Սևաստոպոլի պատմության մեջ: Քաղաքը պաշտպանում էր բազմազգ և բազմալեզու սովետական ժողովուրդը: Պատմությունը չի տեսել տարբեր ազգությունների այդպես ցեմենտավորված բարեկամություն, որ խորտակիչ ու հաղթանակող ուժ է դառնում պատերազմի դաշտում: Այստեղ, ռուս ժողովրդի խիզախ զավակների հետ, կռվում են Բաքիի հանքավորը, Սևանի խանդավառ ձկնորսը, այստեղ ընդհանուր թրշնամու դեմ կռիվ է մղում Վրաստանի կիտրոնի դաշտերից եկած վրացին՝ Տարիելի սրտով: Այստեղ է և հայ բանաստեղծը, որ անձնական հերոսությամբ և ոգեշունչ խոսքերով գրոհի է գնում Հայրենիքի փառքի և աղատության համար: Սովետական ժողովրդի ցասումն է հորդում թշնամու դեմ: Մեկինդեկյան հինավուրց լեռները, որ շատ մարտեր են տեսել, այժմ վկա են այս ռազմական մեծ դաշինքին և կոլեկտիվ հերոսությանը:

Պատերազմի ծխի մեջ բանաստեղծը տեսնում է մոտակա հաղթանակը, որ գալիս է, որ կնվաճվի այս ուժերով: Լեռներին է իր ընկերներին դիմելով, մարտիկ - բանաստեղծն ասում է.

Պատերազմի ծուխն է ձեր ճակատը փակել,
Բայց կժպտան նորից կատարները ձեր վես,—
Դու համարտով լեցուն, մարտնչիր, իմ ընկեր,
Վաղը իպարուրի հաղթության լույսը քեզ:
Հաղթանակի արևը կվառվի հրով,
Աղատության անխառ ու սուրբ լուսաբացին
Եվ լեռներն ու ծովը միշտ կհիշեն սիրով
Կանգրադիսակ ու քաջ այն հայ բանաստեղծին:

Հեղինակի անկոտրում հավատով և մինչև վերջին կաթիլ ար-
յունը մեր մեծ գործին նվիրաբերելու վճռականությամբ է համակ-
ցած «Վերադարձ» բանաստեղծության ամեն մի տողը:

Այս սրբազան ժամին հոգ չի մահը այնքան,
Թող փալիքի երգը մեզ հուշարձան լինի,
Եվ սերունդներն ասեն հերոսաբար ընկան
Հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի:

Այս սրտաբուխ, մարտաշունչ տողերով է հեղինակը եզրա-
փակում իր բանաստեղծությունը, որը եղավ նրա գեղեցիկ կյանքի
և ստեղծագործության վերջին հուժկու ակկորդը: Հուրյանն իր հե-
րոսությամբ և երգով անձեռագործ հուշարձան կանգնեցրեց իրեն:

Հուրյանի գրական ամբողջ գործունեությունը մի դինամիկ
շարժում էլ միշտ դեպի առաջ: Բանաստեղծը երբեք չէր դադարում
հեռանկարը շոշափելուց: Երդելով քաղաքացիական պատերազմի
հերոսիկան, նա տեսնում էր սոցիալիստական կյանքի արդեն
ծիլ արձակող սաղմերը: Փոքր երեւոյթների մեջ էլ Հուրյանը նկա-
տում էր այն նորը, որ մեր Հայրենիքում քայլ առ քայլ գործեղա-
նալով, համայնապարփակ մեծություն էր դառնում: Նույնիսկ դա-
ժան մարտերի մեջ, սպառնալից Սևաստոպոլում, կռվելիս և ստեղ-
ծագործելիս, ռևոլուցիոն նպատակաւացությունը և դրանից ծն-
վող լավատեսությունը շղափառանքին նրան: Դրա համար էլ նրա
երգը դադարարտակա հագեցված է, մարտաշունչ է և կենսական
լիրիզմով լի:



Պոետ Աշոտ Գրաշին պատերազմի տարիներին նոր հաջողու-
թյուններ ձեռք բերեց: Լինելով բեղմնավոր բանաստեղծ, նա պա-
տերազմից առաջ և պատերազմի տարիներին, արձագանքում է
մեր երկրին, բոլշևիկյան հերոսական պարտիային, ժողովրդին
հուզող հրատապ հարցերին: Պարտիականությունը, զաղափարայնու-
թյունը նա համարում է մեր մարդկանց և մեր արվեստի գոյության
հիմքը: Դա ցայտուն արտահայտվեց դեռ պատերազմից առաջ
գրված «Իմում Կոմիուսին» բանաստեղծության մեջ:

...Մենք քեզ հետ ենք, մայր իմ, մենք քո մշտական
Մայիսյան անտառի ծառերն ենք կենսահորդ

նի կրում ենք մեր մեջ ավյունը քո անանց
Յվ արմատներ ունենք հողում քո անհողողդ:

Այս տողերը աբտացուում են սովետական ժողովրդի և բոլշևիկներին պարտիայի անխղելի կապը, վեր են հանում այն ճշմարտությունը, որ մեր Հայրենիքի բոլոր հաջողությունների ոգեշնչողը է՝ ինքինի - Ստալինի պարտիան է: Սոցիալիստական հասարակության կառուցողներն իրենց անանց ավյունը առնում են պարտիայից և նրանց դործերն էլ կանաչում են այդ հողի վրա:

1942 թվին Բաքվում լույս տեսավ Գրաշու «Ռազմի քնար» ժողովածուն: Նույն վերնագրով բանաստեղծության մեջ պոետը նշում է, որ այժմ, երբ որոտում են մարտի շեփորները, Հայրենական առերազմի են կանչում, ինքը թողնում է քնքշագին լիրիկան, շառաշուն ուղմի քնար առնում: Իր երգերը նա համեմատում է ռազմի շեփորի հետ:

Ռազմի շեփոր, երգիր բարձր, պղնձաձայն

Արդար ռազմը բոլոր արդար ուղմերի,

Թող ունկ դնեն քեզ և՛ ջամաք, և՛ օվկիան,

Մեր հաղթության ծարավ ավերն, աշխարհի:

Բացառությամբ «Ձանդը» և «Ոստ բարդենու» գործերի, այս գրքույկում ղետեղված բոլոր բանաստեղծություններն էլ պատերազմի արձագանքներն են:

Սովետական ժողովրդի զավակներին գեպի կրակի առաջին գիծը մղող ուժը հայրենասիրությունն է, որը հասարակական գիտակցություն է դարձել մեր երկրում: Այդ գիտակցությունը աճել է, ձևավորվել սոցիալիզմի կառուցման համար մղված մարտերում: Դեռ պատերազմից շատ առաջ Գրաշին իր լիրիկական գործերում ինքնատիպ երանգներով վերարտադրել է այդ դգացմունքը՝ իր խաղաղ տարերքի մեջ: Խաղաղ պայմաններում սերը գեպի Հայրենիքը հանդես է գալիս սովետական մարդկանց աշխատանքի մեջ, ստեղծարար նախաձեռնության և խիղախության մեջ: Գրաշին շատ բանաստեղծություններ ունի մեր մարդկանց երջանիկ կյանքի, Հայրենիքի և հայրենասիրության մասին: Ահա թե դրանցից մեկում՝ «Հրաժեշտ» բանաստեղծության մեջ ինչպես է արտահայտված այդ դգացմունքը:

Կրեկ ես անցա ձեր նոր փողոցով,
Ու նայեցի բաց պատուհանով քո,
Թաշկինակ էիր ասեղնագործում
Հարլուր մոմանոց մի լամպի ներքո:

Այս սովորական նկարագրովյան միջոցով բանաստեղծը թա-
նջանցում է մարդկանց լիցամոմենտներն աշխարհը: Թաշկինակ ասեղնագործող կնոջ ամուսինը ծովային է, որ նավում է մեր երկրի ջրային անծայրածիր տարածությունների վրա: Վաղը նա կրկին ծով է դուրս գալու: Բանաստեղծը դիմում է ամուսնու սերն ու հրա-
ժեշտի հույզերը սրտում կնոջը.

Ասեղնագործիր երազուն նազով,
Դիր քնքշովյունդ ու սերդ անգին
Այդ թաշկինակում, ով աղջիկ նազուն—
Կարմիր մատրոսի դու ընկեր ու կին:

Այնպեստե քուն սյուժեից լիրիքական շեղում է կատարվում,
բանաստեղծը զեղում է իր հույզերը.

Ես երգում եմ ձեր այդ խորունկ սերը
Հյուսված սիրո հետ մեր երկրի ուրախ,
Շողում են որի ցոլուն լույսերը
Քաղաքներում մեր, ծովերի վրա...
Ես գիտեմ, չկա ամբողջ աշխարհում
Մեր երկրի նման երկիր մի լուսե:
Մեր գարնան նման համասփյուռ գարուն,
Մեր սիրո նման քնքշալի մի սեր:

Հայրենասիրությունը, որպես հասարակական գիտակցություն,
բխում է կոլեկտիվ և անձնական երջանկությունից: Գրաշին դրանք
դիտում է մի ներդաշնակ միասնության մեջ, քանի որ կյանքում էլ
դրանք պայմանավորում են իրար, բխում մեկը մյուսից:

1942 թվին, երբ ահավոր վտանգ էր կախվել սովետական երկ-
րի գլխին, աչլ գունավորում ու թափ են ստանում բանաստեղծի
հայրենասիրական երգերը:

«Ինքնանական» բանաստեղծությունն մեջ սովետական Հայ-
րենիքը պոետը դիտում է որպես համամարդկային կուլ-
տուրայի, արվեստի օրորան, ուր ազատ ճախրում է մար-
դու ստեղծագործական միտքը: Արեղակնամերձ լեռներում ծրն-

ված հովիվ պատանին հայրենի երկրից բանաստեղծի կոչում է ստանում, որը և նրան պատվամ է տալիս երգել մեր անտրտում լեռնաշխարհը, անդորը դաշտերը, անվրդով դետերը, կյանքի քաղցրությունն ու աղատությունը: Հասարակ մարդկանց ընդերքից բանաստեղծության վեհ կատարները բարձրանալով, հայրենի լեռների փեշերին նա զրույց է անում Հայնեյի հետ, շրջում Պուշկինի ստվերի հետ մեր հնձանները, Միրզա Շաֆու հետ խորունկ գովաթով հայոց դինին խմում:

Գիտության, լույսի թշնամիները, վայրի ոսոխները՝ պերճանական ֆաշիստները, որոնք խարույկի վրա հանեցին Գյոթեի, Մարքսի, Շիլլերի անթոշնելի երկերը, սպառնում են թույն թափել մեր Հայրենիքի աղբյուրների անապաղ աղունքները, կոտորել երգի լույս մանուկներին:

Դուք կտրորվեք կրունկների տակ
Մեր սպառազեն, զրահապառ ուժի,
Կանապականա օղը թունահաղ.
Ձեք թողնի կյանքում անգամ մի փոշի
Ձեր հորդաներից հազարահեղեղ,
Դուք թշնամիներ քնարի լուսեղ,
Դուք հալածողներ հանձարեղ մտքի:

Թշնամու անխուսափելի կործանման անխախտ հավատով է տոգորված բանաստեղծը և այդ համոզմունքը հնչում է ամեն մի տողի մեջ:

Հայրենասպաշտպան կռիվների մեջ սովետական հայրենասիրությունը մեր մարդկանց թևավորող ուժն էր: Մահվան թևերի տակ էլ նրանք հոգով ու սրտով իրենց ծննդավայրի հետ են: Հիշելով հարազատ վայրերը, նրանք պաշտպանում էին մեր մեծ Հայրենիքի ամեն մի թիղ հողը: Պատերազմի դաշտից զինվորը հետևյալ նամակն է գրում մորը.

Պատերազմի դաշտում փովեց ձյունը մարմար,
Մայր, թե սպանվեմ ձյունների մեջ, լաց չիսես,
Ձյունի տակ էլ չեմ մոռանա հայացքդ հեղ,
Ձեմ մոռանա կարոտակեզ աչքերդ մայր:

Մարտիկի հիշողության մեջ վառ են ծննդավայրի պեղանկար լեռները, մարգերի պեռ-պեռ ծաղիկները, ձորերի լուսնակերտ

աղբյուրները, մրդաշատ այգիները: Այս վերհուշն ապրելով, նա իր սերն է ուղղում ամբողջ Հայրենիքին:

Ես մեր հողը իմ կյանքից էլ շատ եմ սիրում,
Ինչ կա, մայրիկ, Հայրենիքից անուշ, անգին,
Բալեդ կյանքը Հայրենիքին է նվիրում,
Հայրենիքը մայր է, մայրիկ իմ կաթոգին:

Միշտ հավերժ սովետական մարդկանց հուզվելին են արտահայտված այս սողերում, մարդկանց, որոնք հերոսաբար ընկան մարտերում՝ Հայրենիքի սերը սրտերում, մարդկանց, որոնք հաղթանակով տուն դարձան, որովհետև մասսայական հերոսությունը պատկանում է հաղթանակով: Հաղթանակով վերադարձածների տրամադրությունները Գրաշին նրբագույն լիրիզմով արտահայտել է «Զեզ կանաչ տեսա» փոքրիկ բանաստեղծության մեջ:

Զեզ կանաչ տեսա, հայրենի հանդեր,
Իմ հոգու հանդն էլ ձեզ պես կանաչեց:
Լսեցի ձեր երգն, հայրենի հավքեր,
Իմ հոգու հավքն էլ հովիտում կանչեց:
Արծաթ աղբյուրներ, ձեզ վարար տեսա,
Սրտիս աղբյուրն էլ հորդեց, կարկաչեց,
Զեզ, ծանոթ ծառեր, ծաղկավառ տեսա,
Իմ սիրո ծառն էլ ծաղկունքով զուգվեց:

Մարտաշունչ երգերի հետ մեկ տեղ, Աշոտ Գրաշին պատերազմի տարիներին գրեց նաև բանաստեղծություններ, որոնք գաղափարապես նպատակառաջ չեն և երբեմն արտահայտում են մեր ժամանակների համար խորթ տրամադրություններ:

Բ. Հուրյանի ստեղծագործությունները վերլուծելիս տեսանք, թե մարտերի կրակի մեջ գտնվելով, նա ինչ դժեր է տեսել սովետական մարտիկների մեջ: Հուրյանի այդ դործերի լեյտամոտիվը մեկն է՝ սովետական մարդը չի խոնարհում իր հպարտ գուլիսը մահու դեմ, հուսահատությունը երբեք չի համակում նրան:

Հայրենական պատերազմի օրերից տասնյակ հազարալիտ պերճախոս փաստեր կան, երբ վիրավոր մարտիկները դեռ վերջնականապես չապաքինված, մարտ էին խոչանում: Հայրենական պատերազմը գիտակցված, հերոսական մահվան բազմաթիվ օրինակներ գրեց մեր ժողովրդի պատմության էջերում: Այն բանակը, որը ծնեց Մատրոսովի պես հերոսներին, այն ժողովուրդը, որ դեռ-

մանացիները դեմ ուղարկեց Զոյա Կոսմոդեմյանսկայայի պես իր անձնվեք դուստրերին, չեն նվացել նույնիսկ ամենավտանգավոր և ահեղ պահերին: Մինչդեռ Գրաշին իր Կորոշ գործերի մեջ անդրադարձել է իրականությանը հակոտնյա, մասնավոր, ոչ հատկանշական հուշեր և տրամադրություններ, որոնք ամենևին էլ տիպական չեն և՛ բոս էության, և՛ տենդենցով:

Ահա «Վերջին իղձ» բանաստեղծությունը: Գաղափարական առանցք չունի դա: Համակված է հոռետեսությամբ: Վիրավոր մարտիկը, ըստ հեղինակի, հոգևորքի պահին մի բան է ըլլում, որ պեսզի մայրը՝ հագին սևեր սգավոր, գա և իր վրա լա: Ճիշտ է, այս գործի մեջ խոսք կա հայրենի սիղավետ սարերի, աղբյուրների, Հայրենիքի մասին, բայց այս ամենը ասված է անկումային տրամադրությունը փունավորելու համար: Վերջ ի վերջո վիրավոր մարտիկի միակ իղձը մնում է.

Զագուկները կորցրած աղա՛վնու պես մի անբուն

Մըտում քանց ծով վիշտը խոր, թող մայրս դա, վրաս լա:

Նույն պլանով են դրված նաև «Հարհանդ հովեր»-ը, «Իմ ծիծեռնակը», «Մայր» բանաստեղծությունները: Բանաստեղծն ըստ երևույթին ինքն էլ երբեմն կռահում է, որ մասնավոր երևույթի մասին է խոսում, որ արծարծվող տրամադրությունները հարադատ չեն իրականությանը և անհաջող պրիոմով աշխատում է փրկել դրությունը: Այս կամ այն վիճակը նկարագրելով, ստեղծելով հոռի տրամադրությունը, բանաստեղծության վերջին երկտողում նա ձգտում է արդեն հրապարակախոսական պրիոմով ցրել չափազանց խտացած անկումային մթնոլորտը: Ահա «Կովի ճամփեքին» բանաստեղծությունը, որ մենք բերում ենք ամբողջությամբ, հեղինակի այդ մտահղացման թուլությունը ցույց տալու համար:

Սգավոր կանանց երամի նման

Ամպերն են լալիս մոխրակույտերին,—

Կովի ավերակ ճամբերի վրա

Կորցրեցի ևս քեզ, ընկեր մտերիմ:

Խորունկ աչքերիդ լուրջ լճակներին

• Մի՞թե հիացքով էլ չեմ նայելու,

Մի՞թե բերկրանքով էլ չեմ լսելու

Քո ձայնը քնքուշ նման երգերի:

Մի՞թե լիտսիրտ քեզ հետ միասին

էլ չենք զբոսնի մայր Ուկրաինայում,
Ուր սոխակներն են գեղում մայիսին
Դալայլիկները մեղմ ու հմայուն:

Այստեղ բանաստեղծությունը փաստորեն ավարտված է, որով
մաղբությունը ստեղծված և հանկարծ հեղինակը գրչի մի հաջվա-
ծով փորձում է բեռնայնորեն հակառակ ռեակցիա ստեղծել հետև-
յալ սակավազոր երկտողով:

Արևածաղններ, գալիք հաղթության,
Ձեր շողերի տակ կապրենք հավիտյան:

Նույնիսկ հասարակ տրամաբանությամբ վերջին տողերը չեն
առնչվում բանաստեղծության հետ:

Հեղինակի մի այլ բանաստեղծությունը, որը գրված է ջերմ
դպացմունքով, արտահայտում է սովետական մարդկանց անկոտ-
րում կամքը, հոգու հզորությունը, լավագույն հակադրություն է
վերև բերված ըստ էության անկումային բանաստեղծությանը:

Որպես էպիգրաֆ բերելով Սովինֆորմբյուրոյի 1942 թ. հուլի-
սի 12-ի հաղորդումից մի կտոր, Գրաշին գրել է «Անմար աչքեր»
խորագրով այդ բանաստեղծությունը: Նախ հիշենք Խնֆորմբյուրո-
յի հաղորդման այդ հատվածը՝ «Մի վիրավոր կարմիր մարտիկի,
որը վճռականորեն հրաժարվում էր պատասխանել ռազմախա-
բնության հարցերին, ֆաշիստ սպայի հրամանով ձեռքերը կտրել են
և աչքերը հանել»: Կարմիր մարտիկի այդ անհման վարմունքի մեջ
տեսնելով մեր ղինվորների անձնվիրության տիպական գիծը, բա-
նաստեղծը բացագանչում է.

Բայց ով մի անդամ արև է տեսել,
Նրա աչքերը, խավարամուլներ,
Ոնց էլ խավարեք, կմնան լուսն:
Անկար եք ջնջել սրով, սվինով,
Ինչ որ գրվել է մեր աչքերի մեջ
Մեծ ճշմարտության ոսկե վրձինով:

Իհարկե ճիշտ է, դաստիարակող ու նպատակասլաց այս ընդ-
հանրացումը. ճիշտ են պոետի եզրակացությունները:

Երկու դեպքումն էլ մենք գործ ունենք մահվան թեմայի հետ:
Երկու դեպքումն էլ, մահը հերոսական է, բայց մի դեպքում հեղի-

նակը անհեռանկար, հոսականուր վիճակ է ստեղծում, մեղանշելով մեր իրականության հանդեպ, մյուս դեպքում հավատարի՛մ է մնում մեր պոեզիայի գաղափարայնության սկզբունքին և իրականությանը հարազատ:

Բնության և սիրո ներբողները Աշոտ Գրաշու մոտ երբեմն ինքնանպատակ և գաղափարազուրկ են, նրանց մեջ չի զգացվում ժամանակի շունչը: Սա հեղինակի երկրորդ ստեղծագործական լուրջ սալթաքումն է:

Մեր ժողովրդական գրականությունը հայրենային է բնության և սիրո գովերգներով: Բայց դրանցից որն էլ վերցնեք, ամենից առաջ զգացվում է, ժամանակի շունչը, հասկանալի են հեղինակի ակնկալությունները: Հիշենք Ծղզնկացու և Քուչակի տաղերը: Դրանց մեջ նախ զգացվում է հեղինակների անզուսպ ձգտումը դեպի կյանքը, դեպի ազատություն, քանի որ նրանք շղթավաժ էին ժամանակի ռեակցիոն միջավայրում: Կրկին ու կրկին կարդանք Ավետիք Իսահակյանի «Ալագչաղի մանիւնները»: Մրանց մեջ պոետը գեղել է շինականի հույզերը՝ ապրելով և զգալով իր ժողովրդի ցավերը: Իսահակյանը երգել է Մանթաշը, խոսելով Մանթաշի նախաշուն հավքերի մասին, հիշել է իր դարդերը, մատնանշել, թե այդ դարդերը Մանթաշի հավքերինը լինեին, նրանց փետուրները կսկսեին քանց գիշեր: Բնության օրինաչափությունների մասին խոսելով, մեր գրականության այդ վարպետները մարդկային հույզի համապատասխան ասոցիացիաներ են ստեղծել, որպեսզի ընթերցողի տրամադրությունը վարակեն իրենց տրամադրություններով: Նրանք չեն հետապնդել բնության «անխոս» պեյզաժներ ստեղծելու գուռ էսթետիկական նպատակը:

Դժբախտաբար մեր ժամանակակից դրողներից ոմանք, չնայած, որ մեր օրերը դրողին առաջադրում են շատ պարզոտ խորհրներ, չնայած մեր կյանքը լավատես և մարտաշունչ պոեզիայի անսպառ նյութ է տալիս մեկ-մեկ ամփոփելով իրենց նեղ հուզաշխարհի շրջանակներում, խոսում են բնության երևույթի մասին, միայն «գեղեցիկ» խոսք ասելու համար, մոռանալով, որ անիմատ խոսքը գուրկ է գեղեցկությունից:

Աշոտ Գրաշին այս կարգի բանաստեղծություններ շատ ունի: Ահա դրանցից մեկը.

Գետն է լալիս ձորափում,
Կամուրջի տակ սառույց,

Մանրաքարերն հատակում
Այս, մրսում են մի գուցե:
Մանրաքարեր գույնզգույն,
Շուտ ամի քշվեք, հավաքեմ,
Շաղ տամ արև իմ հոգում
Յրախից, սառցից ձեզ փրկեմ:

Սա բացահայտ մի տուրք է մեր գրականության մեջ վաղուց
մերժված ու դատապարտված ֆորմալիզմին:

Գրաշու բնության ներբողները էպիտեաներով, կառուցված-
քով, ընդհանրապես գրելու մաներով հիշեցնում են մեր անցյալի
գրողների ստեղծագործությունները:

Այս առնչությամբ, երկու խոսք ստեղծագործական ազդեցու-
թյունների վերաբերյալ: Երբ խոսքը Գրաշուն է վերաբերում, ա-
ռանձնապես անհրաժեշտ է այդ հարցը առաջ քաշել, հեղինակին
մի լուրջ լնտանգից զգուշացնելու համար:

Սովորել և ազդել որևէ գրողից, երբեք չի նշանակում գնալ
սոսկ փոխառությունների ճանապարհով: Որևէ հեղինակի նվաճում-
ները հաշվի առնելով, հետևելով նրա շկոյային, նորը սկսեք է
գարգացնի, բազմապատկի այդ նվաճումները, նրանց մեջ դնի
իր ժամանակի ոգին, իր օրերի բնորոշ հատկությունները, վերջա-
պես իր ինքնատիպությունը՝ ապավինելով յուր տաղանդին: Այս-
պես ուսուցչի անհաջող կրկնությունը կստացվի:

Մենք ամենևին հակված չենք ասել, որ Գրաշին զուրկ է ինք-
նատիպությունից: Բայց միաժամանակ այդ հատկանիշը, հազվա-
գյուտ բացառություններով չենք տեսնում նրա բնության և սիրո
ներբողներում և՛ բովանդակության և՛ ձևի տեսակետից:

«Մեր սարերը հեռավոր» բանաստեղծությունը, օրինակ, սկսու-
վում է հետևյալ քառյակով.

Ես վեր կենամ բարակ հովի հետևից,
Գնամ, մաս գամ մեր սարերը հեռավոր,
Ես վեր կենամ բարակ զովի հետևից,
Գնամ, ման գամ մեր ձորերը հեռավոր:

Առաջին խոսկ տողերը հիշեցնում են Ավետիք Իսահակյանին:
Ամբողջ բանաստեղծությունը ոչինչ չի ավելացնում և բովանդա-
կությամբ և ձևով այն ամենի վրա, ինչ վարպետը նվաճել է «Յուպս
առնեմ ընկնեմ սար ու ձորերը» բանաստեղծության մեջ: Տարբե-

բությունն աչն է, որ Գրաշին իր շրջագայության վայրն բնութամբ է Մուսայի սարի փեշերը և Թարթառ գետի եզերքները: Այստեղ նույնպէս խոսում է իր հասարակական միջավայրից կտրված պոնալը, որն անձնավորված է ինքն իր մեջ միայն և զեղում է միայն իր հույզերը՝ ժամանակից ու միջավայրից դուրս: Գործածած է պիտեռներ ճնուկներն էլ հենց բխում է դրանից:

Աշոտ Գրաշու մոտ ֆորմալիստական ցատկոսումները երբեմն միահյուսվում են միատիցիզմի հետ: «Անմահություն» բանաստեղծությունը դրա տիպիկ իլյուստրացիան է: Բանաստեղծը ազդարարում է իր մահը հին անտառում, հին կաղնու շվաքի տակ: Բարակ առուն ողբում է նրա մահը, ծառերն իրենց ուսին դիակն առած, զետափ են տանում և թալում «ինչպէս գունատ լուսին»: Բայց արշալույսին բանաստեղծը հարուստ է առնում և ահա թե ինչպէս.

Եկան հավեր արշալույսին,
Երգեցին մի երգ այնպէս նրբին,—
Բացվեց դռնակը իմ շիրիմի,
Եւ ես հարուստն առա կրկին:

Թե ինչ դադափար է արծարծում և ինչ է ուզում ասել հեղինակը այդ բանաստեղծությամբ, երևի ինքն էլ չգիտէ:

Հայրենական պատերազմից դու շատ առաջ, զրոգների Համամիութենական առաջին համագումարից հետո, երբ Տշտվեց վերաբերմունքը դեպի Ֆոլկլորը, Ադրբեջանի սովետահայ բանաստեղծները ժողովրդական ստեղծագործությունները վերամշակելու շատ փորձեր կատարեցին, որոնցից մի մասն անկասկած հաջող են: Դանիել Գեորգյանը մեր ֆոլկլորի զարդերից մեկը հանդիսացող «Աենին փաշա»-ի հիման վրա գրեց «Աենին» ընդարձակ պոեմը (տես «Խորհրդային գրող» հանդեսի 1937 թ. № 9-10), Աշոտ Գրաշին, մշակելով բելոռուսական ձկնորսական հեքիաթը լենինի մասին, գրեց «Արև մարդը» պոեմը (տես «Խորհրդային գրող» հանդեսի 1938 թ. № 1), Վարսենիկ Աղասյանը նույն աղբյուրներից օգտվելով, ժողովրդական բանավոր ստեղծագործության մոտիվներով ստեղծեց «Մայրը» պոեմը (տես «Խորհրդային գրող» հանդեսի 1938 թ. № 2), Սամվել Գրիգորյանը մշակեց մի քանի լեգենդներ՝ «Բիրի-Հեյբաթ», «Խարդավանքի ու սիրո ամբողջը» (հետագայում դրանք մտան բանաստեղծի «Հայրենիքի համար» ժողովածուի մեջ): «Խորհրդային գրող» հանդեսը 1935-40

թ. թ. պարբերաբար տպագրում էր ՍՍՌՄ ժողովուրդների ֆուկլու-
րի լավագույն նմուշները մեր գրողների թարգմանությունները:

Աշոտ Գրաշին մեկն էր մեր այն պոետներից, որը զգալի գործ
կատարեց այս ուղղությամբ: Մենք իր տեղում խոսել ենք այդ
լավ աշխատանքի արգասիքի՝ «Աղբբեջանական բայաթիներ» գոր-
քույկի մասին: Պատերազմի տարիներին բանաստեղծը լայնացրեց
ստեղծագործական կապերը ֆուկլուրի հետ, այս անգամ իր դոր-
ժերում լայնորեն օգտագործելով նրա պրիոմները, ոճերը: Վերջին
տարիների նրա ստեղծագործությունների վրա դա իր խոր հետքը
թողեց:

Ֆուկլուրի օգտագործումն ընդունելի է և անհրաժեշտ: Մանա-
վանդ, երբ մենք նկատի ունենք ոչ միայն հայ, այլև մյուս ժողո-
վուրդների ստեղծագործական դանձերը մեր գրականության մեջ
ներառնելու կարևորությունը: Գրաշին հայկական «ջանգլուումնե-
րի» ժանրով դալի հաջողությամբ ստեղծեց «Իմ Ղարաբաղ» շար-
քը: Հմտորեն օգտագործելով «ջանգլուումների» ձևերը, պարզու-
թյունը, այս քառյակներում նա երգում է Ղարաբաղի կոխողնիկ-
ների երջանիկ կյանքը, սովետական Ղարաբաղի բնության գովքն
է անում, գեղեցիկ լեռնալանջերին տեսնելով կոխողի հոտերը,
դաշտավայրերում՝ կոխողային արտերում աշխատող մարդկանց,
մտնելով կոխողնիկների տները, տեսնում է կոպտորական կյանք
ու լիություն:

Բանաստեղծը լայնորեն օգտագործում է նաև աղբբեջանական
ֆուկլուրի լավագույն հնարավորությունները: Ըստ էության դրանք
շատ խրախուսելի քայլեր են: Մի շարք բանաստեղծություններին
աղբբեջանական ձևերը բացառիկ երաժշտականություն և գեղեց-
կություն են տվել: Այս շարքից ձևի առումով հաջողված գործ է
«Ան միտս ընկավ»-ը, (տես «Կոունկ» ժողով. էջ 146): Սա գրված
է աղբբեջանական ЯДЫНА ДУШИИ-ների ձևով, որը շատ տարածված
է մեր եղբայրական ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ:
Նույն աղբբուրից է առնված «Ձեռքիդ վարդերից»-ը (նույն տեղը,
էջ 189):

Սակայն ժողովրդական ստեղծագործության գեղեցիկ ձևերի
յուրացումը և հմտորեն օգտագործելը բավական չէ երկի հաջո-
ղությունը ապահովելու համար: Սովետական գրողից պահանջվում
է նախ յուրովի դարգացնել այդ ձևերը և որ կարևոր է, գեղեցիկ,
խոսուն կաղապարի մեջ նոր բովանդակություն դնել:

Բովանդակության տեսակետից նայենք թեկուզ մերև թված դործերից մեկը: Անխ միտտ ընկավ՝ բանաստեղծության մեջ՝ սիրո հույզն է զեղվում: Բայց իզուր կլինի այստեղ որոնել նոր վերաբերմունք դեպի այդ զգացումը: Գովերգվում են կանացի գեղեցկության բոլոր բարեմասնությունները՝ սկսած ծաղկի թերթեր շորթունքներից, թշի ջուխտակ խալերից, նուշ աչքերից, մինչև կռունկի թևեր հոնքերը: Նույնը, գուցե շատ ավելի նուրբ էպիտետներով կնոջ արտաքին գեղեցկությունը երգվել ու կրկնեցվել է Գրաշույս դեռ շատ ու շատ առաջ: Ինչո՞ւ գնալ նույն ճանապարհով:

Ժողովրդական ձևը կենդանություն կառնի, երբ հեղինակը, ժամանակակից ազատ և երջանիկ սիրո գաղափարն արծարծի, քափանցի մեր ժամանակի մարդկանց հոգեկան աշխարհը, ցույց տա այդ ներքնաշխարհի գեղեցկությունը: Նկատենք, որ Գրաշին այսպես չի վարվում, աչլ զնում է կեղծ ժողովրդայնության ճանապարհով: Ինչպես և մի շարք այլ դործերի, այնպես էլ այս բանաստեղծության ամբողջ ասպեկտը պոետը փոխ է առել անցյալից, անքննադատորեն յուրացնելով պոետիայի բովանդակությունը և՛ ձևը:

Ֆոլկլորի ուսումնասիրությունը և օգտագործումը որոշ բարերար ազդեցություն թողեց Գրաշու վրա՝ լեզուն և ոճը պարզեցնելու տեսակետից: Բայց և բանաստեղծը բավարար չափով չզարգացրեց դա: Նրա լեզուն և ոճը շատ թերի կողմեր ունեն: Բանաստեղծը երբեմն ոտնահարում է հայրենի տարրական կանոնները: Այսպիսով, և՛ բովանդակության և՛ ձևի հարցերում Գրաշին, ժողովրդայնության հունով ընթանալու փորձեր անելիս, լրջորեն խոտորում է ուղիղ ճանապարհից:

Բովանդակության պարտիան մեր գրողներին բազմիցս զգուշացրել է այս վտանգից և ցույց տվել դրա կորստաբեր հետևանքները:

Այս վտանգից կրկին անգամ գրողներին զգուշացրեց Ադրբեջանի բովանդակության ղեկավար ընկ. Մ. Զ. Բագիրովը: Ադրբեջանի Կ(բ)Պ XVII համագումարում տված իր զեկուցման մեջ վերլուծելով ադրբեջանական գրականության հաջողություններն ու թերությունները, նա իրավացիորեն մատնանշել է.

«Մեր գրականության, և ոչ միայն գրականության, այլև զգալի չափով նաև երաժշտության, նկարչության, ճարտարապետության թերությունը հանդիսանում է ժողովրդայնության սկզբունքի աղավաղումը, նրա փոխարինումը սովետական գրականությանը և

արվեստին խորթ կեղծ ժողովրդայնությունը: Կեղծ ժողովրդայնությունը, որ արտահայտվում է ֆուկլորը մեխանիկորեն ընդօրինակելու, իրենց ժամանակն ապրած սովորույթների և տրադիցիաների գովերգության մեջ, հանդիսանում է գրականության մեջ ամեն տեսակ հետամնացություն, քարացածություն, միջնադարականություն պաշտպանելու ձևը և տանում է դեպի ազգային սահմանափակություն, առաջավոր կուլտուրայից, ադրբեջանական, ռուսական, համաշխարհային կլասիկ գրականության առաջադիմական տրադիցիաներից խորթանալը: Սովետական գրականության և արվեստի մեջ իսկական ժողովրդայնությունը անանջատելի է սովետական մարդու գործունեությունից, նրա հարաճուն կուլտուրական պահանջներից:

Նվ իրոք. չի կարող իսկական ժողովրդայնությամբ համակված լինել այն գեղարվեստական ստեղծագործությունը, որը կապ չունի սովետական մարդկանց գործունեության հետ, չի բխում նրանց կուլտուրական հարաճուն պահանջներից: Իսկակա՞ն ժողովրդայնություն արվեստի բնագավառում դա, ինչպես ընկ. Մ. Զ. Բագիրովն է նշում, նախ և առաջ նշանակում է երկի թեմայի խորը գաղափարայնություն, շեշտված ռեուլուցիոն նպատակասլացություն, ուժեղ պայքար այն ամենի դեմ, ինչ հին է, իր դարն ապրած, ինչ տանում է դեպի ազգային սահմանափակություն:

Մինչդեռ Գրաշին մոռանալով այս հանգամանքը, մոլորության մեջ ընկնելով ժողովրդայնության հունը որոնելիս, որոշ գործերում տուրք տվեց հնամուլությանը, իր դարն ապրածը վերականգնանացնելու փորձեր արեց, իսկ այդ գիծը տրամաբանորեն նրան հասցրեց ազգային սահմանափակության և երբեմն էլ նացիոնալիզմի արտահայտությունների:

Լրջորեն սայթաքելով մեթոդի, բովանդակության հարցերում, բանաստեղծը ծանր սխալներ գործեց նաև ձևի բնագավառում: Այդ բանը հեշտությամբ կարելի է տեսնել, եթե համեմատելու լինենք Հայրենական պատերազմի տարիներին նրա գրած անկումային և այսպես կոչված «սիրային» բանաստեղծությունները, իր իսկ ստեղծած հայրենասիրական, գաղափարապես նպատակասլաց գործերի հետ:

Այս բոլոր թերությունների պատճառը մենք տեսնում ենք բանաստեղծի գաղափարական թուլ զինվածության և մասամբ էլ հիմնադրոտ շտապողականության մեջ:

Այնուհանդերձ, Գրաշին պատշաճ տեղ նվաճեց մեր սովետահայ պոեզիայի մեջ: Պոեստի ռազմական և լիրիքական շատ գործեր թարգմանվել են ռուսերեն, տպագրվել Մոսկվայի պարբերականներում, ժողովածուներում: Հատուկ գրքով լույս տեսավ նրա ընտիր բանաստեղծությունների ժողովածուն՝ «Карабахская весна»:

1944 թվին լույս տեսավ բանաստեղծ Սամվել Գրիգորյանի «Սոր սիրտը» ժողովածուն: Գրքում ամփոփված են հեծ մասամբ պատերազմի տարիներին գրված բանաստեղծություններ:

Հայրենիքի համար այդ բախտորոշ* օրերին ամեն մի սովետական մարդու առջև ծառացավ յուր քաղաքացիական պարտքը կատարելու հարցը: Սովետական ժողովուրդը մոբիլիզացրեց իր բոլոր նյութական, ֆիզիկական և հոգևոր կարողությունները:

Հայրենական պատերազմի ժամանակ մեր մարդկանց բնորոշ հատկությունը՝ երկրի և ժողովրդի շահերի գիտակցությունը և հանուն նրանց մարտնչելու վճռականությունը դրսևորվեց շտեմնված ուժով: Անձնվիրությունն էր դա՝ բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի հայրենանվեր գործերի մեջ մարմնավորված:

«Ծայր Հայրենիքիս» բանաստեղծության մեջ Ս. Գրիգորյանը հետևյալ տողերով է արտահայտում այդ անձնվիրությունը, ամեն ինչ Հայրենիքին նվիրաբերելու պատրաստակամությունը.

Առ հիմա սիրտս, երկիր հարազատ,

ես քո զինվորն եմ, քո մարտիկը հար,

Քոնն են իմ կյանքը, իմ խոհերն ազատ

Նվ բոլորը, ինչ թանկ է ինձ համար:

Ամենաթանկագինը՝ նույնիսկ կյանքը Հայրենիքին նվիրաբերելու պատրաստակամությամբ էին սովետական զինվորները մարտնչում կատաղի թշնամու դեմ: Նրանց հայրերը, մայրերը, քույրերն ու եղբայրները թիկունքում աշխատանքով հերոսանում էին, համոզված լինելով, որ հենց այդ անձնվիրությամբ մեր երկիրը անապարտելի է.

Սենք հաղթանակի հույսով ենք լցված,

Նվ չկա նահանջ մեր ճանապարհին.

Ով ազատության համար է ծնված

Գերի չի լինի երբեք օտարին:

Նյսպէս է ասում պոետը: Պատերազմը անասելի զրկանքներ ու տառապանքներ բերեց մարդկանց: Կովկասում, ծայր Հյուսիսում, ուր պատերազմի հրդեհը չհասաւ, սովետական մարդը զգում էր ռուս, ուկրաինացի, բելոռուս եղբայրական ժողովուրդներին հասած աղետի ամբողջ դառնութիւնը:

Սամվել Գրիգորյանն այդ զգացմունքը արտահայտել է «Բելոռուս զինվորի երգը» բանաստեղծութիւն մեջ.—

...Պարնանային ձնհալն է ընկել: Միծեռնակը վերադառնում է բելոռուսական դուռը և ավերած գտնում իր բունը: Բելոռուս զինվորը նույնպէս չի գտնում իր տունը: Բայց երբեք հայթանայի ու լավ ասպագայի հավատը չի դավաճանում նրան: «Ախ, տարագիր եմ ես էլ քեզ նման», ասում է նա ծիծեռնակին, բայց վհատվել պէտք չէ.

Մենք կգանք նորից ու հետ կբերենք

Անցած դարոջն ու խնդրութիւնը մեր,

Դեռ կդանք քեզ հետ, որ վերաշինենք

Դու բունդ կորած, ես իմ տունն ավեր:

1943 թվին Գրիգորյանը գրեց իր հաջորդած բանաստեղծութիւններից մեկը՝ «Իմ Երևանը»: Անսահման հավատ տալով դեպի մեր երկրի և ժողովրդի ուժերը, բանաստեղծը երգում է մոտակա հաղթանակի, ցնծութիւնը: Մեծ Սովետական Միութեանով մեկ այդ համասփյուռ և համաժողովրդական ուրախութիւնը բանաստեղծը դիտում է հայ աշխատավոր մարդու հայեցակէտից:

Երբ հաղթանակի փողերը հնչեն,

Ամեն ոք դառնա իր օթեանը,

Երկինք ու երկիր նոր բույր կշնչեն,

Նրանց հետ նաև իմ Երևանը:

Երևանը՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը, բոլոր հայ մարտիկների սրտում շողում է որպէս հայրենի երկրի խորհրդանշան: Բայց և հայ մարտիկի մտքի հորիզոնը չի սահմանափակվում Հայաստանով, քանի որ նա գիտե, որ իր մայր երկրի բախտն անսխալ իրաւիքներն կապված է Սովետական մեծ Հայրենիքի հետ: Երևանի

համար խնդության և լույսի տոն կլինի, երբ մեր Հայրենիքում
այլևս չթափվի արյուն և արցունք: Եվ երբ թշնամին թողնի մեզ վեր-
ջին գյուղն ու ավանը:

Ու տոն կլինի խնդության, լույսի
Իերինգյան ծովից մինչև Սևանը
Եվ հերոսների այդ մեծ հանդեսին
Կզա և հերոս իմ Երևանը:

Երբ Սովետական Բանակի հերոսական զորամասերը, փշրելով
Ֆաշիստական հորդանքներն, նրանց դուրս հալածեցին մեր երկրից
և գրոհեցին Բեռլինը, բանաստեղծը արդեն երգում է խաղաղ և
լուսավոր վաղը:

Բեռլինն այրվում է անհուն վրեժի ու ցասման հրով, ասում է
պոետը.

Այդ բոցերի մեջ թշնամու արնոտ փառքն է մոխրանում,
Մարում են նրա հույսերը դժնի ու արնաշաղախ,
Այդ բոցերի մեջ ազատության բորբ արեն է հառնում
Պայծառ օրերը դալիք օրերի անդորր ու խաղաղ:

Ահա այս փառավոր հաղթանակի համար էր, որ իրենց զա-
վակներին մարտի էին ուղարկում ծնողները, դրա համար էր, որ
սիրո թրթիռը սրտներում, սովետական աղջիկները սիրած տղանե-
րին հրաժեշտ էին տալիս՝ նրանց հերոսանալու պատվեր կարդա-
լով:

Այս թեմաները գտան իրենց յուրահատուկ երանգներով վեր-
արտադրողներին: Ադրբեջանի հայ բանաստեղծներից առանձնա-
պես Վարսենիկ Աղասյանը ստեղծեց բավական հաջող դործեր, որ-
բոնք մտան «Մայրական հույզեր» ցիկլի մեջ, որպես պատերազմի
շրջանի աշխատավոր կանանց նվիրական զգացմունքների արտա-
հայտություն: 1947 թվին լույս տեսած Աղասյանի բանաստեղծու-
թյունների ժողովածուում այս շարքից առանձնապես աչքի են
ընկնում «Մոր ուղերձը», «Քեզ ինձնից նվեր...», «Օրոր», «Ամեն
անգամ մանուշակը բացվելիս», «Իմ հպարտ արծիվ», «Գիտեմ»
կտորները:

«Մոր ուղերձը» մի գորովալից ձոն է, որ գալիս է մոր սրտից,
որի մեջ նա զնդում է իր բոլոր ցանկությունները պատերազմի

Ճամփիաները բռնած սիրեցյալ զավակին: Բարի ճանապարհ մաղ-
թելով՝ որդուն, մայրը տենչում է նրա «շախով» վերադարձը:

Հայրենիք, քեզ եմ տալիս
Իմ արևը, իմ բալեն,
Քեզ մոտ խինդով է գալիս
Իմ ծաղիկը, իմ լալեն:

Այնուհետև մայրը դիմում է արևին, որ լղատվորի բոլոր ու-
ղին, քնքուշ գեփյուռին, որ նրան հով անի, զուլալ, վարարուն գե-
տերից հայցում է ճամփա բանալ նրան, նախշուն հավքերից՝
թռիչքի թևեր տալ նրան:

Իմ պարտեզի ծաղկունքից
Ամենալավն եմ ճամբում,
Սրտիս զմրուխտ ակունքից
Ամենաթանկն եմ ճամբում...
Հայրենիք, քեզ եմ տալիս
Իմ կտրիճը, իմ բալեն:
Քեզ մոտ խինդով է գալիս
Իմ կտրիճը, իմ բալեն:

Հազարավոր մայրերի հասարակական գիտակցությունն ու
սպանիվ տազնապն արտահայտելով, Ազասյանը վերաբրտադրում է
նրանց շեշտված լավատեսությունը:

Սովետական մայրը լաց ու կոծով չի պատերազմ ճամփում
իր զավակներին, այլ այն խորը համոզմունքով, որ նրանք հազա-
րավորների հետ կռվելու են ժողովրդի երջանկության համար և
այդ մեծ կռվում հաղթանակը մերն է լինելու: Միշտ անսլարտ լի-
նելու մայրական պատվերը սրտում, զավակները, կռիվ են խոյա-
նում և մայրը նրանց հետ է թեժ կրակների մեջ էլ:

Հեյ դու սարերի արծիվ իմ հպարտ,
Չտեսնեմ երբեք թևերդ փշուր,
Սիրում եմ երբ դու կռվում ես անպարտ
Ոսոխների դեմ ժանտ ու մահալուր...:

Ահա հաղթանակից հետո ելբորը դիմավորող քրոջ ցնծություն-
ներ.

Սրտիս անթաւամ ծաղկունքն եմ փռել
Քո ոտներէր տակ այդ լուսապսակ,
Դու աշխարհի շափ ինձ խնդ ես բերել,
Գարուն ես բերել, օ, իմ արեգակ:

Վարսենիկ Աղասյանը ձեռի բնագավառում նոր նվաճումներ ձեռք
չբերեց: Նրա ստեղծագործութիւնը բովանդակութեամբ և իդեա-
պես ավելի պարզորոշ դառնալով, մնում է բանաստեղծութեան վա-
ղուց գործածած արտահայտչական միջոցների կաշապարում:
Բազմաթիվ բանաստեղծութիւնների մեջ կրկնվում են երբեմն նույն
պատկերները, էպիտետները հաճախ չափազանց վերացական,
որի պատճառով էլ պատկերները դժվար են ըմբռնվում:

Բանաստեղծուհին խոսում է հաղթանակից հետո իսպառ զօրի-
րի երջանկության մասին և ահա թե ինչպիսի պատկերներով.

Միբո երկնքից քնքուշ հյուսված
Կիշնիւ անդորրն արեւոտ,
Գեղատեսիլ ճամփաներով,
Երգ ու տաղով ջերմագին
Հետ կդառնա հաղթանակով—
Իմ եղբայրը թանկագին:

Այստեղ նույնիսկ անհեթեթության շափ մթափնած է պատ-
կերը. ինչ է նշանակում, օրինակ, սիրո երկնքից քնքուշ հյուսված
անդորրը, որը պիտի իջնի գեղատեսիլ ճամբաներով: Նախ դա ի՞նչ
սիրո երկինք է, որտեղ հյուսվում է անդորրը և ինչ անհայտ ճա-
նապարհներով է գալու նա: Խոսքը պատկերավոր ասել, նշանա-
կում է ասել իմաստավոր: Այնտեղ ուր իմաստ չկա, չկա և պատ-
կեր: Վերև բերված օրինակը եզակի չէ Աղասյանի երկերում:
Միայն կարծելով, որ վերամբարձ խոսքը լիրիքական ուժ է տալիս
բանաստեղծութեանը, Աղասյանը երբեմն այնքան է շարժում բա-
նաստեղծութիւնը, որ արտաքին «փայլի» տակ նսեմանում, կոր-
չում է ներքին բովանդակութիւնը (տես «Մայրիկիս», «Տուն եկար»
բանաստեղծութիւնները 1947 թ. ժողով. էջ 32, 67):

Բանաստեղծութիւնը շարեւոր այս ֆորմալիստական պրիս-
մը և կաշկանդվածութիւնը ձեռի բնագավառում, նույնպէս հնից
է գալիս և Աղասյանը չի ազատագրվել դրանցից:

Ադրբեջանի սովետահայ պոեզիայի մեջ մի թարմ հոսանք
մտցրեց շնորհալի բանաստեղծ Համո Սահյանը: Նա ստեղծագոր-

ո՛հէ՛ սէկսեց Հայրենական պատերազմից մի քանի տարի առաջ: Պարբերական մամուլում՝ հրատարակված նրա բանաստեղծութիւնները այն ժամանակ աչքի չէին ընկնում ինքատիպությամբ: Իրանք մեծ մասամբ սկսնակ գրչի առաջին մարզանքներ էին:

Պատերազմի տարիները Սահյանն անցկացրեց Կարմիր Նավատորմում, մեր Հայրենիքի ծովային տարածութիւնների վրա մասնակցեց հայրենասպառնական մարտերին: Անձամբ ապրելով և զգալով լինելուականի կեցութիւնը, նա սրտաբուխ երգեց մեր մարտիկների կարտոր դեպի հարազատ ափերը, դեպի ծննդավայրն ու հարազատները: Հեռու, հեռավոր տարածութիւններում բանաստեղծը տենչալով իր երկիրը՝ Սյունյաց աշխարհը, երազելով Ռուստան գետի և հարազատների մասին, տեսնում է այն ընդհանուր կապերը, որ պատերազմի պահին ի մի են ձուլել մեր երկրի բոլոր աշխատավորներին:

Բանաստեղծ Նաիրի Զարյանը և պրոֆեսոր Հովիկ Մելիքյանը իր ժամանակին նկատեցին և մատնանշեցին այն թարմ շունչը, որ մեր պոեզիայի մեջ բերեց Համո Սահյանը: Ինչպես միանգամայն ճիշտ են Էկստել Զարյանն ու Մելիքյանը, Սահյանի հմայքը զգացմունքների անմիջականութան և խոսքը սրտաբուխ առելու կարողութեան մեջ է: Իսկ դա իր հերթին կախված է նրանից, ինչ պոետը որքան լրիվությամբ և խորությամբ է ընկալում իրականութիւնը:

Բանաստեղծ Հ. Սահյանը «...կյանքը վերարտադրում է սովետական մարդու լավատեսական սիրով: Իր անձը ներկա է ամենուրեք, գրի նա Հայրենական պատերազմի ճակատներում կռիւղ հերոսների, թե թիկունքում՝ հայրենի դաշտերում անդադրում աշխատող կոլխոզնիկների մասին, երգի նա Սյունյաց աշխարհի «արտուտ ողջիկներին», թե «հյուրասեր շոբաններին», Սյունիքի սիգապանծ ժայռերը, թե փրփրաբաշ գետակները: Նա գրում է կարծեք թե իր անձնականի մասին, բայց անձնականը այնպես հասարակակալանորեն, այնպես մարդկային և ողջախոհ է արտահայտում, որ դառնում է ընդհանուրի միտքը, զգացմունքը, ապրումը վեր է ածվում մի ժողովրդի հոգեբանութեան բնորոշ գծերի»: Այդպես է գրել Սահյանի մասին ընկ. Հ. Մելիքյանը:

Նվ, իրող, սովետական բանաստեղծի հաջողութեան նախապայմանն էլ հենց հասարակականը անձնավորելն ու ճիշտ վերարտադրելն է: Նրիտասարգ գրողին պատիվ բերող այս գնահատու-

թշուհը հիմնված էր գլխավորապես պատերազմի տարիներին գրած նրա ստեղծագործությունների օբեկտիվ վերլուծության վրա:

Սահյանի մինչ այժմ հրապարակած գործերի պսակն է «Նա-
յիրյան դալար բարդի» բանաստեղծությունը: Նայիրյան դալար
բարդին բանաստեղծական մի ցայտուն խորհրդանշան է զինվորի
հայրենաբաղձ կարոտն արտահայտելու համար: Բարդին զմրուխտե
շորեր հագած շուք է անում մանկության կանաչ ճամբի վրա: Թե-
պետ հեռու է նա, բայց նրա կանչը զրնգում է մարտիկի սրտի
«խոր ձորերում»: Հայրենի եզերքներից հեռու՝ զինվորը կրակ սրտի
կարոտով է գգվում բարդին, որը բոլոր դաշտերը լցնում է իր
խշշոցով: Եվ գիտե մարտիկ - պոետը, որ այժմ այդ դալար բար-
դու շվաքի տակ իր արտուտ մանուկն է խաղում, գիտե, և մի բան
է հայցում՝ «Ձով արա նրա կյանքին, հոր նման դգվիր անջուն, իմ
հեռու, հեռու, հեռու, Նայիրյան դալար բարդի»:

Հազարավոր անձնվեր սովետական քաղաքացիների սրտից են
բխել Սահյանի հետևյալ տողերը.

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց դատ,
Քեզ նման կանաչ կյանքով, քեզ նման ելած մարտի,
Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռու, հեռու, հեռու, Նայիրյան դալար բարդի:

Այս բանաստեղծության հաջողությունը որոշում են ոչ միայն
գաղափարական նպատակասլացությունը, ղգացմունքների անմի-
ջականությունը: Զերմ, նվիրական ղգացմունքները լիրիքական
շեշտով արտահայտելու համար կարևոր է ընտրել համապատաս-
խան ձևեր: Սահյանն անպայման լավ գյուտ է արել ոչ միայն մե-
տաֆորների ընտրության մեջ, այլև բանաստեղծության ձևի, երա-
ժեշտականությունը խորապես ներգործում են ու վարակում ըն-
թերցողին հեղինակի արամադրությամբ: Ամեն քառյակի վերջում
դալար բարդու հեռավորությունն ընդգծելով, պոետը կարծախի խո-
րությունն է մատնանշում, ավելի վարակիչ ու համակիչ դարձնում
գրությունը: Վերածնված Նայիրյան երկիրը համեմատելով իր
մանկության արտի ճամփի վրա խշշացող դալար բարդու հետ,
Սահյանը մեկնել է հայ ժողովրդի հայրենի երկրի այսօրվա երջան-
կությունը, որը դալարում է ու կանաչում, զմրուխտե շորեր հա-
գած շորերում: Պատերազմի փոթորիկների, մահվան ահափոր

վտանգներն մեջ գտնվող մարդու վառ մտապատկերներն են դրանք.. որոնք դոյանում են դեպի Հայրենիք տաժաժ անհուն սիրուց:

Քաղցր հուշեր ու անձկալի կարոտ են ամփոփված նաև «Նամակ-ճակատից» բանաստեղծության մեջ: Ինչպես նախորդ, նույնպես և այս գործի առավելություններից մեկն այն է, որ սովետական իրականությունը ընկալվում է համապարփակ և միևնույն ժամանակ արտահայտվում է մեր ազգային բնորոշ կոլորիտով: Դեպի հայրենի երկիրը, դեպի ծննդավայրն ու հարազատները տաժաժ սիրո մեջ լեզու է առնում սովետական հայրենասիրությունը:

Մարտի կարճատև դադարներին, ամեն անգամ, զինվորը ստվերացած անցնում է իր ծննդավայրով: Այդ մարդկային ըզ-զացմունքը տվյալ դեպքում հոգի է առնում Սյունյաց աշխարհի բնապատկերներով, ուր «Ժայռերն ահա անմատչելի գահույքներից նայում են ցած», «ձիերի պես արշավանքում արձանացած»: Այդ ժայռերի դիմով «Թուխ ամպերի քարավանն է գնում գալիս», «Իսկ ներքևում նվիրական Որոտանն է հորձանք տալիս»:

Բանաստեղծի մոտ բնության այս պատկերները ինքնանպատակ չեն: Մարտիկը խորհրդածող էսթետի հայացքով չի նայում դրանց: Այդ խուլ կիրճերում ու լեռնային բարձունքներում տրոփող կլանքն է նրան հետաքրքրում: Աներևույթ թելերով դեպի իրեն են ձգում ոչ միայն հարազատ բնությունը, այլև կլանքը, մաղ-դիկ, որոնք խտանում են, անձնավորվում մեկի մեջ, որն ամենից մոտ է մարտիկ - բանաստեղծի սրտին: Հիշողության մեջ դալիս են անցնում Որոտանի եզերքով «կաքափող աղջիկները».. բայց «ներանցից մեկն է միայն մերթ փոթորկուն ու մերթ շվար», «ստվեր դարձած շրջում» սլոետի հետ «Կարպատների փեշերն ի վար»:

Իրեն զգալով թիկունքի մարդկանց կոլեկտիվի անանջատելի մասնիկը, խոր հավատով լցված դեպի այդ կոլեկտիվը, մարտիկը կոչ է անում եղբայրություն անել իր սիրած աղջկան, ծով կարոտից լաց լինելիս ներել նրան, որովհետև սիրտը նուրբ է, քահելու-թյան սխալները ուղղել և ճիշտ ճամփու բերել, հավատը կորցնելիս հավատ ներշնչել նրան:

Շատ պատերազմներ են տեսել ժողովուրդները, բայց և ոչ մի հասարակության մեջ զինվորը հաստատ հավատով չի դիմել կո-լեկտիվին՝ իր նվիրական զգացմունքներով: Մահագործական կար-գերի պաշմաններում պատերազմը համաժողովրդական աղետ էր ոչ միայն այն պատճառով, որ հաղարամիոր բնտանիքներ կորցնում

էին իրենց հարազատներին, բնավեր դառնում, այլև զինվորը կռվի դաշտից վերադառնալով կամ քանդված, կամ խարխլված էր դըտնում հայրենի օջախը, երբեմն արատավորված ու ոտնահարված իր պատիվը:

Սովետական ժողովրդի Հայրենական պատերազմը այլ պատերազմ էր իր բնույթով: Այդ պատերազմը մղեց նոր հասկոթյուններով օժտված մի ժողովուրդ, որի ամբողջ կյանքը հիմնված է սոցիալիստական սկզբունքների վրա, կոլեկտիվ համակեցության նորմաների վրա: Սովետական զինվորը վստահ էր, որ իրեն և իր հարազատներին նեցուկ է մի հսկա կոլեկտիվ, որը կօգնի և մարտերում և՛ թիկունքում:

Թիկունքի մոտիվներն ավելի լրիվ ու կենսական են հնչում «Որոտանի եզերքին» շարքում: Այս շարքը մի ոգեշունչ երգ է զինվորի ճամփան պահող հայրենի բնության և այդ վերադարձի արագացնելու համար անխոնջ աշխատող մարդկանց հեռուստյան մասին: Որոտանի եզերքին այդ վերադարձին են սպասում ուռենին՝ ճգայացքը լուրջ ջրերին, ականջը ձայնի», նուրբ աղավին, որը «դաշտերն առած հայացքում», օրն ի բուն զինվորի ճամփան է պահում: Սրանք բոլորը մանկության ընկերներ են՝ քաղցր հուշ դարձած բնության հրաշալիքները, որ մարտիկը վերապրում է պատերազմական դեպերումների մեջ: Սիրած աղջկա, մոր, ալևոր հոր կարոտի հետ միախառնվում է, ձուլվում շնորհակալության զգացմունքը դեպի կոլեկտիվը, որի անդամներից ամեն մեկը աշխատում է ինչով կարող է թե ու թիկունք տալ զինվորին:

Եթե 1-ին, 2-րդ հատվածներում խոսվում է վերադարձին ըստպասող բնության և հարազատների մասին, շարքի 3-րդ հատվածում արդեն ժողովրդի համահավաք ուժի գովերգն է անում բանաստեղծը: Որոտանի եզերքին մի բարի պառավ նուրբ գուլպաներ է գործում զինվորի համար, մի ծերունի զգեստներ է կարում, իր հոգու բոցը դնելով դրանց մեջ, որ սառնամանիքներում ջերմանա զինվորը, ջաղացպանը ալյուր է աղում, այգեպանը անոթ՝ մրգեր է քաղում, հովիվը հոտից դառ է ջոկում — մարտիկին նվեր ուղարկելու համար:

Պատերազմի օրերին սովետական թիկունքի առօրյան էր սա՛նրոտանի և Հրազդանի եզերքներից սկսած մինչև Սառուցյալ և ձաղաղ օվկիանոսի ափերը: Որոտանի եզերքի իրադարձություններն մեջ պայծառ գույներով անդրադարձավ մեր Հայրենիքի բոլոր

ժողովուրդներին՝ աշխարհաշուշակ աշխատանքային սխրագործությանը:

Այս ամենը մի տեսակ, իմաստավորվում, ամենահաղթ ուսումնական ուժ է դառնում բանաստեղծության մարտաշունչ հերափակման մեջ:

Որոտանի եզերքին մի հմուտ դարբին
Քրտնում, պայտեր է կռում իմ ձիու համար,
Ախ, նա ծեղից մինչև ծեղ աչքերն իմ ճամփին,
Ասպանդակներ է կռում իմ ձիու համար:
Նա, որ ջահել օրերում կտրուկ թուր առավ,
Վազայի մոտ, Դոնի մոտ հաղթանակ տարավ
Հիմա հեռու, հեռավոր իր հին դարբնոցում
Կայծակ թրեր է կռում — ճամբի ինձ նվեր...
Նվերներով ձեր անգին, ով մտերիմներ,
Դուք կռում եք հաղթանակը մեր —
Որոտանի եզերքին, իմ Որոտանի:

Հարազատների սպասումի հյուզերը բացառիկ ուժով և լիրիկական ջերմ շնչով արտահայտված են «Այգեպանը» բանաստեղծության մեջ: Զգացմունքների խորությամբ, հետևապես և վարակիչ ուժի տեսակետից այս գործը համարյա ոչնչով էտ չի մնում Վնայիցյան դալար բարդի»-ից: Պատկերները ազդեցիկ են: Կովից ցարձե, է այգեպանի որդին:

Եկե՛ք ես ահա, երկար ճամփաների
Ծաղկանց փոշին վրադ, կանգնե՛ք իմ այգում
Ու խոսում ես ինձ հետ, օտար եզերքների
Փրկված հորիզոններն առած քո հայացքում:

Հաղթանակած, օտար եզերքներից փրկված հորիզոնները հայացքում տպավորած, հարազատ որդուն այգեպանն ընդունում է նրա գործի վեհության գիտակցությամբ: Որքան սրտառու է այդ հանդիպումը: Ծնողական խանդաղատանքով լի այդ հանդիպումը ծերունու համար վերածնունդ է ու նոր կյանք, և նա սպասումի ժանր տարիներն է հիշում:

Չորս անգամ ալրեցի տերևն անցած աշնան,
Չորս անգամ իմ այգուց ծուխը թևահարեց
Կապույտ թռչունների նրամների նման

Գնաց, անտառներին դարուն ազդարարեց:
Զորս անգամ չիրփրեց գինին մեր հնձանի,
եվ ծանրացան մրգով այգուս ծառերն իմ դեմ.
Քանի անգամ մահը եկավ, որ ինձ տանի,
Ասի մնա, մինչև որդուս գալը տեսնեմ:
Մահը կորավ գնաց, ով իմանա թե ուր,
Նա մոռացավ կանաչ ճանապարհը իմ տան,
ես ապրում եմ դարձյալ— գլխիս ձերմակ գանգուր
եվ բուրում է կրծքիս վարդը ջահելության:

Մեղադրական սերը և հերոս որդու վերադարձի կարոտը հաղթում են մահվան: Սա մեր ժամանակի հումանիզմի բանաստեղծական վերարտադրության մի գեղեցիկ նմուշ է:

Մահյանի ստեղծագործությունը դերծ չէ նաև լուրջ վրիպումներից: Դժբախտաբար միշտ չէ, որ պոետը անձնավորվում ու մրտաժուժ է հասարակականորեն: Երբեմն նա կտրվում է իրականությունից, դադարում է իրեն ստեղծագործող կոլեկտիվի անդամը զգալ, կյանքի երևույթները դիտում է այս անգամ արդեն ոչ թե իրենց օրինաչափ շարժման ու դարգացման մեջ, այլ իր նեղ զանգակատան նույնքան նեղ պատուհանից: «Ծխախոտը» բանաստեղծությունը մեր ասածի համոզիչ իլյուստրացիան կարող է լինել: Մովայինը (ավելի ճիշտ բանաստեղծը) նավարկության ժամանակ իրեն դիտում է իր սիրուհուց անջատված, հետևապես և «արարաշխարհից անջատված», շորս բոլորը հինավուրց ծովն է: մերթադետավոր, մերթ շնադատես: Եվ միակ բանը այս պայմաններում, որը նրան կապում է ցամաքի հետ... ծխախոտն է, որին և «փոստաբանում» է նա: Ըստ պոետի «Ձանձրույթ դեք» երեք թշնամի ունի «սրտագին երգը», «սուրբ խաղողի կաթը» — գինին և ծխախոտը: Բանաստեղծը խոսում է մարտական հանգամանքների մասին, բայց այս անգամ, պատերազմական պայմաններում, նրա հերոսը արարաշխարհից կտրված «ձանձրույթ դեք» գերություն մեջ ծխախոտին, գինուն և լավ երգին ապավինած մի անձնավորություն է: Այս պատկերները հիշեցնում են ավելի շուտ նախառևուրցիոն շրջանի մատրոսային կաբակների միջոլորտը և տարօրինակ է, որ նախորդ բանաստեղծությունները և «Ծխախոտը» գրված են միևնույն ձեռքով ու գրչով: Պարզ է, որ այս բանաստեղծությունը, ինչպես և այդ կարգի մի քանի ուրիշները արդյունք են բանաստեղծի

տեղծի գաղափարական լուրջ խոտորումների, իսկ դրանք էլ հետե-
վանք այն բանի, որ Սահյանը երբեմն կտրվում է իր ուժեղ
և ճշմարիտ արվեստի մայր՝ սովետական իրականությունից, վա-
հանք զարկելով իր ներաշխարհի դռներին:

Այդ խոտորումները երբեմն դրսևորվում են որպես միաստիկ
խորհրդածություններ, երբեմն էլ ունայնամիտ ֆորմալիստական
ցատկոտումներ: Ահա «Երազ» բանաստեղծությունը: Երազում
բանաստեղծին իրենց թևերի վրա են առնում աստղերը և անծանոթ
աշխարհներ տանում, նա մտնում է ինչ որ «երկնային ամրոցներ»,
«լուին դրախտներ»: «Բույր աստղիկները» շուշաններ են բերում և
նրա գլխին «անթառամ պսակներ դնում», ... «արքայական այգի
դրախտի մեջ», «իբրև թիապարտ», տխրում է բանաստեղծի հոգին:
Այս բոլոր մաշված ֆոկլորաներին Սահյանը դիմում է, որպեսզի
վերջում ասի, թե այդ բարձունքներից իրեն ցած է քաշում իր հոթ
օջախի մանուշակյա ծուխը: Նախ, վերև հիշված պատկերներից,
էպիտետներից հետամնացություն, խնկի հոտ է գալիս: Ապա և
ամբողջ բանաստեղծությունը շարված է միաստիցիզմի խիտ գույ-
նեղով և միտք էլ չկա մեջը:

Օրեկտիվ լինելու համար պետք է նշենք, որ վերոհիշյալ առու-
մով խոշոր թերություններ ունեն Սահյանի նախապատերազմյան
շրջանի ստեղծագործությունները: Վերջին՝ «Առաքաստ» ժողովածուի
արժեքը զգալի չափով իջեցնում են այն գործերը, որ հեղինակը,
չգիտենք ինչու, հարկ համարեց վերահրատարակել իր գաղափարա-
պես հազեցված և արվեստով աչքի ընկնող գործերի հետ:

«Առաքաստ» ժողովածուի մեջ տեղ գտած ստեղծագործությու-
ների մի զգալի մասում բանաստեղծը կրկնեղում է ինքն իրեն,
խոսում է նույն թեմայի մասին տարբեր վարիանտներով: Երիտա-
սարդ բանաստեղծի համար այս հանգամանքը կարող է սպառնա-
լիք դառնալ, եթե դա սխառեմի վերածվելու տենդենցն ունի: Ինքն
իրեն կրկնեղեղ, — նշանակում է սպանել դեպի նորի ձգտումը,
կանգ առնել կիսատ թողած ճանապարհին, չորոնել և չգտնել այն,
ինչ նոր է: Իսկ այդ վտանգը Սահյանի համար չի վերացել: «Ռո-
տան» հաջողված շարքի մոտիվների կրկնություններ կան, օրի-
նակ, «Փառք մեր դորքին ու մեր զենքին», «Ինձ», «Գյազբել սարի հո-
վերն են կանչում»: «Հանդիպումներ», «Մեղվաբույծը», «Հովիվը»
բանաստեղծություններում, որոնք բովանդակությամբ և արվեստով
թույլ են: Առանձին գործերում չմտածված ու չպատճառաբանված.

կամայական դրույթներ են ստեղծված: Վերցնենք թեկուզ «Մեղվաբույժը» բանաստեղծությունը: Մեղվաբույժ հայրը չորս տարի քսպասում է իր որդու վերադարձին: Թեման նույնն է, ինչ «Այգեպանը» բանաստեղծության մեջ: Բայց եթե վերջինս ողջախոհ է, գաղափարապես հստակ և կոռ, ապա նախորդը նրա հակոտնյան է: Չգիտես ինչու մեղվաբույժը որդու վերադարձը դիմավորում է իր ունեցած չունեցածը բաժանելու վճիռով:

Բաժանում 'եմ ահա, ինչ կա իմ հարկի տակ,
Թող իմ մառաններում դատարկություն տիրի,

Միայն մարդուս հոգին թող չլինի դատարկ,

Միայն սիրտ ունենա, որ հավիտյան սիրի:

Ինչու է բանաստեղծը այսպես բռնազբոսիկ կերպով մատանների լիություն ու դատարկության և հոգու լիության ու դատարկության միջև հակադրություն ստեղծում, չես հասկանում: Այս կեղծվիճակը հեղինակը ստեղծում է, որպեսզի ցույց տա ծնողական նվիրական սերը, որը մի բան է հայցում՝ թող ինչ ուզեն տանեն, միայն թե իր սիրտը թողնեն որդուն սիրելու և նրան «օրհնելու համար միայն լեզուն» մնա: Մի՞թե մեր պայմաններում որեւէ մեկը սպառնում է աշխատավոր մարդու սիրտն ու սերը խլել, կամ լեզուն առնել: Ի՞նչու է նա զրանց փոխարեն առաջարկում իր ողջ ունեցվածքը: Պարզ է, որ բանաստեղծը ծնողական սերն արտահայտելու սխալ միջոցներ է բնորոշ և այս ձևով չէ, որ այդ վե՛րգացմունքը պետք է արտահայտվեր:

Սահյանի լեզուն, ոճը անաղարտ չեն, քիչ չեն անախրոնիկ, իրենց դարն ապրած արտահայտությունները, մետաֆորները: «Սահմանաքարը» բանաստեղծության մեջ խոսվում է պարտիպանի սրի մաշին և պոետը այս սուրը «ավանդական» ածականով է որակում: Պարտիզան և «ավանդական սուր» հասկացողությունները իրար չեն բռնում: «Հերոսիկը» բանաստեղծությունը մի տեսակ իդեալականացնում է մեր ժողովրդի անցյալի հետ կապված հասկացողությունները: Հերոսիկը հատկանշական է մենատնտես, սակավո՛ւժ դուրացիության չարքաշ աշխատանքի համար, և միաժամայն տարօրինակ է, երբ բանաստեղծն այն հանձնարարում է որպես «բոլոր երգերից ջինջ և խոր» և կոչ է անում, որպեսզի էլ «երկարի հայոց երկրի իմաստուն հայրերի հորովելը»: Մի՞թե ժամանակակից կոլխոզային կյանքում բանաստեղծը չի լսում ավելի ջինջ ու խոր

էրգեր: Համարյա բոլոր ստեղծագործութիւններում սփռված են նման արտահայտութիւններ՝ «մայրենական... դրախտ», «ավանդական սուփրա», «ավանդական սուր», «օրհնում են քո դրախտը», «օրհնում եմ ճանապարհը», «ավանդական ջրաղաց», «սուրբ հող» և այլն: Այս արտահայտութիւնները հնից են գալիս և ժամանակակից կյանքի արտահայտչական միջոցներ ծառայել չեն կարող: Մեր օրերի մարդը այդպիսի մտապատկերներ չի կառուցում:

Այս թերութիւնները ցույց են տալիս, թե որքան շատ և քրքրանաջան սկեսք է աշխատի շնորհալի պոետը, որպէսզի ավելի կատարելագործւի նրա արմատը:

Հայրենական պատերազմի տարիներին մեր բանաստեղծներից Աթանես Սենալը, Արտաշես Բորենցը, Նիրեմ Լոռենցը և ուրիշները գրեցին նոր գործեր: Եթե անցիալիստական խաղաղ շինարարութեան շրջանում սրանց երգերը անգրագրածնում էին մեր երկրի մարդկանց ստեղծագործական աշխատանքն ու երջանիկ կյանքը, ապա այժմ մեր երիտասարդ հեղինակների ստեղծագործութիւնները կարդալիս, ընթերցողը վերապրում է հայրենապաշտպան մարտերի հերոսիկան: Վերե թված բոլոր հեղինակներն էլ Սովետական Բանակի շարքերում, տարբեր ռազմաճակատներում, մարտնչում էին թշնամու դեմ:

Ահա՛վոր մարտերի մեջ նրանց զորավիգ է մոտալուտ հաղթանակի անխախտ հավատը: Աթանես Սենալը, օրինակ, մարտնչելով ուկրաինական հարթութիւններում, հետեւյալ տողերով է արտահայտել միլիոնավոր սովետական մարդկանց այդ հավատը.

Կազատենք մենք քեզ անգղներից սև,

Կիջնի քեզ վրա ծաղկառատ դարուն,

Նորից կժպտա փառքը քո վսեմ

Արեգականմերձ մեր լայն աշխարհում:

Սովետական ամեն մի զինվոր, ուր էլ նա լինե՛ր՝ Լենինգրադի պաշտպանութեան դիրքերում, Ստալինգրադի մատուցներում, թե Կովկասի նախադռներում, գիտե՛ր, որ պաշտպանում էր մայր Հայրենիքը, իր մանկութեան ու պատանեկութեան օրորանը, իր երջանկութիւնը. այն հարազատ քաղաքն ու գյուղը, ուր ապրում են իր ծնողները, հարազատները, ընկերները:

Արտաշես Բորենցը, որ Բաքվի խոստումնալից բանաստեղծներից էր, կոմիտ էր Կովկասի նախագուներում, Թերեքի ավերին: Հետագայում, երբ Սովետական հերոսական Բանակը գերմանական հորդաներին դուրս քեց Կովկասից և հալածեց դեպի Մեծմուրթ, Բորենցը հերոսի մահով ընկավ հայրենապաշտպան մարտերից մեկում: Ահա թե ինչպես է Բորենցը երգում մեր մարտիկներին անձնվիրության մոլոր հասարակական դիտակցությունը.

Տես, ահա քո ետև սեզ Բաքուն է շնչում,
Քաղաքը քո, հորդ արյունով իր այնքան
Մեր մեծ գոտեմարտի անիվներն է շարժում,
Քաղաքը քո անգին, հարազատ ու բարի,
Ուր սիրաբար նա քեզ փայել է իր ծոցում,
Ուր առաջին անգամ լարերը քո քնարի
Հողանջել են նրա երկնքի տակ ցնծուն:



Որոտացին Հայրենական պատերազմի թնդանոթներից վերջին հաղթական զարկերը թշնամու հողի վրա, գերմանական ֆաշիզմի ուրջերը ավերվեցին սովետական ժողովրդի հարվածների տակ: Մեր երկիրը կրկին անցավ սոցիալիզմի խաղաղ շինարարությանը, շարունակելով իր հաղթական առաջխաղացումը դեպի կոմունիզմ: 1945, 1946, 1947 թ. թ. Ադրբեջանի սովետահայ բանաստեղծները իրենց ստեղծագործությունների մեջ աշխատեցին վերարտադրել հետպատերազմյան խաղաղ շինարարության թափը: 1946-1947 թ. թ. ընթացքում լույս տեսած ժողովածուների մեջ մենք արդեն տեսնում ենք այդ թեմայի նմուշները: Պեսը է ասել, որ մեր պոետներն այս ուղղությամբ առաջիմ առաջին քայլերն են արել, և դեռ հրապարակի վրա չունենք քիչ թիվ շատ նշանավոր գործ սոցիալիստական շինարարության այս նոր էտապի առանձնահատկությունները վեր հանող:

Բանաստեղծ Աթանես Սենալը, պատերազմի օրերին, որպես Սովետական Բանակի հրամանատարներից մեկը, տասնյակ հազարավորների հետ ապրեց նախ ժամանակավոր, մասնակի անհաշողությունների դառնությունը, ապա և մեր համաշխարհային պատմական հաղթանակի երջանկությունը: Նա սեփական աչքերով տեսավ ֆաշիստական հորդաների բարբարոսությունը Ռուսաստանի լայնատարած հարթությունների վրա, դրա հետ մեկտեղ սովետական ժողովրդի հաղթանակը, նրա զորագնդերի մոտաքը

Ավրուպա, դորադնդեր, որոնք ազատագրեցին ոչ միայն մեր երկրի օկուպացված մարզերը, այլև եվրոպական ժողովուրդներին, իրկեցին քաղաքակրթությունը ֆաշիստական վանդալներից:

Այդ մոտիվներն են հենց արժարժվում 1947 թ. լույս տեսած «Ծիածան» բանաստեղծությունների ժողովածուում: Բայց և պատերազմական շրջանի ստեղծագործությունների կողքին. այստեղ կան նաև գործեր, ուր վեր է հանվում հետպատերազմյան թեմատիկան: Սենալը մեր բանաստեղծներից առաջինն է, որ բավական հաջողված լիրիքական ֆրագմենտով երգեց Ադրբեջանի հետպատերազմյան զարգացման հնգամյակի խոշորագույն կոթողներից մեկը՝ Մինգեչաուրի հիդրոհանգույցի շինարարությունը:

«Մինգեչաուր» լիրիքական ֆրագմենտում, նկարագրելով պատերազմի փորձություններն ապրած և այժմ այս հսկայական շինարարությունն սկսած ժողովրդական զանգվածների ռզեշունչ աշխատանքը, բանաստեղծը ումանտիկական հայացք է ձգում դեպի մերձավոր ապագան, երբ Միլի երբեմնի անպտուղ անապատում բարձրանալու են համայնական արտերը, գարնանը կկանաչեն և ուշ աշնանը ձյունափայլ սավան կփռեն բամբակի պլանտացիաները, երբ բարձրակատար ու հովասուն շինարիներն ու բարդինները կսոսափեն այս խանձված տարածությունների վրա, երբ իր ընթացքը փոխած Փռի ջրերը կենդանություն են բերելու այս մրկված հողերին: Բանաստեղծը այսօրվա շինարարական եռ ու զեռի ու զնգոցի մեջ լսում է երբեմնի դատարկ տարածությունների վրա վեր բարձրացող սոցիալիստական նոր քաղաքների սիմֆոնիան, քաղաքներ, որոնք այդ խավարամած տարածությունները ողողելու են նոր հիդրոհանգույցի շաւլ լույսերով:

Վերջին տասնամյակի ընթացքում Ադրբեջանի հայ արձակագիրներից Մարգար Դավթյանը հրատարակեց մի շարք ժողովածուներ: Նրանից առաջ լույս տեսած «Առաջին կինը», «Երջանկություն» ժողովածուների մեջ տեղ գտած գործերը մեծ մասամբ բնորոշ են որպես հեղինակի գրական գործունեության առաջին շրջանին հատուկ սյուժետային թեմատիկաներով, ապա հետագա ժողովածուները՝ «Ուլիղ ճակատին», «Ծիրանի ծառ» և «Վերադարձ»-ը հեղինակի աճման նոր ապացույցներ բերին:

Իր երկերի զգալի մեծամասնության թեման առնելով սովետական գյուղի կյանքից, Դավթյանը հետամուտ է լինում մեր գյուղացիության գոյավիճակի և գիտակցության մեջ տեղի տունեցող

պատմական որակական խոշորագույն փոփոխություններին:

Դավթյանը հաջողությամբ սովորում է և հետևում է հայ ժամանակակից պատմվածքի խոշոր վարպետներից մեկին Ստեփան Զորյանին:

Այս տեսակետից էլ հենց հետաքրքիր է համեմատել Զորյանի առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի վերաբերյալ պատմվածքները Դավթյանի այն գործերի հետ, որոնք արտացոլում են մեր գյուղը համաշխարհային երկրորդ պատերազմի օրերին: Ստեփան Զորյանի «Պատերազմ» պատմվածաշարքը վեր է հանում շահագործական կարգերի պայմաններում հայ գյուղի և գյուղացու ողբերգական վիճակը տնտեսական, քաղաքական, կուլտուրական տեսակետից: Գյուղի զուրանների կրոնիկների տակ հեծող գյուղացիության համար պատերազմն անասելի պատուհաս է, որը մահ է բերում հազարավոր երիտասարդ մարդկանց, փլվում են գյուղացիական օջախների սյուները, ընտանիքները ոչ միայն զրկվում են հայրերից ու որդիներից, այլ՝ ռադմաճակատը նրանց կուլ տալով, զրկում է գյուղացու ընտանիքը կերակրողներից: Սովն ու ավերածությունը պատերազմի անխուսափելի ուղեկիցներիցն են, որոնք անողորմաբար թափում են աշխատավոր ու ընչազուրկ գյուղացու դռները: Գյուղի հարուստները, պատերազմի այդ սարսափների մեջ ավելի լուժդին են լինում ու հարստահարում: Շահագործական կարգերի գայլային օրենքների համառ տրամաբանությամբ պատերազմը աշխատավոր գյուղացուն մահ է բերում հեռու հեռավոր դիրքերում, բնաջնջում է նրա հարազատներին, հայրենի հարկի տակ: Սա համապարփակ քայքայման մի ահավոր պրոցես է:

Այլ հարաբերություններ են տիրում ժամանակակից գյուղում: Սովետական իշխանության տարիներին կերպարանափոխվել է նաև վերացված են շահագործողները, երբեմնի լիոշիացած, սակավազոր տնտեսությունները վաղուց պատմության գիրկն են անցել: Հաղթանակել են կոլխոզային կարգերը, կոլեկտիվ աշխատանքը և սոցիալիստական համակցությունը գյուղական կյանքի անքակտելի սկզբունքներն են դարձել: Չկա նախառեռուցիոն մոճավանջային խավարն ու «գյուղական կյանքի իդեոտիզմը»: Ազատագրված աշխատանքի մեջ փոխվել են գյուղի մարդիկ, փոխվել են և իրենց գոյավիճակով և հայացքներով: Լուսավորությունը, կուլտուրան, առավել լուսավոր ապագայի պայծառ հեռանկարները:

աշխատեցին տպելու աշխատավոր գյուղացուն: Նա անխոնջ աշխատում է հասարակության և իր բարեկեցության համար: Կոլխոզային գյուղացու մտքի հորիզոնները լայնարձակ են, նրանք չեն սահմանափակված իր խրճիթի պատերում, հայրենի գյուղի նեղ շրջանակներում: Նա սովետական հասարակության անդամ է, որը ճանաչել է ու պիտակցել ինքն իրեն: Այստեղից էլ հասարակական և անհատական շահերի այն ներդաշնակությունը, որը բնորոշ է մեր գյուղացու համար:

Այս ամենի շնորհիվ ծնվել ու իմաստավորվել է հայրենասիրության հասարակական դիտակցությունը գյուղացիական զանգվածների մեջ: Ահա այս պայմաններում պայթեց համաշխարհային երկրորդ պատերազմը, որը սովետական ժողովրդի համար ազատագրական պատերազմ էր ուղղված ռեակցիայի, բարբարոսության, իմպերիալիզմի դեմ, հանուն սոցիալիզմի նվաճումների պաշտպանության, հանուն իսկական ազատության, դեմոկրատիայի:

Մարզար Դավթյանը «Ծիրանի ծառ» ժողովածուում (1944 թ.) զետեղված պատմվածքներում և «Վերադարձ» վիպակում (1946 թ.) վերարտադրել է կոլխոզային գյուղի իրադարձությունները Հայրենական պատերազմի օրերին, աշխատել է գեղարվեստորեն ընդհանրացնել մեր գյուղացիության հատկանշական բնութագծերը: Ամենից առաջ գյուղացիության ներկայացուցիչները ամենուրեք հանդես են գալիս և զործում են սովետական մեծ ժողովրդի հավաքական անխորտակելի ուժի նկատմամբ հաստատուն հավատով, նրանք մի հսկայական, միաձուլյ կոլեկտիվի անդամներ են:

Ուղեմանակատում և թիկունքում նրանք մի նպատակ են հետապնդում՝ կռվել ու աշխատել այնպես, որ ապահովվի մեր հաղթանակը: Դավթյանը կոլխոզային գյուղի մարդկանց գործերը նկարագրելիս հարադատությամբ ցույց է տալիս նրանց հայրենասիրական ավելներ: Պատերազմի գնացած ամուսնուն աշխատանքի հակատում փոխարինում է կինը, որդու փոխարեն կոլխոզային դաշտերի մշակումը առաջ են մղում ծնողները, որոնք պատերազմից առաջ ապահով հանգստություն էին վայելում: Հասակն առած մարդիկ, կանաչք, պատանիները տնօրինում են կոլխոզի գործերը: Դուրս հաջողությամբ, ինչպես պատերազմից առաջ դրանք իրենց

ուսերի վրա տալու մ էին գլուղի երիտասարդ մարդիկ, որոնք այժմ հարկադրված են թողնել տրակտորի ղեկը և զենք վեր առնել:

Պատերազմի պայմաններում ցայտուն կերպով դրսևորվում է գլուղացիության դիտակից նվիրվածությունը Հայրենիքին և ոչ միայն այդ. երևան են գալիս մեր մարդկանց բարոյական բարձր հատկությունները, որ ծնվել են ու զարգացել սովետական կարգերի պայմաններում: Գլուղում մնացածները իրենց գործով, մտքով և սպասումներով պատերազմի դաշտում մարտնչողների հետ են: «Վերադարձ» վիպակում Դավթյանը այս հանգամանքը մատնանշում է կոլխոզնիկների անձնվեր աշխատանքի ընդհանուր ֆոնի վրա:

Սակայն ամեն ինչ չէ, որ գլուղում շարժվում է հարթ ճանապարհով: Այստեղ նոր ձևերով շարունակվում է պայքարը հնի ու նորի միջև: Կապիտալիզմի մնացուկները մարդկանց դիտակցության միջից դեռ լիովին արմատահան չեն արված: Գլուղում դեռ կան մարդիկ, որոնց համար անձնականը գերադասելի է հասարակականի հանդեպ, որոնք երբեմն ոտնահարում են հասարակական համակեցության կանոնները, արհամարհում են բարոյական առաքինությունը: Այդպիսին են, օրինակ, կոլխոզի հաշվետար Փազանենց Աթանը, անասնաբույժ Դարբինյանը, որոնք երկրի համար ծանր ու սպառնալից վտանգների պահին, դերի են դառնում իրենց անձնական զգացմունքներին, վարքով ու վարմունքով բացասական դիրք բռնելով ընդհանուրի շահերի հանդեպ: Աթանը թշնամի չէ, բայց նրա ամուսնանալը ճակատալիքի կին Անթիկի հետ նվաստեցնում է նրան գլուղացիների աչքում և վարկաբեկում: Դավթյանը Աթանի այդ դատապարտելի քայլը պատճառաբանում է նրա համոզմունքամբ ու ինքնահավանությանմբ, հատկություններ, որոնք ընկերասիրության, ընկերոջը հարգելու, նրա ընտանիքի պատիվը պաշտպանելու զգացմունքներին ընդդիմադիր, հակառակ բեկոններ են:

Եվ միանգամայն համոզիչ է Անթիկի ծանր, հոգեմաշ վիճակը, երբ ռազմաճակատից վերադառնում է ամուսինը: Ծիշտ ճանապարհից խոտորված կնոջ դարձը դեպի ամուսինը խախտված հավատարմության վերականգնումն է: Հին գլուղում այսպիսի դարձն անհնար էր: Ադաթի ու հետամնացության թագավորության մեջ սխալված կնոջ ներումը նույնիսկ սիրող ամուսնու կողմից համարյա անիմաստ էր: Նոր գլուղում, որտեղ մարդկանց գործողու-

թյունների վրա իշխում է գիտակցությունը, այդ դարձո տրամաբանական է և համոզիչ:

Հավատարիմ և անբասիր սիրո մի ցայտուն նմուշ է կոլխոզ-նիկ, իսկ հետո սովետական բանակային Երվանդի և կոլխոզնիկու-հի Արաքսյայի անդամաձան սերը: Արաքսյան սիրածից երկար յամանակ անջատված լինելով, իր մխիթարությունը գտնում է տնձնուրաց աշխատանքի մեջ: Աշխատանքը և այն գիտակցությու-նը, որ ինքը օգտակար է Հայրենիքին, նեցուկ են լինում նրան, որ նա անկոտորում հավատով սպասի Երվանդի վերա-դարձին: Եվ որքան էլ անասնաբույժ Դարբինյանը, թեև ազնիվ գլխացմունքներով, փորձում է շեղել Արաքսյային, նա անդրդվելի է մնում իր սիրո մեջ:

Սանթուր քեռին, Եփրեմ բիձան, Նավասարդ ապերը կյանքի և աշխատանքի մեծ փորձով զինված և կոլխոզային ուղու էջմարտու-թյունը հասկացած ծերունիները պատերազմի օրերին ակտիվ կեր-պով լծվում են կոլխոզի դործերին, օրինակ ծառայելով ոչ միայն իրենց աշխատանքով: Նրանք իրենց անձնական վարքով, բարոյա-կան մտքությունքով կոլեկտիվին և հարազատներին միշտ նվիրած լինելու գլխացմունքն են դարձացնում համագլուղացիների մեջ:

Ա. Մ. Գոռկին, խոսելով սոցիալիստական ռեալիզմի մասին, մատնանշում է, որ գրական այս մեթոդը «...հաստատում է կեցու-թյունը որպես աշխատանք, որպես ստեղծագործություն, որի նպատակն է անընդհատ զարգացնել մարդու անհատական ընդունակությունները հանուն բնության ուժերի դեմ նրա հաղ-թանակի, հանուն նրա առողջության ու երկարակեցության, հա-նուն նրա երջանիկ կյանքի երկրի վրա, որը նա ցանկանում է իր պահանջների անընդհատ աճման համեմատ, մշա-կել ամբողջովին, որպես մի ընտանիքում համախմբված մարդ-կության սրանչելի օթեան»:

Նույնիսկ պատերազմի ահալոր օրերին սովետական մարդիկ ձգտում էին հենց այդ վեհ նպատակին, մի կողմից զենքով կովե-լով գերմանական ֆաշիզմի դեմ, մյուս կողմից իրենց ստեղծա-գործ աշխատանքը հակադրելով թշնամիների բարբարոսությանը: Կոլխոզային գյուղումն էլ հենց այդ պրոցեսն էր տեղի ունենում: Մարդիկ հավթահաքելով բնության արհամիրքները, աչքի առաջ ունեին լուսավոր ապագան:

Մեր գրողները, այդ թվում և Դավթյանը պատերազմի տարիներին իրադարձությունները նկարագրելիս, ղեկավարվել են սոցիալիստական ռեալիզմի հենց այս սկզբունքով, վեր հանելով պայքարի ու աշխատանքի մեջ սովետական մարդու բնավորությանն ու գծերը, նրա կոլեկտիվիզմը, անձնվեր հայրենասիրությունը, բարձր բարոյականությունը, անհաշտ վերաբերմունքը դեպի այն ամենը, ինչ զալիս է անցյալից ու հինն է պատկանում:

Դավթյանը 1947 թվին ավարտեց իր նոր՝ «Ուռնու տակ» վիպակը, որը հանդիսանում է «Վերադարձ»-ի շարունակությունը: Եթե վերջինիս մեջ հեղինակը ցույց է տալիս, թե ինչպիսի քաղաքական - բարոյական միասնությամբ Խոլխոզային գյուղացիությունը մասնակցեց մեր հաղթանակի կոփմանը պատերազմի տարիներին, ապա նոր վիպակում հեղինակը ավելի լայն կտավի վրա, համարձակ ընդհանրացումներով նկարագրում է այն անհաշտ պայքարը, ուր տեղի է ունենում գյուղում աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի, կենցաղի և մարդկանց դիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների դեմ: Այս վիպակում հեղինակը այսօրվա իրադարձությունները վերլուծելիս հստակ հայացքով շոշափում է լուսավոր ապագայի հեռանկարները:

Դավթյանը զգալի նվաճումներ է ձեռք բերել իր գործերի սյուժեները ավելի պարզորոշ, կառուցվածքը միաձուլյալ և կուռ դարձնելու, հետաքրքիր պատմելու բնագավառում: Հեղինակի լեզուն ավելի կուլտուրականանում է և հարստանում:

Սովետական գրականության մեջ իրենց ուրույն տեղն ունեն պատմվածքի և նովելի ժանրերը: Հայրենական պատերազմի տարիներին մանավանդ, այս ժանրերը մեզ մոտ զարգացան բավական արագ թափով: Մեր պարբերական մամուլում հրապարակվեցին բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք վերարտադրում են պատերազմի շրջանի հերոսիկան:

Պատմվածքն ու նովելը շեշտված շտրիխներով վերարտադրում են մեր բազմաբովանդակ կյանքի երևույթները, մարդու զգացմունքային աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները: Այս ժանրերում պատմական և հոգեբանական էքսկուրսիաները ժլատ են: Գործողությունները շարադրվում են հակիրճ: Լավ պատմվածքն ու նովելը այնպես խորն են տպավորվում ու մնում հիշողության մեջ, ինչպես բովանդակալից, հարուստ ու քաղցրահնչուն բանաստեղծությունը:

Վերջին շրջանում Ադրբեջանի երկու հայ երիտասարդ գրողներ Սուրեն Այվազյանը և Գևորգ Պետրոսյանը իրենց ցույց տվին, որպես այս ժանրերի շնորհալի հեղինակներ: 1947 թվին լույս տեսավ Ս. Այվազյանի «Անավարտ դորգը» պատմիածքների ժողովածուն, որի մեջ տեղ են գտել 17 գործ:

Այս երկերում արտացոլված են գլխավորապես պատերազմի տարիների իրադարձությունները, վերարտադրված են մեր ժամանակաշրջանի մարդու հույզերը:

«Անավարտ դորգը» պատմիածքի մեջ հեղինակը մի ընտանիքի երկու ունեւորի նկարագիրն է տալիս: Գաբոն սոցիալիստական ուղղույթից առաջ որբացած մի երեխա, ըմպել է շահագործական կարգերի դառնությունների բաժակը: Ծանր ու մաշող, քրտնաթոր աշխատանքը նրան երջանկություն չի բերում: Գաբոյի բուլոր գեղեցիկ հույզերը լավ կյանքի վերաբերյալ մնում են փրկված դետնափոր տան ավերակների տակ: Ղարաբամի փլատակների տակ մնաց նրա սիրեցյալ կինը՝ Սալբին, իսկ ինքը մահացու վերքեր աստացավ: Բախտի բերումով կատաստրոֆից ազատվեցին նրա երեսաները՝ Սահակը և Սոնան:

Եվ Գաբոն, մերձիմահ միճակում իր երեսաներին հետևյալն է ասում. «...Աշխարհում ամենից քաղցր բանը մայրն է, մոր պես քաղցր է պապական օջախը, քաղցր է և այդ օջախից ելնող ծուխը: Թե բախտ ունեցար, արև ծագեց քեզ համար, Ղարաբամի կողքին կշինես մի տուն, ինչպես մայրդ է ցույց տվել գորգի վրա ու կգաս գերեզմանիս վրա կասես — մուրազդ կատարվեց հայր: Իսկ դու Սոնա, մորդ հիշատակը չմոռանաս, դորգը կշարունակես»: Ուրիշ մուրազ չունենի տարիներ շարունակ ունևորների դռներին բատրակ եղած Գաբոն և նրա կին Սալբին, որ նրբերանգ գորգեր գործել գիտեր և իր քաղցր երազանքը սեփական խոճիթի վերաբերյալ տպավորել ուզեց դորգի վրա, որը և անավարտ մնաց:

Փոխվում են ժամանակները. սովետական իշխանության օրոք հաղթանակում են կոլսոսդային կարգերը. Գաբոյի զավակները Սահակն ու Սոնան կոլսոսդայիկներ են: Աշխատանքն իմաստավորվում է, դադարում է մարդու համար ծանր բեռ լինելուց, դառնում է փառքի, արիության գործ: Նախկին շարքաշ որբերի բախտը ու ճակատագիրը դառնում է կոլեկտիվի ձեռքում:

Եվ երբ պայթում է պատերազմը, Սահակը հազարավորների հետ զենք է առնում իր Հայրենիքը պաշտպանելու համար: Նույն-

իսկ պատերազմի ահեղ տարիներին կոլեկտիվի կամքով կատարվում է նրա սիրեցյալ մոր երազանքը: Զինվոր Սահակի բացակայության ժամանակ ավերակ դարադամի կողքին բարձրանում է Սալբու երազած ճերմակ տունը «մեծ լուսամուտներով, թաղված ծառերի ու թփերի արանքում»:

Իր հայրենի երկրի պատվին ու անկախությունը հերոսաբար պաշտպանած, կռից մերադարձած զինվորը թարմ ծաղկեփունջը ձեռքին մոտենում է ծնողների շիրիմին և խանդադատադին սիրո ու հպարտության զգացումը սրտում ասում. «Մեր աշխարհում ազնիվ ցանկությունները անկատար չեն մնում, կատարվեց ձեր մոլերազը. սիրելի ծնողներ»:

Երկի մտահղացումը գեղեցիկ է, իմաստալից: Այս փոքրիկ դործի մեջ կենսական մեծ ճշմարտությունն է արտահայտված:

Նույն պլանով ու ոգով է գրված նաև «Իմ մանկություն» պատմվածքը: Երիտասարդ հեղինակին հաջողվել է այս փոքրիկ երկի մեջ ցույց տալ առաջին համաշխարհային պատերազմի օրերին սովթանական Թյուրքիայում կատարված արյունոտ ինքնազոհությունը հաղթած հաղարավոր վտարանդի ու որբացած հայ մանուկների պատմական բախտը:

Պատմվածքի հերոսը արյունահեղ կոտորածների ու գաղթի ժամանակ կորցնում է իր ծնողներին ու հաբադատներին իր փրկությանը գտնելով «ռուսի հողում»:

Գաղթի երկար ու տառապալից ճանապարհներին նա իր մորը հարցնում է, թե ուր են այդպես անվերջապալի գնում: Մոր պարզ պատասխանի մեջ հնչում է մեր ժողովրդի համար անքան հասկանալի պատասխանը՝ «Ռուսի հող, բալաս, ռուսի հող: Ռուսը ուղորձած է, նրա սրտում գուցե կա, ձեռքումը ուժ»:

Անցնում են տասնամյակներ: Պատմվածքի հերոսը սովետական քաղաքացի է, այս անգամ նորից պատերազմի փոթորիկների մեջ: Երկու պատերազմ, իրենց ծավալով տարբեր, բնույթով հակոտնյա:

Պատերազմի քառուղիների վրա հանդիպում են իրան հերոսն ու այն ռուս զինվորը, որ առաջին համաշխարհային պատերազմից փրկել էր առաջինի անհայտացած քրոջը և իր կյանքը կապել նրա հետ: Գոսպիտալում, ուր պառկած են նրանք, արձակվում են պատմվածքի բոլոր հանգույցները: Քույր ու եղբայր գտնում են իրար: Նրանք հանդիպում են վերածնված, հանդիպում են որպես նոր հա-

սարակութեան անդամներ, նոր մարդիկ: Եւ այս պատմական քախտի մեջ վճռող ուժը ուսն է, ուս զինվորը, որն իր մեծ ժողովրդի մարմնացումն է:

Արվեստի տեսակետից ավելի հաջողված գործ է «Վերջին խոսքը» պատմվածքը, որը համարյա լեմատիկական նույն պլանով է գրված: Եթե նախորդ երկու երկերի մեջ գերակշռում է պատմողական եղանակը, ապա «Վերջին խոսք»-ի մեջ կան գեղեցիկ նկարագրություններ, դիպուկ համեմատություններ, որոնք անհրաժեշտ սարքեր են համապատասխան տրամադրությունն ստեղծելու համար:

...Արմավիր քաղաքի համար օրհասական օրերին գերմանացիների քաղաքը մտնելու օրվա դաժան եղանակի նկարագրությամբ Այվազյանը իրական հոգեմիջակ է ստեղծում:

«Կարճ ժամանակ առաջ բաղամարդ այդ քաղաքը լի էր կյանքով, աշխուժով: Բայց անիծված մի ուժ մեռցրել էր այնտեղ ամեն ինչ, դադարեցրել շարժումը: Միայն ազնավներն էին չարագուշակ կոկոսցով մի տեղից մյուսը շարժվում, մեկ էլ գերմանական զինվորների հարբած խմբերը, որ վայրի քրքիջով ջարդում էին անների ու խանութների գոներն ու ապակիները»:

Այս իրադրության մեջ է, որ մեռնում է Թյուրքիայից վաղուց այստեղ գաղթած, արդեն ալեզարդ Միհրդատը: Այդ պայմաններում է, որ նրա ջութակահար որդին վերջին անգամ հոր համար նվագում է հայ ժողովրդի պանդխտության երգը՝ «Կոտնկը»: Այդ մոմենտին է, որ ջութակահար Մանվելիկը բնավորությամբ հեղ, փափկասիրտ այդ պատանին հերոսանում է, ատրճանակն ուղղելով դեմանացի զինվորների կրծքին, որոնք մերձիմահ հորը ձերբակալելու էին եկել:

Այդ բախտորոշ վայրկյանից սկսած ջութակահար Մանվելիկը ձուլվում է միլիոնավոր վրեժխնդիր սովետական քաղաքացիների մարտնչող ջոկատների հետ, միշտ հիշելով հոր խոսքերը. թե «աշխարհում որդիս, ուրիշ ավելի նվիրական բան, քան ազատությունն է, չկա...»: Հաղթանակի օրերին Մանվելիկը առնականացած ու մարտերի բովով անցած սովետական քաղաքացի էր արդեն:

Այս հակիրճ ու գողտրիկ երկի մեջ ուժգնորեն բախվում են բարբարոսությունն ու հումանիզմը, գազանային հատկությունները

որ տիպական են ֆաշիստների համար և սովետական մարդու իմաստավորված գերը դեպի ծնողն ու մայր ժողովուրդը:

Մի ընդհանուր թերութուն կա վերոհիշյալ և մյուս երկերի մեջ: Այվազյանն իր հերոսների բնութագրությամբ շատ քիչ է զբաղվում: Նրանց մարդկային բարեմասնությունները ցայտուն կերպով չեն դրսևորվում: Հերոսների անհատական նկարագիրը երբեմն դժգույն է, թույլ: Հեղինակը նրանց չի անձնավորում: Այս հոսեգամանք, իհարկե ունի իր պատճառը: Նրիտասարդ հեղինակը նոր է հարթում իր ստեղծագործական ճանապարհը, և բնական է, նրա գրական աչքը դեռ վարժ չէ, ամեն դեպքում չէ, որ անտառում նա կարողանում է ամբողջությունը կազմող առանձին ծառերը տեսնել: Սա հրաժայտքար պահանջում է նրիտասարդ գրողից առաջիկայում սրել տեսողությունը, ընդհանուրի մեջ տեսնել մասնակին, ընդհանրապես մարդկայինի մեջ տեսնել անձնավորված նրբություններ: Այդ է գեղարվեստական կատարելագործման ճանապարհը:

Հեղինակը պետք է նկատի ունենա, որ պատմվածքն ու նովելը տարբերվում են թուղցիկ աննարկից, որտեղ շեշտը դրվում է իրադարձության, երևույթի վրա: Պատմվածքն ու նովելը վիպասանության նախնական դռներն են բացում և այնտեղ վերլուծական վերաբերմունքը դեպի իրադարձություններն ու մարդը անհրաժեշտ պայման է:

Այս առումով անկասկած զգալի առավելություններ ունեն «Ոչ, դու կույր չես...» և «Մովինար» պատմվածքները: Այս երկերի ատաղձը կազմում է սովետական մարդկանց բարոյականը: «Ոչ, դու կույր չես...» պատմվածքը գեղեցիկ մտահղացում ունի, շոգափում է վերին աստիճանի հուզիչ խնդիր:

Սովետական կոնսերվատորիայում տվորող Վարդանը և Գեղանուշը սիրում են իրար: Վարդանը պատերազմի ժամանակ կորցնում է տեսողությունը: Եվ ահա հրապարակի վրա է դրվում սովետական երիտասարդ կնոջ բարոյականը: Ինչպես կընդունի նա էությունը ընկերոջը: Այդ հարցին տարբեր մարդիկ տարբեր պատասխան կաթող են, տալ: Հոգով կույրերի համար ֆիզիկական տեսողությունն է կարևոր: Բայց չէ որ ավելի հրապուրիչ են հոգու աչքերը: Եվ կոմունիստական դիտակցությունը, որ պատվաստում է մեր երիտասարդությանը, դրդում է Գեղանուշին ավելի ջերմ սիրով սիրել Վարդանին, որովհետև նրա ֆիզիկականի մեջ առաջացած փոփոխությունը միայն բարձրացնում է իր ընկերոջ մարդկա-

լին անաքինությունը: Եվ, իբրեւ, չէ որ ժողովրդի երջանկության համար ամենաթանկագին զոհողությունը միմիայն ու միճխացնելու է վեհացնել մարդուն: Փարատվում են կուրացած վարդանիւ երկմտությունները: Գեղանուշը սիրում է նրան անդավաճան սիրով, քանի որ նա իր «աշքերի լույսը տվել է Հայրենիքի արեւ միշտ պայծառ պահելու համար»: Վարդանիւ և Գեղանուշի բարոյական հատկությունները բնորոշ են մեր երիտասարդության մեծամասնության համար: Հեղինակի հերոսները տիպականորեն անձնավորված են և հենց այդ հանգամանքը ներդրծիչ ուժ է տալիս պատմվածքին:

«Ծովինարի» մեջ մենք տեսնում ենք երկու դիաֆերալ հակառակ մարդկանց: Օնիկը հնից է գալիս, անձնապաշտ, կեղծ, հողեպես սնանկ մարդ, մի մարդ, որի համար ոչինչ ավելի բարձր բան չկա բացի իր հաճույքից: Նա իր «երջանկությունը» կառուցում է ուրիշների դժբախտության վրա, ոտնհարելով բարոյական բոլոր նորմաները:

Տղամարդու և կնոջ մեջ ստեղծված նոր հարաբերությունների գիտակից կրող է Լևոնը՝ Ծովինարի ամուսինը: Ծովինարի, որի պատիվը խլել էր Օնիկը: Ծովինարը մարդկային իսկական երջանկությունը գտնում է Լևոնի հետ համատեղ կյանքի մեջ:

Այվազյանի որոշ գործերը կարգալիս, մտքումդ ահամա մի համեմատություն է հղանում: Ահա մեծ պատկերասրահ, ցուցադրված նկարներից ոմանք փայլում են բնության ու կյանքի նրբերանգներով, բայց և նրանց կողքին տեսնում ես փոքր գործեր՝ գրաֆիկա, որտեղ շտրիխները հատու են, բայց ժլատ: Վարպեայի վարժ մատիտի հետքեր չեն դրանք: Բայց երբ լավ ես զննում տեսնում ես, որ կյանքն է տպավորված նրանց մեջ: Եվ քանի՜ ավելի շատ ես իմացում, այնքան համոզվում ես, որ գծերն ափիլի վարժ են դառնում, ավելի հաստատ ու համոզիչ:

Անջնջելի տպավորություն է թողնում, օրինակ, «Էյմիլա»-ն, առավել ևս Սայաթ-Նովային նվիրված երկու լեզենդները: Պետք է նկատել, որ այս գործերը լեզվի ու ոճի տեսակետից ավելի մշակված են, հղվված, քան մյուսները: Դրանք գրված են լիճիքական ջերմ շնչով:

Նույնը կասենք նաև վերջին ակնարկաշարքի մասին, որոնց թեման առնված է տոկետական գյուղի մարդկանց կյանքից: Կամ:

այն է, որ Լեւոնարկներից յուրաքանչյուրը թեմատիկական ուղույն հյուսվածք ունենալով, ձուլվում է իր նախորդի ու հետնորդի հետ, այնպես ինչպես նկարչի աւբոմի մեջ տպավորվում են ասենք նույն բնագավառից առնված փոքր էպիզոդները:

Գ. Պետրոսյանի պատմվածքները, որ ամփոփված են «Ծաղիկ» ժողովածուի մեջ, հեղինակը գրել է պատերազմի կրակների մեջ, գինվորի համար այնքան բնորոշ՝ անդադար ու տաղնապալի տեղաշարժերի պայմաններում: Դրանք փաստորեն ակնհայտ են պատմածներ են, իրադարձություններին մասնակցի տպավորություններ:

Այս պատմվածքների մեջ երևույթների գեղարվեստական ընդհանրացումները և մարդկանց հերոսների տիպականացումը թերևս անկատար են: Հեղինակը իրադարձություններն ու մարդկանց դիտել է կարճ կանգառների, մարտերի հազվադեպ դադարների ընթացքում: Եվ տպավորություններն էլ երբեմն թուուցիկ են, չկանրանց բազմակողմանի ու խոր վերլուծությունը:

«Հետախույզը եթերում» և «Հայրենիքի սերը» երկերում հեղինակը պատմում է երկու հրամանատարների հերոսական գործերի մասին:

Մարտերի վայրի աննպաստ աշխարհագրական դիրքը, մառախուղը, ծանր պայմանների մեջ են դնում սովետական զորամասը: Գերմանացիները կրակի օղակի մեջ են առնում նրան: Մեր հետախույզութունը դժարանում է թշնամու կրակակետերը հայտարարել: Այդ պատճառով էլ էֆեկտավոր չի գործում սովետական հրետանին: Այդ վճռական մոմենտին, երբ թվում էր, ելք չկա, դրությունը փրկում են սովետական մարդու հնարագիտությունը, անձնվիրութունն ու խիզախությունը: Հետախույզական վաշտի հրամանատար կապիտան Ջավադ Առաքելյանը հանդուգն թռիչք է կատարում աերոստատով, կտրում է մառախուղի շերտերը, եթերում հայտարարում դիտելու տարածությունը և մեր հրետանուն հայտնում թշնամու կրակակետերի կոորդինատները: Օդում այրվում է աերոստատը, բայց սովետական մարտիկները առաջադրությունը կատարած, պարաշյուտով իջնում են մեր զորամասերի դիրքերի մոտ:

«Հայրենիքի սերը» պատմվածքի հերոս ավագ լեյտենանտ Սարգիս Մուսայելյանի հուշակը տարածվել է ամբողջ ռազմաճակատում: Նրա լեզենդար թիկունքային օպերացիաները սարսափ են

ազդեում թշնամուն: Բայց մի մարտից հետո ծանր վիրավորվելով հերոսը ժամանակավորապես կտրվում է ախտիվ գործողություններից և կարգադրություն ստանում սովետական թիկունքը գնալ ապաքինվելու: Թշնամու նկատմամբ վրեժխնդրությամբ չի մարտիկի դժգոհմունքային աշխարհը փոթորկվում է: Եվ չգիտես ինչու այս օրինական երևույթը ունի գույներով նկարագրելու փոխարեն, հեղինակը հարկադրում է իր հերոսին մխիթարություն ուրոհել գինեմոլության մեջ: Չենք կարող համաձայնվել այս հարցում Պետրոսյանի հետ: Մեզ համար անվիճելի է այն ճշմարտությունը, որ սովետական մարտիկի խիզախությունը իմաստավորված ու խոշորապես գիտակցված երևույթ է և ինչ որ անասնական վրեժխնդրության բնազդը չէ, որ նրան հերոսություն է մղում, այլ նրա համոզմունքները: Ահա թե ինչու շատ տարօրինակ է գինեմոլության տենդր, որ համակում է Մուսայելյանին:

Կեղծ դրություն ստեղծելով, հեղինակը չի կարողանում վերստեղծել հալածաարկչությունը և պատմվածքի վերջում հարկավորված է լինում դիմել ուստորիկ, դեկլարատիվ միջոցների՝ հայտարարելով, թե Հայրենիքի սերը նրան դարձի բերեց:

Մերը գեպի Հայրենիքը, այդ վեհ զգացմունքը, որ մեր մարդկանց սուռք մղող ուժն է և մարմնավորվում ու առարկայանում է նրանց գործերի մեջ, Մուսայելյանի մարտական ընկերոջ Կատրենկոյի դատողությամբ դառնում է ինչ որ միատիկ, աներևույթ ու անշոշափելի գեղեցկուհի, որը փրկում է մահից, սառնամանիքների մեջ ջերմություն տալիս և թշնամու դեմ հաղթանակ բերում: Այս մտացածին դրությունները հեղինակը հորինում է հոգեբանական հակամարտություններ ստեղծելու նպատակով: Բայց չէ որ մտահածին դրությունը անհամոզիչ է, հետևապես և զուրկ որևէ ներգործությունից: Այսպիսով լավ թեման տուժել է, պատմվածքի տպավորիչ ու գեղեցիկ կտորների արժեքը թուլացել:

Հոգեբանական օրիգինալ շտրիխ է «Ծաղիկ» պատմվածքը:

Լեյտենանտ Մուխամեդյարովը անվրդով չի կարող նայել ծաղկաքաղին, պոկված, տրորված ծաղիկներ տեսնել չի կարողանում, որովհետև մարտերի կրակի մեջ կորցրել է իր մարտական ընկերուհուն՝ մի հայուհու, որի անունը Ծաղիկ էր: Խիզախ հեռախոսավարուհու պատկերը նա տեսնում է պերճորեն փթթող ծաղիկների մեջ և երբ նրանց տրորում են ոտքերի տակ, նա ցավով հիշում է այն աղետալի վայրկյանը, երբ անհավասար մարտի ժամանակ գերմա-

նացի զինվորը իր ծանր ոտքերն է դնում հերոսի մահով ընկած Մադիկի կրծքի վրա:

Պետրոսյանը այս չափազանց հուզիչ պատմությունը անում է անպաճույճ կերպով: Երկի մեջ չկա պաթեթիկա, հեղինակի վերաբերմունքը չի շոշափվում, էժանագին արտաքին տպավորություն թողնելու ձգտման նշույլ անգամ չկա: Ինքը թեման խոսում է ընթերցողի հետ և փոթորկում նրա զգացմունքների աշխարհը:

Սա փաստորեն մի զեղեցիկ նովել է սովետական մարդու ազնիվ զգացմունքների մասին, որը ձգտում է միշտ ծաղկած տեսնել ծաղիկները:

«Ես մայր ունեմ», «Այրիք իմ նամակները» և «Ես հայրենիքի դավաճան է» պատմվածքների մեջ նկարագրված են երբեմն ներդաշնակ, երբեմն իրարամերժ երևույթներ, որոնցով լի է կյանքը: Բայց և այնպես երևույթների ամեն մի մանրամասնության մեջ էլ նկատվում է հաղթականորեն վեր բարձրացող նորը, այն ինչ հատկանշական է մեր օրերի համար, սովետական նոր մարդու համար:

«Ես մայր ունեմ» երկը մի ներբող է ծնողական սրտի մասին, որն ավելի բորբոքվում է, բյուրեղանում պատերազմի արհավիրքների մեջ: Վաղուց մորը կորցրած մարտիկի սիրտը ծնողական դուրդուրանք է տեսնում ահեղ մարտերի մեջ: Մանկությունից սրբացած Ալվարյանը գտնում է մայրական սերը հանձին իր մարտական, անբաժանելի ընկերոջ Պյոտրի մորը: Պյոտրը հերոսի մահով ընկնում է պատերազմի դաշտում: Հեռու-հեռավոր թիկունքում ապրող որդեկորույս մոր և Ալվարյանի փոխադարձ սիրո մեջ իր արտահայտությունն է գտնում մեր մարդկանց սնդաժաման ու անխախտ սերը: Համոզիչ և իրական են հնչում ուսա կնոջ Պեչագեայի նամակի տողերը «Որդյակ իմ Սուրեն, ծանր է տանել որդու կորուստը, բայց ես մխիթարվում եմ նրանով, որ Պյոտրս պատվով մեռավ, չարատավորեց իր անունը... Ես քեզ կընդունեմ Պյոտրի փոխարեն, իմ հարազատ զավակ, սպասում եմ անհամբեր քո գալուն...»:

«Այրիք իմ նամակները» և «Ես հայրենիքի դավաճան էր» երկերը տարբեր բևեռներից արձարծում են անձնական սիրո և հայրենասիրության մոտիվները: Լեյտենանտ Անդրեասյանը կռիվների փոթորիկների մեջ էլ իր սրտում վառ է պահել սերը դեպի Լյուդյա: Այդ ջերմ զգացումը նրան նեցուկ է հեղել մարտերում: Հայրեն-

նի երկրի նկատմամբ տաժած սիրո հետ մեկ տեղ ոգևորել է նրան ու առաջ մղել պատերազմի դժվարին ուղիներով: Իսկ Նյուսան երկարատև անջատման, անհայտ ապագայի հանդեպ տեղի է տալիս, ամուսնանում ուրիշի հետ:

Անդրեասյանը այդ դառն փաստը իմանալով, մի բան է խնդրում նրանից «...Այրիք իմ նամակները»: Բայց տրամաբանությունը հակառակն է թելադրում՝ փոքրագություն ու թուլություն ցուցաբերած կնոջը: Նա չի կարող այրել այդ նամակները, արդարացիելով իր սխալը: Այդ թանկագին նամակները կմնան ու կհիշեցնեն երկու մարդկանց հվիրական զգացմունքների մասին, որոնց անջատեց մեկի փոքրագությունն ու հաստատակամությամբ բացակայությունը:

Բովանդակության տեսակետից գրողի որոշ փորձերում այս նվաճումները նշելուց հետո մենք չենք կարող մեղմորեն անցնել նրա լեզվական ու ոճական երբեմն անհանդուրժելի վրիպումներին: Մեր կարծիքով վաղուց ժամանակն է, որ մեր բոլոր գրողները խստապահանջ ու բժախնդիր լինեն նախ դեպի իրենց դորձերի լեզուն:

Մենք արդեն նշեցինք, որ Պետրոսյանը հիշյալ գործերը գրել է պատերազմի դժվարին օրերին, բայց նույնիսկ այդ հանգամանքը ամենևին չի արդարացնում գրքում եղած լեզվական ու ոճական երբեմն աղաղակող սխալներն ու կամայականությունները: Բավականանա՞նք մի քանի օրինակով. հեղինակը թույլ է տալիս այսպիսի արտահայտություններ. «Նրա կլորիկ այտերը պատեցին վարդի գույնով», «Երբ խլացումից ուշքի եկա», «Նրա երեսից ծործոր ցած էր կաթում մուգ կարմիր արթունք», «Նա ձեռքի կաշմակնային շարժումով գլխից հանեց գլխարկը»: Այս արտահայտությունների մեջ գրողը մեղանշում է մեր լեզվական կանոնների հանդեպ, տարօրինակ ավելորդաբանություններ թույլ տալիս: Փոխանակ «խլացումից ուշքի դալով», պատկերը պարզ է, եթե ասում ես ուշքի եկա, փոխանակ ծոր-ծոր ցած էր կաթում, պետք է ասել ծորում էր, կամ կաթում էր, պարզ կլիներ ասել՝ նա արագորեն հանեց գլխաբլր, առանց այն էլ պարզ է, որ ձեռքով են հանում գլխարկը, ամենևին էլ հարկավոր չէ ասել գլխարկը գլխից հանեց, որ սխալ արտահայտություն է: Պարզ է, որ գլխարկը գլուխն է ծածկում, դրա համար էլ գլխարկ է կոչվում:

Ըստ հեղինակի հոտը կարելի է շնչել, քրաինքը կարող է պա-
տել մարմնով, մտքերը կարող են բավականին տխուր լինել, մեկը
կարող է մյուսին տաք արյուն տալ, մեկը կարող է անցնել մութ
խավարի մեջ, սիրտը բաբախում է մարմնի մեջ, սերը կարող է
աստվածային լինել, հրետանին սուրբ, կարելի է ունենալ փոքրիկ
ձեռնիկներ, հողակույտերը կարող են ամեհի լինել, հրետանու կը-
րակը տարերայնային և ոչ տարերային և այլն:

Այսպիսի օրինակներ դժբախտաբար շատ կարելի է գտնել
գրքում:

Այս մի բան է ասում — Պետրոսյանը վատ է աշխատում իր
լեզվական կուլտուրայի վրա: Մինչդեռ դա մեծ պակասություն է,
որ երբեմն և արատ կարող է դառնալ:

Սովետական ընթերցողը պահանջում է մեր օրերի վեհ իրա-
դարձությունների մասին պատմել կիրթ լեզվով, օգտագործելով
ժամանակակից զարգացած լեզվի հարստությունները: Եվ այլ
կերպ չի էլ կարող լինել: Վեհ մտքերը, գեղեցիկ զգացմունքները,
կարելի է արտահայտել լեզվական հարուստ ու գեղեցիկ միջոցնե-
րով միայն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Մենք համառոտ շարադրեցինք սովետական իշխանության տա-
րիներին Ադրբեջանում սովետահայ գրականության զարգացման
փաստերը: Պատմական այս կարճ ժամանակամիջոցում, ինչպես
տեսանք, Բաքվում և Ադրբեջանում հրապարակ իջան և հաջողու-
թյամբ ծավալում են իրենց գրական գործունեությունը շնորհալի
գրողներ, որոնցից մի քանիսն արդեն հաստատապես արժանավոր
աեղ են գրավել մեր գրականության մեջ, իսկ գրական երիտասար-
դության մի ստվար խումբ ջանասիրությամբ ստեղծագործում է և
սովորում ձգտելով հետագա կատարելագործման:

Նպաստավոր միջավայրում, պարարտ հողի վրա սովետահայ
գրականությունն այժմ ստանում է նոր համալրումներ: Ադրբեջա-
նում ապրող հայ աշխատավորների ծոցից աճում են, մայրենի
լեզվով կրթություն են ստանում և ձևով ազգային, բովանդակու-
թյամբ սոցիալիստական գրականության բնագավառն են մտնում
նոր թարմ ուժեր: Նրանք ներկայացված են 1947 թվին լույս տե-
սած «Հաղթանակի ուղիներով» գրական ամսանախում, նրանք

պարբերաբար հանգես են դալիս «Կոմունիստ» օրաթերթի էջերում, Հեռնային Ղարաբաղի մարզային կենտրոնում՝ Ստեփանակերտում էույս տեանող «Սովետական Ղարաբաղ», Մարտակերտի շրջանի «Սոցիալիզմի ուղիով», Մարտունու շրջանի «Բուլշեհիկյան հաղթանակ», Խանլարի շրջանի «Ազնիվ աշխատանք», Շամխորի շրջանի «Կարմիր Շամխոր», Կիրովաբադ քաղաքի «Բանվորական, Կիրովաբադ» և այլ թերթերում, առանձին գրքույկներով:

Ադրբեջանի երիտասարդ հայ գրողների ջոկատը օրգանապես կապված է ռեսպուբլիկայի Սովետական գրողների միության հետ, ադրբեջանցի և ռուս գրողների համերաշխ ընտանիքում ձգտում է բազմապատկել սոցիալիստական գրականության նվաճումները:

Համամիութենական Կոմունիստական (բուլշեհիկների) պարտիայի Կենտրոնական Կոմիտեի որոշումները իդեոլոգիական հարցերի մասին, մանավանդ «Զվեզդա» և «Լենինգրադ» հանդեսների մասին որոշումը և ընկ. Ա. Ա. Ժդանովի զեկուցումը նոր բեկում ստեղծեցին ամբողջ սովետական գրականության մեջ, նրան առաջադրելով նոր, ավելի բարձր խնդիրներ:

Ինչպես հայտնի է, վերոհիշյալ որոշման մեջ Կենտրոնական Կոմիտեն կրկին ու կրկին ընդգծեց սոցիալիստական գրականության լենինյան-ստալինյան պարտիականության սկզբունքը, ամբողջ սրությամբ դրեց դեղարվեստական գրականության գաղափարայնության հարցը:

Կենտրոնական Կոմիտեն իր որոշումներում մատնանշելով գեղարվեստական պրականության, թատրոնի, կինոյի, երաժշտության բնագավառում եղած լուրջ ձեղքվածքներն ու թերությունները, ցույց տվեց ոչ միայն դրանց արմատախիլ անելու միջոցները, այլև գաղափարական աշխատանքի այդ կարևոր ասպարեզներում նոր վերելք ստեղծելու ուղիները:

Ընկեր Ժդանովը, մեկնաբանելով Կենտրոնական Կոմիտեի որոշումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ժուռնալների մասին, ասում է. «Սովետական ժողովուրդը բարձր պահանջներ է առաջադրում գրողներին, ցանկանում է, որ բավարարվեն իր գաղափարական և կուլտուրական պահանջները: Պատերազմի ժամանակ, իրադրության պատճառով մենք չկարողացանք բավարարել այդ հրատապ պահանջները: Ժողովուրդը ցանկանում է իմաստավորել տեղի ունեցած իրադարձությունները: Նրա գաղափարական ու կուլտուրական մակարդակը բարձրացել է: Նա հաճախ չի բավարար-

վում մեղ մոտ երևան եկող գրականության և արվեստի ստեղծագործությունների որակով: Դա չեն հասկացել և չեն ուզում հասկանալ գրականության որոշ աշխատողներ, իդեոլոգիական ճակատի որոշ աշխատողներ:

Կենտրոնական Կոմիտեի որոշումը կտրականապես պահանջում է վեբացնել այս լուրջ ճեղքվածքները, գրողների առջև հրամայական խնդիր է դնում իրենց ամբողջ ստեղծագործական աշխատանքը ենթարկել կոմունիստական հասարակության կառուցմանը, գնալ ոտք-ոտքի ժողովրդի պահանջների հետ: Սովետական գրականությունը հանդիսանում է ժողովրդի սոցիալիստական գիտակցությունը շաբոնակ բարձրացնելու զորեղ միջոցը և որպես այդպիսին, նա պետք է աշխատավորներին պատվաստի նոր գաղափարներ, լայնացնի նրանց մտահորիզոնը, բարձրացնի ճաշակը, արթնացնի նրանց մեջ նոր, ավելի բարձր պահանջներ և շարունակ առաջ մղի:

Սովետական գրողը կարող է իր այս վեհ խնդիրը հաջողությամբ իրագործել, եթե նրա ստեղծագործությունները դադարաբաշխորեն նվաճակալաց են, հագեցված բուշեկկյան սկզբունքայնությամբ, որը ժխտում է ամեն տեսակի ապոլիտիզիզմ, իսկ գրա համար գրողը ստեղծագործական նյութն ու ոգևորությունը պետք է առնի սոցիալիստական բազմաբովանդակ կյանքից, հանդիսանա սոցիալիստական հասարակության, կուլտուրայի, կոմունիստական բարոյականության խանդավառ պրոպագանդիստը¹:

«...Մեր գրականությունը,—շարունակում է ընկ. Ժգանովը,—որն արտացոլում է ավելի բարձր հասարակակարգ, քան որևէ բուրժուազեմոկրատական հասարակակարգ, բուրժուական կուլտուրայից շատ անգամ ավելի բարձր կուլտուրա, իրավունք ունի սովորեցնել մյուսներին նոր համամարդկային բարոյականություն: Ո՛ր կգտնեք դուք այնպիսի ժողովուրդ, այնպիսի երկիր, ինչպես մեզ մոտ: Ո՛ր կգտնեք դուք մարդկանց այնպիսի հոյակապ հատկություններ, որպիսիք դրսևորեց մեր սովետական ժողովուրդը: Հայրենական Մեծ պատերազմում և որպիսիք նա ամեն օր դրսևորում է աշխատանքային գործերում, անցնելով խաղաղ զարգացմանը և տնտեսության ու կուլտուրայի վերականգնմանը»:

¹ Ժգանով— Զեկուցում «Զվեզդա» և «Լենինգրադ» ժուռնալների մագալին—
ստու հրատ. 1946 թ. էջ 28:

Մեր դեղարմեստական գրականության պատվավոր խնդիրն է ցույց տալ սովետական ժողովրդի այդ բարձր հատկությունները, ցույց տալ կոմունիզմ կառուցող մարդկանց բարոյական բարձր առաքինությունները, հակադրել այդ ամենը նեխող ու փլուզվող կապիտալիստական աշխարհի տիրող խավերի հոգեկան սնանկությանը: Մի ոչ միայն այս. անհրաժեշտ է հստակ հայացքով նայել ապագային, այսօրվա իրադարձությունների մեջ տեսնել վաղվանը, այսօրվա պատմական նվաճումների մեջ տեսնել և ցույց տալ մաղվա ավելի փառահեղ հաջողությունները, մի խոսքով մեր ապագած սոցիալիստական հասարակության իրականության վերլուծությանմբ մատնանշել կոմունիստական վաղը:

«Ղեկավարվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, բարեխղճորեն և ուշադրությամբ ուսումնասիրելով մեր իրականությունը, ձգտելով ավելի խորը թափանցել մեր զարգացման պրոցեսներին էություն մեջ, գրողը պետք է դաստիարակի ժողովրդին և գաղափարապես զինի նրան: Ընտրելով սովետական մարդու լավագույն զգացմունքներն ու հատկությունները, նրա առջև բաց անելով իր վաղվա օրը, մենք պետք է միաժամանակ ցույց տանք մեր մարդկանց, թե ինչպիսին նրանք չպետք է լինեն, պետք է խարաղանենք երեկվա մնացուկները, որոնք խանգարում են սովետական մարդու առաջխաղացմանը: Սովետական գրողները պետք է օգնեն ժողովրդին, պետությանը և պարտիային՝ դաստիարակելու մեր երիտասարդությանը որպես առույգ, իր ուժերին վստահ, ոչ մի դժվարությունից չվախեցող»:

ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի պատմական որոշումներից հետո, ինչպես սովետական բոլոր ռեսպուբլիկաներում, նույնպես և Ադրբեջանում լուրջ բեկում սկսվեց գրականության մեջ: Ադրբեջանական գրողները ստեղծեցին ժամանակակից թեմաներով նոր ծավալուն, արժեքավոր երկեր, որոնք աչքի են ընկնում իրենց գաղափարական նպատակասլացությամբ և օժտված են դաստիարակչական մեծ ուժով:

Արձակագիր Աբուլհասանը ավարտեց «Պատերազմ» վեպը, որի մեջ բավական լայն դիալագոնով գեղարմեստական ընդհանրացման են ենթարկվում Հայրենական պատերազմի իրադարձությունները և ցույց է տրվում առանձնապես ադրբեջանական ժողովրդի մասնակցությունը մեր երկրի ազատության և անկախության համար մղված մեծ պատերազմին: Լույս տեսան Մեհթի Հյուսեյնի

«Ապշերոն», Մ. Սուվելմանովի «Ընդերքի գաղտնիքը» վեպերը, Իլյաս էֆենդիեի «Լուսավոր ուղիներ» պիեսը, որոնց թեման առնված է Ադրբեջանի նավթագործների կյանքից: Առանձնապես արժեքավոր ներդրում է «Ապշերոնը», որտեղ հեղինակին հաջողվել է պատկերել սովետական նավթարդյունաբերության և կարմիր գծից դենը՝ օտարերկրյա կապիտալիստների սեփականությունը կազմող աշխատող կոշված իրանական նավթարդյունաբերության, ձիջև եղած էական, արմատական տարբերությունները: Հեղինակը մեծ հաջողությամբ ստեղծում է ազատ, սոցիալիստական աշխարհի և ստրկության ու բռնության աշխարհի հակադրությունը, համեմատելով մարդկանց վիճակը մեզ մոտ և սահմանից այն կողմը:

Մտեղծվել են նաև հաջողված գործեր՝ Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմությունից: Դրանցից աչքի է ընկնում մանավանդ Էնվեր Մամեդխանլու «Արևելքի առավոտ» պիեսը:

Կոլխոզային դյուղի կյանքը վերարտադրող երկերից մեծ հաջողություն ունեցավ Իլյաս էֆենդիեի «Գարնանային ջրեր» պիեսը: Առանձնապես պետք է մատչանշել, որ վերջին երկու գրողները իրենց ստեղծագործական ուժերը ծավալել սկսեցին հատկապես մեր պարտիայի Կենտրոնական Կոմիտեի որոշումից հետո:

Զգալի նվաճումներ են ձեռք բերվել նաև պոեզիայի բնագավառում: Տաղանդավոր բանաստեղծ Մամեդ Ռահիմը իր «Լենին-դրագը վրա» պոեմի համար արժանացավ ստալինյան մրցանակի լաուրեատի բարձր պոչմանը:

Հետպատերազմյան խաղաղ զարգացման տարիներին հաջողություններ են ձեռք բերել նաև Ադրբեջանի սովետահայ գրողները: Նրանց նոր գործերի առանձին նմուշներ գետեղվեցին «Հաղթանակի ուղիներով» գրական ամսանախում, «Կոմունիստ» օրաթերթում, Նրևանի «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսում. մի շարք ընկերներ պատրաստում են տպագրության հանձնելու իրենց նոր գործերը: Բանաստեղծ Հ. Սահյանը պարբերական մամուլում հրապարակեց իր մի քանի գաղափարայնորեն հագեցված գործերը՝ «Սովետական քաղաքացի», «ՍՍՌՄ» և այլն, արձակագիր Մ. Դավթյանը հրատարակեց իր «Ուռենու տակ» միպակը, Սուրեն Ալվազյանը տպագրեց մի շարք հաջող նովելներ և պատվածքներ, Գ. Պետրոսյանն ավարտել է Հայրենական պատերազմի իրադարձություններն անդրադարձնող մի նոր բաժակաձև

ճախալուն վեպ, Ադրբեջանի թատրոններում՝ բեմադրվեց Սամվել Գրիգորյանի առաջին դրամատիկական գործը՝ «Գայանե» պիեսը, որի նյութն առնված է հետպատերազմյան գյուղի կյանքից:

Մյս և մյուս նոր ստեղծագործությունների մանրակրկիտ վերլուծությունը մենք չենք կատարելու սույն աշխատության մեջ:

Եզրափակենք: Ադրբեջանի սովետահայ գրողները լարելով իրենց ստեղծագործական ջանքերը, աշխատում են ստեղծել գործեր, որ նկարագրվում է սովետական ժողովրդի կյանքը, նրա հերոսական պայքարը կոմունիստական հասարակարգի կառուցման համար, նրանք ձգտում են կերտել մեր ժամանակի հերոսի կերպարը և մերկացնել ու խարազանել այն ամենը, ինչ հին է, հետադիմական, ինչ խանգարում է մեր առաջընթացին:

Իսկ այս ուղղությամբ շատ ու շատ են մեր անելիքները:

Դեռ պուբլիկայի պարտիական կազմակերպության XVII համագումարում ընկեր Բագիրովը մատնանշեց մեր գրականության հետ մնալու պատճառները, բացահայտեց մեր թերությունները: «Ադրբեջանական գրականության հետ մնալու հիմնական պատճառը, — ասում է ընկ. Բագիրովը, — այն է, որ շատ գրողներ կտրվել են կյանքից, սովետական մարդու հոգևոր պահանջմունքներից, չեն ուսումնասիրում սովետական մարդկանց կյանքն ու աշխատանքը, վատ են աշխատում իրենց իդեական-քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար, չեն տիրապետում սոցիալիստական ռեալիզմի մեթոդին»:

Այնուհետև ռեսպուբլիկայի բոլշևիկների ղեկավարի շրթերով, պարտիական համագումարի ամբիոնից, մեր գրողները ստացել են աշխատավորության նակազը, կոմունիզմի կառուցման համար անձնվիրաբար մարտնչող մարդկանց նակազը՝ նոր գեղարվեստական երկեր ստեղծելու համար:

Համագումարում առանձնապես ընդգծվեց, որ մեր գրողներն ու բանաստեղծները վերջին շրջանում չեն ստեղծել նոր, խոշոր երկեր ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության մասին, Ֆեդերիովիկասի ժողովուրդների կողմից սրբորեն պահպանվող ստալինյան պանծալի տրադիցիաների, իրենց ազատության ու անկախության, սովետական իշխանության հաստատման համար Անդրրկովիասի ժողովուրդների միատեղ մղած պայքարի մասին: Խոշոր գեղարվեստական կտավներ չեն ստեղծված, որոնք վերարտադրե-

ին Սովետական մեծ Միության բոլոր ժողովուրդների հետ մեկտեղ Անդրկովկասի ժողովուրդների մղած հերոսական պայքարը: Մինչդեռ որքան փայլուն էջեր կան մեր ժողովուրդների բազմադարյան պատմության մեջ, որոնք պերճախոս ափսոսում են նրանց բարեկամության մասին, որը ուժ ստացավ և իմաստավորվեց ստալինյան դարաշրջանում: Գեղարհետական անմահ գործեր կարելի է ստեղծել, վերստադրելով հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամության դարգացման վերջին էտապը, երբ շնորհիվ այդ բարեկամության: նրանք ապրեցին իրենց վերածնունդը և այժմ բարգավաճում են կոմունիզմի ճանապարհին: Այդ բարեկամության ամենապայծառ դրսևագներից են Բաքվի կոմունտն, սովետական իշխանության հաստատումը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում, երբ այդ հարագատ իշխանության հաստատման համար մղվող թեժ մարտերում թրծվում էր և ամրանում հայ, վրացի, ադրբեջանցի աշխատավորների բարեկամությունը: Ինչպե՞ս հերոսական էջեր են գրել նրանք մեր ժողովուրդների արյունաբեղ թշնամիների՝ ղաջնակների, մուսավաթականների, մենշևիկների, նրանց օտարերկրյա տերերի՝ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում:

Շատ շնորհակալ խնդիրներ են կանգնած Ադրբեջանի սովետահայ գրողների առջև: Նրանց մեծամասնությունն ապրում է և ստեղծագործում Սովետական Միության նավթարդյունաբերության կենտրոնում՝ Բաքվում, ուր միշտ վառ են ստալինյան ռեյուցիոն տրագիցիաները, ուր կյանքի ամեն մի երևույթի ու մանրամասնի մեջ մարմնավորվում է Սովետական Միության ժողովուրդների ստալինյան բարեկամությունը, ուր սոցիալիստական աշխատանքի բազմաթիվ սխրագործություններ են կատարվում: Ուրեմն, Բաքվի սովետահայ գրողների պարտքն է իրենց նոր երկերում վերհանել Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի ժողովուրդների ռեյուցիոն պայքարի հերոսական, ցույց տալ սովետական իշխանությունը նվաճելու համար մղված մարտերում նրանց համերաշխությունն ու միասնությունը: Ապա և սոցիալիզմի կառուցման համար մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդների միահամուռ ստեղծագործական ռաշադանքը վերարտադրելով, մեր գրողները, մանավանդ պեսք է իրենց ստեղծագործությունների մեջ ցայտուն կերպով արտացոլեն հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդների իսկական վերածնունդը, Անդրկովկասի երեք ռեսպուբ-

լիզաների անցած փառավոր ուղին, այլև սոցիալիստական արդու-
նաբերության խոշորագույն կենտրոններից մեկի՝ Բաքվի զարգա-
ցումը: Նավթի համար սովետական մարդկանց հերոսական պայ-
քարի թեման դեռ սպասում է իր շնորհալի հեղինակին: Անհրա-
ժեշտ է, որ այսօրվա սոցիալիստական Բաքուն գեղարվեստական
պրականության մեջ նկարագրվի ավելի պայծառ ու լրիվ, քան մենք
ունենք նախառնուցիսն Բաքվի և նրա մարդկանց նկարադրու-
թյունը:

Աղբբեջանը սովետական իշխանության տարիներին անձանա-
չելիորեն փոխվել է: Աճել են նոր, հոյաշեն քաղաքներ, նրանց մի
մասը՝ երբեմնի բառացիորեն դատարկ տարածությունների վրա:
Այսօր այդ կենտրոններում խփում է սոցիալիստական կյանքի
դարկերակը:

Փոխվել է գույլը: Զորեղ, բարձր արդյունավետ կոլխոզներն
ույժմ արդեն հազվագյուտ չեն: Կոլխոզների ղգալի մասը վերած-
վում են տնտեսությունների, ուր ամբողջ թափով տեղի է ունենում
հումկու սոցիալիստական վերարտադրություն: Աղբբեջանի բամ-
բակի, թելի պլանտացիաները հռչակված են ամբողջ Միություն-
նով մեկ:

Հետպատերազմյան ստալինյան հնգամյակն ավելի փառավոր
հեռանկարներ է բացել ռեսպուբլիկայի առջև: Հնգամյակի վերջում
Աղբբեջանի նավթարդյունաբերությունը մի քանի անգամ աճելու է:
Նավթագործները պայքարում են 1950 թ. երկրին 17 միլիոն տոննա
նավթ տալու համար: Նրանք լարում են իրենց ջանքերը հնգամյակը
չորս տարում կատարելու:

Ամբողջ թափով առաջ է մղվում Մինգեչաուրի հիդրոհանգույ-
ցի շինարարությունը, որը կյանք է տալու Միլի ու Շիրվանի ան
պտուղ տափաստաններին: Դաշքյասանի երկաթահանքերը արդեն
ծավալուն կերպով շահագործվում են, օրավուր բարձրանում են
նորանոր արդյունաբերական ձեռնարկությունների կասկադները:

Այս ամենը ստեղծում է սովետական մարդը, որը նոր հատ-
կություններ, նոր հոգեբանություն, նոր պահանջներ ունի, որը չե-
կավարվում է կոմունիստական բարձր բարոյականությամբ:

Աղբբեջանի սովետահայ գրողների խնդիրն է՝ աղբբեջանցի
և ոռա գրչակիցների հետ մեկտեղ, խորանալ զարգացման այս
պրոցեսի բուն էություն մեջ, գեղարվեստորեն վերարտադրել այս
իրատարածությունները, մատնանշել վաղվա հեռանկարները, դառ-

տիարակել ընթերցողներին լենինյան - ստալինյան նպատակա-
սլացությունը, դրանով իսկ բարձրացնելով նրանց սոցիալիստա-
կան գիտակցությունը և մղելով դեպի նորանոր հաղթանակներ:

Սեր օրերի իրադարձությունները գեղարվեստորեն ընդհան-
րացնելիս, մենք պետք է կերտենք կոմունիզմ՝ կառուցող մարդու
կերպարը, մատնանշելով նրա բոլոր առավելությունները՝ կռիկ-
տիվիստական ոգին, ինտերնացիոնալիզմը, որը հակամարտ է
բուրժուական կոսմոպոլիտիզմին, անսահման հայրենասիրությունը,
իր քաղաքացիական պարտքի գիտակցությունը Հայրենիքի ու ժո-
ղովրդի հանդեպ, նրա աշխատանքային հերոսությունը և բարձր
կուլտուրականությունը, նպատակի պարզությունը, որ շարունակ
առաջ է մղում սովետական մարդկանց, դժվարությունները հաղ-
թահարելու անկոտրում կամքն ու վճռականությունը: Այս ամենից
բացի, մեր գրականության մեջ ցայտուն կերպով պետք է դրսևորվեն
մեր ժամանակների հերոսի բարձր մարդկային արժանապատվու-
թյուններն ու առաքինությունը, այն է՝ սովետական հասարակական
համակեցության կանոնների հարգումը, կռիկտիվի շահերի գերա-
դասումը անձնականից, անձնվեր ընկերավարությունը, փոխադարձ
օգնության պատրաստակամությունը, ընտանեկան օրինակելի վարք,
բարձր պատասխանատվություն իր մերձավորների և մանավանդ
երեխաների կյանքի ու դաստիարակության համար: Եվ որը գլխա-
վորն է՝ այս հատկությունների նկարագրությունը պետք է վեր
հանի և ցույց տա անձնավորության իսկական ազատությունը, որ
գոյություն ունի սոցիալիստական հասարակության մեջ, այդ հատ-
կությունները դիտի իրենց զարգացման ու կատարելագործման
պրոցեսում:

Սովետական մարդու մեջ այս վեհագույն հատկությունները
սյուսվաստվում և զարգացվում են մեր մեծագործ բոլշևիկյան
պարտիայի ղեկավարությամբ, դա մեր պարտիայի իդեոլոգիայի
հողթանակի փայլուն արտահայտություններից մեկն է:

Պարտիան ղեկավարում է, ուղղություն տալիս սոցիալիստա-
կան հասարակությանը, բաղմամբիլոն սովետական ժողովրդի
կյանքին: Պարտիան պաշարելու և հաղթելու ուղիներ է ցույց տա-
լիս մեր մարդկանց, գլխավորում է նրանց առաջխաղացումը կո-
մունիզմի ճանապարհով: Պարտիան է, որ սովորեցնում է, դաս-
տիարակում, ձևավորում մեր ժամանակի հերոսին: Պարտիան է, որ

կոմունիզմի կառուցման վիթխարի փորձը ամփոփելով, նշում է մեր երկրի ապագայի հեռանկարը և կապիտալիստական աշխարհի ստրկությունից ազատագրվելու ճանապարհը:

Մեր բազմաբովանդակ կյանքի բոլոր բնագավառներում բոլշևիկներն պարտիայի ղեկավարությունը տալիս է իր առատ արգասիքները: Պարտիան կարողանում է տեսնել, խրախուսել և զարգացնել նորը, ամեն կերպ նեցուկ լինել նորարարությունը, որ քանի գնում ավելի մասսայական երևույթ է դառնում սոցիալիստական հասարակության մեջ: Նա մասսաներին պատվաստում է նորի զգացումը և սովորեցնում է հաղթահարել հինը, այն, ինչ խանգարում է մեր առաջընթացին:

Ահա թե ինչու այժմ, մեր դարաշրջանում կենսական ուրեք երեւույթի գեղարվեստական վերարտադրման ժամանակ մանրամասների մեջն էլ պետք է տեսնել սովետական ժողովրդի ավանգարդի՝ բոլշևիկների պարտիայի կազմակերպող ուժը: Գրողի սրբազան պարտականությունն է կերտել կուլեկտիվներին առաջնորդող մարդկանց հավաքական կերպարներ, որոնք խտացնեն իրենց մեջ այն բոլոր գաղափարական և գործնական հատկությունները, ձգտումները, ակնկալությունը, ռոմանտիկան, որ բնորոշ են լենինյան-ստալինյան պարտիայի անդամների համար: Գրողները պետք է ուսումնասիրեն և իրենց երկերում արտացոլեն այն տիտանական աշխատանքը, որ կատարում է պարտիան կոմունիզմի հաղթանակն ապահովելու համար:

Ստալինյան դարաշրջանը կոմունիստական գաղափարախոսության նյութական մարմնավորման, նորանոր հաղթանակների, կապիտալիզմի իլուզման ու խորտակման դարաշրջան է: Մեր գրողները հմտություն պիտի մշակեն իրենց մեջ՝ կենսական փորքեր երևույթների մեջ էլ տեսնելու կոմունիզմի հաղթական առաջընթացը, աշխույժ իրադարձությունների մեջ գտնելու ապագայի սաղմերը, շարունակ շոշափելու հեռանկարը:

Իսկ այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է տիրապետել մարքս - լենինյան ուսմունքին, խորապես ճանաչել մեր իրականությունը, սովետական մարդկանց կյանքն ու պահանջմունքները: Ուստի և պիտի սովորել, սովորել անխոնջ և անդադար:

Ոչ պակաս կարևոր անելիքներ կան ստեղծագործությունների ձևը, լեզուն կատարելագործելու ուղղությամբ: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ Ադրբեջանի սովետահայ գրողներից շատե-

ըր դեռ շատ հւ շատ պեռք է աշխատեն, որպեսզի հասնեն գրական վարպետության: Առանձնապես խոշոր թերությունների կան նրանց լեզվական կուլտուրայում: Եւ քանի որ մեր գրականությունը կոչված է դեղարմատորեն վերարտադրել ամենաբարձր հասարակության՝ սոցիալիստական հասարակության կյանքը, ապա և այդ վեհ բովանդակությունը կարելի է ճշգրիտ վերարտադրել կատարյալ ձևերով, հարուստ պատկերավոր, դիպուկ և իմաստավոր լեզվով:

Այսպիսով, Ադրբեջանի սովետահայ գրողները առաջիկայում պետք է բազմապատկված եռամսհով սովորեն և ստեղծագործեն, որպեսզի արժանի լինեն յմարդկային հողու ճարտարապետի: Բարձր կոչմանը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ներածություն	.	.	.	.	.	.	.	Լ2
Սկզբնավորում	.	.	.	.	.	.	.	3
Կատարելագործման ճանապարհին	.	.	.	.	.	.	.	12
Սոցիալիստական իրականության ճշմարտացի արտացոլման համար	.	.	.	.	.	.	.	25
Դրամատուրգիական ստեղծագործություններ	.	.	.	.	.	.	.	30
Հայրենական պատերազմի բովում	.	.	.	.	.	.	.	99
Եղբայրացություններ, հեռանկարներ	.	.	.	.	.	.	.	114
	.	.	.	.	.	.	.	162

Պատասխանատու խմբագիր՝ Դ. ԱՆՏՈՆՅԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Ռ. ԱՐՉԱՆՅԱՆ
 Սրբագրիչ՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆ





А. АМИРХАНИЯ

АЗƏРБАЙҶАНДА
ҶУМҲУРИ СОВЕТ ЭДƏБИЙЯТЫ

АЗƏРНƏШР